Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Լեո
1664

1999

# ԶԱՒՍԱՆ եւ ՓԱՌՆԱԿ Ա.

ԳՐԵԱՑ

ԾԵՐՈՒՆԻՆ ԳԱԲՐԻԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Տ. Թ. ՏԷՏԷԵԱՆ

ԶՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

1877

4/664-60
ՀՖ 1669

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Անուշաւան, որ Հայկայ տասներորդ սերունդն էր, եւ Արամայ չորրորդն, ուղիղ գծիւ յորդւոց յորդիս իջեալ, թէպէտ եւ ըստ աւանդութեան պատմութեան Հայոց մեռեալ անզաւակ, բայց ըստ բանաստեղծից ունէր ի տիկնոջէն իւրմէ գերկէթեայ դուստր ծնեալ ի ծերութեան ծնողաց՝ Շամիրամ անուն, որ կոչեցաւ Շամիրիկ: Սա ընտրեաց ի փեսայութիւն իւր զքաջ եւ զքարետոհմիկ սպատանին Պարէտ՝ զնահապետ Սիւնեաց, եւ արար զնա ժառանգորդ նահապետական աթոռոյ, որով եւ էանց յաջորդութիւն նահապետութեան ի տուն Սիւնեաց: Պարէտ հաստատեալ յիւրում կողման համակամ ընտրութեամբ դշխոյին Շամիրիկայ եւ ծերոց ազգին, երջանիկ արար զհայաստան յխնամեալ տեսչութեամբ: Իսկ ի հասանիլ ի վերայ նորա եղերական մահու, ձեռնտուութեամբ Շամիրիկ տիկնոջ յափշտակեաց զնահապետութիւնն Հայոց՝ Արբակ, որ իսկ եւ իսկ ընդ առնուլ զկոչումն զայն՝ բռնացեալ կոտորեաց զամենայն զերդաստան եւ զազգատոհմ Պարետայ:

Ի կոտորածէ յայսմանէ զերծաւ մի յորդւոց Պարէտի ան[...]ղեաց մանուկն Զաւան, որ յետ մահուան Արբակայ ընտ[...]թեամբ ազգին եղեւ նահապետ, եւ ժառանգեաց զհայրենի[...] գահ: Այս Զաւան է դիւցազն այսորիկ վիպի:

# ՁԱՒԱՆ

## Ա.

### ՁԱՒԱՆ ԳԱՑ ՊԱՆԴՈՒԽՏ ԵԱՐՄԱՒՐ

Երէք հեծեալք՝ քաջ պատանեակք՝ գնում էին Արմաւիր.
Հագած էին՝ զէնք ու զրահք, կերպարանօք՝ բարեդիր,
Խօսում էին՝ զուարթամիտ, կամաց մըղում՝ ձիերը,
Հաւասար էր նոցա ընթացք, ձեռներումն են՝ սանձերը:

Լայնածաւալ՝ դաշտի մէջը՝ մէկ ծառաստանկ՝ էր կանգնած,
Կանաչազեղ՝ սաղարթներով՝ նոր հարսի պէս՝ զարդարուած.
Ծառերու տակ՝ ստուերները՝ ունին շուաք՝ զովագին,
Դէպ այն կողմն են՝ ձգում քաշում՝ ճանբորդներուն՝ սիրտ, հոգին:

Երկու ժամու՝ ճանապարհ կայ՝ մայրաքաղաք՝ հասնելու.
Ասաց Կռնակ՝ իւր ընկերաց, ուզում եմ ձիս՝ ջրելու.
Այս ծառաստանկ՝ զով տեղումը՝ մէկ աղբիւր է՝ կարկաչում.
Եկէք՝ երթանք՝ շուաքի մէջ, ինչ ենք այսքան՝ շտապում:

Ծառաստանկի՝ մէջը մտան, աղբիւրի մօտ՝ վէր եկան.
Ձիերը շատ՝ ծարաւ էին, ջրէն խմել՝ սկսան.
Լուսաղէմին՝ էին սոքա՝ իջավանէն՝ դուրս ելել.
Երկար ճանբայ՝ էին կտրել, ճաշու ժամ դեռ՝ չէր հասել:

Մինչև ի Ճաշ՝ տեղ-կու հասնինք, ասաց Կոռնակ՝ Հրանտին,
Այսօր թռչնոյ՝ թռչելոյ՝ կարծեմ որ է՝ օր վերջին,
Երէկ դեռ ես՝ ուրուք գլխին՝ չէր նստել այն՝ թռչունը,
Տեսնենք այսօր՝ կը նստի՞, թէ՝ էլ կը թռչի՝ ամպումը։

Ես խօսելու՝ ժամանակին՝ մէկ այլ ճանփորդ՝ ես հասաւ.
Մըտաւ այն զով ծառաստանը, աղբիւրի մօտ վէր եկաւ.
Բարովեցին՝ մէկզմէկը՝ այս չորս հատ քաջ պատանիք,
Ու սկսան՝ նոր եկողի զըրահներուն՝ տալ մըտիկ։

Գլխին ունէր՝ երկաթակուռ՝ ոսկեապատ՝ սաղաւարտ,
Վառ Ճըրագի նըման փայլուն, յղկած, սրբած՝ փետրազարդ,
Վառապանքը՝ անգըծելի, արեւու դէմ՝ ցոլում են,
Ոսկի, արծաթ, երկաթի հետ՝ միաւորված՝ փայլում են։

Թուրը կախած՝ էր աղեղէն՝ պողովատիկ, երկսայրի,
Երախակալն՝ պոհարազարդ, պատեանն էր՝ զուտ ոսկի.
Եօթնպատիկ՝ գոմշի կաշի՝ քեմըխապատ՝ էր վահան,
Ամուր պնդած՝ հեղյսներով, ոսկերեռ հաստարան։

Հանեց գլխէն՝ սաղաւարտը, վայր թափվեցան՝ հոպոպիք.
Գուռղ հերքը՝ երկայնացած, թիկանց-հասած՝ են ծամիք.
Աչք իւր խարտեաշ՝ բոց են թափում, թուշերն կարմիր՝ սպիտակ,
Վայրի վարդի չքնաղ փնջոյ և շուշանի օրինակ։

—Երևի՝ չես՝ Հայաստանէն, Միջագետքէն՝ ես գալիս,
Զըրահներդ՝ և երիվարդ՝ այդ յայտնի ցոյց՝ են տալիս.
Լեզուդ թէպէտ՝ հասկանում ենք, բայց բարբառդ՝ օտար է.
Կամ Հայ լեզուն մոռացել ես, կամ թէ իսպառ՝ քեզ նոր է։

Ասա խնդրեմ, ասաց Կոռնակ, ի՞նչ ազգ ես, կամ Հայ ես,
Կամ շատ օր է՝ որ Հայաստան պանդխտութեամբ՝ մտել ես.
Գուցէ չունիս՝ քեզ ծանօթ ոք, ահա մենք միշտ՝ պատրաստ ենք,
Որ հիւրընկալ՝ լինինք սիրով, և մեր տանը՝ ժողովենք։

Պատասխանեց՝ օտարականն՝ զուարթադէմ՝ երեսով,
Ես ուրախ եմ ձեր քաղցրութեամբ, և կշտացած՝ ձեր սիրով,
Ազգաւ Հայ եմ, բայց Հայաստան՝ նոր եմ եկել՝ յայլ երկրաց,
Իմ մայրենի՝ քաղցր լեզուն՝ պանդուխտ տեղն եմ մոռացած։



Սիգոնումն են՝ զրահներս՝ արհեստագէտք՝ ճարտարել.
Սուրի, թուրի՝ և սըլաքաց անգըծելի հընարել.
Ի երջանիկ Արաբիա՝ իմ նըժուգի հայրենի*
Օդապարիկ է և անսանձ, հուժկու և սօս ամեհի։

Բայց արդ դուք էլ՝ ինձ պատմեցէք, ո՞ր էք գընում՝ երեքեան,
Կամ ի՞նչ համբաւ՝ այսօրերս՝ կայ մեր բնիկ՝ Հայաստան.
Ո՞ր օր ուժով նոր կոխեցի՝ մեր հայրենի՝ այս երկիր,
Տեսայ որ շատ՝ ճանապարհորդք՝ են շտապում՝ Արմաւիր։

Կըկին Կոռնակ՝ խօսքը կտրեց՝ առաջ ասա՝ անունդ,
Որ կարենանք՝ յարմարապէս պատասխան տալ՝ հարցմանդ։
Իմ անունս՝ ասաց ճամբորդն՝ զուարթ դիմօք՝ է Զաւան,
Հայրս Պարէտ՝ չէր Հայաստան՝ աշխարհի մէջ՝ աննշան։

Ես էլ Կոռնակն՝ եմ Սիսակեան, ետ պատասխան՝ պատանին,
Սիւնեաց երկրէն՝ եմ արդ գալիս, մեզ կոչել է՝ հայրենին,
Նահապետաց՝ գահն անտէր է՝ ահա թողած՝ այս մէկ ամ.
Ազգապետք էլ՝ մէկը մէկի հետ կռվում են՝ համբրամ։

Մեռաւ Արբակ՝ նահապետը, և չըթողեց՝ ժառանգորդ,
Թէպէտ ոչ էր՝ նա անզաւակ, այլ աթոռին՝ չիք յաջորդ,
Վեց դուստր թողեց, և մէկ որդի՝ մէկ տարեկան՝ կաթնկեր,
Ազգին հզօր պաշտպան պէտք է, անզօր տղայն յարմար չէր։

Երբ մէկն ասաց՝ Ես կը լինիմ, միւսն ասաց՝ Ես էլ կամ,
Լուեց զզօն՝ հանճարաւորն, և ձայն հանեց անզգամ,
Քաղաքական մարտ բացվեցաւ, խեղճ Հայք եղեն ոտնակոխ,
Թշնամութիւն՝ բորբոքվեցաւ, չէ պակասում՝ քէն և ոխ։

Հուսկ ուրեմն՝ մեր ազգապետք՝ ժողովեցան՝ Արմաւիր,
Խորհուրդ արին՝ որ մէկ ձևով խաղաղացնեն ազգ երկիր.
Առաջ վիճակ՝ հընարեցին, որ վիճակով ընտրուի,
Անբարտաւան՝ աւագանին՝ չըմտաւ տակ՝ վիճակի։

*Արդեօք Արաբիոյ բնիկ եղե՞ր են նժոյգ յիշեալ, թէ այլ ծագաց են բերված։

Մէկը մուսէն կասկած ունին, թէ վիճակաւ կը նենգեն,
Ում որ ուզեն՝ նստեցնելու, նորա համար կը հանեն.
Ամենայն մարդ՝ միայն համրում՝ է իւր անձն՝ արժանի.
Այս է պատճառ՝ որ խեղճ մեր ազգ՝ այս ամ բոլոր՝ տէր չունի:

Երբ որ տեսան՝ մեր ազգապետք՝ թէ չըկայ այլ մէկ հընար,
Ընտրութիւնը՝ չէ յաջողում, ձեւք փոխվում են անդադար,
Մըտածեցին՝ Թռչնոյն յանձնել՝ ազգի խնամող՝ ընտրելու,
Հին ժամանակ՝ այս էր հնար՝ անսանձներուն սանձելու:*

Նահապետաց Թռչնարանում կան պահած շատ արծիւներ,
Որ նահապետք՝ հետն են տանում՝ որոց համար՝ անտառներ,
Սոցա մէջէն՝ մէկ ծեր արծիւ՝ վիճակներով ընտրում են,
Եւ քանի օր՝ ընկերներէն՝ առանձնացած՝ պահում են:

Երբ հասնում է՝ ընտրութեան օր՝ ազգի հարուստք և աղքատք,
Հաւաքվում են՝ քաղաքիս մէջ՝ ուր ընդարձակ՝ են շուկայք.
Թռցնում են՝ պատրաստ արծիւ՝ ձեռամբ միոյ՝ ծերունւոյ,
Որում յանձնած՝ է ողջ ազգէն՝ պահպանութիւն աթոռոյ:

Թռչունն առաջ՝ օդոյ մէջ շատ՝ է պտտելով սաւառնում,
Յետոյ յոգնած հանգչելու տեղ՝ է որոնել սկսում.
Եթէ նստի՝ մարդոյ գլխին, նա է ազգի ընտրածը.
Նորան կու տան՝ Հայկ Արամայ՝ պերճապատիւ Ճոխ բարձը:

Ապա եթէ՝ նա չըթառի՝ ոչ մէկ անձին՝ էլ վերայ,
Այլ տան յերդի, կամ ծառերու՝ պարտեզի մէջ՝ նստի նա,
Այն տան տէրը, ծառի տէրը՝ պիտի լինի՝ տէր ազգի,
Մասեաց Քաջքն՝ նորան ցուցին՝ բարձր գահին արժանի:

Իսկ թէ արծիւն՝ առաջին օրն՝ չընստի մէկ՝ յայտնի տեղ,
Կամ դաշտ թռչի, կամ սարերը, որսոց դնէ՝ Ճանկն ուժեղ,
Այլ օրերու՝ պիտի մընայ՝ այն սկսած՝ ընտրութիւն,
Արմաւիրէն՝ ցըրիւ չըգար՝ համախմբած՝ բազմութիւն:

*Իննսունևհինգ թուին առաջ այսպէս տեղի ունեցաւ Պարետի ընտ-րութիւնը:



Ահա այս եւ՝ քառսուն օր է՝ որ արծըւին թռչում է,
Քաղաքի մէջ՝ մարդու վերայ, կամ տան վերայ՝ նստում չէ.
Մէկ օր նստաւ՝ աշտարակում, մէկ օր մէկ ծառ՝ դաշտումը,
Չիմացուեցաւ՝ ծառի տէրը, անյայտ մընաց՝ ընտրումը:

Ծերոց մէջէն՝ հարիւրաւորք՝ վըկայում են թէ գիտեն,
Որ՝ թէ այն ծառ, թէ աշտարակ՝ տնկած հիմնած՝ մէկ օր են.
Պարէտ փրկիչ՝ Հայաստանի՝ իւր ընտրութեան՝ յիշատակ,
Տնկեց այն ծառ՝ այն դաշտի մէջ, և կանգնեց այն՝ աշտարակ:

Բայց Պարետի՝ ազգատոհմը՝ չէ երեւում՝ ի մէջ մեր,
Նոցա սերունդ՝ սպառել է՝ Արբակայ սուր՝ և սուսեր.
Այսօր վերջն է՝ այն ընտրութեան, էլ չթռչիր՝ արծիւը,
Թէ նահապետ՝ չը ընտրուի, պիտի փոխեն՝ այս ձեւը:*

Այս խօսելով՝ Ճանփայ ելան, գընում էին՝ դէպ քաղաք.
Տեսան հեռուստ՝ թէ Արմաւիր, և թէ յիշած աշտարակ
Արծիւն օդում՝ սաւառնում էր, պտտում էր՝ ամպումը,
Յետոյ եկաւ՝ ու թառեցաւ՝ աշտարակի՝ ծայրումը:

## Բ

## ԶԱՒԱՆ ԸՆՏՐԵՑԱՒ ՆԱՀԱՊԵՏ

Զաւան մտաւ՝ մայրաքաղաք, սպանդանոց՝ իւր տոհմի,
Ցաւոց հանեց՝ խորոց սրտին, յիշեց անցած՝ այն օր մի,
Երբ այն դուռէն՝ մատաղ տիօք՝ այլոց ձեռամբ փախցած,
Վըրէժառու՝ մահու սուրէն՝ ազատուելով՝ դուրս գընաց:

Քառասունեւչորս տարի անցաւ, որ նա կրկին՝ յետ դարձաւ,
Իւր հայրենիք՝ երբոր տեսաւ՝ աչքէն արտասուք՝ կաթեցաւ.
Այն էր միտքը՝ որ Արմաւիր՝ անյայտ, ծածուկ՝ բնակվի,
Չըցանկանայ՝ աւագութեան, ռամկութեան մէջ՝ կեանքն անցնի:

*Վերջակա ընտրութիւնը մերժուել էր. Եթէ այս ձեւը փոխէին, ար-դիւնք նոյնպէս պիտի ընտրէին.

Հայրենիքի՝ ծուխն էլ քաղցր է, անուշահոտ կը բուրէ,
Ջաւան սրտում երջանիկ է, իւր հայրենիք՝ հասել է.
Այն բազմամեայ պանդխտութիւն՝ դառն է նորա՝ սրտումը,
Փուշի նման՝ է այն ցցուած՝ նորա քաղցրիկ հոգումը։

Աշխաժողով քաղաքի մէջ՝ նորան ոչ ոք՝ է տեսնում,
Ամենեցուն՝ աչքն ու խելքը՝ դէպ արծուին՝ է դրնում.
Երբ կու թռչի՝ այն մեծ թռչուն, կամ ինչ կ՚անէ թռչելով,
Քանի՜ հազարք՝ կան որ իրանց՝ սիրտը շահում են յուսով։

Այլ արծիւը՝ տեղը նստած՝ մագլով կտուցն՝ է սրբում,
Կամ գլուխն է՝ տանում ոտքին, կամ ճիրանքն է՝ բարձրացնում,
Հազարաւոր՝ քարեր՝ վէրգեր՝ նորա չորս կողմ՝ թափվում են,
Արծիւ բընաւ՝ չէ վախենում, մարդիկ ՚ի զուր յոգնում են։

Վերջը մէկ քար՝ հասաւ արծւին, թռաւ գնաց՝ իւր տեղից,
Օդի միջին՝ սաւառնում էր. մարդոց սիրտն էր յուսալից.
Ցօրէս կու գայ՝ ու կը նստի՝ ի հարկէ իմ՝ գլխումը.
Ամենքեան՝ այս յոյսն ունին՝ ծածուկ իրանց մտքումը։

Յանկարծ արծիւն՝ եկաւ նստաւ՝ վերայ գլխոյ՝ Ջաւանի.
Ջաւան ձեռամբ՝ քշեց վանեց. փոքր էլ թռաւ արծըւի.
Կրկին եկաւ՝ Ջաւանի մօտ, և նստեցաւ՝ գլխումը,
Ջաւան քշեց՝ միւսանգամ, լաւ էլ զարկեց՝ դնչումը։

Մարդիկ տեսան՝ ու բարկացան, ինչ ես զարնում՝ թռչունին,
Կարծումես թէ՝ իսկ կու մընայ՝ նա միշտ թառած՝ քո գլխին.
Թէ մէկ էլ գայ՝ էլ մի քշիր, տեսնենք վերջը ինչ կ՚անէ,
Չըգիտես որ՝ թէ նա նստի, այդ լաւ բանի՝ նըշան է։

Ես ինչ գիտեմ, ասաց Ջաւան, արծիւէն եմ՝ վախենում,
Աչքերըս դեռ՝ հարկաւոր են, երեսըս եմ պահպանում.
Թող ձեր գլխին՝ գայ և նստի, լաւ նշանն էլ՝ ձեզ լինի,*
Ես պանդուխտ եմ, եկայ այսօր, խառն չեմ ձեր՝ ժողովի։

*Եթէ կամիս հասանել փառաց՝ փախիր ի փառաց անտի։



Մինչդեռ Ջաւան՝ այս էր խօսում, արծիւն եկաւ ճանկերով,
Բռնեց վմտուրք սաղաւարտի և բարձրացուց՝ թռչելով,
Մէկ ժամու չափ՝ պտոյտ եկաւ՝ սաղաւարտով՝ օդումը,
Ապա բերեց ու Ջաւանի հանդարտ դըրեց՝ գլխումը։

Ամենքեան՝ թէ ազգապետք, և թէ ամբոխ՝ որ տեսան,
Աղքատք, հարուստք՝ միաբերան՝ կանչեցին թէ՝ Եմք հաւան,
Թո՛ղ դա լինի՝ մեր նահապետ, այդ գեղեցիկ օտարը,
Երևի թէ՝ մեր ազգի մէջ՝ միայն դա՛ է ընտիրը։

Ջաւան կանգնած՝ էր իւր ձիով, և շուրջպատած՝ բազմութեամբ,
Վրդոված էր՝ սիրտն ու հոգին՝ իւր չափազանց տրտմութեամբ,
Առանձնական՝ կեանք էր պտրում, հանդիպեցաւ՝ ինչ բանի,
Իւր աշխատած՝ ուսոց վերայ՝ դրուեցաւ բեռն՝ աշխարհի։

Իւր սրտի մէջ՝ որոնում էր՝ որ մէկ հընար՝ գտանէ,
Անխելք թռչնոյ՝ ընտրութիւնը՝ իւրեան գլխից՝ հեռացնէ,
Ես պանդուխտ եմ, կանչեց Ջաւան, ինչի՞ էք դուք՝ ինձ ընտրում,
Ինչի՞ էք դուք՝ անբան թռչնոյ՝ արարմունքին՝ հաւատում։

Դո՛ւ ես՝ ասեն՝ մեր նահապետ, քե՛զ՝ մեզ տուին՝ քաջք Մասեաց.
Հայկայ գահին՝ դու ես ժառանգ, վերուստ քեզ է՝ պատրաստած,
Եթէ պանդուխտ՝ ես այս երկրում, այդ բանով քո ընտրութիւն,
Մեզ չէ հնար՝ փոխել այլ ևս, խնդրում ենք տուր՝ հաճութիւն։

Ահա՛ ազգն է՝ քեզ հայր և մայր, մենք քեզ եղբայր, քոյր, որդիք,
Թէ ես օտար՝ երկրի ծընունդ, Հայաստան քեզ՝ հայրենիք.
Սև աչք ունքով՝ մէկ գեղեցիկ աղջիկ կու տանք քեզ ընկեր,
Կեր մեր հացը, խըմէ քաղցուն, քո կընոջ հետ՝ ուրախ լեր։

Ջաւան ասաց. Ես օտար չեմ, միայն նորեկ՝ եմ այսօր,
Ոչ ձեր հային՝ բընաւ կարօտ, և ոչ գինւոյն՝ հին կամ նոր.
Նոյնպէս աղջիկ՝ սև աչք ունքով՝ նորան կ՚ըլնի ցանկալի.
Ո՛վ հարսն չքնաղ՝ և հրաշագեղ՝ կամաւ թողած չըլինի։*

*Մէկ անգամ ճողէց, հազար անգամ զղջացաւ։

Թէ ծընունդ ես՝ Հայաստանի՝ տուին ծերքն պատասխան,
Աւելի լաւ, և չափազա՛նց՝ ուրախ կ՚անէ՝ մեզ այդ բան.
Հայաստանը՝ իւր որդւոցմէն՝ խընամակալ կ՚ունենայ,
Օտար ազգէն՝ չի անարգուիր՝ փառաւոր պաշտ՝ Արամայ։

Թէ հարուստ ես՝ ոսկով, գանձով, եւ առաւել՝ ուրախ ենք,
Ծանրութիւն չես՝ դառնար ազգին, հարկէն թեթև՝ կը լինենք,
Այլ երբ սանս՝ թէ Օգնեցէք, մեր ամենայն մըթերքը,
Անձրևի պէս՝ կը թափթըփենք՝ դարշապարաց՝ քո առկը։

Թէ հարսն ունիս՝ չքնաղաղեղ՝ նա կը լինի՝ մեզ տիկին,
Մեր աղջըկունք՝ թող ծառայեն, լինին նորա աղախին.*
Ինչպէս դու ես՝ մեզ պաշտելի, նոյնպէս և քո բամբիշը,
Ի՛նչ ազգէ էլ՝ կ՚ուզէ լինի, միայն սիրէ՝ քո սիրտը։

Ահա պատրաստ է այն դարպաս, ուր որ Արամն է ծընել,
Երթանք՝ բազմիր՝ այն գահի մէջ՝ որ ձեւք Հայկայ՝ է հիմնել.
Մի տարի է՝ որ որբացանք, մեռաւ Արքան՝ Բղնունեան,
Դու մեր սրտին՝ սփոփանք տուր, փարատէ մեզ՝ տրտմութեան։

—Գոհ եմ ձեզմէ՝ բարեսիրտ Հայք և ազգասէրք փառաւորք,
Գիտեմ՝ որ ձեր բնութեան մէջ՝ աչալուրջ էք և արթունք.
Հաւատացէք՝ որ ես գիտեմ Հայկ-Արամայ՝ գահի գին,
Բայց ինձ դժուար՝ է յանձն առնուլ՝ կամ մեծ, կամ ծանրբեռն ազգին։

Դուք մէկ տարի էք որբ անտէր, ես աւելի՝ քառսուն ամ,
Իմ ազգատոհմ՝ հնձեց անգութ՝ մանգաղ մահու՝ տարաժամ.
Հայաստանէն՝ ինձ փախցրեց՝ երախտաւոր՝ մէկ հօղի,
Արեան ծարաւ սուրէն զերծայ՝ ինձ մոռացաւ՝ հայրենի.

Ցաւօք անցաւ և անյաջող, ուրախ, տրտում՝ իմ կեանքը,
Մէկ օր քաղցած, մէկ օր ծարաւ, մէկ օր առատ՝ ընթրիքը.
Երբ յետնեմ՝ սուրն էր շողում, առջեւս բաղդն՝ էր կանգնած,
Ինձ գրկումէր, համբուրում էր, յանձնանձում էր՝ մէջ գրկաց։

*Համաշխարհային յետ առաջադիմութեան էջն որ մեծամեծաց գործերը մինչ նոյն տարածութեան կը կրճատէին. Ինչպէս Նապոլէոն, Աղեքսանդր, Դերբեն, Շամիլին, որպէս հայ իւրեանց երկրով մեզ նշանակած։



Գաղաններըլ՝ իւրեանց որսն՝ վասն իմ աւար՝ են թողել,
Երբ մէկ փոքր՝ էի կարօտ՝ անբաւ գանձուց՝ տէր եղել.
Ծով իւր ծոցում՝ տեղ է տուել, վէմը դառել՝ անկողին,
Ապառաժը՝ ծաղկազըրդ՝ սըսկապան՝ իմ անձին։

Քառսունհինգ՝ տարին հասել՝ եմ հասակի՝ իմ կենաց,
Պանդխտութեամբ՝ անտէրութեամբ՝ ընկել եմ ծայր՝ աշխարհաց.
Ծով ու ցամաք՝ շատ եմ չափել, օտար լեզուք՝ եմ սովրել,
Իմ մայրենի՝ անոյշ լեզուն՝ գործ չածելով մոռացել։

Հաւատացէք՝ որ ինձ բերեց՝ այս երկիր սէր՝ հայրենեաց,
Ոչ ներութիւն, կարօտութիւն, ծարաւ գինւոյ՝ և կամ հաց.
Միայն անդորր՝ կեանք ուզեցի, որ հայրենեացս՝ մէջ լինիմ,
Այս տեղ ապրիմ՝ առանձնացած, այս տեղ հանգիստ՝ մեռանիմ։

Բայց ո՛չ։ Ինձմէն՝ հեռանում է՝ իմ որոնած՝ հանգիստ կեանք.
Ինչից որ ես՝ փախչում էի, ահա՛ անոր՝ պինդ կապանք,
Այնքան ծովի՝ ջուր եմ խմել, որ աղիքս՝ ուռել է,
Սրտիս մէջ էլ՝ չկայ ջերմութիւն, հոգիս խապաւ սառել է։

Ասաց ծերը. Մենք ուրախ ենք՝ որ դու այդքան կըթած ես,
Անտառի մէջ՝ ընկած փտած՝ մէկ անպիտան կոճղ չես.*
Քեզ վերին խնամք՝ կոփել տաշել՝ ընտիր արձան է արել.
Հայաստանին կոկած յղկած՝ երկնից պարգև է բերել։

Դու երջանիկ՝ կ՚անես մեզ էլ, և բարեբաղդ՝ Հայաստան,
Զարաբաստ՝ց կարես լինիլ՝ մըխիթարիչ, օգնական,
Աղաչում ենք՝ քեզ նահապետ՝ պատմէ մեզ քո անցքերը.
Լսենք քո՛ այդ՝ նոր պատմութիւն, լոյս տեսնեն մեր աչքերը։

—Ինձ չէ՛ արժան՝ որ ես պատմեմ. դառն է՛կէս իմ պատմութեան,
Բայց ձեզ համար՝ պիտի պատմեմ, և կը պատմեմ՝ ամեն բան.
Լաւ է որ ես՝ իմաց առնեմ, թէ ես ո՛վ եմ, ո՛ւմ որդի.
Քան թէ ձեզմէն՝ ծածուկ մընայ՝ թշուառութիւն իմ տոհմի։

*Թէ ով կոչէ կոճղ անպիտան, չլինի երբէք ընտիր արժան,
Նոյնպէս և այր ով կատարի, բէ չէ ի վերջոյ փորձ և արի։

## Գ.

### ԶԱՒԱՆ ԳԵՐԻ Ի ՄԱՆԿՈՒԹԵԱՆ

Հաղարաւորք՝ կան ձեր միջին՝ որ դեռ ես չեն՝ մոռացել,
Թէ ի՛նչ կերպիւ՝ մեռաւ Պարէտ՝ որ Ճանիփէն նոր էր դարձել.
Ազգ չըհաճեց՝ նորա փոխան՝ նորա տանէն ընտրելու,
Արին Արբակ ընտրուեցաւ՝ դահ Արամայ նստելու։

Այլ Պարետի՝ երեք որդին՝ թուր հանեց դէմ՝ Արբակին,
Կամեցաւ որ՝ ուժով տիրէ՝ իւր հայրենի՝ աթոռին,
Ազգամիջեան՝ մարտ բորբոքեց. ինքն մեռաւ կռւումը,
Արբակ-դարձաւ՝ յաղթանակաւ, այլ բարկութիւն՝ սրտումը։

Հրրամայեց՝ որ Պարետի՝ ազգատոհմը՝ սուր քաշեն,
Տասնուհինգ օր՝ Արմաւիրում՝ փայլում էին սուր և զէն.
Սրախողխող կոտորուեցան՝ արուք և էգք Պարետայ,
Կոտորածէն՝ ազատուեցաւ՝ միայն փոքրիկ մէկ տղայ։

Մէկ տարեկան՝ էր այն որբուկ, յանձնուած էր մէկ մարդու,
Որ ձի հեծնել, և նետ յարել, կամ որս անել՝ սովրեցնու.
Երբ լսուեցաւ՝ քաղաքումը՝ Արբակայ այս՝ հրրաման,
Տըղին առաւ՝ ու դուրս փախաւ՝ քաղաքէն այն՝ քաջ պաշտպան։

Դէպ ի սահմանս՝ Կապադովկայ՝ տարաւ տըղին՝ այն մարդը,
Աւաղակաց հանդիպեցաւ, ընկաւ անդարձ՝ կորուստը.
Տըղին տարան՝ Ամասիա, ծախեցին մէկ՝ ձկնորսի.
Մընաց որբը՝ ձկնորսի մօտ, ձրկնորս դառաւ՝ Պոնտոսի։

Ես եմ այն որբ՝ ձկնորս տղայն, և իմ անուն՝ Զաւան է։
Զաւան կանչեց՝ բազմութիւնը, այդ մեզ ծանօթ անուն է.
Դու ժառանգ ես՝ քաջ Պարետայ՝ արծիւն էլ այդ էր ցուցնում,
Քո հօր անկած ծառի վերայ, կամ աշտարակ էր նստում։



Այս աշտարակ՝ մենք վըկայ ենք՝ որ Պարէտը՝ է կանգնել,*
Դաշտի միջի՝ այնՃնըռան ծառ՝ նոյն օր Պարէտ՝ է տնկել.
Մասեաց քաջքը՝ քեզ մեր աչքին՝ գողցես մատով՝ ցոյց տուին,
Հայկայ դահի՝ ժառանգութիւնն՝ է բարեբաստ Զաւանին։

Երբ լըռեցին՝ աւագանին, Զաւան՝ կրկին սկսաւ,
Ասաց. Տեսա՛ք՝ ի՛նչ հասակի՝ դժբաղդութիւն՝ ինձ հասաւ.
Մէկ օր ծովի աւազակք՝ ինձ ծովափնէն՝ բռնեցին,
Նաւերի մէջ պահպանելով իւրեանց ծառայ շինեցին։

Քանի՛ անգամ՝ տարվան մէջը՝ Ճերմակ ծովէն՝ Սև ծովը,
Ու Սև ծովէն՝ Ճերմակ ծովը՝ գընում գալիս՝ էր նաւը.
Հանդիպում էր՝ մեզ փոթորիկ, ալէկոծվում՝ սաստկապէս,
Կամ հէնք էին՝ մեզ պատահում, կամ փորձութիւնք՝ այլ պէսպէս։

Ծովի օդին՝ ընտելացայ, և լողանալ՝ սովրեցայ,
Ծովին տակը ընկղմելու՝ սատափ պտրել՝ վարժեցայ,
Քանի վայրկեան՝ ջրրի մէջը՝ կամիմ կենալ, կը կենամ,
Ցատակներում ինչ կայ, չըկայ, տեսնել, գտնել կու կարնամ։

Ծովի տղայ՝ էր անունս, աւազակքը կոչեցին,
Նաւի կոյմէն՝ ծովայատակ՝ հաստատ առնէր Զաւանին,
Զուկը ձեռքով՝ էի բռնում, անդնդախոր՝ տեղերում,
Օձեր վըզիս փաթթում էի, ու պահում իմ ծոցերում։

Բայց երբ դառայ՝ տասն տարեկան՝ ես այն կեանք չըսիրեցի,
Աւաղակաց՝ գործ տեսնելով յուղիղ սրտէ՝ ատեցի.
Տեսայ որ միշտ՝ չարեաց մէջեն, և շատ մարդ էլ՝ մորթումեն,
Միտքս դըրի՝ որ հեռանամ՝ այն ատելի մարդոցմէն։

Քանի անգամ՝ ականատես՝ էի նոցա՝ հինուեթեանց.
Քանի նաւեր՝ մարդոցմով լիք՝ ծովի յատակ՝ ընկլուզած.
Ինչպէս նաւեր՝ էին բռնում, միջի մարդոց՝ գերելով,
Աւարները՝ առնում էին, նաւը ջնջում՝ այրելով։

*Այն աշտարակի անունովն է կոչուած այժմեան Աշտարակ գիւղը, որ տեղէ տեղ փոխուելով վերջապէս հաստատուել է այդ տեղումը։

Ծովեզերեայ՝ քաղաքները, կամ բազմամարդ՝ կղզիքը,
Էին նոցա՝ ասպարէզը, զբօսանաց՝ տեղիքը.
Աւար, կապուտ և կողոպուտ, գերի կանայք, աղջըկունք,
Ոչ հասակը ունէր պատիւ, ոչ դառնաչէտ՝ արտասունք:

Փիւնիկեցւոց՝ վաճառականք՝ էին նոցա՝ գողգարան,
Այսօր՝ մէկ նաւ՝ կողոպտեցին, վաղիւ հետքը՝ ջնջած կան,
Գերիք, աւարք՝ միօրինակ՝ են նոցա մէջ՝ պարտակվում,
Մարդագին նաւք՝ շատ են շրջում, մարդավող շատ պատահում:

Վա՜յ այն նաւին՝ որ հանդիպի, ու կամենայ՝ դէմ կենալ,
Թող չունենայ՝ փրկութեան յոյս, նա չէ կարող՝ դիմանալ,
Գիշեր ցերեկ՝ կը հալածեն, կամ նաւը ձեռք՝ կը ձըգեն,
Կամ թէ նաւին՝ հընարիւք ինչ՝ կըրակ կու տան, կու այրեն:

Նետի ծայրին՝ մէկ իւղալի՝ ձիթոտ ջնջոց են կապում,
Նետը ուժգին՝ նաւի կայմին, կամ կողքերուն՝ սևեռում,
Հրդեհվում՝ է այն ջնջոցը, երբ որ նըրան ջուր հասնի,
Ջըրէն իսկոյն՝ բորբոքվում է, մինչ որ պիտի շիջանի:

Ի՞նչ թող անեն՝ խեղճ նաւաստիք՝ ծովի անհուն՝ տեղերում,
Կա՞յ փրկութիւն՝ բոցէն կըրակէն՝ այն անյատակ՝ խորերում.
Գերութիւնը՝ բաղդին համրում, իւրեանց կամօք են տալիս,
Միայն թէ հուր՝ չայրէ նըրանց, կամ չըխեղդէ՝ ջուր յալիս:

Անթիւ անհուն՝ գանձ են կիտում, ոսկի, արծաթ, գոհարներ,
Թաքցընում են անքոյթ տեղեր, և ամայի կղզիներ,
Այլ թէ ո՞ւր է այն վայելում, ես չեմ կարող՝ ձեզ ասել,
Աւազակաց և ոչ մէկը՝ այն գանձէն մասն՝ չէ առել:

Անմարդաբնակ՝ մէկ կղզի կայ՝ որ անունը՝ Պատմոս է,*
Այն հէներու՝ բընիկ որջը՝ պատսպարան՝ այս տեղն է.
Նաւահանգիստն՝ է մէջէ մէջ, ապառաժ է՝ չորս կողմը,
Վէմերու մէջ թաք են կենում՝ ապաստանած՝ նաւերը:

*Յետ բազում ժամանակաց այս Պատմոս կղզին աքսորվեցաւ Յովհաննէս աւետարանիչն, և այս տեղ տեսաւ յայտնութեան տեսիլը:

1922



Մէկ օր տարան՝ ինձ այն կղզի, ամէն խորշերն ես տեսայ.
Չեմ յաջողէր՝ լեզուով պատմել, թէ որքան գանձ՝ այն տեղ կայ,
Սիրտս ուզեց՝ այն տեղ մընալ, թաք կենալ մէկ քարի տակ.
Այսպէս մընայ՝ աւազակաց՝ մօտ միայն իմ՝ յիշատակ:

Երբ որ նոքա ճամբայ ընկան՝ ես սկսայ՝ փոշմանել,
Այն կղզւոյ մէջ՝ չըկայր ապրուստ, մնաց քաղցած մեռանել,
Բայց ոչ հեռի՝ ցամաք տեսայ, ու համարձակ՝ ընկայ ծով,
Հասայ ողջամբ՝ միւս երես, ջըրէն անցայ՝ լող տալով:

Եփեսոս էր՝ այն երկիրը՝ ուր որ հասայ՝ կղզիէն,
Մէկ հատ ծեր մարդ՝ Փիւնիկեցի՝ յանկարծ բռնեց իմ ձեռքէն.
Քաշ քաշ տարաւ՝ իւրեան նաւը, ոտքըս կապեց՝ շղթայով,
Նաւ երբ հասաւ՝ Տիւրոս, Սիդոն՝ ինձ վաճառեց՝ արծաթով:

Վաճառական՝ էր նոր տէրըս, իմ ժըրութեան՝ հաւնեցաւ,
Վաճառաշահ՝ արուեստը՝ ինձ սովրեցնել՝ կամեցաւ.
Շուտ սովրեցայ՝ ամենայն բան, գործակատար ինձ կարգեց,
Թէպէտ գերի՝ էր իմ անուն, բայց որդւոյ պէս՝ ընդունեց:

Նորա կրպակն՝ էր անուանի՝ լի ծանրագին՝ վաճառօք,
Արհեստակերտք՝ ոսկի, արծաթ, յեռեալ անգին՝ գոհարօք,
Առաւօտէն մինչ երեկոյ՝ լի էր կրպակն բազմութեամբ,
Առուտուրը՝ չունէր համար, շահ գալիս էր՝ ճոխութեամբ:

Բայց մէկ բան կայր՝ որ ես չէի՝ ամենևին՝ հասկանում,
Քանի ծառայք նստած էին՝ բռնած տախտակ՝ ձեռներում,
Եղէգնի մուր՝ էին թաթխում, և գծգծում տախտակը,*
Յետոյ տախտակն՝ այնպէս գըծած՝ դնում էին՝ արկեղքը:

Երբ հարկաւոր՝ էին լինում, տախտակները՝ հանում են,
Այն գըծերը՝ մարդու նըման՝ գըծողի հետ՝ խօսում են.
Քանի տարվան՝ հաշիւները՝ տախտակներին՝ են յանձնած,
Երբ ուզում են՝ հարցընում են, իմանում ինչ կան գըծած:

*Փիւնիկեցւոց մէջ գտան և ծաղկեցուցին գրչութեան նշանաց առաջագոյն գործածութեան:

Ես այն գըծեր՝ ուզում էի թէ ինչ բան են՝ իմանալ.
Մէկն էլ չուզեց՝ որ յաջողեմ՝ այն գծերը՝ հասկանալ.
Ինչի՞դ պէտք է՝ էին ասում, ու միշտ վըրէս՝ ծիծաղում,
Ինձ համար մեծ՝ ցաւ էր դառել՝ տախտակների՝ այն գըծում։

Սիդոնի կամ՝ Տիւրոսի մէջ՝ ես այլ մարդիկ էլ տեսայ,
Որ ո՛չ միայն՝ այն տախտակը՝ ինչ որ գըծում են նըքա.
Այլ և այնպէս՝ շատ տախտակներ, և պղնձէ՝ թերթիկներ,
Մըտիկ տալով՝ խօսեցնում են, հասկանում են այն գըծեր։

Մէկ ծեր մարդու՝ հանդիպեցայ, ու հարցըրի՝ այս բանը,
Ծերը ասաց. դու Փիւնիկ չես, քեզ չեն յայտներ՝ գաղտնիքը.
Թէ իմանան՝ որ ուզում ես՝ ծածուկ սովրիլ՝ մէկիցը,
Ամենայն կերպ՝ կը աշխատին՝ որ քեզ զրկեն՝ կեանքիցը։

## Դ

### ՋՈՒԻԱՆ՝ ԱԶՈՎՏՈՍ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ՊԻՏԻ ԶՈՀ ԼԻՆԻ

Ծերի այս խօսք՝ մեծ ցաւ եղաւ՝ քնքոյշ գողտրիկ՝ իմ սրտին,
Փիւնիկեցիք՝ մարդակեր ազգ՝ երևեցան՝ իմ աչքին,
Ծովի վերայ՝ աւազակք էլ՝ Յոյնք էին կամ Տիւրացիք.
Ինձ բաւական՝ կշտացուցած՝ էին այն հէնք՝ տըմարդիք։

Այժմ ուրախ՝ պիտի լինիմ՝ որ քաղաքի՝ միջին եմ,
Ազատվել եմ՝ այն հէներից, կողքէն դուրս՝ ելել եմ.
Վաճառաշահ՝ առուտուրը՝ Տիւրոս, Սիդոն՝ է ծաղկած,
Հարստութիւն՝ փարթամութիւն ամենայն տեղ՝ է փռւած։

Ինչո՞ւ արդ՝ տրտմութիւնը՝ սիրտս ու հոգիս պատել է,
Կարծես՝ թէ մահ՝ բարակ թելով՝ գլխիս վերայ՝ կախվել է,
Ամեն կողմանց՝ աչքիս միայն՝ երևում են՝ դահիճներ,
Արևու դէմ՝ վախեցնում է՝ ինձ սեպհական՝ իմ ստուեր։

Նախանձաւոր է այս ազգը, լըջամիտ մարդ՝ չէ սիրում.
Եւ մանաւանդ՝ օտար, պանդուխտ, իւր մէջ տեսնել՝ չէ ուզում.
Նժդեհք միայն՝ պիտի լինին՝ գերի, ծառայ և ստրուկ,
Նոցա արիւնն՝ միշտ ծծում են՝ ինչպէս անյագ՝ ինչ տզրուկ։



Մէկ անասուն՝ չունի այնքան՝ նոցա ձեռին՝ նեղութիւն,
Ինչպէս գերի՝ ծառաները՝ քաշում են մեծ՝ անձկութիւն,
Եզների տեղ՝ մարդ են լծում՝ վարուցանքը՝ անելու,
Էշէն էժան՝ է այն տեղ մարդ՝ որ հաց չունի ուտելու։

Թէ իմանան՝ որ մէկ օտար՝ մարդ է մտել՝ մէջերը,
Կամ առուտուր՝ է սովրել, կամ թէ զննել՝ ծովերը.
Ամեն ջանք էլ՝ գործ կը դնեն, որ օտարին սպաննեն,
Որ առուտուր՝ ուրիշ ազգ էլ՝ չըհասկանան, չըսովրեն։

Այս առուտուր՝ այնպէս գործ է, որ ամեն մարդ կը ցանկայ,
Ով շատ ունի՝ շատ կը շահվի, ով քիչ ունի՝ քիչ կու գայ.
Փիւնիկեցիք՝ ուզում են որ՝ ամեն աղբիւր՝ կուրացնեն,
Որ մի միայն՝ իրանք շահվին, իւրեանց վաճառք՝ լայնացնեն։

Նաւով գընում՝ են ծովերը, ու ամեն տեղ՝ են հասնում,
Ճանփաները՝ որչափ կարեն՝ ծածկելու են՝ ջանք անում.
Եթէ տեսնեն՝ թէ օտար նաւ՝ յետևներից գալիս է,
Իւրեանց ճանփայն՝ շուտ փոխում են, որ այն նաւը չըհասնէ։

Շատ անգամ էլ՝ սուտ ծուռ ճանփայ՝ են ծովի մէջ բաց անում,
Միւս նաւի՝ նաւապետին՝ այս հընարքով՝ խաբս ձըգում.
Նա միամիտ՝ թէ ուզում է՝ նոցա ճանփով՝ երթալու,*
Մէկէլ տեսնես՝ չունի հընար՝ խրված տեղից՝ շարժելու։

Ծովի միջին՝ ծանծաղ հուներ և աւազներ շատ տեղ կան,
Նաւը կեղծեօք՝ դէնն են տանում՝ որ աւազին մօտենան.
Իւրեանք շուտով՝ հեռանում են, օտար նաւը՝ վըտանգում,
Յետոյ կրկին՝ իրանք գալիս՝ խրված նաւը՝ կողոպտում։

Այս չար նախանձ՝ Փիւնիկեցւոց՝ ինձ էլ հասաւ՝ վերջապէս,
Իմացան որ՝ ես օտար եմ, թշնամացան՝ սաստկապէս.
Առաջ քուրմերն՝ ոտքի ելան, և սկսան խօսելու,
Ասացին թէ՝ այդ օտարին՝ տուէք մեր ձեռք՝ զոհելու։

* Փիւնիկեցւոց այս չարանախանձ բնաւորութիւնը պատմական փաստ է։

Բայց տէրըս ինձ՝ շատ էր սիրում, քաղաքի մէջ՝ մեծ մարդ էր,
Ինձ ղրկելու՝ քրմերի ձեռք՝ տալու բռնաւ՝ յօժար չէր·
Այլ պահպանել՝ ևս կարող չէր, վախենում էր՝ խուժանէն,
Ինձ ասաց որ՝ հնար գտնեմ, փախչիմ երթամ՝ իր տանէն։

Հին շորերով՝ առանց փողի՝ ես հեռացայ՝ տիրոջմէս,
Այն քրմերէն՝ թաք կենալու՝ հնար գտայ՝ ես սէս պէս.
Բայց վախեցայ՝ նաւ մըտանել՝ որ կրկին չըբռնըվիմ,
Ձկնորսութիւն սկսեցի, որ սովամահ չըմեռնիմ

Այս ծովեզերք՝ ձուկն առատ է, և շատ էլ կան՝ ձկնորսներ,
Ձուկն ծախվում՝ է ծովափում, և տարվում այլ՝ երկիրներ·
Մեծ առուտուր՝ կայ ձկներով՝ Յեբուսացւոյ՝ կողմերում,
Որքան յաջող՝ լինի որսը, ձուկն չէր մնում՝ մեր ձեռում։

Այս գործէն ես՝ շատ շահվեցայ, ունեցայ հինգ՝ նաւակներ,
Մէկով էի՝ ես ման գալիս՝ չորսում կային՝ վարձկաններ·
Ուռկան ու ցանց, վարմ ու կարթեր՝ շատ ունէի՝ ծովումը,
Ոսկի արծաթ տեղ էր արել՝ սեպհական իմ՝ ծոցումը։

Ձկնորսները՝ նախանձեցան՝ իմ աջողակ գործերուն,
Առաջ ծածուկ՝ Ճիգն դըրին՝ որ վնաս տան՝ որսերուն.
Յետոյ յայտնի՝ թշնամացան, ասին սա մեր ազգէն չէ։
Չենք տեսնում որ մեր Քամոսին՝ իւր օգնութիւն՝ սա կոչէ։

Այս իրաւ էր, ես Քամոսին՝ մէկ անգամ ևս՝ չեմ պաշտած,
Անուշավան, Արամ-երգը, Հայկերդ մարէս՝ չեմ հանած.
Թէպէտ մանուկ՝ էի մատղաշ՝ երբ մեր երկրէն՝ հեռացայ,
Այլ իմ նախնեաց կըրօն, լեզու՝ միտք բերել չըծուլացայ։

Գիտեմ որ Հայկ՝ Բաբիլոնէն՝ անոր համար՝ դուրս եկաւ,
Որ Բէլ նորան՝ Քամոս կուռքը՝ պաշտել տալու՝ կամեցաւ.*
Նա Քամոսի՝ պիղծ արձանին՝ երկրպագել՝ չուզելով,
Բէլին յաղթեց՝ Ճակատի մէջ՝ համակըրօն՝ քիչ մարդով։

*Զաւան՝ այն ազգային Երգերից՝ խորեան համար այս ծաղաճարն էր լինել։



Թէպէտ շըթամբք՝ անարգած չեմ՝ Քամոսի սուտ պաշտօնը,
Այլ միշտ նպաստ՝ էի կանչում՝ Հայկայ պաշտած՝ կըրօնը,
Առաջ չէին՝ ձկնորսները՝ ինձմէն մէկ բան կասկածում,
Բայց տեսայ որ՝ շուտով նախանձ՝ նոցա աչքերն՝ է բացում։

Այն տեղէն էլ՝ ես կամեցայ՝ նաւակներով՝ հեռանալ,
Որ յաջողեմ՝ առանց կաքեաց՝ անդորրութեան՝ մէջ մընալ·
Այլ նախանձը՝ արթուն գըտաւ, Ճանապարհըս՝ փակեցին,
Նաւակիս մէջ՝ քընած տեղըս՝ վըրայ հասան, բռնեցին։

Տարած քաղաքն էր Ազովտոս, ինձ տուին ձեռք՝ քըրմերին·
Ասեն՝ Սա չէ պաշտօն տանում՝ մեր աշխարհի՝ կուռքերին·
Սովրել էր մեր՝ առուտուրը։ Սիդոն ղրկել՝ կամէին.
Սա փախել էր ղըհարանէն· կը խուսէ իւր՝ հայրենին։

Քըմաց համար՝ ուրախութիւն եղաւ այս իմ՝ վըտանգը·
Մեհեանների՝ մէջ հնչեցին՝ իսկոյն ցնծղայն, ղանգակը·
Հաւաքվեցան՝ Ազովտացիք, տեսանել իմ՝ մարդազոհ,
Բաղումք սրտով՝ խղճում էին, միայն քրմերն՝ էին գոհ։

Երեսնամեայ՝ ծաղկեալ հասակ, իմ գեղեցիկ՝ կերպարան,
Գլխոյս համար՝ մեծ բարեխօս՝ ու ջատագով՝ կանգնեցան,
'Ազովտացի՝ տիկնայ մէջէն՝ մէկ քանիսը՝ գընացին,
Ու այն տեղւոյ՝ Մեծաւորէն՝ իմ փրկութիւն՝ խնդրեցին։*

Եկաւ իսկոյն՝ Մեծաւորը, օդապարիկ՝ ձի նստած,
Ականակուռ՝ ապարօշը՝ գլխին շըքեղ՝ փաթըթած,
Հարիւրաւոր՝ էին ծառայք, զինակիրը՝ առջևէն,
Շըջապատը՝ զինուորք կային, և դահիճը՝ յետևէն։

Հասաւ, մտաւ՝ մեհենի մէջ, բազմութիւնը՝ տեղ տուեց,
Նա սեղանի՝ վըրայ նայեց, ինձ նշմարեց, ու կանգնեց·
Նուիրական՝ հուրը վառ էր, պատրաստած ինձ՝ այրելու,
Քուրմի ձեռին՝ կայր դաշնակը՝ սըրտիս մէջը՝ ցցելու։

*Աստուածաշունչ գրոց մէջ նախարար է կոչուած· Բայց ես նախարար՝ իշխան բառը Պարթևաց հետ մտած համարելով, նախնի Հայերէնից չեմ նախըրում, և ոչ մէկ բերանը չեմ գտնում։

Հաւատարար զոհ՝ էին ասում, պատարագում՝ Քամոսին,
Որ նա նոյա հասնի նպաստ՝ առաջակայ գոռ մարտին,
Մէկ պատերազմ՝ էին բացել՝ ընդդէմ բընիկ՝ թշնամեաց,
Ուզում էին՝ հաշտեցնելու՝ կուռքին արեամբ՝ օտարաց։

Բազմութեան մէջ՝ մի՛ աղջիկ կայր՝ տասներկու՝ տարեկան,
Խուժանի դէմ՝ փայլում էր նա՝ ինչպէս գոհար պատուական,
Երեւում էր՝ որ հարուստ էր, իւր շորերն էր՝ ցոյց տալիս,
Նա արտասուօք՝ իմ աղաղակ՝ անմխիթար՝ էր լալիս։

Երբ որ տեսաւ՝ Մեծաւորին, գընաց ընկաւ ոտները,
Ասաց ինձ տուր՝ պարգեւի տեղ՝ այս խեղճ գերւոյ՝ օրերը,
Ես հարիւր ցուլ զոհի համար այս մեհենին՝ կը ձօնեմ,
Միայն թէ մահ՝ այս պանդխտի՝ ես բաց աչօք՝ չըտեսնեմ։

Բազմութիւնը՝ յօժարեցան, որ ցուլերը՝ իսկոյն գան,
Մեծաւորի՝ հըրամանաւ՝ իմ կապանքըն՝ քակվեցան.
Զոհը դարձաւ՝ ուրախութիւն, բազմութեան փոր կշտացաւ.
Հարիւր ցըլուց՝ գընով իմ կեանք՝ յայտնի մահէն փրկեցաւ։

Մեծաւորը՝ ինձ պարգեւեց՝ գերի ծառայ՝ աղջըկան.
Աղջիկը ինձ՝ տարաւ իւր տուն, տուեց ինձ տեղ հանգստեան.
Ամենայն կերպ՝ հետեւում էր՝ որ ես այն օրն՝ մոռանամ,
Մըխիթարվիմ, և սփոփվիմ, կրկին հոգւով զօրանամ։

## Է

### ԶԱՒԷՆ ՈՒՍԱՆԻ ԶԴՊՐՈՒԹԻՒՆ ՓԻՒՆԻԿԵՑԻՈՑ

Ճոխ և հարուստ՝ վաճառական՝ անբաւ գանձուց՝ ոսկւոյ տէր,
Քանի ամսովք՝ յառաջ քան զայս՝ ի մէջ մարտի՝ մեռել էր.
Սորա անչափ՝ հարստութեան՝ միայնակ մի՝ ժառանգը,
Էր այն չքնաղ՝ հըրաշագեղ՝ ինձ ազատող՝ աղջիկը։

Քանանացի էր՝ նա ազգաւ, որբ մնացած՝ ի ծնողաց.
Ունէր եղբայր, քոյր ազգական, ամենքն էին՝ վախճանած.
Ծառայք, գերիք և աղախնայք՝ թէպէտ տանը՝ շատ ունէր,
Բայց ինքն միշտ՝ սենեկի մէջ՝ համարեա թէ՝ միայն էր։



Երբ ես մտայ՝ այն ապարանք, իսկոյն մտքով՝ ճանչըցայ,
Որ հին ծառայք՝ նախանձուեցան, չար խորհուրդը՝ իմացայ.
Ես լռեցի՝ իմ սրտի մէջ, աջող ժամ եմ՝ պտրտում,
Թէ երբ կ՚ըլնի՝ չարաբաստիկ՝ հալածանաց աւարտում։

Իմ տիրուհին՝ էր հանճարեղ, նորա անուն՝ Աստարբէ,
Ինքն ինձ շուտով՝ պաշտպան կանգնեց՝ որ նոցամէն՝ ազատէ.
Չըթողեց ինձ՝ նոցա մէջը, ծառաներից՝ բաժանեց,
Իւր առանձին՝ սենեկի մերձ՝ ինձ կեցութեան՝ տեղ տուեց։

Յետոյ կամաց՝ չար ծառայից՝ սկսեց նա՝ հեռացնել.
Ով որ վնաս՝ կարող էր ինձ՝ մի՛ հընարիւք՝ հասցընել.
Հաւատարիմ՝ ծառաներով՝ իւր շրջապատ՝ ամրացրեց,
Եւ գլխաւոր՝ գործակատար՝ նոցա վերայ՝ ինձ դըրեց։

Թէպէտ գերի՝ էի յիշվում, բայց տիրուհիս՝ իւր սրտում.
Ինձ՝ ոչ ծառայ, այլ բարեկամ, խորհրդակից՝ էր համրում.
Նորա հարիւր՝ և քըսան նաւ. և քըսան և՝ մի կըրպակ.
Իւր ժըրութեամբ՝ էր խեղճ Զաւէն՝ կառավարում՝ միայնակ։

Եօթն տարի՝ ծառայեցի՝ այն աչաղեղ աղջըկան,
Մէկ օր նորա՝ կամաց ընդդէմ՝ չեղէ երբէք՝ ի շարժման.
Հաւատարիմ ծառայութեամբ՝ գըրաւեցի իւր անձը,
Արթուն անխոնջ՝ աշխատութեամբ՝ շահեցուցի՝ ճոխ գանձը։

Գինի, օղի՝ չէի խըմում, նարտ և քուէ՝ ոչ խաղում,
Ոչ ծառայից՝ անիրաւում, ոչ աղախնայց՝ ըկնեցնում.
Իմ սիրական՝ զբօսանքը՝ էր տախտակի՝ գըծելը,
Շատ մարդ գըտայ՝ որ սովրեցրին՝ ինձ այն գաղտնի գըծերը։*

Աստարբէ ևս՝ շատ էր սիրում՝ այսօրինակ պարապմունք,
Նորա էլ մեծ՝ զբօսանքը՝ էր տախտակի՝ խնդրծունք.
Ինձ շատ տախտակ՝ էր նա բաշխել՝ իւրեան ձեռով գծգծած.
Նոքա ինձ հետ՝ համարեա թէ՝ խօսում էին՝ պարզ ու բաց։

*Շատերն այն փիլիսոփայութեամբ էին սովորեցնում որ անժխտելի ճշ- մարտութիւն անէին։

Երրորդ ամիսն՝ էր իմ այն տեղ՝ ծառայութեան օրերում,
Որ Աստարբէ՝ մի օր հարցուց՝ իւր տախտակաց՝ գծերուն.
Ու իմացաւ՝ որ ամեն օր՝ հարիւր քըսակ՝ ոսկիներ,
Են աւելնում՝ իւր գանձուց մէջ, և մտնում են՝ իւր մըթեր։

Այս եղև որ՝ ես սկսայ՝ տիրուհւոյս հետ՝ խօսելու,
Ու հարցուցի՝ թէ ի՞նչ հընարք՝ կայ ի մէջ այս՝ գըծերու,
Որ մարդոյ հետ՝ այսքան յայտնի՝ երբ ուզում են, խօսում են,
Քանի տարվան՝ անցած բանը՝ այսօրվան պէս՝ յայտնում են։

Աստարբէ շատ՝ ծիծաղեցաւ՝ իմ միամիտ՝ պարզութեան,
Ասաց Զաւան. մի՞ կարծեր գիծ՝ ունի լեզու կամ բերան.
Որ մեր հետ նա՝ երբ խօսում է, կամ տախտակի՝ լեզուն է,
Որ ամեն բան՝ երբ պէտք լինի՝ պարզ ու արձակ յայտնում է։

Այս մի հընարք՝ ենք մենք գտել, յատուկ Փիւնիկ՝ երկրումը,
Որ տախտակի՝ վերայ գծենք՝ ինչ որ կայ մեր մըտքումը.
Մարդոյս միտքը՝ շատ առատ է, երբ սկսի՝ արդիւնք տալ,
Ոչ մի մըթերք՝ են բաւական՝ այն ճոխութեան՝ տեղ դառնալ։

Մարդ ուզում է՝ մի մարդ գտնել՝ որ իրերաց՝ հետ խօսին,
Իւր սրտի մէջ՝ ինչ խորհուրդ կայ՝ հաղորդ առնէ՝ միւսին.
Այդ պատճառաւ՝ ով որ օտար՝ աշխարհ պանդուխտ է լինում,
Այն աշխարհի՝ լեզուն շուտով՝ սովրելու է՝ ջանք դնում։

Որ այլոց խօսք՝ ինքն իմանայ, և իւրն այլոց՝ հաղորդէ,
Որովհետև՝ բանական է՝ անբանի պէս՝ չըլըռէ,
Օտար լեզուն՝ երբ սովրեցաւ՝ էլ նա պանդուխտ չհամվիր,
Գիտէ խօսել այն բարբառով՝ որով վարվում է երկիր։

Լեզուն միայն՝ այն տեղ է պէտք՝ երբ երկուսն էլ՝ մէկտեղ են։
Դու էլ, ես էլ, այժմայս տեղ ենք, շնորհակալ ենք՝ մեր լեզուէն.
Բայց եթէ դու՝ Սիդոն երթաս, ու ես մնամ՝ Եղտում,
Իմ խօսքն ինչպէս՝ քեզ հասկացնեմ՝ ինչ որ կ՚լինի իմ մտքում։



Գիտեմ որքան՝ գաղտնի բան կայ՝ առուտուրի՝ միջումը։*
Ես մի նոր շահ՝ եմ մտածել, որ դեռ կայ իմ՝ մտքումը.
Դու մօտս չես՝ որ քեզ յայտնեմ, դու Սիդոն ես գնացել.
Այնպէս բան չէ՝ որ կարենամ՝ այլոց բերնով ապսպրել։

Կամ ես պիտի՝ գամ քո մօտը, կամ քեզ պիտի կանչել տամ.
Մինչև մի բան՝ քեզ իմաց տամ՝ տեղէս պիտի հեռանամ.
Քանի՞ գործեր՝ պիտի կորչին, երթալ գալոյ՝ միջոցին.
Կեանքս պիտի՝ ունայն անցնի՝ ամուլ անպէտք այն ճանփին։

Հազարաւոր՝ տարիք անցան՝ որ մարդ այսպէս՝ էր կենում,
Մէկ առուտուր՝ թէ անում էր, հազարն էլ բաց՝ էր թողում.
Թէ մտքի մէջ՝ բան էր ծաղկում, չորանում էր՝ իւր տեղը,
Անլուղական՝ մնաց ծընունդ՝ անծին տանում էր մահը։

Ինչպէս կանայք՝ որ յղանան՝ պիտի ծընին՝ անպատճառ,
Ինն ամիս են կարող պահել, աւել պահել՝ չեք հընար,
Երբ որ հասնի՝ ժամանակը՝ նա ինքն իրեն կը ծընի,
Ուզէ չուզէ՝ աշխարհ կու գայ՝ հասուն պտուղ՝ արգանդի։

Մարդու միտքը՝ յղացել էր, պիտի բերէր՝ նոր պտուղ.
Նոր գիւտերով՝ պիտի մերժէր՝ հին կուրութեան՝ մառախուղ,
Առաջ փայտը՝ քարը տաշեց, տուեց մարդու՝ կերպարան,
Այն անձունի՝ փայտէն, քարէն՝ ծընան արձանք՝ պատուական.

Մարդու մտքում՝ կայր արձանի՝ միայն նըսեմ՝ գաղափար,
Ձեռքը նպաստ՝ հասաւ մտքին, շինեց մատունք՝ իւր ճարտար.
Երկաթ կամ քար՝ կամ այլ ինչ սուր՝ քարն ու փայտը՝ տաշեցին,
Անշունչ քարին, անբան փայտին՝ չքնաղ ձևեր՝ տուեցին։

Դարձեալ նոյն միտք՝ որ քարերից արձանները ծնել էր,
Քարի փայտի՝ տաշած կողմը՝ նըկարել ետ՝ պատկերներ.
Սիրուն աղջիկ, սիրուն տղայ, կամ քաջազէն՝ ձիաւոր,
Սկսեցին՝ պատկերանալ՝ նոր արգասիք՝ մըտաւոր։†

*Առուտուրի բանը լաւ գիտէր Զաւան, բայց Աստարբէ չէ [illegible] նորան պատմելու՝ գիտցած բաները կրկին սովրեցնելու։

†Աստարբէ այնպէս է խօսում, որպէս թէ առաջ [illegible] է ծնել և նկարչութիւնը, այս գրչութիւնը. բայց շատերի կարծիքը սորա ընդդէմն է հաստատ։

Բայց այն արձան և այն պատկեր՝ որ մարդու էր՝ օրինակ,
Բազում ամաց՝ անցանելով՝ կորցընում էր՝ յիշատակ.
Կամեցան որ՝ չըկորնչի՝ արձանների՝ անունը,
Միտքը կրկին՝ երկունք մտաւ՝ ծընաւ չնչին՝ գըծերը.

Չեմ իմանում՝ թէ աշտարակ՝ առաջ հանեց՝ իր բևեռ,
Թէ Եգիպտոս՝ հնարվեցան՝ գաղտնածածուկ այն գըծեր.
Բայց այն նշանք՝ դժուար էին՝ աւուստուրի անյարմարք,
Փիւնիկեցիք՝ վաճառական՝ էին ցրուած՝ այլ աշխարք։

Նոցա պէտք էր՝ այնպէս հընարք, որ հեռաւոր՝ տեղերէն,
Մէկզմէկի՝ խորհուրդները՝ պարզ ու յայտնի՝ հասկացնեն.
Իւրեանց գրկած՝ ապրանքների՝ թիւը, անուն, գըները,
Կարողանան՝ իմաց անել՝ բազմամըղոն՝ տեղերը։

Մէկ հանճարեղ՝ մարդ դուրս եկաւ՝ որ անունը Դաւութ էր,
Նորէն մտքից՝ հարկ պահանջեց, ու հընարեց՝ այս գըծեր,
Եգիպտոսի՝ նըշաններին, Աշտարակի՝ բևեռին,
Այս գիծերը՝ չեն նմանում. սոքա ձայն են՝ պարզ մեկին։

Սորա անուն՝ գիր դրուեցաւ, որ դու կոչում՝ ես գըծել,
Գըծելը մենք՝ նկարչութեան՝ արհեստին ենք՝ թողուցել.
Գծածները՝ գիրք ենք ասում, և գըծելը՝ գրութիւն,
Գըծածների՝ հասկանալն է՝ կարդալ և կամ՝ դպրութիւն։

Ուրեմն մենք՝ ոչ թէ անշունչ՝ տախտակներն ենք՝ խօսեցնում,
Այլ նոցա մէջ՝ գըծած գըրերն՝ ենք հասկանում՝ և կարդում.
Այն տախտակներն՝ քանի տարի՝ որ կամենանք՝ պահում ենք.
Մեր ապրանքի՝ թիւն ու հաշիւ՝ երբոր պէտք է՝ գտնում ենք։

Մեծ հընար էր՝ այս նոր գիւտը, պարծանք յաւէժ մեր ազգի.
Ինչպէս մէկ մայր՝ որ ունենայ՝ շքեղ, շքնաղ՝ մէկ որդի.
Այսպէս մըտաց՝ այս ծնունդը՝ մեզ մէկ արձան է փառաց.
Փիւնիկեցիք՝ գըրով եղան՝ տիրապետող՝ աշխարհաց։



## Զ

## ԶԱՒԱՆ ԵՒ ԻՒՐ ՏԻՐՈՒՀԻ ԸՆՏԵԼԱՆԱՆ

Ես բաւական՝ սովրել էի՝ գրել կարդալ՝ նոցա պէս,
Ինչ տախտակ՝ որ գտնում էի, կարդում էի՝ ջըրի պէս.
Բայց էլի խելքս՝ չէր հասնում՝ թէ ինչպէս այն՝ Դաւութը,
Այս գըծերուն՝ լեզու տուեց, որ հասկացնեն՝ խորհուրդը։

Մէկ օր ասի՝ իմ տիրուհւոյն՝ ասա դու ինձ Աստարբէ,
(Նա ինձ սաստիկ պատուիրել էր, որ երբ մենակ՝ ինձ գտնէ,
Նորան չասեմ՝ ես տիրուհի, այլ իր անուամբ՝ անուանեմ,
Որ սրտիս մէջ՝ ես չըցաւիմ՝ որ ես նորա գերին եմ։)

Ասի. պատմէ՝ ինձ Աստարբէ, ինչ հընարքով՝ Դաւութը,
Կարողացաւ՝ ամեն ձայնի՝ նկարագրել՝ պատկերքը,
Որ երբ նոքա՝ մէկզմէկու՝ հետ կապվում են՝ գծվելով,
Լեզուի նըման՝ գործ են գործում՝ միտք են յայտնում՝ խօսելով.

Կրկին անգամ՝ ծիծաղեցաւ՝ իմ գեղեցիկ՝ Աստարբէ.
Ասաց. Նստիր՝ դու դիմացըս, և բերանիս՝ մէջ նայէ.
Տես բերանէս՝ ինչ ձայն կ'ելնէ, շրթունքս ինչ կերպ՝ կ'ունենան.
Դու այն կերպը՝ շուտ եղէգով՝ գըծէ տախտակի վերան։

Այս որ ասաց՝ ես նայեցայ, նա բերանով՝ օ կանչեց.
Հարցուց, երբ որ՝ օ կանչեցի, բերանըս ինչ՝ կերպ բռնեց.
Ես տեսայ որ՝ երբ օ կանչեց, շրթունքն եղեն՝ բոլորշի,
Ասի բերանդ՝ էր բոլորակ՝ նմանակերպ՝ օ ձայնի։

Ասաց աղջիկն՝ ծիծաղելով, գըծէ վերայ՝ տախտակին,
Ես գծեցի ձև բոլորակ՝ նման նորա՝ բերանին.
Յետոյ կանչեց՝ ա բարձրաձայն, ասաց՝ նըման է նախկնոյն,
Ասի, ոչ է, այլ մեծացաւ՝ դիրք քո շքնաղ՝ բերանոյն։

Ասաց. սորան՝ էլ մէկ ձև տուր, ինչ որ կամիս՝ քո մտքով,
Միայն օին՝ չըլնի նման, որ չըշփոթվին՝ ձևերով.
Ապա երբ որ ե ձայն հանեց, շրթունքները՝ լայնացան,
Ատամները՝ լեզուին հետ՝ ինչպէս ընկեր՝ միացան։

Աստղ․ տեսնո՞ւ այս երեք ձայն՝ որ մէկ մէկու նման չեն,
Սոցա ձևերն՝ էլ պէտք է որ՝ մէկը միւսէն այլ լինեն․
Մէկ Աստարբէ՝ անունին մէջ՝ քանի՞ այսպէս ձայներ կան․
Որ ըստ կամաց՝ կարես նորանց՝ հագցընել ձև՝ զանազան։*

Այսպէս՝ Դաւութ՝ տասնումէց գիր՝ առաջ առաջ՝ ձևացոյց,
Ցուցում՝ քանի՝ ճարտար տղոց՝ ջանք գրրեց ու սովրեցուց․
Քարի, փայտի, հողի վերայ, առաջ մատով էր գըրում.
Յետոյ եղէգ՝ մըրոտ ծայրով՝ գրի համար՝ գործածում։

Այն եղէգը՝ գըրողներէն՝ շուտով դրից ասվեցաւ,
Ու այն մուրը մելան, թանաք, կամ մրադեղ՝ կոչվեցաւ.
Ոչ գըրիչը, ոչ թանաքը՝ միշտ մնացին նոյնութեան.
Մարդիկ նոր նոր՝ նիւթեր գըտան, նոր ձև տուին գըրութեան։

Եղեգի տեղ՝ սագի փետուր՝ սկսեցին գործ ածել,
Ողորմելի թռչնոց թևքը՝ քաշել, հանել, կտրատել,
Երկաթ, պըղինձ, կըլէկ, արծաթ՝ համ գրչի տեղ բանեցան,
Համ տախտակի՝ պէս ծեծվելով՝ տախտակի տեղ գծվեցան։

Եգիպտոսի՝ բիբլոս, փափիւ և ծառերու՝ կեղևներ,
Բամբակաթել՝ գործուածները և այլ տեսակ՝ պաստառներ,
Ամեն նիւթի՝ վերայ գըրում՝ է մեր խելճուկ՝ Փիւնիկը,
Միայն թէ որ՝ չըմոռանայ իւր հաշիւն ու ապրանքը։

Ես քեզ ասոնք՝ որ ասում եմ, դու իմացիր՝ Զաւանջան,
Որ շատ ընդգէմ՝ է օրինաց, և դու կ՚լնիս՝ պարտական,
Թէ որ յայտնես՝ Փիւնիկեցւոց, թէ դու գիրը՝ սովրել ես,
Քեզ փրկութիւն՝ էլ չըլինիր, մահու կու տաս՝ ինքըդ քեզ։

Սատանիկ պատուէր՝ կայ մեր մէջը՝ որ օտար ազգ չիմանայ,
Ոչ գըրել նա՝ կարողանայ, և ոչ գրածն՝ նա կարդայ.
Այս հընարքով Փիւնիկեցիք՝ են զօրացել՝ ամեն տեղ.
Գիրն արել է՝ նըրանց գլուխ, համ հանճարեղ, համ զօրեղ։

*Աստարբէի ասածներն են ճշմարտանման, այլ ինչ ճշմարիտ են թէ ոչ, ինքն գիտէ։



Մէկ ազգ չըկայ՝ որ սոցա պէս՝ առուտուրը՝ իմանայ,
Սոցա նըման՝ նաւ ունենայ, ծովի ճանփէքն՝ հասկանայ․
Ծովի վերայ՝ քաջ են սոքա, անյաղթելի՝ ցամաքում,
Երբ որ թըրով՝ տըկարանան, արծաթով են՝ միշտ յաղթում։

Ամեն բանի՝ միտք են դնում, ամեն տեղաց՝ շահվում են,
Իրանց ծոցի՝ շահի համար՝ ծով ու ցամաք՝ չափում են.
Մէկ օր մէկ շուն՝ ծովափումը՝ մըծել էր մէկ խեցի,
Այն շան դնչի՝ խեցեմորթէն՝ գըտան ծովու՝ ծիրանի։

Փիւնիկեցւոց՝ թագաւորը՝ Սիդոնումն է՝ միշտ նստում։*
Նորա փառքը, մեծութիւնը՝ մինչև աստղերն՝ է հասնում.
Թագաւորն էլ՝ վաճառական՝ է և ունի՝ շատ նաւեր,
Նորա ծառայքն՝ էլ նաւերով՝ չափչըփում՝ են միշտ ծովեր։

Բայց նոքա են՝ որ աւելի՝ նոր նոր գիւտեր՝ են անում,
Ծովի ափանց՝ գիրքն ու չափը՝ տախտակներում՝ են գըծում.
Ի՞նչ տեղ քաղաք՝ կամ մեծ գեղ կայ՝ իմանում են սորգը,
Փիւնիկեցիք՝ իսկոյն այն տեղ՝ հասցընում են վաճառքը։

Շատ ես կացել՝ Սիդոնի մէջ՝ ձեռքդ կային՝ կըպակներ,
Այն ինչ առատ՝ ճոխութիւն է, այն ինչ հարուստ՝ վաճառներ։
Ի՞նչ կամենաս՝ որ չըգտնես, այն մեծագանձ՝ քաղաքում,
Ինչպէս ազգաց՝ վաճառականք՝ չեն գտնվում Տիւրոսում։

Տիւրոս՝ Սիդոն՝ մօտ են միմեանց, մէկ նեղուցով բաժնըւած,
Տիւրոսումը՝ վաճառականք՝ են աւելի՝ բընակված.
Իսկ Սիդոնը՝ մայրաքաղաք՝ աթոռանիստ՝ արքայի,
Աւազանին՝ այն տեղումն է, որևարք, տիրողք՝ աշխարհի։

Համարեա թէ՝ ամեն այն օր՝ այս բաներն էր՝ նա խօսում,
Իւր իմացած՝ լաւ լաւ նիւթերն՝ ինձ սովրեցնել՝ էր ուզում.
Նստած տեղը՝ իմանում էր՝ թէ Հայաստան՝ ի՞նչ ի՞նչ կայ,
Ի՞նչ բերք ունի, կամ ի՞նչ արդիւնք, ի՞նչ տեղաց՝ է ույժ նորա։

*Եսայի մարգարէն նկարագրում է Սիդոնի քաղաքը (Բէլն խառնած է Բաբելոն անուամբ) գլուխ ԺԳ. համար 12–14։ Զինքը անկատ արուեստին՝ որ ըստ առասպելս ծագէր, և այլն։

Միջագետաց՝ լայն աշխարհն էր՝ խմանում էր՝ լաւ, անգեակ,
Տիգրիս, Եփրատ՝ միշտ բերնումն էր, Նինուէի դաշտ՝ տափարակ,
Բաբելոնը, կամ Քաղդէն՝ չէր անծանօթ նորամէն,
Բայց նա գովում՝ էր Զմիւռնին՝ ծովեզերեայ՝ քան զամէն։

Ասում էր նա՝ երբ մեծանում, ու իմ սրտով՝ այր դառնեմ,
Պիտի նստիմ՝ մէկ նաւիս մէջ, այն տեղերուն՝ այց առնեմ.
Ամենայն տեղ՝ վաճառատունք՝ կ՚անեմ, կու տամ՝ ծառայից,
Ես կը հանգչիմ, երբ կ՚ունենամ՝ շատ մթերներ՝ ոսկելից։

Աստարբէի՝ խօսակցութիւնն՝ ինձ համար շատ՝ անոյշ էր.
Ամենայն օր՝ նորա բերնէն՝ լսում էին՝ նոր բաներ,
Քաղցր էր կեանքըս՝ և անվրդով, անցեալքն էի՝ մոռացել,
Կարծում էի՝ թէ մոռացած էլ՝ այնպէս ունի՝ անցանել։

Երբեմն ինձ էլ՝ հարցանում էր՝ գլխիս եկած՝ բաները,
Ես էլ ուղիղ՝ պատմում էի՝ իմ մանկութեան՝ անցքերը.
Այլ երբ լսեց՝ թէ որդի եմ՝ նահապետին Պարետայ,
Մէկ անկի՝ գութ սկսեց՝ ունենալ նա՝ իմ վերայ։

Ամենայն օր՝ մէկ սեղանում՝ էինք ուտում երկուսս,
Ինձ փարձում էր՝ ամէն վայրկեան, և պարարում՝ իմ յոյսս,
Թէ մէկ օր էլ՝ կ՚արժանանանք՝ վերադառնալ՝ Հայաստան,
Սովորեց Արամ-երգ և Հայկ-երգ, Անուշավան՝ ի բերան։*

Կամաց կամաց՝ ընտելացանք՝ եօթն տարւոյն՝ միջոցին,
Սէրը ծածուկ՝ բռնակվեցաւ՝ և զօրացաւ մեր միջին.
Այնուհետև՝ անհընար էր՝ մէկ ի մէկէ՝ հեռանալ,
Մէկ հոգի էր՝ երկուսիս մէջ՝ իբր անբաժան բընակեալ։

Այսպէս անցաւ՝ եօթն տարին՝ մէկ օրվան պէս՝ թուեցաւ,
Աստարբէ էր՝ հասած պտուղ՝ տասնուինն՝ տարեկան.
Իմ տարիքն էր՝ երեսունեօթն, չէինք քաշվում՝ մէկ մէկէ,
Քոյր և եղբայր՝ էինք իրար, երկիւղ չկայր՝ ումեքէ։

*Զինուոր ողորմելի Զաւան՝ որ [illegible] տարիէն [illegible] էր որ Հայաստանի [illegible] Պարետայ մահ [illegible], և Հայոց [illegible] Զաւան՝ որ յոյժ չէր։



Մէկ օր ասաց՝ ինձ Աստարբէ, քանի՞ պիտի՝ լուռ մնամ,
Ինչու պիտի՝ այս կուսական՝ կեանք, մինչ յերբ՝ ձանձրանամ.
Դու ինձ մէկ օր՝ չասիր մէկ խօսք, որ քո սիրտը՝ ճանաչեմ.
Չեմ իմանում՝ ինչ է վերջս, ես քեզ թողուլ՝ կարող չեմ։

Իսկոյն ընկայ՝ նորա առջև, ու բռնեցի՝ ոտքերը.
Ասի. ասա՝ ինձ Աստարբէ, չեմ հեռի քո՝ սրտիցը.
Ասաց. երբէք՝ քեզ սիրում եմ. պիտի լինինք՝ ամուսին.
Թող այսուհետ՝ մէկ անկողին՝ լինի գիրկ սոյն մեզ՝ երկուսին։

Է

ՏԻՐՈՍ ԵՒ ԱՍՏԱՐԲԷ

Այն պատերազմ՝ որ մէկ անգամ՝ թշնամեաց դէմ՝ բացվել էր,
Երբ Ազգամոս՝ քրմաց ձեռօք՝ ինձ զոհ բերել՝ վճռել էր,
Վերջացել էր՝ նոյն օրերը՝ եօթն տարի ես անցել,
Իսկ արդ առել՝ կատաղութեամբ՝ էր վերստին բորբոքվել.

Ամենքեան՝ պարտական են՝ ի պատերազմ՝ երթանել,
Եւ հայրենիք՝ և հաւատքը՝ արիաբար՝ պաշտպանել.
Քրմեր մնում՝ են ամէն տուն, քաջերին մարտ են ղրկում,
Քաղաքներում՝ միայն կանայք, ծերք և մանկունք՝ են մնում։

Թէպէտ փիւնիկք՝ խաղաղասէր՝ են, և հեռի՝ կռուէն,
Որովհետև՝ վաճառականք՝ են, փախչում են՝ վնասէն.
Բայց թէ օտար՝ ազգ նոցա դէմ՝ սկսանի՝ զէն հանել,
Այն ժամանակ՝ փիւնիկեցիք՝ առանց պատժոյ՝ չեն թողնել։

Առ հասարակ՝ կը գինուորին՝ ծով ու ցամաք՝ կը ծածկեն.
Եւ միաբան՝ առիւծի պէս՝ թշնամեաց դէմ՝ կը վազեն.
Շատ պատերազմ՝ են վերջացրել՝ փառաւոր մեծ՝ յաղթութեամբ.
Ինչպէս գանձով՝ են անուանի, նոյնպէս թուրի՝ քաջութեամբ։

Տիւրոս Սիդոն՝ անուանի են, բնութեամբ են՝ պաշտպանած,
Անմատչելի՝ աշտարակօք՝ և բուրգերով՝ ամրացած.
Պատնէշները, նաւակալքը, մարդու խելքը՝ կը տանին,
Թող անհամար՝ թշնամիք գան՝ փիւնիկեցիք՝ վախ չունին։

Մէկ վաղեմի՝ աւանդութիւն՝ էլ կայ նոցա՝ միջումը,
Թէ այն քաղաք՝ չի առնըվիր, քանի որ կայ՝ ջըրումը,
Այն ժամանակ՝ կարեն առնուլ՝ երբ ցամաքին՝ միացնեն,*
Անդնդախոր՝ այն նեղուցը՝ ինչով պիտի լըցնեն։

Ասվում է թէ՝ Եգիպտոսը՝ պիտի լինի՝ Տիւրոսին,
Մէկ ժամանակ՝ աշխատութեան՝ մրցանակի՝ վարձ ու գին.†
Օրհասն այդպէս՝ է սահմանել՝ Ճակատագրի՝ բերանով,
Եւ քուրմերն էլ՝ ամենայն սիրտ՝ շահում են այդ՝ բաներով։

Տիւրոսի տակ՝ կան մեծամեծ՝ քաղաքք աւանք՝ անուանի,
Որ հինգ նահանգ ծովեզերեայ ունին բռնած՝ մարդալի.
Գէթ, Ազովտոս, և Ասկաղոն, և Ակկարոն և Գազայ,
Եւ սոցա հետ՝ ի միասին՝ Յոպպէ քաղաք և Լիդդայ։

Այս գաւառքը՝ հին օրերից՝ էին հարուստ՝ մարդաշատ,
Որովհետև՝ առուտուր կայր, ծովն էր տալիս՝ արդիւնք շատ.
Բայց երբ ազգըն՝ Քանանացւոց՝ այն կողմերում՝ բազմացան,
Այս ծովափնեայ՝ քաղաքները՝ չափազանց յոյժ՝ ծաղկեցան։

Տիւրոս Սիդոն՝ իւր բազուկը՝ դէպ ի հարաւ տարածեց,
Մինչ Մեծ Հերմոն՝ լեռնագօտին՝ երկիրները գըրաւեց,
Լիբանանի՝ անտառներից՝ նաւերու փայտ՝ հանելով,
Միջերկրական՝ ծովն լցոյց՝ անպարտելի՝ տորմիղով։

Դաշնակից են՝ Քանանացւոց՝ երկոտասան՝ ցեղերը,
Մեծն Սիդոն՝ հզօր ձեռամբ՝ բռնած ունի՝ սանձերը.
Ոչ թէ միայն՝ քաղաքաց մէջ՝ ունի վաճառ՝ փառաւոր,
Այլև Տորոս՝ լերանց միջին՝ կայ առևտուր՝ շահաւոր։

*Նախ՝ Նաբուգոդոնոսոր, և ապա՝ Աղեքսանդր Մակեդոնացի առին Տիւրոսը ցամաքակցելի անելով։

†Եզեկիէլ մարգարէն, ԻԹ. 18–20, Աստուծոյ բերանով ասում է թէ Նաբուգոդոնոսոր մեծ ծառայութիւն արաւ ինձ Տիւրոսի առամբ, վասն որոյ և ի վարձ ծառայութեան նորա՝ տամ նմա զԵգիպտոս յաւար և ի գերութիւն։



Վայրենամիտ՝ լեռնաբընակք՝ մարդութիւն են սովորում,
Ուտել, խըմել՝ կանոնաւոր՝ հագնել մաշել՝ ուսանում.
Օր ըստ օրէ՝ ընտելանում են Տիւրացւոց՝ բարքերին,
Գազանութիւն՝ հեռանում է՝ փոփոխութեամբ՝ վարքերին։

Առաջ մարդիկ՝ այսպէս չէին, ինչպէս այժմ են՝ շահասէր,
Վաճառն ինչ է՝ չէր հասկանում, մարդոց սիրածն՝ աւարն էր.
Մէկ էլ տեսնես՝ մէկ ցեղապետ դուրս էր գալիս՝ մէկ կողմէն,
Միւս ցեղին՝ հալածում էր՝ հազարամեայ՝ իւր տեղէն։

Տախտակների՝ վերայ գըրած՝ են այն նախնի՝ անցքերը,
Ինչպէս արեամբ՝ շաղախել են՝ հողը այն հին՝ ազգերը.
Որոց անուն՝ մնացել է՝ միայն յանձնած՝ տախտակաց,
Աշխարհի մէջ՝ չեն երևում՝ և ոչ նշխարք՝ այն ազգաց։

Հարաւային՝ սահմաններում՝ կենում էին՝ հսկաներ,
Որ Ռափայիմ, Ոմիմ, Էյմիմ՝ էին կոչվում հին օրեր.*
Մովաբացւոց՝ ազգը եկաւ՝ կոտորեց այն՝ հին ցեղը,
Եւ այժմ ինքն է՝ տիրապետում՝ ժառանգաբար՝ այն տեղը։

Նոյնպէս Զոմմինք՝ Զոմզոմմիմացք՝ կենում էին մօտ լեռներ,
Ամմոնացիք՝ յարձակեցան, սպառեցան՝ Զոմմիններ.†
Նոցա անթիւ՝ բազմութիւնը, նոցա ահեղ՝ զօրութիւն,
Չըկարացին՝ սանձահարել՝ նորեկ ազգի՝ ուժգնութիւն։

Իմմացիք՝ կամ՝ Խևացիք՝ մեզ մօտ էին՝ բընակված,
Յանկարծ եկան՝ Կափթորացիք՝ Կապէտկուէն՝ դուրս եկած,
Սըրով հըրով՝ սպառեցին՝ այն ազգերը՝ այս երկրէն,‡
Այլ այս առաջ՝ էր պատահել՝ Սիդոնացւոց՝ տիրելէն։

Բայց յետ սակաւ՝ ժամանակաց՝ մինչ Տիւրացիք՝ զօրացան,
Եւ մինչև այս՝ յիշուած ազգերն՝ նոցա զէնքն՝ մօտեցան,
Միայն որդիք՝ Եդոմացւոց՝ Սէիր լերանց՝ գլխերից,
Քոռեցւոց ազգն՝ սուր սուսերի՝ ջնջեցին մեր աչքերից։§

*Ծննդ. ԺԴ. 5։ Բ. Օր. Բ. 10։
†Բ. Օր. Բ. 20, 21։
‡» » » 23։
§» » » 12։

Այս աղջայ հետ՝ էր արդ կռիւ, և սաստիկ էր այս անգամ,
Մեծ մեծ տուգանք՝ պիտի կրէր, թէ որ չերթայր՝ ինքնակամ.
Բայց թէ մի օր՝ չըկամենար՝ հնազանդութեան պատճառով,
Քրսան զինուոր՝ պիտի վառէր՝ կազմէր զինուք, պաշարով,

Աստարբէ այս՝ երկրորդ զոհն էր՝ ողջակիզեց ինձ համար,
Հարիւր ծառայք՝ ստրուկներն՝ ծախք ունեցան անհամար.
Ինձ չառեց՝ որ մարտ տանին, կեանքս ի վտանգ չըձգեց,
Թէպէտ Հայկազն՝ մարտ պատերազմ՝ չէ համարում վրտանգ մեծ։

Ինչպէս զօրաց՝ երթալոյ օրն, նոյնպէս և յետ՝ դառնալիս,
Շատ մարդասպան՝ հանդէսք արին, փրշաքաղվում էր հոգիս,
Մողոք կուռքը, որ Մեղքոմ էլ՝ են իրանց մէջ՝ անուանում,
Ասում են թէ՝ մարդոյ զոհիւք՝ է իւրեանց հետ՝ հաշտ մընում։

Քանի տեսակ՝ զոհեր ունին, որ մարդով են՝ կատարում,
Կամ պառկեցնում՝ են սեղանում, ու դանակ պէս՝ են մորթում,
Կամ պղնձի՝ ձուլած Մողոք՝ ջեռուցանում՝ կրրակով,
Մարդըն տալիս՝ են կենդանի՝ որ նա բռնայ՝ իւր գրկով։

Հոտած ձեռներն՝ լեցվում է՝ այն գարշելի զոհերից,
Մարդոյ ականջ խըլանում է՝ զոհի ողորմ՝ ձայներից.
Նուագում են՝ քընար տաւիղ՝ թմբուկ շեփոր են զարնում,
Խափանվում են՝ այս ձայներից՝ զոհից գոչիւն չեն լսվում։

Մինչ Ազովտոս՝ քաղաքի մէջ՝ խմբէին այս՝ տօները,
Աստարբէի՝ հետ չափազանց՝ զօրանում էր՝ մեր սէրը.
Իմ տիրուհին, իմ փրկողը՝ յօժար էր ինձ՝ դառնալ կին.
Անպատմելի՝ ուրախութիւն՝ էր զգում սիրտ՝ Ջաւանին։

Բայց Աստարբէ՝ չէր շտապում՝ իւր սիրելոյն՝ հարսնանալ,
Իմ սրտի մէջ՝ վառված սիրոյն՝ չէր ներում շատ՝ ցոլանալ.
Ծածուկ երկիւղ՝ կայր սրտումը, որ ինձ իմաց՝ չէր տալիս,
Կեանքս միայն՝ էր քաղցրացնում՝ որքան ձեռքէն՝ էր գալիս։

Թէպէտ այսքան՝ սիրում էր ինձ, և ինձմէն շատ՝ սիրված էր,
Բայց մէկ օր ինձ՝ քնքոյշ ձեռքը՝ համբուրելոյ՝ տըված չէր.
Այնքան համեստ՝ բարեստոհմիկ՝ տարազն էր՝ պահպանում,
Որ ես ինքնս՝ անձինս վերայ՝ էի մտօք զարմանում։



Օրհնած աղջիկ՝ դու էլ մարդ ես՝ տասնեինն՝ տարեկան,
Ինձ՝ քեզ համար՝ այր ես ընտրել, միշտ ասում ես՝ սիրական.
Մէկ օր փախէ՝ շըթանց ժպիտ, կամ սիրալիր՝ բան ասա,
Կամ ինձ տեղի՝ տուր ասելոյ, կամ մէկ այլ խօսք՝ բաց արա։

Չէ։ Աստարբէ՝ չըխոստովէր, գիտէ նա իւր՝ կուսութիւն,
Ինձ տուել է՝ մէկ այնպէս սիրտ, որոյ մէջ կայ՝ մաքրութիւն.
Ունի փափաք՝ հարսնանալ, ինձ մտերիմ՝ կին լինել.
Ոչ թէ կամաց՝ սանձը թոյլ տալ, ու տարաժամ՝ քնտվել։

Այն առաջին՝ սիրոյ խօսքէն՝ անցել էին հինգ ամիս,
Մենք էլի նոյն՝ սէրն ունէինք, ինչ առաջ կայր՝ մէջերնիս.
Աստարբէ չէր՝ թողնում մէկ ժամ՝ որ հեռանամ՝ ես իրմէն,
Ես էլ չէի՝ ուզում բընաւ՝ որ զուրկ մընամ՝ նորամէն։

Ինձ չէր յայտնի՝ նորա խորհուրդ, թէ ինչու է ուշացնում.
Ինքն էր առաջ՝ անկողինքը՝ միասնել՝ յօժարում.
Ամենայն օր՝ էլ նոյն սէրն է, սրտէն հուրը՝ չէ պակսած,
Այս տեղ մէկ հատ՝ գաղտնի երկիւղ՝ կարծամեծ որ՝ կայ ծածկած։

Ը

ՏԵՆԱՄԱՐՏ ԵՒ ՑԱՂԹԱՆԱԿ ՋԱՒԱՆԻ

Ազովտոսի՝ վաճառական՝ ունէր մէկ հատ՝ քաջ որդի.
Որ մեծամեծ՝ արիութիւնք՝ էր ցոյց տուել՝ մէջ մարտի.
Հարբալ անուն՝ երիտասարդ՝ քաղաքի մէջ հռչակված,
Եւ Ազովտոս՝ նրան մէկ լաւ՝ պարգև տալ էր՝ խոստացած։

Պատերազմի՝ հանդէսները՝ դեռ շարունակ՝ լինում են.
Հարբալ ամեն՝ տեղ գոված է, քաջ անունը՝ յիշում են.
Թող Ազովտոս՝ ինձ մէկ աղջիկ՝ իւրեան մէջէն՝ պարգևէ,
Հարբալ չունի՝ կարօտութիւն՝ ոսկւոյ, միայն՝ այս կ՚ուզէ։

Աստարբէի՝ հին ծառայից՝ մընացել էր՝ մէկ հատը,
Որ Ջաւանին՝ նախանձաբեկ՝ էր միշտ լինում՝ իւր սիրտը.
Այս նենգամիտ՝ ծառայն գնաց՝ և Հարբալին հասկացուց,
Թէ Ջաւան էր օտարազգի, Աստարբէին՝ սիրեցուց։

Հարբալ խեղճն հանդիսի մէջ՝ ասաց տեղւոյ աւագաց,
Ինձ տուեցէք՝ Աստարբէին՝ փոխանակ ձեր պարգևաց.
Աւագանին՝ շուտ խոստացաւ՝ այն խնդիրը՝ կատարել,
Պատգամք հասան՝ Աստարբէին՝ աչքալուսանք՝ աւետել։

Աստարբէ շատ՝ շփոթվեցաւ, երբ որ լսեց՝ այս բանը.
Մեծաւորին՝ աղերս մատոյց՝ որ խափանէ՝ պատգամը.
Թէպէտ յօժար՝ էր Մեծաւոր՝ Աստարբէին պաշտպանել,
Բայց չկարաց աւագանւոյ անկեղծ խոստմունք խափանել։

Երկարեցան՝ այս վէճերը, Աստարբէ շատ՝ փոշման էր,
Որ իւր ուրախ՝ հարսնութիւնը՝ մինչև այն օր՝ թողել էր.
Եթէ լինէր՝ նա հարսնացած, Հարբալ չէր իսկ՝ յանդգնիր,
Նորան խնդրել՝ յիւր կնութիւն, և Զաւան չէր՝ վտանգվիր։

Աստարբէի՝ էլ վախն այս էր՝ որ այսօր վաղն էր ձգում,
Հին օրերի՝ օրինակը՝ նրան շատ էր՝ վախեցնում.
Կարող էին՝ Աղվանցիք՝ խեղճ Զաւանին՝ զոհ բերել,
Աստարբէին՝ այրի նորհարս՝ քաջ Հարբալին՝ կին անել։

Աստարբէի՝ ոսկւոյ գանձի՝ մթերները՝ բացվեցան,
Աւագանւոյ՝ աչք ու բերան՝ կաշառներով՝ փակվեցան.
Հարբալ չունի՝ առաջվան պէս՝ էլ ջատագով, օգնական,
Աստարբէին՝ պիտի իսպառ՝ յոյսը կտրէ՝ այն տղան։

Բայց մէկ քանի՝ քաղցածներ կան, որ նոցա փող՝ հասած չէ,
Խրատ տուին՝ Հարբալին որ՝ ելնէ փողոց ու կանչէ.
Թէ Զաւանին՝ իմ դէմ հանէք. և ով ումը՝ որ յաղթէ,
Նորան լինի՝ յաղթանակը, ու հարս կոչվի Աստարբէ։

Ամենեքեան գիտէին որ՝ Հարբալ քաջ է, կռուի,
Զաւան միայն՝ գեղեցիկ է, օրիորդի կերպ ունի,
Աստարբէ ևս ունէր մտքին ինձ համար այս կարծիքը,
Կասկած ունէր՝ որ կործանէ՝ ինձ Հարբալի՝ քաջ ձեռքը։



Բայց Զաւանի երակաց մէջ Հայկի արիւն էր շրջում.
Ես Սիսակին՝ իմ քաջ տոհմի՝ նախնեաց արմատ եմ կոչում.*
Երբ լսեցի՝ այս համբաւը, հոգիս մէջը՝ վառվեցաւ.
Մահու կեանքի է այս պայքար, քունէն արդէն ձգվեցաւ։

Աստարբէ շատ՝ լացեց, ողբաց, որ մենամարտ չընդունեմ,
Ոտքիս տակը՝ թաւալում էր, որ սենեկէն չելանեմ.
Ես ասում էր՝ փող կը մխեմ, կը խափանեմ՝ այս հրաւէր,
Դու ի նանիր՝ քո թարմ արև՝ վտանգի մէջ՝ մի գներ։

Իմ ականջըս՝ խլացել էր, չէի լսում՝ ոչ մէկին,
Դեռ տան մէջը՝ շուկայ չելած՝ պտրում էի Հարբալին.
Մենամարտի՝ ժամը հասաւ, հարսն, փոխեց՝ շորերը,
Ինձ մեռածի պէս էր ողբում, վրէն առաւ սևերը։

Հեծայ՝ այս ձին՝ որ տեսնում էք, զրահներըս էլ այս էր,
Աստարբէիս՝ առատ ձեռըն՝ ինձ համար այս՝ գնել էր.
Հարսնս չեկաւ՝ ինձ ճանփելու, իւր սենեկում՝ գոռում էր,
Առաջվանէ՝ իմ չար մահուան՝ վերայ դառն կոծում էր։

Մեծ է շուկայն՝ Աղվանսի, մեծ շինուածովք՝ շուրջ պատած.
Տանիք, երդիք և պատուհանք՝ են բազմութեամբ՝ խիտ լցած.
Հարբալ մեծ է՝ ասում էին, պարզացել է՝ կռիւը,
Սա մէկ մատղաշ՝ պատանեկիկ, ճնճղուկ նորա՝ աչքումը։

Իրաւ Հարբալ՝ թանձր էր մարմնով, յաղթահասակ, վիթխարի,
Նորա բնիկ՝ ազգատոհմը՝ եկած յերկրէն՝ Զամգիմի.
Ուր որ առաջ՝ հսկայք կային, որ մարդ նոցա՝ առջևը,
Երևում էր՝ որպէս մարախ, նոքա ինչպէս՝ արծիւը։

Բայց այս քաջին՝ յաղթելն է գործ, և ոչ տկար՝ խուժանին,
Ով Զաւանջան, մէկ քեզ տեսնեմ, համաչեցնեմ Արամին.
Հայկայ կրօն՝ դու ինձ հասիր, Մոգք լինի՝ խայտառակ,
Իմ ազգիս մէջ չմոռացվիր՝ իմ այսօրվան յաղթանակ,

*Սիսակ Սիսանի Գեղամիկի և Ամիկի որդի, Արամայ և Արայի մեծ-մայ։ Արամերք։

Հարբալ տեսաւ՝ առաջ վազեց, Նիզակ տուեց՝ վահանը,
Անըրծելի՝ էր սա տիզաց. բոմբիւն հանեց զարնելիս.
Ախոյեանըս՝ քիչ կանգ առեց. գետնին ցըցեց նիզակը.
Սուրը հանեց՝ իր պատեանէն, գլխիս շանթեց բազուկը:

Ձեռքի ուժէն՝ Ճանաչեցի, չէր իր կերպին՝ հաւասար.
Թեթեւ հարուածք՝ էր թօթափում, այլ կրկնում էր անդադար.
Քիչ մընաց որ՝ սաղաւարտիս՝ մէջը մնէր՝ գըլուխըս,
Կոյրի նըման՝ պիտի մընամ՝ երբ ծածկըվին՝ աչքերըս:

Մորակ տուի՝ օղապարկիս, Հարբալին մօտ գընացի,
Նըշան դըրի՝ ուղիղ սրտին, ու նիզակով շամփրեցի.
Կարմըրեցաւ քիրաքերանն, արիւն բղխեց խոցիցը,
Ես նիզա՛կըս յետ քաշեցի, ու հանեցի՝ լանջիցը:

Թամբի վերայ՝ սասանեցաւ, գլխաթաւալ՝ վէր ընկաւ,
Դնգաց հողը՝ պղնձի պէս, երբոր գետնին՝ նա դիպաւ.
Մէկ հարուածով՝ այն պատերազմ վերջացաւ ու՝ դադարեց,
Նորա զէնքը՝ Ճոխ աւարը՝ Աղուամս ինձ՝ նուիրեց:

Միւս անգամ՝ օղապարկիս՝ վազեցուցի՝ դէպ ի՛ տուն;
Որ իմ հարսին՝ ես աւետեմ՝ անակնկալ՝ ցնծութիւն.
Բայց տեսայ որ՝ հազարաւորք՝ քան զիս առաջ՝ են հասել,
Ու աչքի լոյս՝ աւետելով՝ աւետչեքը՝ են առել:

Կայր Աստարբէ՝ դըրան առջեւ, երբ ես մարտէն տուն դարձայ,
Նորա հոգին՝ լի էր սիրով, գայծառ դէմքէն՝ իմացայ,
Ասաց. Զաւան՝ դու քաջութեամբ՝ ես իմ սիրտը՝ ստանում,
Իմ զոհերըն՝ դաւնաքեայ են, ես էլ նըրանց՝ չեմ յիշում:

Չըկայ պատճառ՝ էլ յապաղման, պիտի առնուս ինձ գիրկըդ,
Աստարբէ այլ՝ զոհ չէ ուզում, միայն անբիծ՝ այդ սիրտըդ,
Երջանիկ եմ՝ աղջըկանց մէջ, կարեմ քեզմով՝ պարծենալ,
Թող Աղուամս՝ օտար կարծէ, ես չեմ ուստէք վախենալ:



Աստարբէի՝ գլխակն արդէն՝ ծովի յատակ՝ կը լինէր,*
Ոսկորներըս՝ կը կրծէին՝ ծովի ժժմունք և ձկներ.
Ես մէկ անգամ՝ կըսոստնուի, ինձ ծովխոր շուա՝ կուլ կու տար,
Աստարբէի գլխակն անգամ՝ ալեաց վերայ ման չէր գար:

Իրաւն ասեմ՝ քեզ Զաւանջան, չէի կարծում՝ թէ մի էլ,
Կը յաջողեմ՝ կենդան տեսնել՝ ու քո քաղցր՝ ձայն լըսել.
Ապարանից այն պատուհան, ուր մենք այնքան նստել ենք,
Պիտի ինձ մէկ՝ գործի նիւթէր, անակնկալ մահու զէնք:

Երբ իմ ողբոյ՝ հըլսեցիր, և ելար դէմ՝ Հարբալի,
Ցոյըս սրտէս կտրվեցաւ, հոգիս դառաւ՝ արեամբ լի.
Ասի. Զաւան՝ չէր ինձ սիրում, որ իմ ձայնը՝ հըլըսեց.
Իմ պատճառաւ՝ իւր քաղցր կեանք՝ յայտնի մահու մատնեց:

Զաւան այսօր՝ մինչ երեկոյ՝ իմ կուսութեան՝ տուր պատիւ,
Թէպէտ վաղուց՝ քեզ սիրելով՝ եղել եմ քեզ՝ կին սրտիւ.
Բայց այս խիղճն՝ կայ անկապուտ, զարդ իմ անձին՝ կուսական.
Աւար պիտի՝ լինի սիրոյդ, և կողոպտիչ իմ փեսայն:

Կարճ է միջնորմ՝ այս նոր կենաց, մէկ Ճաշմնաց՝ մէկ ընթրիք.
Մէկ ժամու մէջ՝ կ'փոխարկվինք. կ'լինինք զոյգես՝ մեր նախնիք.
Հարսնութիւնը՝ մէկ վայրկեան է, այնուհետեւ՝ կուովիմ կին,
Կենաց կըցորդ, սիրոյդ հաղորդ, և մըտերիմ՝ ամուսին.

Ո՛վ ինչ հրճուանք՝ կան մեր հանդէպ՝ երբ առագաստ՝ մըտանենք,
Երբ կուսական՝ այս ձանձրութեան՝ բարեաւ մընա մենք ասենք.
Այնուհետեւ՝ ինչ կը լինին՝ մեր օրերը՝ մինչ ի մահ.
Բայց ի մահէն՝ ուրիշ կողմն՝ չըկայ սրտիս՝ մէկ այլ ահ:

*Թէպէտ այսպէս ասաց այժմ, և ճշմարիտ էր ասածը, բայց երբ Զաւան ժամ առ ժամ այս պատմութեան՝ երբէք մտքէն ջնջել անկարելի չէ- նէր, յուսով միայն կեղծաւորեաց:

## Թ.

## ԶԱՒԱՆԱՅ ՎՑԱՐԱՆԴՈՒԹԻՒՆ

Հասաւ երկու՝ վառված սրտից՝ այն ցանկալի՝ երեկը.
Աստարբէ ինձ՝ տարաւ իրեան՝ առանձնական սենեակը.
Շուտով հանեց՝ իր հարսնութեան՝ շորերը և պսակեցաւ.
Դու էլ հանէ՝ հանդերձներըդ, պսակինք՝ հանգչինք, ինձ ասաւ։

Ուրախ ուրախ՝ ես մերկացայ, պաղպաջուն մարմին մօտեցայ,
Տեսայ որ նա՝ անկողնումն էր, բարակ վերմակն ի վերայ,
Ծածկոյթն չէր՝ կարողանում՝ սքողել նորա՝ պատրանքը,
Ծածքի տակէն՝ երեւում են՝ նրանց նրման՝ սաինքը։

Հոպոպնքն՝ ընկել էին՝ վերայ փափուկ՝ բարձերին,
Սիրտս, հոգիս՝ խոցատում էր՝ նետիւք փայլուն՝ աչքերին.
Միայն գլուխն՝ էր երեւում, երկու թուշը՝ վարդի պէս,
Երկու աչքըս՝ մթնացուցին, սէր վառեցին բոցոյ պէս։

Դեռ ես չէի՝ կշտին պառկել, համբոյր տուի՝ երեսին,
Այս առաջին՝ համբոյրըս էր, առաջին զոհ՝ իմ հարսին,
Հոգիս լցվեց՝ անմահութեամբ։ Բայց ինչ եղայ՝ երբ ասաց.
Զաւանջան դու՝ մի ըշտապեր, այլ կանգնած տեղդ՝ մէջքիս կաց։

Դու մեր երկրի՝ օրէնքները՝ ստոյգ տակը՝ արդ գրեիր,
Ինձ որ հարսն եմ՝ անձեռնուէր՝ յոյժ անպատիւ՝ արարիր.
Մոռացար դու՝ որ ես եմ քո՝ աղատարար, տիրուհի,
Չկնորս տեղէդ՝ Աղովտոսի՝ վաճառական՝ արարի։

Երբ ասացի՝ թէ մերձեցիր, և պառկիր իմ՝ կողքումըս,
Դու չունէիր՝ դեռ իրաւունք՝ տալ ինձ համբոյր՝ այտումըս։
Զի պարտաւոր՝ էիր առաջ՝ ոտքիս կողմէն՝ մտանել,
Ոտս համբուրել՝ երեք անգամ, ապա կշտիս՝ ընկողմնել։*

*Այս ծէսը՝ Ասիական աշխարհներից մէկն երեւում է և բազում ժամանակէ յետոյ՝ եւրոպացոց բանաստեղծութեանց մէջ։



Այդ կը լինէր՝ անհաւատչեայ՝ որ դու մտքիդ՝ միշտ ունես,
Այն ամենայն՝ իմ երախտիք, որ ինչ ես եմ՝ արել քեզ.
Այս է օրէնք՝ Փիւնիկեցւոց, «որ թէ ծառայն՝ տէր դառնայ,
Պիտի կնոջ՝ ոտից կողմէն՝ դէպ՝ անկողին՝ մերձենայ։

Մինթէ դու իմ՝ ոտքիս պէտի՝ համբուրելից զզուէիր,
Միայն դու մէկ՝ ձեռը պիտի՝ սիրոյս համար՝ ցուցնէիր.
Ես ի հարկէ՝ չէի թողնիր՝ որ իմ ոտքըս՝ համբուրես,
Քեզ համար չէ՝ պատրաստ պահած սպիտակ ստինք և երես։

Այսքան տարիայ՝ իմ արածիս՝ միայն այս էր՝ փոխարէն,
Ես հինգ ամիս՝ առաջ ասի՝ թէ չեմ ջոկվիր՝ ես քեզմէն,
Մինթէ դու մէկ՝ մարդ չըղըտար՝ որ նորամէն սովրէիր,
Թէ՝ երբ այսպէս դիպուած լինի՝ ինչ ծէս ունի՝ այս երկիր։

Փոյթ չէ Զաւան, մօտ եկ՝ պառկիր, ես քո հարսն եմ, և քո կին,
Այսուհետեւ քո են իմ գանձք, թէ արծաթք և՝ թէ ոսկին.
Ես պիտի քեզ՝ ասէի թէ՝ մերձիր, համբոյր՝ տուր հարսիդ,
Դու այն չարիր, գոնէ մօտիր, որ համբոյր տամ երեսիդ։

Ես փոխանակ՝ մօտ երթալոյ, ներողութիւն՝ խնդրելոյ,
Նոյա կարգաց չիմանալըս՝ ստոյգ առիթ գնելոյ.
Սրտիս խորում՝ մէկ բարկութեան՝ բորբոքված հուր զգացի,
Չքնաղ հարսիս՝ քանքարտանքը՝ ես կշտամբանք՝ հաշուեցի։

Ասի. ես մէկ՝ դուրս երթամ, գամ, քեզ հետ շուտ կու հաշտվինք.
Դուրս գընացի՝ սրտմըտութեամբ, ու նայեցայ՝ դէպ երկինք.
Մտքովս ասի. Ո՛վ Քաջք Մասեաց, սա ինձ յայնժամ՝ լինի կին։*
Երբ եօթն անգամ՝ համբոյր ձօնէ՝ արամաշնեայ՝ իմ ոտին։

Այս որ ասի՝ դէպ ի ծովափ՝ սլացայ, մէկ հատ նաւ գըտայ,
Վըզլիս մէկ հին՝ ոսկի կայր կախ, այն վարձ տուի՝ նաւ մըտայ,
Մէկ շապիկով, մէկ վարտիքով, մերկ ու դատարկ՝ ձեռներով,
Անփորձ սրտիս՝ տաք ջերմութեամբ՝ յիմարաբար մըտայ ծով։

*Այնտեղ Նեղոսեան եղեգով՝ ոչ ոք չէր կարող պատսպարուել. Այսօր կարողն՝ այր ու ամէն, եղէ հանդէս՝ մինչ հիմայ։

Մէկ յաջողակ՝ քամի փչեց, առին երկաթ՝ խարիսխը,
Ազովտոսի՝ ծովեզերքէն՝ հեռանում ենք՝ դէպ խորքը.
Նաւաստիքը՝ բարձր ձայնով՝ աղաչում են՝ Մողոքին,
Որ քիչ երկար՝ ժամանակաւ, փչէ աջող՝ այն քամին։

Խնդրած քամին՝ ճիշտ էր յաջող. միայն այնպէս՝ նաւորդաց,
Որ նաւի մէջ՝ ունին բեռինք՝ ազգի ազգի՝ վաճառաց.
Ինձ համար այն՝ փչած քամին՝ անյաջող էր՝ այն չափով,
Որքան վատ է՝ թէ որ բռնեն և ձրգեն ինձ՝ խորը ծով։

Քանի աւել՝ հեռանում ենք՝ Ազովտոսի՝ ծովափէն,
Այնքան աւել՝ զօրանում է՝ փոշմանութիւն՝ իմ վըրէն.
Ես ի՞նչ բան էր՝ որ ես արի, ես չարիքն ինձ՝ ով կ'անէր,
Մէկ թշնամի՝ այսպէս վընաս՝ ինձ հասցնել՝ կարող չէր։

Արդեօք հարսս՝ ի՞նչ է անում, արդեօք փախչիլս՝ իմացա՞ւ,
Իմ ապերախտ՝ գործիս վերայ՝ իրաւացի՝ բարկացա՞ւ.
Արդեօք ծառա՞յք՝ ղրկեց պտրել, արդեօք մէկ նաւ կու հանէ՞,
Արդեօք ինձ էլ՝ բռնել կու տա՞յ, և Ազովտոս՝ կու տանէ՞։

Երանի թէ՝ այդպէս լինէր, ես շատ ուրախ՝ կու դառնամ.
Աստարբէիս՝ ոտքի տակէն՝ համբոյր կու տամ՝ տասն անգամ.
Ինձ ապերախտ՝ պիտի ասէ, ձայնըս պիտի՝ կտրեմ ես,
Երախտամոռ՝ վատութիւնըս՝ հաստատել եմ՝ ես պէս պէս։

Արծաթադին՝ ծառայ էի, փախչում եմ իմ՝ տիրոջմէն։
Արժանի եմ՝ որ երբ բռնեն, անարգ փայտէն՝ ինձ կախեն.
Փախստական՝ ղերիների՝ պատիժն ի՞նչ է, չըգիտեմ,
Նուշ ու չամի՞չ՝ չեն ասիր՝ կե՞ր, անշուշտ մահը՝ կայ կարծեմ։

Գիտուք՝ թէ նա կախել չըտայ, և վերստին՝ ազատէ,
Գիտուք՝ որ նա՝ սիրում էր ինձ, դարձեալ սիրէ, և չատէ.
Ի՞նչ երեսով՝ պիտի տեսնեմ՝ նորա չքնաղ՝ երեսը,
Ի՞նչ աչքերով՝ պիտի նայիմ, ասեմ սա՞ է՝ իմ հարսը։

Մարդադրհէն՝ նա աղատեց, այժմեան կեանքըս՝ նորանն է.
Օտար տեղըս՝ ինձ տէր դառաւ, ինձ այն տուեց՝ որ լաւն է.
Թէ մէկ քանի՝ բան էլ գիտեմ, ողջ սովրել եմ՝ նորամէն,
Մէկ օր աչքէն՝ չէր հեռացնում, չէր անջատում՝ իրենմէն։



Իմ տեղ հարկւր՝ գինուոր տուեց, որ իմ կեանքս՝ պահպանէ,
Մենամարտի՝ չէր արձակում, որ ինձ Հարբալ՝ չսպանէ.
Նորա բարեաց՝ ո՞ր մէկն ասեմ, ո՞րը լըռեմ, կամ թողում,
Ես ինչի՞ այս՝ երջանկութիւնս՝ բարձի թողի՝ եմ անում։

Այլ հրնարը՝ արդէն ի՞նչ է, բոլոր տանը՝ իմացան,*
Կարելի է՝ թէ Ազովտոս՝ ամեն տըներ՝ լսվեցան,
Եթէ այսօր՝ չեն իմանար, էգուց կանուխ՝ կը լսվի.
Իմ Աստարբէն՝ այս՝ մեծ սուգէն, ինչո՞վ պիտի սփոփվի։

Եթէ այսօր նա կամենար՝ հարսն կ'լինէր՝ Հարբալի,
Բոլոր քաղաքն՝ այն էր ուզում, ես ի՞նչ էի, մէկ գերի.
Նա Հարբալի պէս քաջարւոյն՝ իմ պատճառաւ՝ անարգեց.
Ինձ ապերախտ՝ չարագործիս՝ իւրեան փեսայ անուանեց։

Ես ի՞նչ տուի՝ նորա սիրոյն՝ արժանաւոր՝ տըրիտուր,
Սրտի մէջը՝ թափանցեցի՝ անօրինակ՝ մահու սուր.
Նա ի՞նչ կ'ասէր՝ իւր սրտումը, երբ որ մէքին՝ ուշացայ,
Ձեռա՞ւ, տանը՝ հըպտորտեց, ու չըկանչեց՝ ինձ փեսայ.

Վա՜յ իմ գլխիս, ես ի՞նչ արի, ես իմ հարսին՝ մեռուցի,
Նորա սիրտը՝ այնքան մաքուր, ես դաշնակով՝ խոցեցի.
Այն աստղի պէս՝ փայլուն աչքը՝ պիտի թափէ արտասուք,
Ապերախտիս՝ չարեաց վերայ՝ պիտի անէ՝ կոծ և սուգ։

Կարծես՝ քամին հասցընում է՝ իմ ականջիս՝ այն ձայնը.
Այն իմ հարսն է՝ աղաղակում, ես լսում եմ՝ կականը.
Զաւան՝ ինչի՞ թողիր դու ինձ, փեսա՛յ՝ ես ի՞նչ չար արի.
Աստարբէն այս՝ սուգն է անում, քամուն տալիս՝ լաց սրտի։

Իւր հարսնութեան՝ առաջաստէն՝ ելաւ կարծեմ՝ Աստարբէ,
Վերան առաւ՝ իւր ձորձիկը՝ որ տան մէջ ինձ պտրտէ.
Առաջ հարցուց՝ աղախինին, դու չըտեսա՞ր՝ Զաւանին,
Ցետոյ ծառայք՝ ամբոխվեցան, ելան գտնել՝ փեսային։

*Զարմանք է որ Զաւան մօտէն չէ անդրադառնում թէ՝ Աստարբէ անհնարին կը լինի, մինչ նա իրեն (235) տարեկան թէ՝ ինքն իրեն ծովը կը նետէր երբ դու մեռնէիր ի մենամարտի։

Ճըրագ ձեռին՝ մամն է գալիս, ամեն անկիւն՝ նայում է.
Իւր կորցըրած՝ ապերախտին՝ խորշերումը՝ որոնում է.
Իւր մտքի մէջ՝ կարծում է՝ թէ՝ թաք եմ կեցել ես մէկ տեղ,
Ու յանդգում կը վերջանայ . . . այս՝ յանդգն է տըղեղ:

Դեռ չըգիտէ՝ որ ապերախտս՝ տեղի տուի բարկութեան,
Բարկութեան՝ որ՝ ինձ ընկըմեց՝ ի խորս չարեաց՝ կորստեան,
Երբ իմանայ՝ թէ ես նորա՝ տանէն դուրս եմ՝ գընացել,
Ա՛խ, նա ինչպէս՝ պիտի սըգայ, ու սկսի՝ լալ. կոծել:

## Ժ

### ԳԻՇԵՐ ՏԱՌԱՊԱՆԱՑ

Կէս գիշերը՝ հասանում է. լոյսը կտրեց՝ Աստարբէ.
Առաւ ծածկոյթ՝ գլխին քաշեց՝ որ մազերը՝ փաթըթէ.
Չըհարսնացած՝ այրի մնաց, աշխարհ աչքին՝ սեւացաւ,
Ճըրագըլխիվայր՝ ձեռքէն գըցաւ, պատուհանի մօտ նստաւ:

Բայց կարօտ է՝ աշխոյժ աղջիկն՝ տեղը հանգարտ՝ նստելու,
Կը համբերէ՝ սիրտը առանց՝ պատուհանէն՝ նայելու.
Հազարաւոր՝ նաւ կան կանգնած, նորա տանը՝ առջեւ,
Արդեօք նա նա՛ւ մըտաւ փախաւ, ինչպէս ճանչնամ այն նաւը:

Հապա՝ ծառայք՝ մէկ վազեցէք, նաւերի մէջ՝ հարցըրէք.
Գուցէ այն տեղ՝ իմ Զաւանին, մէկ նաւի մէջ կը գտնէք.
Հազար ոսկի՝ է աւետչեայն, ով որ մէկ լուր՝ կու բերէ,
Ազատ կ՚անեմ՝ գերութենէն, ով Զաւանին կու գտնէ:

Ա՛խ՝ սիրական, այս ինչ արիր, ինձ էլ, քեզ էլ՝ կորցըրիր,*
Յանցանքս ինչ էր՝ որ այս բաժակ՝ թունով լի ինձ՝ խըմեցրիր.
Հա՛. ես գիտեմ սորա պատճառն. ինչի՞ ասի՝ այն բանը.
Թող պապանձուէր, կապուէր լեզուս, չըբացուէր իմ բերանը:

*Այս տեղը Զաւանին այնպէս են պատկերանում, որպէս թէ Աստարբէի տանն և արածը լսում է և այժմ փոշմանում:



Տեսա՞ր՝ թէ ինչ անբաղդութեան՝ ես իմ խելքով՝ դիպեցայ,
Քաջ Հարբալի կործանողին՝ տալ պագնել տալ՝ կամեցայ.
Իմ կանացի՝ ու օրինաւոր՝ յիմարութեան՝ պատուհաս,
Իմ փեսայէն՝ արժանաւոր՝ այս հատուցումն ինձ եհաս:

Զաւան՝ դարձի՛ր, ես կը պագնեմ՝ դիւցազնական՝ քո ոտքը,
Աստարբէիդ՝ խընայէ քիչ, պիտի առնուլ՝ այս խելքը.
Ես ճանչըցայ՝ իմ յանցանքըս, ինձ դու ներէ՝ իմ փեսայ,
Դարձի՛ր հարսիդ՝ քնքուշ ծոցը, ես առանց քեզ մաշուեցայ:

Կէս գիշերի՝ հաւն է խօսում, ամենքեան հանգիստ են,
Միայն զարթուն Հարբալի տան, և չէ քընում Աստարբէն.
Իմ ապերախտս՝ այս երկու տուն՝ տակնուվրայ է բերել,
Մէկին սըրով՝ է սպանել, մէկին անսուր՝ է մորթել:

Որքան անէծք, որքան թուք մուր՝ պիտի թափվի՝ իմ գլխին,
Երբոր էգուց՝ խայտառակվի՝ անունս ի մէջ քաղաքին.
Ինչո՞ր պիտի խօսի՝ խուժանն, ինչպէս պիտի բամբասվիմ,
Ես դաւաճան՝ իմ հայրենեաց, մատնիչ դառայ ազգին իմ:

Բայց թէ Զաւան՝ վերադառնայ, ամենայն ինչ՝ կը լըռէ,
Խաժամուժի քըթմնջիւնէն՝ չէ վախենում՝ Աստարբէ.
Թէ շատ խօսին՝ նաւ կը նստիմ, կ՚առնում գանձըս, ծառայքըս,
Կ՚երթամ, այն տեղ՝ կը բընակվիմ, ուր որ հաճի իմ կամքըս:

Ազովացոց՝ գերի չեմ ես՝ և չեմ ումեք՝ պարտական,
Նորան փեսայ՝ ինձ ընտրեցի՝ ում որ գըտայ՝ սիրական.
Օտար պանդուխտ էր Զաւանը, բայց ինձ համար՝ օտար չէր,
Մեր քաղաքի՝ ո՞ր աղջիկը՝ նըրան արդեօք՝ չէր տար սէր:

Մէկ էլ տեսնեմ՝ որ մէկ հատ նաւ՝ յետեներէս գալիս է.
Իմ մտքիս մէջ՝ ասի թէ՝ հա՛հ, այս ղրկել է՝ Աստարբէ.
Նաւաստիքը՝ սկսեցին՝ այն նաւէն լուր՝ հարցանել.
Նոքա տուին՝ պատասխանի. թէ՝ քաղաք՝ մարդ է կորել:

Մեր նաւաստիք՝ կրկին հարցրին. ինչ մարդ է այն կորածը.
Ժամանակ շատ չէ դեռ անցել՝ մեր Ազովէն ելածը.
Միւս նաւէն՝ ասացին թէ. այն որ այսօր Հարբալին,
Սենամարտում սպանել է, փախել թողել է հարսին:

Անցաւ այն նաւ, ու հեռացաւ, մեր նաւով արք՝ խօսում են,
Փոյթ չէ, մէքին՝ թող արտասուէ, այն անպատկառ՝ Աստարբէն.
Թող հասկանայ՝ թէ ինչպէս է՝ մարդագողէն՝ մարդ խըլել.
Ու Մողոքի սեղանումը՝ մարդու տեղը՝ ցուլ զոհել։*

Օտարական՝ այն ջորիին՝ արել էր իւր՝ սիրական,
Հետը յայտնի՝ լկտըվում էր, մոռացել էր՝ ամեն բան.
Իւր ծառայից՝ ցըրիւ տուեց, որ օտարին՝ տեղ լինի,
Աղոտացոյ՝ բերնի հացը՝ տուեց ուտել՝ պանդխտի։

Նրանի՛ թէ՝ մեզ պատահէր՝ փախստական՝ այն փեսայն,
Մենք նորան լաւ կ՚ընդունէինք, լաւ կը զուգվէր՝ ամենայն.
Մեզ համար մէկ՝ քաղցր զբօսանք՝ կը շինէինք՝ նժդեհին,
Չէինք թողնիր՝ որ շուտ դուրս գայ՝ պիղծ մարմինէն՝ սև հոգին։

Ոտքէն պարան՝ կը կապէինք, ծովի մէջ կու կախէինք,
Ճախարակով՝ կայ մի ծայրը՝ փառաւոր կու՝ քարշէինք.
Բարձր տեղէն՝ հանդիսաւոր՝ դէպ ի ծովը՝ գլխիվայր,
Կը տեսնէինք՝ թէ ինչ կերպով՝ գորտի նման՝ վայր կու գայր։

Չէինք թողնիր՝ շուտ խեղդըվիլ, կը հանէինք՝ ջրիցը.
Նա մեզ համար՝ նոր համբաւներ՝ կ՚ասէր ծովի՝ խորիցը.
Թէ որքան ձուկն՝ են մեն գալիս՝ Ճերմակ ծովի՝ ալեաց մէջ,
Կամ թէ որքան՝ զուարճալի՝ է նորա այն՝ ել և էջ։

Մինչ ի ցամաք մեր հասնիլը՝ նա խաղալիկ կը լինէր,
Յետոյ դարձեալ՝ ինչպէս գերի՝ բարձր գընով կը ծախվէր.
Մէկ Տիւրացի՝ վաճառական՝ ով որ կ՚ուզէ՝ թող լինի.
Նորա համար՝ առանց վէճի՝ կու տայր հարիւր տասն ոսկի։

Յետոյ ընկերն՝ այս խօսողին՝ տուեց բանին՝ պատասխան.
Էն գարշելի՝ պիղծ պանդխտին՝ դարձեալ կ՚ըլնի՝ աջող բան.
Երբ որ հասնի՝ փիւնիկեցոց՝ քաղաքների՝ մէկ հատին.
Էլ կը փախչի՝ դէպ Ազովտոս, և կու գտնէ՝ իւր հարսին։

*Սոփա ի՞նչ [illegible] ունէին՝ այսպէս [illegible] պարտաբէլ՝ Ջաւտանի դէմ։



Այդ ես՝ ի՞նչ ես դու ասում, կրկնեց առջի՝ խօսողը,
Հարկաւոր չէ՝ որ նա դառնայ՝ դէպ Ազովտոս՝ իւր տեղը.
Նըրան այնպէս՝ տեղ կորցրնենք, որ քանի որ՝ կենդանի է,
Երկան իշոյ՝ կապեն վըզին, աղօրիքէն՝ չելանէ։

Այս ամենայն՝ լսում էի՝ իմ սեփական՝ ականջով,
Դեռ գիշեր էր՝ չէր լուսացել, չէր ճանաչում ինձ ոչ ով.
Երբ լուսանայ՝ ինչ կը լինի՝ թէ որ մէկն ինձ՝ ճանաչէ,
Այժմ իմացայ՝ ես քո գինը՝ իմ ազատող՝ Աստարբէ։

Աչքիս առջև՝ նըկարված է՝ իմ ապագայ՝ գերութիւն,
Նաւավարաց՝ չարահոգի՝ և խուժադուժ՝ դառնութիւն.
Այս ամենայն պատահարաց՝ ով է դառել՝ ինձ պատճառ.
Ոչ ոք։ Իմով յօժարութեամբ, կամաւ եղէ՝ ես թշուառ։

Թողի հարսս՝ աչք արտասուք, սիրտը տրտում և տըխուր.
Ամբիծ հոգւոյն՝ բորբոքեցի՝ անշէջ լափող, կիզող հուր.
Ի՞նչ առաւօտ՝ պիտի ծագէ՝ այն չարաբաստ՝ աղջըկան,
Արդեօք նա այս՝ դառն գիշեր՝ տեսա՞ւ երես՝ հանգստեան։

Չէ։ Չեմ կարծում։ Նա սպասեց՝ որ մէկ ծառայ՝ յետ դառնայ,
Լսեց մէկի ոտքի՝ ձայնը, վազեց գընաց դէմ նորա.*
Ի՞նչ լուր ունիս՝ ասա լսեմ. չըբերեցի՞ք՝ իմ փեսայն.
Արդեօք մէկից՝ չըլըսեցի՞ք՝ կամ ուրախ, կամ՝ տրտում ձայն։

Ծառայն տուեց՝ պատասխանի. Թէ դեռ առջի՝ գիշերին,
Մէկ հատ պանդուխտ՝ մէկ շալիկով՝ նաւ է նստել՝ առանձին։
Նաւն էլ իսկոյն՝ խարիսխ հանել, յաջող հողմոյ՝ պատահել,
Այս պանդխտին՝ շատ նաւավարք՝ այլ նաւերէ՝ են տեսել.

Կամ թէ կ՚ասէ. Թէ նաւավարք՝ այնպէս մարդ բնաւ՝ չեն տեսած.
Խոր գիշեր էր, ամենքեան՝ հանգիստ եղել՝ են քընած.
Թէպէտ մէկ նաւ՝ դուրս է եկել՝ շատ առաջ՝ կէս գիշերէն.
Բայց ով գիտէ՝ թէ մէջն ով կայր, կամ ուր գնաց՝ իւր տեղէն։

*Այսպէս Ջաւոն գուշակում էր՝ թէ այսպէս կը պատահի, կամ պատահած կը լինի։

Յոյսը խափա՝ կը կորչի, Աստարբէ սուգ՝ կը մնի,
Իւր հարսնութեան՝ երեկոյին՝ յանկարծ մընաց նա այրի,
Երախտապարտ՝ գերի ծառայն՝ դաւաճանեց՝ տիրուհւոյն,
Մեծ նախատինք գըրի կենացս, ես մեռած եմ կենդանւոյն։

Արդեօք աչքէն՝ արտասուքը՝ կու գայ՝ որ սիրտն արձակի․
Թէ արտասուք՝ կը ցամաքին, սոսկ հոգին կու փշրկի․
Շատ անգամ էլ՝ արտասուքով՝ թեթեւանում է հոգին,
Կարեկից է՝ կանգնում աչքը, ընձեռելով՝ զով սրտին։

Իմ սիրական՝ Աստարբէին՝ մընաց բաժին սուգ ու կոծ․
Անբուժելի՝ եղև նորա՝ լերդի միջին՝ բացուած խոց․
Այնքան զուարթ՝ բերկրութեանց մէջ՝ նա միշտ պիտի հառաչէ,
Հալվի, մաշվի՝ իւր հեծութեամբ՝ և իւր սրտէն՝ ամաչէ։

Բարետոհմիկ՝ օրիորդ էր, կարեկցեալ՝ օտարիս,
Ապերախտիս՝ փրկիչ դառաւ, սիրեց ազգի՝ թշնամիս․
Ոչ խընայեց՝ նա իւր ոսկւոյն, ոչ ճոխութեան, ոչ գանձին,
Անակնկալ՝ միշտ պատրաստեց՝ անպատսպար՝ իւր անձին։

## ԺԱ.

### ԹԱԽԾԱԳԻՆ ԱՌԱՒՕՏ, ԲԱԶՄԵՐԱԽՏ ՄՐՐԻԿ

Հասաւ տըխուր՝ այն առաւօտ, լոյսը ծագեց մեզ վերայ,
Կարծում էի՝ թէ այն այգը՝ իմ յանցանաց՝ է վըկայ․
Լապտեր վառեց՝ իմ թշնամւոյն, որ նաւի մէջ՝ ինձ գտնէ,
Իմ ապերախտ՝ ոճիրներըս՝ մարդկան աչքի՝ դէմ յայտնէ։

Այն երկնային՝ փառաց զարդը, այն բընութեան պարծանքը,
Երեւում էր՝ ինձ ոխերիմ, և ծախում էր իմ աչքը․
Ինձ թուում էր՝ թէ քըմերու՝ մարդադոհի՝ կըրակ է․
Որ ինձ պիտի՝ շուտ տոչորէ, և ոսկերքս՝ ճարակէ։

Այն գեղեցիկ՝ ճաճանչները՝ որ եզերքէն՝ բղխում են,
Ու՝ գիշերի՝ աղջամուղջը՝ փարատելով մերժում են,
Ինձ երեւում՝ են մէկ մէկ հատ՝ կայծակնածին՝ վիշապներ,
Որ հրդեհեալ՝ անտառներէն՝ փայլատակում՝ են յեթեր․



Իսկ նոյն օրն է՝ ինձ լուսանում, ինչպէս մէկ օր՝ Ազովտում,
Ձեռքս ու ոտքս՝ կապած տարան՝ ու պառկեցրին սեղանում.
Սուրը՝ գլխէս՝ խելքս առաւ, հուրը աչքէս՝ լոյս քաղեց,
Քրմաց սրտի՝ ուրախութիւնն՝ սրտիս միջէն՝ յոյսն առեց։

Ատելի էր՝ ինձ այն լոյսը, որ մերժող էր՝ գիշերին.*
Ամենեցուն ցնծութիւնը՝ միայն ինձ էր՝ ցաւագին,
Թռչունք օդում՝ քաղցր ձայնով՝ այգապաշտօն՝ կատարում,
Ես կարծում եմ՝ թէ իմ տղեղ՝ արարմունքն են՝ բամբասում։

Կարմըրում էր՝ երկնից ծայրը, արշալուսի՝ սնգուրով,
Համարում եմ՝ թէ այրում են՝ Աստարբէիս՝ իմ հրով,
Որ նա ինձ իւր՝ սէրն էր տուել, օտարածին՝ պանդխտիս,
Ապերախտիս՝ ողորմութիւն՝ էր արել և՝ երախտիս։

Ատելի էր՝ արեւելքը՝ իմ վիրաւոր՝ սև օրուին
Այն կողմէն էր՝ փչում յաջող՝ ինձ հեռացնող՝ զով քամին․
Առագաստը՝ ծածանում էր, նորա մեղմիկ փըչելով,
Հաշվում էի՝ թէ նա ես ինձ՝ ծաղր է անում, շնչելով։

Այլ աչքս դէպ՝ արեւելք էր, այն կողմն էր իմ՝ Աստարբէն,
Արեւմուտք էր՝ գընում նաւը, ինձ հեռացնում նորանէն․
Նաւավարք դեռ՝ քընած էին, ղեկավարն էր՝ սոսկ զարթուն,
Զովարար հով՝ ընկըղմել էր՝ ամենեցուն՝ քաղցր ի քուն։

Ասում էի՝ ինչ տեղ որ է, սոքա քընէն՝ կը զարթին,
Ինձ կու ճանչնան, և կու բռնեն, ես եմ սոցա՝ ատելին․
Երեսունեօթն՝ տարեկան եմ, շատ բան գլխիս՝ եկել է,
Այս վըտանգն էլ՝ տեսնեմ ինչպէս՝ պիտի արդ ինձ հասանէ։

Դեռ ևըս ես՝ այս բաները՝ էի սրտումս մըտածում,
Տեսայ յանկարծ՝ առագաստում՝ որ այլ քամի է փըչում․
Ղեկավարը՝ աղաղակեց, նաւավարքը՝ վեր թըռան,
Վերկացաւ մէկ՝ սաստիկ մըրրիկ, երկինք և ծով՝ մթնեցան։

* Ամենքեան՝ որոց էին՝ միշտ յամառեն, [illegible] [illegible]՝ թէ զեր- [illegible] [illegible] [illegible]։

Արշալոյսը՝ յետ էր փախչում, որ այնքան ինձ նեղում էր,
Ծով սկսեց՝ ալէկոծվիլ, այգը դարձաւ՝ խոր գիշեր.
Վաճառականք՝ դարտ են անում, ով որ ունի՝ շատ ապրանք,
Միայն ես եմ՝ այն նաւի մէջ, որ մրրիկն է՝ ինձ փրկանք.

Գիտեմ՝ որ ինձ չեն տեսաներ՝ քանի որ այն՝ մութը կայ,
Մէկ խոր և մութ՝ անկիւնումը՝ ես նոյնմէն՝ թաք կեցայ,
Եթէ նաւը՝ կոտրվի էլ՝ ես աւելի՝ վախ չունիմ.
Լողալ գիտեմ՝ շատ քաջավարժ, յոյս ունիմ որ՝ ազատվիմ.

Բայց այս միջոց՝ ինչ է անում՝ իմ տառապեալ՝ Աստարբէն,
Ի հարկէ որ՝ Ազովտոս էլ՝ այս մրրիկը՝ կը փչէ,
Նա իւր ցաւը՝ պիտի թողու, ու մտածէ՝ ինձ համար,
Պիտի ասէ՝ թէ Ջաւանիս՝ էլ հասաւ այս՝ մրրիկ չար.

Ա՜խ, ներէ ինձ՝ իմ քաղցրիկ հարս, քեզ միայն եմ՝ յանցաւոր,
Այս վրնասը՝ ես ինձ տուի, ու քեզ արի՝ սրգաւոր.
Հոգոպլիքովդ՝ աչքդ ես սրբում, ես տեսնում եմ այս տեղէն,
Դու վաղ պիտի՝ նաւ նստէիր՝ արգելվեցար՝ մրրիկէն.

Այս փոթորիկ Աստարբէջան՝ Ջաւանին չէ տրտմութիւն,
Քո սրտի այդ՝ մրրիկներն են՝ քո փեսայի տխրութիւն.
Գիտեմ՝ որ դու, մինչև ի լոյս, աչքերդ բաց՝ անցուցիր,
Քո ապերախտ՝ յանցաւորիս՝ մինչև ի լոյս՝ պտրեցիր.

Այլ այս մրրիկ՝ շուտ կու դադրի, կու խաղաղի՝ այս ծովն էլ,
Կը սկսին՝ նաւք երթալ գալ, և ապրանքներ շատ բերել,
Բայց քո սրտի՝ մրրիկները՝ ամենևին՝ վերջ չունին,
Դեռ ևս նոր՝ են ամբոխվում, ալեկոծում՝ քո հոգին.

Հոգիդ՝ որ էր՝ այնքան մաքուր, ինչպէս այգն էր՝ այսօրվան,
Ես ծածկեցի՝ վարագուրով՝ գիշերային մթութեան.
Այն աղջամուղջ՝ խաւարի մէջ՝ ես դու այժմիկ դանդաչում,
Եւ ինքնդ քեզ՝ զուր ի նանիր՝ տարապարտուց՝ մեղադրում.

Գիտեմ ես քո՝ քաղցր սիրտը, արդարացնում՝ ես ինձ դու,
Ամեն յանցանքն՝ վրրէդ առնում, որ աւել ցաւ՝ է ազդու.
Չես կամենում՝ որ ապերախտ՝ ասվի գերի՝ քո ծառայն,
Միայն աչքիդ՝ երևում է՝ յաղթանակող՝ քաջ փեսայն.



Ցաւս աւելի՝ այս խորհուրդն է, որ չես կարող՝ ինձ ատել,
Իմ զզուելի՝ յիշատակը՝ սրտիդ մէջէն՝ փարատել.
Եօթնագըլուխ՝ վիշապի պէս՝ պիտի նա ման՝ գայ յետնէդ,
Բոյն է դըրել՝ հոգւոյդ խորում, չըստղոսկէր՝ դուրս սրտէդ.

Աստարբէջան, դու մէկ թքէ՝ ապերախտիս՝ երեսին,
Ասա թէ դու՝ արժան չէիր՝ հըրաշագեղ՝ քո հարսին.
Տիւրոս, Սիդոն՝ շատ փեսայք կան՝ Պարէտեանէն գերազանց,
Սիրտըդ մէկին՝ տուր սիրելով որ չըէրվիս՝ չափազանց.

Ա՜խ, ես ինչպէս՝ ուրախ կ՚լնիմ, երբ իմանամ՝ սիրելի,
Որ դու ընտրել՝ ես քո սրտով՝ արժանաւոր՝ փեսայ մի.
Իմ նեղութիւնս՝ կէս կը լինէր, կ՚իմանայի՝ որ հարսն եմ,
Երջանիկ է՝ իւր ընտրութեամբ, ես էլ նոյա կ՚սփոփվիմ.

Բայց՝ ո՛չ. Գիտեմ՝ քո սրտի մէջ՝ իմ սէր՝ խորն է՝ թափանցել,
Քո ապերախտ՝ վատթար գերուդ՝ անկարար ես՝ սէր տրվել.
Ծով ու ցամաք՝ պիտի ման գաս, ալիքներէն՝ հարցանես,
Ու անարժան՝ փեսիդ ոսկերք՝ ժայռերի մէջ՝ պտրտես.

Ինչ նաւ տեսնես՝ դու խորտակված, պիտի կարծես՝ ինձ այն տեղ.
Պիտի ասես՝ արդեօք այս տեղ՝ սուզաւ փեսայն՝ իմ զօրեղ.
Անշունչ մարմինն՝ յանձնեցէք ինձ, երախտաւոր՝ ալիքներ.
Ձեզ դահամունք՝ շատ կը բերեմ, ոսկի, արծաթ և զոհեր.

Կամ ինձ էլ ձեր գիրկը առէք, ի միասին պառկեցրէք,
Անդնդասոյզ՝ ձեր յատակում՝ մեզ առագաստ՝ ձևացրէք.
Թող ծովային՝ սարք համբարուաց՝ մեր հարսանեաց՝ երգ երգեն,
Ջաւանի հետ՝ Աստարբէին՝ հարսնարանում՝ միացնեն.

Ախըր նա ինձ՝ պատըպաճունքի՝ մէջը պառկած՝ խօ տեսաւ.*
Փեսայութեան՝ նախկին համբոյր՝ իմ երեսին՝ դրուեցաւ.
Էլ ինչ մնաց՝ հարսնանալոյ, բայց թէ միայն՝ գրկըվիլ,
Եւ միասին՝ մէկ անկողին՝ հոգւով սիրով հաղորդիլ.

*Ախըր, խօ, [illegible] բառերը՝ միայն [illegible] են [illegible].

Ախըր ասաց, դուրս երթամ, գամ, քեզ հետ շատ կու՝ հաշտըվինք,
Ես խըռով չեմ, թողէք՝ որ մենք՝ ձեր ալեաց մէջ՝ փաթըթվինք,
Մարդու կնիկ՝ ենք, ձեզ ինչ կայ, մեզ ամեն տեղ՝ սենեակ է,
Ինձ ինչփոյթ է՝ թէ սառն է ծով, Զաւանիս գիրկ՝ շատ տաք է։

Եթէ ալիք՝ չըտան նորա՝ քնքարտանաց՝ պատասխան,
Սրտապակաս՝ պիտի երթայ՝ քարաժայռից՝ յանդիման.
Որ յատակէն՝ սուր սուր ծայրով՝ վեր են ցցուել՝ ծառի պէս,
Եւ նաւերուն՝ սըլաքներով՝ վախեցնում են՝ սըրի պէս։

Այն ժայռերուն՝ որ սրածայր՝ են քան ղաշեղ՝ սուսերը,
Որ իմ զոհիս՝ համար պատրաստ՝ քուրմն էր բռնել՝ իւր ձեռը,
Դու խնդութեամբ՝ պիտի մօտիս՝ ու հարցընես՝ փեսայիդ,
Ինչպէս ծաղկանց՝ մէջ երբեմն՝ գտնում էիր՝ Զաւանիդ։

Թէ որ մէկ հատ՝ ոսկոր գտնես, ով գիտէ թէ՝ նա ումն է,
Պիտի անյագ՝ սիրով գըկես՝ ասես՝ այս իմ՝ փեսայն է.
Մատով պիտի՝ գետին փորես՝ այն կըմախքը՝ թաղելու,
Եւ քեզ համար՝ այն տեղ սենեակ՝ շինես ինձ մօտ՝ կենալու։

Գիտեմ՝ որքան՝ արտասուքներ՝ պիտի այն տեղ՝ դու թափես,
Մինչև հոգիդ՝ հառաչանօք՝ հեծութեան հետ՝ աւանդես.
Այն ամայի՝ քարանց վերայ՝ դըրնես գեղձան՝ մազերդ,
Աչքըդ փակես՝ յաւէժ քընով, գալուկ ծածկէ պատկերդ։

## ԺԲ

### ՀՐԴԵՀ Ի ԾՈՎՈՒ

Այսպէս էր իմ՝ խօլականցնորք, մութ մութ խորհուրդք՝ մութ օրը.
Ծովն էր լինում՝ տակնուվրայ, նաւն էր թափում՝ իւր ջուրը.
Իմ խորշիկն էլ՝ հասաւ այն ջուր, բայց ինձ տեղէս՝ չշարժեց.
Աստարբէկս՝ հոգն էր սրտիս, ջուրն ահաւոր՝ չերևեց։

Երբեմն հարսնս՝ երևում էր՝ ալեաց միջին՝ ընկըղմած,
Որ վերմակով՝ որ ծածկած էր, այն ծածկոյթով՝ փաթըթված.
Նոյն կերպարանն՝ ծածկոյթի տակ, ստինք, բրանն, ձեռները,
Ծածկութէն դուրս՝ թողած ոտքը, որ ձօն առնու՝ համբոյրը։



Երբեմն ես՝ տեսնում էի՝ հարսիս օդում՝ լուսի պէս,
Որ ձեռքերը՝ ձգում առ իս, նայում գրկել՝ հարսի պէս.
Երբ ես ձեռքըս՝ կարկառելով՝ կամում էի՝ ըմբռնել,
Տեսնում էի՝ որ ուրուական՝ էր իմ աչքին՝ երևել։

Անտանելի՝ էր այս կարօտ, որ նեղում էր՝ ինձ սաստիկ,
Հարսիս՝ սրտէս՝ չէր հեռացնում՝ այս ծովաշարժ՝ փոթորիկ.
Ո՛ր կողմը որ՝ աչքս եմ թեքում, այն տեղ է ինձ երևում,
Քունն էլ փախել՝ էր աչքերէս, տեսանունքս չեն փակվում։

Այս յուսահատ՝ ճգնաժամին՝ օդը քիչ քիչ՝ կարմըրեց.
Եւ աղջամուղջ՝ մըթան մէջը՝ նոր արշալոյս երևեց,
Այլ այս լոյսը՝ արևմուտքէն՝ թուխպի մէջ է՝ երևում,*
Գիշեր ցերեկ խառնըվել են, լոյս ու խաւարն՝ են կռվում։

Խաւարի մէջ՝ լուսեղէն սիւնք՝ են վերանում՝ ներքևէն,
Եւ գետին չէ՝ այնքան մօտիկ, ուրեմն բղխում՝ է ծովէն.
Այս ինչ տեսիլ՝ նորանըշան, հըրոյ ջըրմուղք՝ են վազում,
Վայրէն ի վեր՝ օձից-նման՝ փայլակնաձև՝ ցոլանում։

Քանի գընում՝ աւելնում է՝ օդի միջի՝ կարմրութիւն,
Այս արևու՝ չէ ճառագայթ, կայծակ է և՝ բոց փայլուն,
Այլ թէ ուստի՝ էին այս բոցք, ինչ էր ծովի մէջ վառվել.
Մի թէ ծովն էր՝ այն փոթորկէն՝ հրդեհ ընկել, բորբոքվել։

Իրաւ օդի՝ մէջ ցոլացած՝ անօրինակ՝ բոցերը,
Լուսաւորում՝ էին հըրով՝ ճերմակ ծովի՝ ջրերը.
Օդն ու ծովը՝ միօրինակ՝ խաւարի մէջ՝ փայլում են,
Տեղ տեղ շանթեր՝ են հանրանում, խաւարի մէջ՝ ցնդում են։

Շատ հեռուէն՝ լսվում էին՝ ծովի տակէն՝ դըրնդիւնք.
Ամպ չէր գոռում, երկնքիցը, այլ ծովի մէջ՝ կան բոմբիւնք.
Դղըրդվում են՝ ծովն և օդն, և շարժողն է՝ մէկ հարուած,
Ճայթիւնք սրտերն՝ դող են ձըգում, վախն ամեն տեղ է փռված։

*Կովկասյան լեռնեցած ժամանակը՝ մեծ նմանութեան ունեցող է, որ այն ալեկոծութեան մէջ արևմուտք և արևելք որոշվին։

Անձրևան՝ նաւավարքն՝ երեխանց պէս՝ դողում են,
Նաւապետն ու ղեկավարը՝ ներքնայարկում՝ թաքչում են.
Ոչ տեսած են, և ոչ լսած՝ այս օրինակ՝ պատահմունք,
Որ ծովի մէջ՝ հուր բորբոքվի՝ շանթեր թռչին՝ և ցոլմունք։

Ծո՞վն է արդեօք՝ կրակ առել, և վառվում է՝ էրվելով,
Թէ ջուրը հուր՝ է փոխարկվել, բոցակիզում՝ է լայն ծով.
Խառնըվել են՝ լոյս և խաւար, գիշերն եղև՝ անսպառ,
Արեգական՝ լոյս չէր ծագում, օդ փայլում էր՝ բոցավառ։

Աւաղածոր՝ ժամացոյցը՝ երրորդ օրն է՝ ցոյց տալիս,
Որ նաւն անտէր՝ է ծովի մէջ՝ անթև, անղեկ՝ ման գալիս,
Ցամաք կորել՝ է աչքերէս, աշխարք ամեն՝ ծով դարձել,
Ծով ու երկինք՝ կըրակ ու բոց՝ բորբոքվելով՝ կարմըրել։

Չէ իմացվում՝ թէ կա՞յ քամի, կամ ո՞ր կողմէն է փչում,
Պտտտըքում է՝ փոթորիկը, կարմիր ծուխն էլ՝ հետը գլում.
Վաղուց չըկան՝ պարանները, կտրտել է՝ մրրիկը,
Կայմը շարժում՝ եղեգի պէս՝ միայն ծըռում է նաւը։

Ոչ ոքի չէ՝ միտքը գալիս՝ նաւը փոքր ինչ՝ դատարկել,
Փրկութեան յոյս՝ մէկի սրտում՝ համարեա թէ՝ չէ մնացել.
Ծովըն չէ այժմ՝ նոցա երկիւղ, երկինքէն են՝ վախենում,
Օդն ու ամպը՝ կըրակ առած՝ բոցակէզ են՝ երևում։

Եթէ նաւը՝ դիպչի ժայռից, ու խորտակվի, փշրվի,
Ամեն մարդու՝ սրտում յոյս կայ՝ որ ծովէն կու փրկվի.
Ապա եթէ՝ նաւը վերէն՝ կըրակ առնու՝ օդից,
Էլ փրկութեան՝ յոյս չըմընար՝ անփախչելի՝ մահից։

Առաջ միայն՝ կարմրութիւն՝ էր երևում՝ օդումը,
Այժմ կայծերն՝ ու բոցերը՝ թռչտում են՝ ամպումը.
Փայլատակունք՝ են այս շանթից՝ համեմատել՝ ճըրագունք,
Կամ արևու՝ծագէմ թըռուցիկ՝ փասուրայ ճանճք՝ պսպղունք։

Զարհուրելի՝ է երևում՝ այն հըրեղէն՝ հեղեղը,
Որ բղխում է՝ ջըրմըղի պէս՝ ու հասնում է՝ ամպերը.
Վայրէն ՚ի վեր՝ է բարձրանում, վերէն ՚ի վայր՝ տարածվում,
Ջըրի նըման՝ հրոյ մէջ կայ՝ յանհնարին՝ եռանդում։



Սաստկանում են՝ ճայթմունքները՝ ինչ են՝ ամպերի,
Հազարուբիւր՝ կայծակներով որոտում է՝ շանթերի,
Այս ինչ բոց է, այս ինչ ցոլմունք, այս ինչ կըրակ՝ հրդեհուած
Ով է տեսել՝ որ երկինքը՝ այսպէս լինի՝ կըրակված։

Հիւսիսայգը՝ սորա հանդէպ՝ ճըրագալոյց՝ է փոքրիկ,
Ճերմակ ամպը՝ ձիւնի նըման՝ խտտչում է՝ աչվըռուք.
Այս բոցավառ՝ հըրակիզմունք՝ հասած երկնից՝ կամարին,
Ցոյց են տալիս՝ որ հրդեհված՝ է բնութիւն՝ բընաւին։

Մինչև այժմ՝ ես իմ՛ խորշէն՝ չէի բնաւ՝ դուրս ելած,
Աստարբէի՝ ցընորից մէջ՝ էր իմ հոգին՝ ընկըղմած,
Այնքան ալիք չըկան ծովում, որքան պատկեր՝ իմ սրտում,
Որ Աստարբէն՝ ձևանում էր՝ իմ խանգարված՝ ուղեղում։

Ո՞վ կու տայ ինձ՝ այն բերանը՝ որ կարենայ՝ ձեզ պատմել,
Ինչ խորհուրդներ՝ այն միջոցին՝ սրտիս մէջէն՝ անց կացել.
Հոգւոյս խորոց՝ ամբոխմունքըն՝ աւելի էր՝ քան օդին,
Մխոցըս, սիրտըս՝ յուզվում էին՝ չար քան գալիս՝ խոր ծովին։

Կարծո՞ւմ էք թէ՝ այն պահերում՝ ցանկալի էր՝ ինձ մահը։
Ո՛չ։ Նեղում էր՝ ինձ իմ հարսի՝ ապագայի՝ չար ահը.
Ա՜խ՝ ինչ կ՚անէ՝ իմ Աստարբէն, այս էր միշտ իմ՝ մտքումը,
Աչքիս՝ ոչինչ՝ չեն երևում, թէ ինչե՞ր կան՝ օդումը։

Հասարակաց՝ այն վըտանգէն՝ հոգւով էի՝ հեռացած,
Որպէս թէ այն՝ ինձ չըհասնիր, այնքան էի՝ զըրաղած,
Կամ թռում էր՝ թէ ծովային՝ ճանփորդութեան՝ այն մասն է.
Երևեցաւ հողմերի հետ, հողմոց հետ եւ՝ կու անցնէ։

Եթէ ասէր՝ մէկ մարդ. Զանան, գլխիդ ճար տես՝ կորչում ենք,
Կարծում եմ որ՝ ես կ՚ասէի, երբոր կորչինք՝ կը տեսնենք.
Թմրութիւն էր՝ վըրէս եկել, չէի ոչինչ՝ ես զգում,
Միայն սէրն էր Աստարբէի, որ հոգիս մէջս՝ էր պահում։

Էլ ինքս չէի՝ ինձ մեղադրում, թէ ես ինչի՞ այս արի,
Քաղցրիկ կեանքս՝ յիմար խելքով՝ առանց կարեաց՝ կորցըրի.
Երբեմնապէս՝ միտքս էր գալիս՝ Աստարբէի՝ վիճակը,
Բայց այն էլ շատ՝ չէր ինձ նեղում, վստահեցնում՝ սրտիկը։

Այն վայրկենին՝ որ երկինքը՝ գլխիս վերայ՝ փչում էր,
Իմ սրտիս մէջ՝ բողբոջում են՝ ծիծաղաշարժ՝ նոր յոյսեր.
Ասում էի՝ թէ Աստարբէն՝ ծախեց իւրեան տուն տեղը,
Գանձն ու ծառայք՝ նաւեր գըրեց, ծով մտաւ իմ՝ չըքեղը.

Կու գայ նաւով՝ ինձ կու հասնի, այս տեղէն ինձ՝ կու հանէ,
Կաթնատեսակ՝ սիպտակ լանջաց՝ վերայ խնծել՝ կու դընէ,
Կ'ասէ. Ջաւան, ես քեզ հետ եմ, մի՛ վախենար՝ բընաւին,
Թող բորբոքվին՝ երկինք երկիր, ահ չըկայ մեր երկուսին։

Իրաւ եթէ՝ այս օրերըս՝ Աստարբէ ինձ՝ հասանէր,
Իւր սիրական՝ յաղթող փեսին՝ ինչպէս պիտի՝ տեսանէր.
Մերկ, ու ցըխոտ՝ նաւի խորշում, գետնին պառկած՝ տըմուրը,
Սուս, անզգայ՝ բոլորովին, լոյս էլ չըկայ՝ աչքումը։

Քաղցածութիւն, ծարաւութիւն, աչքի լուսը՝ քաղել են,
Անքընութիւն, մըտածութիւն, ոյժ, զօրութիւն՝ տարել են.
Ջաւան մէկ հատ՝ չոր գիւղն է . . . այս ինչ ահեղ՝ գոչիւն է.
Որ նաւաստի՝ այն խուժանի՝ աղաղակէն՝ լսվում է։

Նաւը հասել՝ է ցամաքի. բայց հեռու է դեռ հողը.
Տեղը ծանծաղ՝ է աւազուտ, սաստիկ խրվել՝ է նաւը.
Մարդիկ՝ նաւը՝ խորն են մըղում, քամին քըշում՝ դէպ ցամաք.
Մէկ օգնութիւն՝ չեն հասցընում, բարձրացրել են՝ աղաղակ։

## ԺԳ

### ՍԻԿԻԼԻԱ ԿՂԶԻ

Այն անզգայ՝ թմրութենէն՝ ես սակաւ ինչ՝ դուրս եկայ,
Ելայ նաւի՝ տախտակամած՝ ու չորս կողմը նայեցայ.
Զուարճութիւն՝ ծագեց սրտիս՝ հասարակաց՝ վըտանգէն,
Ասի. ես շուտ թաք կու կենամ՝ իմ ատելեաց՝ աչքերէն։

Նաւը սաստիկ՝ ոգորում էր՝ ուժգին հողմոյ՝ փչման հետ.
Թէ աւաղէն՝ շուտ չազատվի՝ կործանելոյ՝ է անհետ,
Բեռինք շատ են՝ ծովը ձըգում, թեթեւանում՝ չէ նաւը.
Վաճառականք՝ յուսակտուր՝ կան ակնապիշ՝ դէպ ծովը։



Ցապախառն է՝ փչում քամին, բերում աճիւն՝ կայծակից,
Անտանելի՝ է ծծմբոյ՝ սաստիկ հոտը՝ ծըխալից,
Շատ ժամանակ՝ չէ մնացել՝ որ նաւ բոլոր՝ բորբոքվի.
Արդէն ծխվում՝ են կայմերը, տաք են երկու կողք նաւի։

Ձկնորսութեանս՝ մէկ օգուտը՝ այս միջոցին՝ ստացայ,
Աչքըս ընտել՝ էր ծովերուն, ուր է ցամաք՝ ճանչըցայ.
Թէպէտ այն տեղ՝ աւել էր լոյս, որ կողմն որ՝ ցամաք էր,
Բայց ես անոր՝ անփոյթ արի, սաստիկ լոյս ինձ՝ արգելք չէր։

Ծովը ընկայ՝ ձըկան նըման, ու նաւէն քիչ՝ հեռացայ,
Տեսայ քամին՝ նաւն քըշեց, ես ծանծաղին՝ մօտեցայ,
Հըպատեսակ՝ մառախուղը՝ աչքէս նաւը՝ շուտ ծածկեց,
Ես միայնակ՝ եմ ծովի մէջ, բայց այս ինձ չըվախեցրեց։

Ուր որ ոտքս էր՝ գետնին հասնում՝ ոտքով էի՝ ման գալիս,
Ուր որ խորն էր՝ այն տեղ ձեռքով՝ արագաշարժ՝ լող տալիս.
Շատ տեղ ալիք՝ բարձրանում են, ու զարնում են՝ աւազին,
Ցամաքը մօտ՝ է ոյժ չունին՝ ալիք կատղած՝ մոլեգին։

Երկիւղալի՝ աւել այն էր, երբ որ նաւը՝ ալիքէն,
Առաջ էր շատ՝ վեր բարձրանում, յետոյ ընկնում՝ երկինքէն,
Անդնդախոր՝ ծովի յատակ՝ բացվում յայտնի՝ իմ աչքին.
Վիշապի պէս՝ կարծում էի՝ թէ կուլ պիտի՝ տայ նաւին։

Այժմ նաւն էլ՝ չէ երեւում, ցամաքին եմ՝ մօտենում,
Թէ տեղ տեղ փոս՝ խոր տեղեր կան՝ չեն ինձ աւել՝ վախեցնում,
Աստարբէն ինձ՝ սպասում է, երթամ հասնիմ՝ ցամաք տեղ,
Ինձ իւր գրկայ՝ մէջ կ'ընդունի՝ ցանկալի հարսն՝ իմ շքեղ.

Համարեա թէ՝ այս յոյսն էր որ՝ ինձ պահում էր՝ ծովումը,
Քանի անգամ՝ դաւաճանեց՝ և ինձ թողեց՝ իմ ոյժը.
Երբ Աստարբէս՝ միտքս էր գալիս՝ նոր ոյժ էի՝ առնում,
Այն գըլորված՝ տեղէս շուտով՝ ոտքի էի՝ ես կանգնում.

Տապը աւել՝ էր նեղացնում, ջուրն էլ տաք էր՝ օդի պէս.
Լաւ բաղնիս էր՝ եթէ հոգիս՝ չըքաղվէին՝ սաստկապէս.
Շունչս ընկլում՝ էր գոլորշին, փորս էր գընում՝ տաք ջուրը,
Կայծը մաքըս էր բորբոքում, ծակ ծակ մաշ իմ շապիկը։

Բայց վերջապէս՝ յաղթեցի ես՝ ծովի ալեաց՝ սաստկութեան,
Օդի անլուր՝ խառնակութեան, և շնչարգել՝ ջերմութեան,
Ոտքըս դըրի՝ հաստատ երկրի, բայց այն էլ էր՝ ջերմ ու տաք.
Փոյթ չէ ասի՝ այս տաքութիւն, գոնէ չէ ծով, այլ՝ ցամաք։

Մէկ հատ փոքրիկ՝ ծերպիկ գըտայ, և շուտ նորա՝ մէջ մըտայ,
Ըսկըսեցի շունչ առնուլ տալ, նեղութիւնըս՝ մոռացայ,
Գետնի վերայ՝ լօռ էր բուսած, եղև փափուկ անկողին,
Մարմնոյս մէջըն՝ էլ ոյժ չըկայր, շուտ պառկեցայ՝ զով գետնին։

Թէ չըլնէի՝ քաղցած ծարաւ, ես հանգիստ կու՝ քընէի,
Քաղցած փորէն՝ քունն է փախչում, անհանգիստ քուն ծարաւի,
Բայց այս միջոց՝ հաց ով կու տայ, կամ ուր գտնեմ՝ ես աղբիւր,
Թէև ծարաւ՝ պապակում եմ, այլ չէ խմվում՝ ծովի ջուր։

Մինչ եկաւ՝ Աստուծու՝ վերջին անգամ՝ ընթրիքը,
Վարագի գէր՝ խորոված ու եղջերուի՝ խորտիկը,
Անուշահամ՝ օշարակը՝ որ տալիս էր՝ իւր ձեռով,
Եւ աւելի՝ անուշացնում՝ սիրալիր՝ խօսքերով։

Երախտաւոր՝ այս մտածմունք՝ տուին ինձ մէկ՝ անոյշ քուն,
Քաղցածութիւնս՝ էլ մոռացայ, ծարաւս առաւ՝ զովութիւն.
Չեմ իմանում՝ շատ եմ քընել, թէ շուտ քընէս՝ զարթել եմ,
Մայն ոյժս՝ տեղն էր եկել, զգում եմ որ քաղցած եմ։

Թէպէտ զարթուն՝ էի քընէս, բայց չըշարժած դեռ տեղէս,
Զգացի որ՝ մէկ սարսափ կայ՝ դող, սասանում՝ իմ տակէս,
Առաջ մէկ տենդ՝ ես կարծեցի, բայց յետոյ շուտ՝ իմացայ,
Որ այն սարսուռ՝ տենդի դող չէ, գետնի տակը՝ մէկ դող կայ։

Շուտ նստեցայ՝ իմ անկողնի, ականջ դըրի՝ գետնիցը,
Տեսայ իրաւ՝ սասանութեան՝ շարժ է լսվում տակիցը.
Կարծես՝ թէ մէկ՝ մեծ կաթսայ է՝ կըրակումը՝ եռ գալիս,
Եռանդ սաստիկ՝ է կըրակէն՝ ջըրին ուժով եփ տալիս։

Այլ սաստկութիւն՝ չըկայ այն տեղ՝ զով է մէջ այն փապարի.
Գոնում երկայն՝ քուաձև մէմ՝ հովանի է՝ քարայրի
Ոչ վերի տաք, ոչ ներքի տաք՝ այն տեղ երբէք՝ են զգում,
Իւր բնական՝ զովութիւնը՝ այն այր ամբողջ՝ է պահում։



Փիւնիկեցոյ՝ հօրն որդոյն, որ շատ լեզուք՝ են խօսում,
Ծովեզերեայք՝ ինչ ազգ որ կան՝ ամեն բարբառք՝ գործածում.
Այդ լեզուքը՝ ես էլ Տիւրոս՝ սովրել էի՝ անաշխատ,
Որ ինձ այժմ՝ մեծ պէտք եկաւ, և հասոյց ինձ՝ օգուտ շատ։

Լեռնաբընակ՝ մէկ հատ աղջիկ՝ այրի մուտքում կանգնած էր,
Ներսը մութ էր, իսկ դուրսը լոյս, ինձ այրի մէջ՝ տեսնում չէր.
Ես որ տեսայ՝ այն աղջըկան, փիւնիկերէն հարցուցի,
Այս ինչ երկիր՝ է ծովափնեայ, կամ կեցարան ուր ազգի։

Նա բարբառով՝ Սիկուլացոյ՝ հարցուց ինձմէն՝ դու ով ես.*
Իսկոյն տուի՝ պատասխանի. թէ եմ դժբաղդ՝ նաւորդ ես.
Եթէ ձեր մէջ՝ կան հիւրասէրք, բեր ինձ շուտ մէկ՝ կըտոր հաց.
Շատ օր էինք՝ ալեկոծվում, համ ծարաւ եմ, համ քաղցած։

Աղջիկն ինձ էլ՝ ոչինչ չասաց, ադաչանացս՝ պատասխան,
Այլ վազելով՝ անյայտ եղաւ, ես մընացի էլ միայն.
Կարծում էի՝ թէ այն աղջիկ՝ երկիւղ կըրեց՝ ինձ տեսաւ,
Աւաղակէ՝ փախածի պէս՝ ոտք վեր առաւ՝ ու փախաւ։

Բայց չէր անցած՝ դեռ քառորդ ժամ, աղջիկ դարձաւ փապարը,
Ձեռին ունէր՝ մէկ փաթըթոյ, և մէկ փոքրիկ՝ կուժ ջուրը.
Դըրեց առջևս՝ ու նստեցաւ, ասաց մեր հիւր՝ նիստ ու կեր,
Լորված ձուկն եմ՝ փոքր ինչ բերել, հաց ու խաշած՝ թռչուններ։

Ով ինչ քաղցր էր՝ այն կըտոր հաց, ինչ զովարար այն ջուրը.
Կերայ, ծարաւս՝ զովացուցի, և կշտացաւ իմ փորը.
Աղջիկն ուզում՝ էր հեռանալ, բայց ես կրկին հարցուցի,
Այս որ երկիրն՝ է ծովի մօտ, ովք բընակիչք՝ այս երկրի։

Աղջիկն ասաց. Սիկիլիա՝ է բազմամարդ՝ այս կղզին,
Հայրըս ծովում՝ ձուկն է բռնում, բնակիչք ենք՝ լեռնային.
Երբ որ հայրս՝ ծովէն դառնայ՝ քեզ մեր այրը՝ կու տանի,
Ցետնասարը՝ դեռ չէ ուզում՝ որ ցասմանէն՝ հանգարտի։

*Սիկուլացիք են հողմնակալք Պելասգեանց, որ յանուն իւրեանց կո-
չեցին կղզին Սիկիլիա, և զհամանունս բնակիչս նորա՝ Սիկիլիացիս։

Ցեռնասարը՝ ես հարցուցի, ի՞նչ է, էր է բարկացել։
—Սա մեր կըղզի-մէջ մէկ սար է, մէջը հուրն է բորբոքվել․
Շատ տարիներ՝ որ հանդարտ էր, ես կեանքիս մէջ՝ տեսած չեմ.
Բայց հայրս էր՝ միշտ մեզ պատմում, և նորանէն լըսել եմ։

Այն ժամանակ՝ իմ միտս եկաւ՝ որ հինաւուրց՝ Արարատ,
Վաղ օրերը՝ հուր է բղխել, ու տուել է՝ վնաս շատ․
Թէպէտ հուրը՝ սպառել է, եկել է ջուր՝ յորդահոս,
Բայց դեռ սարի համբաւը կայ հրաբուխի կամ հըրահոս։

Այն ջուրն էլ այժմ՝ ցամաքել է, տեղը դատարկ՝ փոս դառել.
Տախտակներում՝ գըրած էր թէ՝ Պարէտ հայրս մարդ՝ է ղրկել,
Որ նա երթայ՝ տեսնէ գագաթ՝ Մասեաց լերին՝ թէ ի՞նչ կայ․
Հետաքննին՝ Հայոց ազգին՝ մէկ հիմնաւոր՝ պատգամ տայ,

Ղրկած մարդն էր՝ զգօն Վստամ՝ Ղայզար և՝ պերճ ազգասէր,
Մասիս լերին՝ գըլուխ ելաւ, յետ դարձաւ մեզ՝ ամենից յետ․
Երբ նա սարէն՝ վայր էր իջել՝ սպիտակել էր՝ մազերը․
Հետն էր բերել՝ նահապետայ՝ տան քարացած՝ ձկները։

Նորա պատմած՝ համբաւներէն՝ իմացվել է՝ յայտնապէս,
Որ Արարատ՝ հին ժամանակ՝ բորբոքվել է՝ բոցի պէս,
Յետոյ ջուր է՝ բղխեցուցել, և ջրի մէջ՝ ձուկն եղել,
Ինչպէս այսօր՝ Սեւանայ ծով՝ այն օրերէն՝ մընացել։

## ԺԴ

### ՁԿՆՈՐՍՈՒԹԻՒՆ ԶԱՒԱՆԱՑ

Երբ այն աղջիկ՝ մենակ թողեց՝ ինձ ի մէջ իմ մտածման․
Կրկին եկաւ՝ մտացս առջև՝ իմ Աստարբէն՝ աննման․
Տասներորդ օր՝ էր խղճութեանս, մրրիկ բերեց այս կղզին,
Ինձ ծանօթ էր՝ Սիկիլիա, եկած էի հետ հիմնին։

Տեսել էի՝ Սիրակուզայն, Սկիլ, Քարիբդ, Ցեռնասար,
Փիւնիկեցոց՝ նաւք գալիս են՝ այս կողմերը՝ անդադար,
Զարմանում եմ՝ որ նաւի մէջ՝ միտքս չեկաւ՝ այս սարը,
Ես շատ անգամ՝ լըսած էի՝ այս լեռնաբուղխ՝ վառ հուրը։



Աստարբէի՝ տախտակներում էլ շատ տեղ կայր՝ գծգծած,
Թէ Ցեռնասար՝ Վէսուբի հետ՝ շատ անգամ են՝ բորբոքված․
Բայց ես մտքով չէի կարող՝ այն պատկերը՝ ձևացնել,
Ինչ որ աչքով տասն օրումը՝ հարկ ունեցայ՝ տեսանել։

Չըլինի՞ թէ՝ Աստարբէն էլ՝ նաւ էր նստել, դուրս եկել,
Ու մոլեգնած՝ Ցեռնասարի՝ կատաղութեան՝ հանդիպել,
Լերդապատառ՝ կ՚լնի խեղճը, երբ այն հրդեհ՝ տեսանէ,
Կամ շնչարգել՝ ջերմութեան մէջ՝ ծուխ և ծծումբ՝ շունչ առնէ։

Իմանայի՝ ո՞ւր է այժմ, Ազովտու է, թէ ծովում։
Չէ․ նա տանը էլ չըկենար․ սուգ է անում՝ մէկ նաւում.
Քամուն, ծովին, կատղած ալեաց՝ է նա պատմում՝ իւր դարդը,
Ինչպէս իրան՝ առագաստում՝ այրի թողեց՝ իւր մարդը։

Ո՛հ, մեծ յիմար՝ գործ գործեցի, բան չէ լեզուով՝ պատմելու,
Վայրենի մարդն՝ էլ չէր կարող՝ այս անխելք բան՝ անելու․
Մէկ հարցընող՝ լինի ինձմէն, թէ ինչի՞ այս բան արիր․
Աստարբէ ես՝ յանցաւոր եմ, քո քաղցրութեամբ՝ ինձ ներիր։

Մէկ էլ տեսայ՝ որ աղջիկը՝ միւս անգամ՝ երեւաւ.
Ասաց. արի՝ մեր տուն երթանք, հայրս ծովէն՝ յետ դարձաւ.
Ելայ տեղէս՝ և գնացի, ոտքս էրվում էր տաքէն,
Կըրակ ու բոց՝ էր դուրս խըխում՝ կատղած հրդեհ՝ լայն ծակէն։

Ապառաժի՝ վըրէն մանգալ՝ ինձ համար՝ մէկ՝ նոր բան չէր,
Սիդոն քաղաք՝ ապառաժի վերայ անշարժ՝ կանգնած էր․
Ինձ քարէ քար՝ ոստոստելը՝ ճանկռավելով՝ սողալը,
Կեանքիս մէջ շատ էր պատահած, չէր իմ նախկին մանգալը։

Տանուտէրը՝ բարի մարդ էր, տանտիկինն էլ՝ լաւ կընիկ,
Առաջ երկուսն՝ էլ հէնութիւն՝ շատ են արել՝ գաղտուկիկ.
Բայց երբ մարդը՝ իւր ձախ ոտքը՝ մէկ գիպուածով՝ կաղացրեց,
Այնուհետև եկաւ այս տեղ, ու լեռնումը՝ բընակվեց։

Այսպէս զուարթ այն տանտէրը՝ իւր գլխի անցք էր պատմում,
Իրանց արած՝ հէնութենէն՝ բընաւ չէին վախենում.
Վայրենի են այս բընակիչք թէ աւազակք, թէ գողեր,
Այս երկրումը՝ կարին գըտնել՝ բընակութեան՝ շատ տեղեր։

Ես իմ անցքս՝ չպատմեցի, այլ ասացի՝ ձկնորս եմ.
Ձեր նաւակով՝ ընկերաբար՝ ծովի վերայ՝ կ՚աշխատիմ.
Ուրախութեամբ՝ ընդունեցին՝ ինձ մէջ իւրեանց՝ ընտանեաց,
Այն լեռնական՝ հինի տանը՝ հանգիստ գըտայ՝ ես յալեաց։

Սոքա կենում՝ էին բարձր՝ սարի գլխին՝ մէկ այրում.
Ցեռնասարը՝ այս փապարէն՝ էր անխափան երեւում.
Այն հըրեղէն՝ հեղեղները՝ որ բղխում են՝ այն լեռնէն,
Չէին հասնում՝ մեր փապարին, արգելվելով քարեղէն։

Երբ աւելնում՝ էր դղրդիւն, գըրնում էինք՝ մօտ դըրան,
Տեսնում էինք՝ ինչպէս այն սար՝ բղխում էր իւր՝ շատրվան.
Մէկ տեսարան էր բղխելը, որ դէպ ի վեր՝ էր վառնում,
Մէկ տեսարան եր վայր գալը, երբ իւր փոսն էր՝ յետ հոսում։

Կաթսայի պէս՝ եռ էր գալիս՝ այն լայնանիստ՝ մեծ սարը,
Ծծումբ ու նաւթ՝ էր դուրս գըցում՝ անդընդախոր կատարը.
Սարը բոլոր հեղեղվում էր՝ այն հըրավառ նիւթերով,
Հեղեղատներ՝ էր բաց անում՝ իր բոցակէզ գետերով։

Քանի շաբաթ՝ մենք մնացինք՝ փակված ի մէջ՝ այն այրին,
Չէինք կամում՝ ծովը երթալ, ու պարապիլ մեր որսին.
Երբ որ մեքինչ՝ կատղած այն սար՝ վէր էր դնում կըրակը.
Իսկոյն երկուքս՝ նստում էինք՝ նորա փոքրիկ նաւակը.

Գըրնում էինք՝ կղզւոյ այն կողմ՝ ուր հրդեհը՝ զօրեղ չէր.
Պատահում էր՝ երբեմն մեզ՝ առատ յաջող՝ լաւ որսեր.
Կրկին շուտով՝ փախչում էինք՝ գալիս էինք մեր լեռը,
Երբ Ցեռնասար՝ սկսում էր՝ փըչել վառել՝ բոցերը։

Ձկնորսութիւնն՝ ինձ ամեն տեղ՝ պատահում էր՝ աջողակ,
Քանի օրվան՝ աշխատանքով՝ ես ստացայ՝ մէկ նաւակ.
Ծովին մօտիկ՝ փոքրիկ այրըս՝ ինձ աւելի՝ ախորժ էր,
Որովհետեւ՝ ծանծաղ տեղ էր, հըկային շատ՝ որսորդներ։

Որսորդութիւնն՝ ինձ չէր խափան՝ Աստարբէյիս՝ միտք բերել,
Երբ այրիս մէջ՝ մընում էի՝ մէնակ նորան՝ մըտածել.
Իմ տանտիրոջ՝ թեթեւ աղջիկն՝ միշտ փափուկ հաց՝ էր բերում,
Եւ իմ բռնած մեծ ձըկներից՝ փոխան հացի էր տանում։



Սովորաբար՝ ձկնավաճառք նոցա տուն միշտ գալիս են,
Եւ որսացած՝ ձկներն երբէք՝ ձեռին անծախ՝ մընում չեն.
Ես չեմ ուզում՝ որ իմ փապար՝ ձկնավաճառք՝ երթան գան,
Միայնութիւնն՝ լաւ եմ հաշվում, քան զկենալն ընդ մարդկան։

Երբեմն աղջիկն՝ որ գալիս է, ու ինձ թարմ հաց է բերում,
Տեսնում եմ որ՝ երկայն բարակ՝ հետըս խօսիլ է ուզում.
Խեղճ աղջիկը՝ երեւի թէ՝ բան է դըրել՝ իւր մտքին,
Բայց ինչ անեմ՝ որ ես կոյր եմ, չէ տեսնում աչք Զաւանին։

Վերջապէս սարն՝ խաղաղեցաւ, փակուած ձկնորսք՝ դուրս ելան.
Վաճառականք՝ ծովի վերայ՝ մեծ նաւերով՝ երեցան.*
Զուկն որ այն՝ տաքութենէն՝ դէպ ի խորն էր՝ գըրնացել,
Միւս անգամ՝ երամ երամ՝ սկսաւ յետ՝ վեր վազել։

Երբեմն մինչ՝ ձկնորսից խումբ՝ մէկ տեղ էին՝ ժողովվում,
Ստէպ լերին՝ մոլեգնութեան՝ վերայ էին՝ խօսք անում.
Ես թէպէտ այս՝ խօսակցութեան՝ մէջ խառնըված՝ չեմ ըրնա,
Բայց շատ տեսակ՝ առասպելներ՝ ականջիս մէջ՝ լցուեցաւ։

Ցեռնասարը՝ է մէկ դարբնոց՝ ուր կայծակունք՝ են կըռում,
Գագաթակնեայ՝ հսկաներն են՝ այն շանթերը՝ միշտ դարբնում.
Առաջնասար՝ է Վէսուբը, իսկ այս լեռան է Ցեռնասար,
Ծովի տակէն՝ երթեւեկ կայ՝ այն հսկայից՝ անդադար։

Եթէ սոքա՝ նետ չըդարբնեն, երկինք կ՚ընկնի՝ անկայծակ,
Միակնեայ՝ է միշտ կարօտ՝ մեծն Արամազդ՝ շանթարձակ.
Հետնայ, Վէսուր՝ սոցա աչքին՝ շատ մեծ բան են երեւում,
Լաւ է որ այն կարճատեսքը՝ Արարատը չեն տեսնում։

Միտքս եկաւ՝ որ Հայաստան՝ էլ կայ այսպէս՝ առասպել,
Մասեաց լերին՝ հիմանց ներքոյ՝ Հայք էլ մարդ են՝ նստեցրել.
Խեղճ Մըշակն է՝ արժանացել, այս ցանկալի համբաւոյն,
Թէ դարբնութիւն՝ է նա անում՝ Մասեաց տակը՝ մէջ հըրոյն։

*Նաւերը՝ այն օրերը Սէկիլէյ առելէ չէն մերձենար, այլ ՚ի հեռաւոր կը կենին, երբ առելէ մինչ հրաժարանին։

Երբ Արամին՝ Հըրատ ասին, ու Արամազդ՝ կոչեցին,
Կայծակների՝ տեսչութիւնը՝ նորա ձեռքը՝ յանձնեցին.
Կայծակ գործող՝ էլ պէտք եկաւ, Մըշակը խօ պատրաստէր.
Ասին. նա է՝ միշտ կըռողը՝ երկնից համար՝ կայծակներ։

Սա սիրելի՝ էր Արամայ՝ հաւատարիմ՝ մէկ ծառայ.
Որ ամենայն՝ պատերազմայ՝ մէջ օգնական էր նորա.
Մեռաւ Արամ, մեռաւ Մշակ, այլ կայծակունք միշտ կային,
Առանց կայծակ՝ երբ մնացած՝ է կապուտակ կամարին.

Տեսան Մասեաց՝ հուր բղխիլը՝ մըտածեցին՝ պատճառը,
Կայծակունք շատ՝ յարմար եկան, Մասեաց տուին շանթերը.
Բայց ով է այն՝ շանթիկ կըռում, ասեն Մշակ՝ է դարբնում.
Հըրատն Արամ նոյամով է՝ Արարատէն՝ որոտում։

Ազովտոսի՝ մէջ կենալըս՝ աչքըս լաւ էր՝ բաց արել,
Աստարբէի խօսակցութիւն՝ մտքիս մէջ ջահ՝ էր վառել,
Այսպէս յիմար՝ խօսքերին ես՝ բընաւ չէի՝ հաւատում.
Միայն Հայկայ՝ պաշտած կրօնն՝ կըրօն էի համարում։

Որքան Քամուք, որքան Մողոքք՝ Ազովտոսում՝ կան շարած,
Աստարբէի՝ այնց պաշտելը՝ ես մէկ անգամ՝ չեմ տեսած.
Մէկ օր ասի՝ Արամ-երգի՝ Հայկայ Բելի՝ պայքարը.
Ասաց. ես էլ՝ եմ հասկանում, բայց դեռ չար են քուրմերը։

## ԺԵ

### ԶԱՒԱՆ Ի ՍԱՐԴԵՆԻԱ

Ձկնորսութիւն՝ էր զբաղանքս՝ այն ամայի՝ տեղումը,
Բայց Աստարբէն՝ իւր պերճ կերպով՝ կայր իմ միշտ մութ՝ մտքումը.
Շատ հընարքներ՝ կան միշտ պատրաստ՝ այն կղզիէն դուրս գալու,
Այլ չըգիտեմ՝ թէ ո՛ր կողմն է՝ ինձ հարկաւոր՝ երթալու.

Կամում եմ որ՝ դէպ Ազովտոս՝ առաջ ծածուկ՝ մէկ երթամ,
Իմ Աստարբէն՝ ինչ է արել, կամ ո՛ր տեղ է, իմանամ.
Որ յետոյ ինձ՝ ինչ որ պէտք է՝ այն հընարը՝ գործ ածեմ,
Որ իմ հարսի՝ խոցուած սրտին՝ ցաւոց դիւր ինչ ընձեռեմ։



Աներկիւղ եմ՝ որ թէ գտնեմ՝ իմ կորցըրած՝ չքնաղին,
Շուտով պիտի՝ դարման անեմ՝ վիրաւորված իւր սրտին.
Թէև մահու՝ վէրք եմ տուել, նա կու ներէ՝ քաղցրութեամբ,
Ինձ սիրում էր՝ նա չափազանց՝ էլ չիմացիր՝ տրտմութեամբ։

Բանը այն է՝ որ գըտանեմ, պիտի ընկնիմ՝ ոտքը,
Արտասուքով՝ պիտի թըջեմ՝ նորա կոխած՝ երկիրը.
Իմ Աստարբէ՝ կ՚ասեմ, բաւ է, ինչ որ մինչ այժմ՝ քաշել եմ,
Իմ յանցանաց՝ արժանաւոր՝ պատուհասը՝ կըրել եմ։

Թէ որ գտնեմ՝ խօ շատ լաւ է։ Ապա եթէ՝ նա կորչի,
Ես ինչ պիտի՝ հընար գտնեմ, որ իմ սիրտը՝ սփոփվի.
Մինչ ի մահըս՝ պիտի ման գամ, մինչև նըրան գըտանեմ,
Կամ կենդանի, կամ թէ մեռած, որ միամիտ մեռանեմ։

Եթէ տեսնեմ՝ որ կենդան է, մէկ լաւ մարդու՝ կընիկ է,
Թագաւորի, ազգապետի՝ հարս լինելու՝ արժան է.
Ուրախ ուրախ՝ պիտի կենամ՝ այն քաղաքում, այն երկրում,
Ուր Աստարբէ՝ ուրախութեամբ՝ իւր կեանք լինի՝ անցկացնում։

Ինձ բարեբաղդ՝ պիտի համրեմ, երբ նըրան տեսնեմ՝ բաղդաւոր,
Երանի թէ՝ նորա մարդը՝ լինէր մէկ մեծ՝ թագաւոր,
Նորա դըրանն՝ կը կենայի՝ ինչպէս ծառայ՝ մտերիմ,
Ուրախութեամբ՝ կ՚անցունէի՝ նորան մօտիկ՝ աւուրքն իմ։

Նախանձելու, բարկանալու՝ չունիմ ոչ ինչ՝ իրաւունք,
Ես եմ նորա՝ սիրտը խոցել, աչքին տուել՝ արտասունք.
Նա ինձ ոչինչ՝ պարտական չէ, ես եմ նըրան՝ պարտական,
Ինչո՞ւ իւր կեանք՝ թող սևացնէ՝ այն գոհարը պատուական։

Արդեօք այս տեղ՝ կեցած մընամ, և չըշարժի՛մ՝ իմ տեղէն,
Կարելի է՝ որ գայ գտնէ, հարցանելով՝ նաւերէն,
Շատ կ՚իմանայ՝ թէ ո՛ր նաւով՝ ես դուրս ելայ՝ դէպ ի ծով,
Անտարակոյս՝ երբ նաւ նստի՝ նա ման կու գայ՝ պտրելով։

Ապա եթէ՝ նաւ պատահի, և ես թողլ տամ՝ իմ ձեռքէն,
Ինչպէս յիմար՝ բան կը լինի, ոչինչ պակաս՝ փախչելէն,
Կարելի է՝ որ Աստարբէն՝ կղզեօս այս կողմն՝ գալոց չէ,
Նաւահանգիստք՝ ամեն կողմ կան, Սիկիլիայն փոքրիկ չէ։

Չէ։ Ես այսպէս՝ չեմ կամենում՝ տընօրինել՝ գործերըս․
Հարկ է անշուշտ՝ շարժիլ տեղէս՝ այլք թող որսան՝ ձկներըս․
Դէպ Փինիկէ՝ պէտք է երթալ, և իմանալ՝ թէ ինչ կայ․
Աստարբէ ինչ՝ ուղի ընտրեց, երբ տեսաւ թէ՝ ես կորայ։

Դեռ այս խորհուրդն էի խորհում, որ յանկարծ մէկ նաւ եկաւ,
Սիկիլիոյ կղզւոյ հանդէպ, այրիս առջև կանգնեցաւ․
Մէկ հատ նաւակ՝ ձըգեց ի ծով, ջուր առնելու՝ մարդ հանեց,
Իմ այրիս մօտ՝ մէկ աղբիւր կայր, նաւակն ուղիղ ինձ վազեց։

Նաւակի մէջ՝ նաւապետն էր, փինիկեցի՝ էր ազգաւ,
Զուկն հարցուց՝ նախ և առաջ՝ մինչ այրիս փոքր՝ մօտ եկաւ․
Ունիմ ձուկն՝ ասի նըրան, և ձըկներըս՝ ցոյց տուի,
Դէպ ո՞ր կողմը՝ պիտի նաւէք՝ նաւապետէն՝ հարցուցի։

Զմիւռնիա՝ է միտքս ասաց, անտի ուղիղ՝ Փինիկէ։
Ես կրկնեցի․ ինձ էլ տանիլ՝ Զմիւռնիա՝ հընա՞ր է․
Նաւապետը պատասխանեց․ թէ կամենաս՝ մըտ նաւը․
Իսկոյն ձկներս՝ ժողովեցի, կրկին նստայ՝ ես ծովը։

Խիստ աջողակ՝ էր մեզ հողմը, Զմիւռնիա՝ մեզ բերեց․
Ձեւիս ձուկը՝ լաւ գին ունէր, անակնկալ՝ շուտ ծախվեց․
Փողը ծոցըս՝ քաղաքի մէջ և ծովափում՝ շրջում եմ,
Որ մէկ համբաւ՝ Աստարբէի՝ համար ուստէք՝ ես լըսեմ։

Փինիկեցոց՝ նաւեր շատ կան, երկնչում եմ մօտ երթալ,
Որ չըլինի՝ թէ ինձ ճանչեն, և գտն գործեն՝ վընաս տալ․
Մէկ նաւապետ՝ պատահեցաւ, որ ինձ ըրնաւ՝ չէր ճանչում,
Նըրան փոքր ինչ՝ ծանօթացայ, որ նորամէն՝ հարցընում։

Այս նաւապետ՝ Ալումուս է այն օրերը պատահել,
Երբ Աստարբէ՝ առագաստում՝ իւր փեսին է կորցըրել․
Տասնուհինգ օր՝ միայն կեցել է սըգալով՝ իւր տանը,
Մինչ աղխամալը՝ վաճառելէ, բեռնաւորել՝ նաւերը։



Նաւապետը՝ պատմում էր թէ՝ քանի անգամ տեսել է,
Որ Կիկլադեան՝ կղզիներում՝ ման էր գալիս՝ Աստարբէ*
Ամենայն տեղ՝ հարցանում էր՝ իւր կորցըրած՝ փեսային․
Ամենայն օր արտասվում էր՝ զվերջին ծընունդ՝ Համբիկին։

Բայց այն օրէն՝ քանի՛ ամիս՝ ժամանակ է՝ գըլորվել,
Որ նաւապետն՝ Աստարբէին՝ վերջին անգամն է տեսել․
Կորընթոսի՝ նաւահանգիստ՝ է անուանվում՝ այս տեղը,
Ուր Աստարբէ՝ խարիսխ արկեալ՝ կանգնեցրել էր՝ նաւերը։

Էլ ինչ ընդ վայր՝ երկարացնեմ, եօթն տարի շրջեցանք,
Մէկս միւսին պտրում էինք, բայց ո՛չ ուրեք՝ դիպեցանք․
Որքան կղզիք՝ կային ծովում, ծովեզերեայ քաղաքներ,
Ամենուրեք՝ հարցանելով՝ ծով ու ցամաք՝ ենք չափեր։

Քանի՛ անգամ՝ հանդիպել ենք՝ մենք իրերաց՝ մէկ կղզում,
Այլ չէինք գտել՝ թէև ամեն՝ խորշերն էինք՝ խուզարկում․
Կամ մեր նաւը՝ երբ հասել է, նորայն անտի հեռացել,
Նաւք ի մօտոյ՝ շատ են անցել, ես սիրելոյս՝ չեմ տեսել։

Նորա նաւերն՝ սեփական են, և յայտնի է՝ դրօշակը,
Գիշերայն են՝ մեզ պատահել, աչքէս ծածկել է մէգը․
Թէպէտ երբոր՝ լուսանում էր՝ լըսում էինք՝ թէ անցաւ,
Բայց ինչ կու գայր՝ իմ ձեռիցը, ես չունէի՝ գընած նաւ։

Միտք արի որ՝ մէկ նաւ գնեմ, որ յաջողեմ՝ ման գալու,
Դեռ առաջին՝ տարին էր այս՝ որ սկսայ պտրելու․
Տարի ու կէս՝ վաստակելով՝ հազիւ մէկ նաւ ունեցայ,
Սարդենիա՝ կղզումը՝ մէկ ձկնորսի հետ՝ միացայ։

Նաւը՝ նաւակ՝ չէ դիւրագին, ես և այնքան՝ փող չունիմ,
Հընար չըկայ․ տարապանօք՝ պիտի այն փող՝ վաստըկիմ։
Մէկ ղեկավար՝ ծերունի ոմն՝ իմ նաւի մէջ՝ վարձեցի,
Մէկ քանի հատ էլ նաւավարք՝ ձկնորսներից՝ ընտրեցի։

*Կիկլադեան՝ բոլորաձեւ շրջանաձեւ խումբ կղզեաց, որոց են՝ Փարոս, Դելոս, Նաքսոս, և այլն։

Կարծում էի՛ն թէ հէնութիւն՝ եմ ուզում ես՝ անելու,
Այն պատճառաւ՝ ուրախութեամբ՝ էին հաճում՝ մտնելու.
Բայց երբ տեսնում՝ էին թէ իմ՝ մտքիս չկար՝ հէնութիւն.
Թողնում էին՝ նաւն էլ, թին էլ, և ինձ մէնակ՝ մէջ ծովուն։

Ինչ և իցէ՝ հազիւ չորրորդ՝ տարին նաւի՝ տէր դառայ,
Ծովերի մէջ՝ Աստարբէի՝ ճանփայն պարել՝ բռնեցայ,
Բայց օրհասը՝ ինձ հալածում՝ էր բռնել իր՝ կըշիռը,
Մէկիս միւսէն՝ հեռացնում էր՝ նորա անդարձ՝ վըճիռը։

Լըսում էի՝ թէ Աստարբէ՝ մեծ աղուոր՝ է անում,
Իր նաւերը, գործակատարը՝ օր ըստ օրէ՝ աւելցնում,
Ու անընդհատ՝ մահն է գալիս՝ պտրտելով իր փեսին,
Չէ խընայում՝ ոչ մէկ կերպով՝ ոչ ոսկոյն, ոչ արծաթին։

Միտքս եկաւ՝ որ նա գովում՝ էր Զմիւռնիա՝ քաղաքը.
Կարծիք արի՝ արգեօք այն տեղ՝ կ'երթան նորա՝ նաւերը–
Արշիպելագոս՝* կղզիներից՝ ուղիղ այն կողմ բռնեցի,
Դեռ ես կէս՝ ճանփումն էի, հանդիպեցայ՝ փոթորկի։

Թէպէտ մրրիկ՝ շատ անգամ էր՝ ինձ այն ծովում՝ պատահել,
Շատ անգամ էր՝ նաւս խորտակել, ինձ ծովի խորքն՝ ընկղմել.
Հինգ տարուան մէջ՝ ինձ պատահած՝ արկածքը իմ՝ փորձել էր,
Այլ այս մրրիկ՝ ամեն հողմէ՝ ուժգին սաստիկ կը փչէր։

Փոքրիկ նաւըս՝ քըշեց, տարաւ՝ արեւմտեան կողմերը,
Հանեց արձակ՝ Ովկիանոս, հասանք կղզեաց՝ ժայռերը.
Փըշուր փշուր՝ արաւ նաւըս, նաւավարքըս՝ չիք դարձան.
Ալիք կառուած՝ ինձ ամայի՝ կղզոյ ափում՝ մոռացան։

*Արշիպելագոս, կամ Եգէ ծով, են կղզիք ի մէջ Փոքուն Ասիոյ և Յունաստանի։



# ԺԶ

## ԶԱՒԱՆ Ի ՄԱԴԵՐԱՑ ԵՒ ՊԱՏՄՈՍ ԿՂԶՈՒ

Նեղութիւնք, թշուառութիւն՝ ինձ համար նոր՝ դիպուած չէր,
Ծովի ալեաց, սուր սուր քարանց՝ իմ մարմինը՝ ընդել էր.
Այն էր միայն՝ իմ անձկութիւն, որ իմ հարսնէն՝ հեռացայ,
Եւ յուսաբեկ՝ սիրտ մտնինք, հանդիպելոյ յոյս չկայ։

Գիշեր էր որ՝ կղզին ընկայ, քընեցայ մէջ՝ ժայռերուն,
Առաւօտը՝ ինձ զարթեցուց՝ քաղցրանուագ՝ մէկ թռչուն,
Արեգակը՝ ճառագայթել՝ էր անդրանիկ՝ իւր շողին,
Որ հեռացրի՝ ծանրած աչքիս՝ երախտաւոր՝ քաղցրիկ քուն։

Որ ինձ հասաւ՝ անվարձ նըպաստ, ձեռքս և ոտքս՝ կազդուրեց,
Քամուած ոյժս, զօրութիւնս՝ կըրկին յանձն իմ՝ դարձրեց.
Միտքս շփոթ՝ էր մրրկէն, տեսայ որ այժմ՝ հանդարտ է,
Փորձանաց մէջ՝ գըլորվելը՝ մարդուս համար՝ պատրաստ է։

Այն քարերի՝ նեղ տեղերէն՝ վեր կացայ, ու՝ դուրս ելայ,
Ժայռերի մօտ՝ կանանչարօտ՝ ցամաք գետին՝ ես տեսայ,
Ծառեր կային՝ ինձ անծանօթ, վըրէ՛ն գեղին՝ պտուղներ,
Ոչ խնձոր են, և ոչ տանձ են, ոչ սերկևիլ կամ դեղձեր։

Մէկ հատ ծառէն՝ ես փետեցի, և սկսայ՝ ուտելու,
Կաշին դառն էր, մէջը անոյշ, քաղցր, համեղ և թթու.
Չէի տեսած այս Միդոնում, թէև պարտէզք՝ շատ կային,
Աստարբէ էլ՝ չունէր այս ծառ, մէջ ընդարձակ՝ պարտիզին։

Այլ այս փորըս՝ չըկշտացաւ, ջրի նման՝ հիւթ ունէր,
Ասի երթամ՝ ծովի ափին, գտնեմ ժժմունք, կամ ձկներ.
Իրաւ՝ ալիք՝ շատ ձուկն էին՝ ծովէն ցամաք՝ դուրս ձըգել,
Մէկ քանի հատ՝ ժողովեցի, որոնք չէին՝ դեռ սատկել։

Ծառոց չոր չոր՝ խըռիւներէն՝ փոքր ինչ խարոյկ՝ վառեցի,
Գայլախազ քար՝ էին այն ժայռք, մամռուներով հուր լուցի.
Ձուկն այն բոցով՝ խորովեցի, կերայ՝ փորըս՝ յագեցաւ,
Դեղին պտուղն՝ իմ կուշտ փորին՝ աւել ախորժ՝ երեւցաւ։

Այն ծառերից՝ մէկ հատ լաւ ոստ՝ իմ ձեռքին ցուպ շինեցի,
Համ ընկեր էր՝ ճանապարհի, համ զէն ընդդէմ՝ գազանի,
Թէպէտ աւել՝ երկչոտ չէի՝ ոչ գազանէն, ոչ մարդէն,
Այլ ծանրութիւն՝ չէր հասնիր ինձ՝ ձեռիս մէկ ցուպ՝ ունելէն։

Երբ այս տեղէն՝ քիչ հեռացայ, ծառերն աւել՝ թանձրացան.
Եւ ինձ ծանօթ՝ պտուղներից՝ բազումք այն տեղ՝ դիպեցան,
Գետնաքոյսն էր՝ զարմանալի, առատաբեր էր և լաւ,
Թռչունք ևս են՝ օդումթռչում, դաշտում շատ կայ վայրի հաւ։

Աւի՝ այս տեղ՝ չեմ մնանիր՝ քաղցած, ծարաւ կամ սոված.
Միայն հարսս՝ է իմ անձն ու երկայն ճանփով բաժանված.
Ո՞վ գիտէ թէ՝ այս եօթն ամսում՝ խեղճին ինչեր՝ են դիպել,
Ո՞րքան չարիք և փորձութիւնք՝ օրիորդին՝ հանդիպել։

Ամեն չարեաց՝ ես եմ պատճառ, թէ իմոց և՝ թէ նորայ։
Ես ամեն ինչ՝ խանգարեցի, դահիճ հարսիս՝ ես դառայ,
Նա դարձեալ ինձ՝ որոնում է, նա դարձեալ ինձ չէ՞ ատում,
Երևի թէ՝ ինձ ներել է, և սիրում է՝ իւր սրտում։

Աստարբէ եմ՝ ևս եմ սիրում, ասում եմ դու՝ իմ հարսն ես,
Ո՜հ, ի՞նչ անեմ, որ այս եօթն ամսոյ մէջ ոչ՝ գրեցայ քեզ.
Ինչպէս ասի, կարելի էր՝ թէ մենք դիւրաւ՝ հաշտվէինք,
Բայց յանդիման՝ ծառ է կանգնած, գլխիս ծածկոյթ՝ կան երկինք։

Զարմանալին՝ այս է ինձ այժմ, որ այս տեղ մեծ՝ սար չըկայ,
Ծովէն որքան՝ հեռացել եմ, միայն դաշտ է, հարթ ճանփայ,
Կարծում եմ որ՝ վեր եմ գընում, թէպէտ դիւր է՝ երեւում,
Ծովը քանի՝ գընում է, ցած՝ է ցամաքէն՝ տեսնըվում։

Իրաւ ես մէկ բարձրաւանդակ՝ լայնանիստ տեղ՝ ինձ գըտայ,
Դարեւանդէն՝ որ նայեցայ, գեղեր, շէներ՝ շատ տեսայ,
Արդեօք ի՞նչ ազգք՝ են այս տեղում, կամ ո՞վքեր են՝ բնակված,
Չըլինի՞ թէ՝ մարդակեր են, ու նոցա մէջ՝ եմ ընկած։

Ուժս սիրտս՝ ժողովեցի, ու գընացի՝ քիչ մօտիկ,
Տեսայ՝ որ խեղճ լաւ մարդիկ են, և լեզուներն՝ է Փինիկ.
Իսկոյն նոցա՝ հետ խօսեցայ, և իմացայ՝ որ նոքա,
Գաղթականք են՝ Փինիկեցոց, արծաթագին են ծառայ,



Այս՝ Քանարեան՝ կղզեաց մէկն էր՝ Մադէրայ էր անունը,
Փինիկեցիք՝ գտել էին, և հիմնարկել՝ այն շէնը.
Լաւ լաւ բերքեր՝ էին տանում՝ այս կղզիէն՝ ամեն տեղ,
Ցամաք մրգօք՝ հարուստ էր յոյժ, և գինին էր՝ շատ զօրեղ։

Ի՞նչ զարմանք ինձ՝ շուրջպաշարեց, երբ այն գիւղում ես տեսայ,
Որ շինական՝ մըշակաց մէջ՝ անյայտ օտար մէկ Հայ կայ.
Սկիզբ արինք՝ իրերաց հետ՝ քիչ Հայերէն՝ խօսելու,
Քառասունչորս ամ՝ էր անցկացել, լսած չէի՝ այս լեզու։

Հայն համառօտ՝ իմաց տուեց՝ որ այն տեղ էլ Հայեր կան,
Սև ծովի լայն՝ ծովեզերքէն՝ գողցած, մտնած՝ գերութեան.
Քանի հոգի՝ ևս ցոյց տուեց. որոց մէջ կայր՝ այն մարդը,
Ում որ հայրս՝ յանձն էր արել՝ իմ մանկական սընունդը։

Սա էր Վստամ՝ լայ զարև քաջ, իմ բազմերախտ՝ ազատող,
Որ Արքակի՝ անգութ սուրէն՝ եղև փըրկող, խընամող,
Աւաղ՝ք երբ՝ ինձ և նորան՝ ի միմեանց բաժնել են,
Ինձ ուրիշ տեղ, նորան էլ այլ՝ մարդ գընողայ՝ ծախել են։

Նա ևս ընկել՝ է ծախվելով՝ Փինիկեցոց՝ ճանկերը,
Նաւով բերել՝ են այս կղզի, սարուկ գերեաց՝ հետերը.
Քառասունևչորս՝ տարի էր որ, խեղճը այս տեղ էր կեցել,
Համարեա թէ՝ Հայոց լեզուն՝ բոլորովին՝ էր մոռցել։

Ինձ որ տեսաւ՝ ու ճանչըցաւ, ցնծութենէն՝ աղաղեց,
Իւր վշտատես՝ տառապանքը՝ մանրամասն՝ ինձ պատմեց.
Յետոյ ասաց՝ այս կղզումը՝ շատ Հայեր կան՝ ինձ նըման,
Որ այս վայրի՝ դաշտերի մէջ՝ կապուած կան մէջ՝ գերութեան։

Մէկ լոյս ծագեց՝ իմ հոգւոյ մէջ, ասեա արդեօք՝ իմ հայրիկ,
Հայոց ազգէն՝ քանի հոգի՝ այս կղզւոյ մէջ կան այժմիկ.
Ասաց. աւել՝ հարիւր յիսուն, որոց ես լաւ՝ ճանչնում եմ,
Կարելի է՝ թէ աւելի՝ էլ կան որ ես՝ տեսած չեմ։

Ես ասացի. Հայրիկ՝ եթէ այդ Հայերին ժողովես,
Կարող եմ ես՝ մէկ հընարիւք՝ այս կղզիէս՝ հանել ձեզ.
Վստամ ասաց. այն համազգեաց՝ ես կարող եմ՝ հաւաքել,
Դու ևս որդեակ՝ մէկ ջանք արա. և յաջողիր՝ մեզ փրկել։

Երրորդ օրը՝ հաւաքւեցան՝ մէկ անքոյթ տեղ՝ Հայերը.
Երկու հազար՝ հոգիք կային, այլ ծեր շատ կայր՝ մէջերը.
Ես նոցա հետ՝ խորհուրդ արի, որ նոքա լաւ պատրաստւին,
Որ աչալին՝ երկայն ճանփում՝ սովամահ չը՝ վտանգւին։

Միտքս այն էր, որ քանի հատ՝ հին նաւեր կան՝ ծովափում,
Նորոգել տամ, և գիշերով՝ իջուցանեմ՝ այն ծովում.
Բայց դեռ չէի՝ ես ձեռնամուխ եղել այն հին նաւերին,
Որ Տիւրոսէն՝ հինգ նաւ եկան այց առնել այն վայրերին։

Մէկ երեկոյ՝ հաւաքեցի՝ բոլոր Հայոց՝ ծովափը,
Կողոպտեցինք՝ Փիւնիկեցոց, և տիրեցինք նաւերը,
Առագաստը՝ հողմոյն տուինք՝ Ովկիանոս ճղքեցինք,*
Երկարաձանեան նեղուցն անցանք, միջերկրեայ ծով նաւեցինք։

Այնքան յաջող՝ էր մեզ քամին, որ մեզ հասոյ՝ քիչ օրում,
Մինչ ի ծովափ Զմիւռնիոյ, ոտքերս դրինք՝ ցամաքում.
Հայերը շատ՝ դուրս թափեցան, ու ցրուեցան՝ Հայաստան,
Ես այն նաւէն՝ դուրս չեկայ որ՝ ինձ չտեսնեն՝ չճանաչեն։

Բայց ինձ համար ես լաւ չարի, հանդիպեցայ՝ հէնէրու,
Նաւիս մէջը՝ մարդ չունէի, ընկղմեցին մէջ ծովու,
Ջուրէն չէի՝ ես վախենում, ես ծովի մէջ լող տալով,
Ցամաք հասայ՝ մեծ նեղութեամբ, աղօտվեցայ գիշերով։

Երբ առաւօտ՝ արև ծագեց, տեսայ որ մէկ կղզի է,
Բայց գալար խոտ չէ երևում, մէկ ապառաժ չոր քար է.
Ելայ բարձր՝ սարի գագաթ, և այն տեղէն զննեցի,
Պատմոս կղզին՝ էր անպտուղ, միտքս եկաւ. ճանչեցի։

Ծովի ժժմունք՝ շատ կան այն տեղ, փորս կշտացրի՝ բաւական,
Չէի կամում՝ շուտ ծով ընկնիլ, որ ուժերս՝ յետ դառնան.
Եօթն օր այն տեղ՝ լաւ անցուցի, ամեն խորշեր նայեցայ,
Մըտացս մէջ՝ ուրախ էի, մըթեր գանձու՝ անհուն կայ։

* Երկարաձանեան նեղուց, որ յետոյ ասվեցաւ Հերակլեան արձանք, այժմ Սեպտէի կամ Ճիպրալթար։



## ԺԹ

### ԴԱՐՁ ԶԱՒԱՆԱՅ ՅԱՐՄԱՒԻՐ

Լուսանում էր եօթներորդ օր, որ կայի այն կղզումը,
Յանկարծ մէկ նաւ՝ առագաստած՝ երևեցաւ՝ ծովումը,
Առագաստը՝ վայր իջուցին, ծովը խարիսխ ձըգեցին,
Ցամաք ելան, ես ճանչըցայ, իմ մանկութեան՝ հէնքն էին։

Երեսուն ամ՝ աւելի էր՝ փախել էի՝ նոցանէն,
Այժմ կրկին՝ փախած տեղումս՝ ափերն ընկայ՝ ես նորէն.
Ցխուն հոգի՝ են կատաղած, մարդու արեան՝ ծարաւի,
Մարդկութիւնը՝ է նոցա մէջ՝ մեռած, ինքեանք՝ են լոկ դի։

Ես մէկ անքոյթ՝ տեղ թաք կեցայ, երբ որ նոքա՝ ցրուեցան,
Տեսայ որ այն՝ պահած գանձը՝ հանեցին և նաւ տարան,
Իմացայ որ՝ պիտի բաժնեն, և հէնութիւն՝ էլ չանեն,
Ուրախացայ՝ որ էլ մարդու՝ նաւի վընաս՝ տալոց չեն։

Արեգակն՝ մայր էր մտնում, երբ նոքա այն վերջացրին,
Համար չկայր՝ այն գանձերին, ինչ որ նոքա՝ նաւ դըրին.
Կամեցան քիչ՝ ուրախ լինիլ՝ խորհրդական կղզումը,
Որ նոցա գանձն՝ պահպանել էր՝ բազում ամք իր՝ ծոցումը։

Նաւէն հաց, միս շատ հանեցին, սկսեցին խորովել,
Նստան սեղան՝ ուրախութեամբ, սիրով ուտել և ըմպել.
Գինին առատ՝ էր հասանում, չըկայ վախճան խըմելոյն,
Ոչ խըմողքն են վաստակում, ոչ վերջ հասնում էր գինւոյն։

Կէս գիշերը՝ վաղ էր անցել, տեսայ քիչ քիչ լռեցին,
Գիշեր շատ մութ՝ պիտի լինէր, անյայտ կորաւ և լուսին.
Իմ թաք կեցած՝ տեղէս ելայ, կամաց կամաց՝ մօտ եկայ,
Մեռածի պէս՝ քընտած են, բացված կեցել էր սուփրայ։

Մտքիս մէկ լոյս՝ փայլեց յանկարծ, գնացի շուտ՝ մըտայ նաւ.
Խարիսխ ձեռօք՝ դուրս քաշեցի, նաւ ծովափնէն հեռացաւ.
Հանդարտ քամի՝ կայր ծովումը, առագաստը՝ բաց արի,
Մի միայնակ այն լիք նաւով՝ ընկայ ի մէջ լայն ծովի:*

Արևելքէն՝ էր այն քամին՝ փչում երբ ես՝ նաւ մտայ,
Ինձ տանում էր՝ շատ աջողակ՝ Հելլեսպոնտոս՝ ես հասայ.
Ապա փչեց հարաւ հողմը, նեղուցով ինձ շատ քըշեց,
Նաւըս անց ընդ՝ Պրոպոնտոս՝ վերջը Սև ծով հասցրեց:

Մընացի ես՝ յապուշ կրթած՝ Ամասիա՝ երբ հասայ.
Այս տեղ էին՝ ինձ հէնք բռնել, գերի տարել՝ բացակայ.
Հանդարտութեամբ՝ ցամաք ելայ, մէկ աղշըկին էլ բռնեց.
Ծերն Վստամ Լայզարև քաջ՝ ինձ ծովափում հանդիպեց:

Նորա ուշիմ՝ գործակցութեամբ՝ քանի հատ Հայք՝ խմբեցան,
Նաւի մէջէն այն Ճոխ գանձը՝ ցամաք բերեն՝ լուելեայն.
Ապահով տուն վարձու կալայ, և յանձնեցի՝ Վստամին,
Որ պահապան՝ լինի գանձուց՝ իւր ազատած զաւակին:

Շատ մարդ եկան՝ և սկսան՝ նաւիս համար՝ հարցանել,
Թէ արդեօք ես՝ չեմ կամենար՝ այն փոքրիկ նաւ՝ վաճառել.
Չունէի կամք՝ վաճառելոյ, որովհետև՝ պինդ նաւ էր.
Եւ իմ մտաց՝ խորհուրդներին՝ դեռ հարկաւոր՝ գործի էր:

Այն էր փափաքս՝ որ մէկ երթամ՝ մայրաքաղաք Արմաւիր.
Դարձեալ տեսնեմ՝ ծընած վայրըս, և հայրենի՝ իմ երկիր.
Ապա երթալ՝ Աստարբէին՝ կրկին պտրել այն նաւով,
Ուր և լինի նա բնակված, թէ ցամաքաւ, թէ ծովով:

Այս իմ խորհուրդ՝ երբ յայտնեցի՝ հաւատարիմ՝ Վստամին,
Պատասխանեց, շատ Ճանապարհ կայ Արմաւիր՝ քաղաքին.
Քեզ պէտք են ձի, զէնք, ու զըրահք, առաջնորդ պատրաստէ,
Ապա երթալ մայրաքաղաք՝ քեզ անկասկած՝ ինչ մարթ է:

*Ուրեմն նախքեն [illegible]



Վաճառականք՝ կային այն տեղ, որ լաւ ձիեր՝ ունէին,
Այն ձիերու՝ միջին գըտայ՝ իմ սեփական՝ Նժոյգ ձին.
Հարցուցի թէ՝ արդեօք ո՞ր տեղ՝ է այն Նժոյգ նա գըտել.
Պատասխանեց՝ թէ Աղուտոս՝ Աստարբէէն է գընել:

Այս ասողը՝ էր մէկ Փիւնիկ՝ վաճառական՝ ինձ ծանօթ,
Բայց ես նըրան՝ երևեցայ՝ մէկ ուրիշ այր՝ անծանօթ.
Հարցուցի թէ՝ յետ այնորիկ՝ Աստարբէին տեսե՞լ է,
Պատասխանեց. թէ Ջմիւռնիա՝ է բընակված՝ Աստարբէ:

Որքան սաստիկ՝ ափսոսացի, որ Ջմիւռնիա՝ չըգնացի,
Նաւէն չելայ, և ծովի մէջ՝ տարապարտուց՝ մնացի.
Կարելի էր՝ որ իմ հարսին՝ այժմ գըտած՝ կ'ըլնէի,
Երեք ամիս՝ են անց կացել՝ այն օրէն մինչ օր արդի:

Ես մինչդեռ այս՝ էի խորհում, վաճառականն՝ ինձ ասաց,
Այս ձիոյ հետ՝ զէնք և զըրահք՝ կան գեղեցիկ յօրինած.
Այս ձին, այն զէնք, և այն զըրահք՝ իսկապէս այն անօթք են,
Որ հագել էր՝ քաջիկ Ջաւան, երբ հարս խըլեց՝ Հարբալէն:

Արդ կամում էք՝ դուք Հայկազնեայք՝ որ նահապետ ձեզ կոչվիմ,
Հընազանդ եմ՝ ձեր ընտրութեան, բայց այս է և պայման իմ.
Նախ որ Վստամ քաջ Լայզարև՝ պիտի կոչվի՝ հայր ազգի,
Երախտաւոր՝ է մեր նախնեաց, մըտերիմ մեր աշխարհի:

Առանց նորա՝ սուր Արբակայ՝ ինձ կորցըրած՝ կը լինէր,
Որբ Ջաւանի՝ կըմախն անգամ՝ հողում մաշուած՝ փտած էր.
Նա ազգէ յազգ՝ է մեծագործ, և պարծանք է Արամեանց.
Նորա նախնիք՝ հանդիսացած են յաւուրս հին նախնեաց:

Երկրորդ պիտի՝ ինձ արձակէք. որ ես երթամ Ջմիւռնիա.
Աստարբէիս՝ ես գըտանեմ, և հաշտըվիմ ընդ նըմա.
Թէ իմ հարսն՝ յօժարանայ՝ գալ և այս տեղ բնակվիլ,
Ես յօժար եմ՝ ձեր ընտրութեամբ՝ ազգի ծառայ անուանվիլ:

Չէ հարկաւոր՝ քեզ որոնել, կանչեց մէկ հատ պատանին,
Որ Ճամփումը՝ հանդիպել էր՝ ընդ Կոռնակայ և Հրանտին,
Առաջ վազեց, ոստեաւ ձիէն, բռնեց քաջի ոտքերից,
Ու համբուրում էր արտասուօք, լալում էր կոծալից.

Չէ հարկաւոր՝ քաջիկ Ջաւան՝ Աստարբէից որոնել,
Ոչ թէ եօթն, այլ բիւր՝ անգամ՝ եկայ ոտքդ՝ համբուրել.
Կոռնակի հետ՝ ես էի այն՝ Ճանապարհորդ՝ օտարը,
Չըճանչեցի՝ քեզ Ջաւան ջան, աչքըս փակեց քո սէրը։

Էլ չես երթար՝ ի խնդիր իմ, ահա ինքնին եմ եկել,
Եօթն տարի՝ քո յետեէն՝ ծով ու ցամաք՝ չափչըփել,
Ես տեսայ որ՝ դու փախչում ես՝ քո հայրենի Աթոռէդ,
Քան զամեն ինչ՝ քեզ սիրելի՝ է կորցըրած՝ Աստարբէդ։

Ջաւան՝ որ կայր՝ ցարդ հիացած, Ճարտար լեզուն՝ լռել էր,
Ձիէն ոստեաւ՝ դէպ իւր հարսն, ուր Աստարբէն՝ կանգնել էր,
Ընկաւ հարսի իւր ոտքերը, ու տալիս էր՝ շատ համբոյր,
Ասում էր ինձ՝ պիտի ներես՝ Աստարբէ իմ մայր և քոյր։

Հաշտ եմ քեզ հետ՝ քաջ Պարէտեան, աղաղակեց Աստարբէ,
Մենք քեզ հետ շուտ՝ կու հաշտովինք, խօ քո վերջին խօսքն այս է.
Թէ ծերունին՝ քաջ Լայ զարև՝ քո գանձերուն՝ է պաշտպան,
Իմ գանձերն էլ՝ պիտի նորա՝ ազգաօգուտ՝ ձեռք մնան։

Ջաւան դարձաւ՝ դէպ առ ամբոխն, որ զարմացած՝ ափշեալ կայր,
Ասաց. այս է՝ իմ հարսնացուն՝ որ այս եօթն ամ կու սըգայր.
Սա է բամբիշ՝ ձեր տիկինը, ընդունեցէք՝ Հայկածին.*
Հարս Շամբիկի ուզեց լինիլ, մայր ձեզ՝ հանգոյն՝ Դերկէթին։

Որոտաց ձայն՝ ժողովրդեան՝ ուրախ ենք մենք՝ քաջ Ջաւան,
Որ այս չքնաղ՝ քո հարսնացուն՝ ինքնին եկաւ՝ Հայաստան.
Մենք գիտենք որ՝ քեզ սիրելով՝ բոլոր ազգին կու սիրէ,
Մայր կը լինի՝ Դերկէթի պէս, մեզ լաւ ժառանգ՝ կու նուիրէ։

Աւետիք են՝ Հայկ նախահօր, հիւսիսական՝ աշխարհի,
Նորա աթոռն կրկին կանգնեց՝ քաջիկ ծնունդն՝ Շամբիկի.
Օտար աշխարհ՝ պանդխտելով՝ ստացել է՝ կրթութիւն,
Ազգի աչքին՝ լոյս կու ծագէ, փարատելով՝ կուրութիւն։

* Որովհետեւ Քանանացի էր, ասում է համարեցէք Հայ։



Աւետիք են՝ նահապետաց՝ վաղանցեալ հին՝ դարերու,
Մեր աչքերով՝ պիտի տեսնենք՝ փափաք նոցին օրերու.
Ջաւան՝ ժառանգ ես Պարետայ, մեզ պարարում՝ ես յուսով,
Որ մեր խաւար՝ մերժես մեզմէն, և ցնծացնես մեզ լուսով։

Ցաւիտեան կեաց՝ Ջաւան քաջիկ, ողջ լեր յաւէժ՝ յաւիտեան,
Ցաւէժ կեցցէ՝ քո Աստարբէ՝ յառաջաստի՝ հարսնութեան.
Ձեզմով պարծի՝ թող Արարատ, ձեզմով Մասիս՝ թող պանծայ,
Ձեզմով նորոգ՝ թող բողբոջին՝ ծաղկունք Հայկայ, Արամայ։

ՎԵՐՋ ՋԱՒԱՆԱՅ

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Փառնակ Ա. էր որդի Զաւանայ նահապետին Հայոց՝ ծնեալ յԱստարբեայ փիւնիկեցւոյ: Իսկ Զաւան, որպէս տեսաւ ի կարգի պատմութեան, էր միակ որդի Պարետայ մեծի նահապետի, որ եղեւ երկրորդ հիմնադիր նորոյ ազգապետութեան, եւ հաստատեաց յիւրում տան զյաջորդութիւն միահեծան տէրութեան Հայկայ: Քանզի ի մեռանիլ Անուշաւանայ՝ որ էր չորրորդ նահապետ յետ Արամայ, եւ տասներորդ ի Հայկայ, եթող ժառանգ իւրոյ աթոռոյ եւ նահապետութեան Հայոց զմիամօր դուստր իւր՝ զՇամիրի, զծնեալն ի Գերկեթայ դշխոյէ, դստերէն Շամիրամայ: Շամիրի հաճութեամբ ծերոց ազգին ընտրեաց ի փեսայութիւն իւր՝ զՊարետ նահապետ Սիւնեաց. որով եւ նահապետութիւնն Հայոց յազգատոհմէ Հայկայ՝ էանց ի տուն Սիւնեաց, որ սերեալ էր ի Հայկայ, բայց ոչ ժառանգաբար յԱրամայ: Եղեռնագործի նենգութիւնն՝ չիջոյց զլապտեր ազգապարծանք կենաց Պարետի, որ ամս յիսուն լոյս տայր Հայաստանի: Արբակ յետ աղետալի մահուն Պարետայ՝ տիրեաց Հայաստանի եւ ժառանգութեան Պարետայ, եւ կոտորեաց զազգատոհմ նորա: Յայս ընդհանուր կոտորածէ՝ զերծաւ միայն միամեայ որդին Պարետայ եւ Շամիրի տիկնոջ՝ Զաւան, որ յետ քառասունեւչորսամեայ վտարանդութեան՝ դարձաւ ի Հայս, եւ ընտրութեամբ ազգին էառ զնահապետութիւն հօր իւրոյ. եւ ամուսնացեալ ընդ Աստարբէի փիւնիկեցւոյ ծնաւ զՓառնակ Ա. որ 1,531 ամօք յառաջ քան զԹուականն Քրիստոսի՝ նստաւ յաթոռ Հայկազանց եւ խնամեաց զազգն յիսուներեք ամ. եւ եթող իւր աթոռոյ եւ անուան ժառանգ զերեւելին Սուր՝ զորդին իւր, զոր ծնաւ յամուսնութենէ հրաշագեղ Զամիր դշխոյի:

# ՓԱՌՆԱԿ Ա.

## Ա.

### ՓԱՌՆԱԿ ԵՒ ՋԱՄԻՐ

Թուխպ էր օրը. փաթաթվել են՝ խանձարուրով՝ սարերը,
Հազիւ էին՝ դուրս երևում՝ բարձրագագաթ՝ ժէռերը.
Ծառերու էլ՝ տերևները՝ թրջած էին՝ տարափով,
Գետնի վերայ՝ արօտները՝ տամուկ էին՝ ցողերով։

Երբ արեգակն՝ ամպի միջէն՝ թափանցում էր՝ իւր լոյսը,
Մէկ նոր տեսիլ՝ էին բռնում՝ դալար բանջարն՝ և բոյսը.
Գոհար ականց՝ նըման փայլում, կամ մարգարտի՝ ծովածին,
Ջմայլում են՝ տեսնողներու՝ աչք և միտքը՝ միասին։

Փչեց հիւսիս՝ հով զովարար, և հեռացան՝ ամպերը,
Արեգակը երևեցոյց՝ իւր լուսափայլ՝ այտերը.
Փեսի հանգոյն՝ բարձրանում էր՝ լուրջ և կապոյտ՝ դաշտի մէջ,
Բնութիւնը՝ նորոգվեցաւ, ամենայն տեղ՝ նոր ոյժ էջ։

Արմենակայ՝ Սօսեաց միջէն՝ երևեցաւ՝ Փառնակը,
Թաց են վահանն՝ ոսկիապատ, ւ անգըծելի՝ զըրահքը.
Սօս ամեհի՝ նժոյգ հեծած. աղեղն կախ՝ թիկունքէն,
Յուսեր յաղթեր՝ մերկապատեան, կապարճ կապած՝ էր թամբին։

Տեսաւ որ իւր՝ որսակիցքը՝ չեն երեւում՝ այն կողմը,
Միւս անգամ՝ դարձաւ մըտաւ՝ բազմադարեան՝ անտառը,
Գընաց դէպ այն՝ թանձր մայառուք, որ առաւօտ՝ եղջերուք,
Նոցա էին՝ զհետ ձըգել՝ իւրեանց ջոկովք՝ և պարուք։

Մէկ ընկեր և՛ս՝ չէր երեւում, սօսի՛ք կան մէջ՝ լռութեան,
Երբեմն երբեմն՝ միայն լսւում՝ էր ի հեռուստ՝ եղջեր ձայն,
Ի վերջ լըսեց՝ որսորդներու՝ երկվարաց՝ վազելը,
Աղեղներու՝ ճարճատիլը, և շըներու՝ հաչելը։

Դէպ այն ձայնը՝ բռնեց Փառնակ՝ գըլուխ իւրոյ՝ նըժուգին,
Եւ սուրալով՝ ներս էր մտնում՝ յանկոխ խարձ՝ անտառին․
Ձայնը երբեմն՝ աջ կողմէն էր, մերթ էլ ձախէն՝ էր լսւում,
Այլ՝ հետք մարդոյ՝ ամենևին՝ այն տեղերը չեն՝ երեւում։

Ցանկարծ տեսաւ՝ որ առջևը՝ մէկ գեղեցիկ՝ հովիտ կայր,
Հովիտի մէջ՝ հըրաշալիքով՝ մէկ մեծ պարտէզ՝ կ՚ուռճանայր,
Պարտիզի մէջ՝ մեծ ապարանք՝ չորեքյարկեան՝ վիմաշէն,
Դրունք պղնձի, սիւներն կճեայ, կամարաց զարդք՝ ոսկեղէն։

Փառնակ իջաւ՝ իւր նըժուգէն, կապեց պախուրցն՝ ընդ թամբին,
Գընաց մօտիկ՝ դէպ ապարանք, մըտաւ ի սրահ՝ դարպասին․
Ծառայք՝ նաժիշտք՝ և աղախնայք՝ ամեն կողմը՝ կան նստած,
Մէջէն ոչ ոք՝ չըկայ շարժուն, ամենքեան են մեռած։

Աչքերը բաց՝ է, նայում են, բայց ոչինչ չեն՝ տեսանում,
Բերան ունին, ականջ ունին, ոչ խօսում են, ոչ լսում․
Փառնակ մէկի՝ ձեռնէն բռնեց, տեսաւ որ նա՝ չէր կենդան,
Անցաւ դէպ ի՝ սանդուխտները, բաց են դռներն՝ յանդիման։

Մէկ մեծ դահլիճ՝ բացվեց հանդէպ, պաղպաջունք մէջ դահլըճին,
Սըրսկապանքն՝ էին թափիշ, և ոսկեհուռ՝ անկողին,
Արքայք անգամ՝ ոչ ունէին՝ այնպէս տըներ՝ և զարդեր,
Ուստի՞ է այս՝ անտառի մէջ՝ այս մեծ հրաշք՝ երեւցեր։

Փառնակ ընկաւ՝ մտածման մէջ՝ թ՚ արդեօք ո՞ւր եմ ես եկած,
Հայաստանէն՝ հեռացե՞լ եմ, թէ իմ երկրումն՝ եմ կեցած,
Այսպէս դարպաս՝ ես չեմ տեսած, և Արմաւիր հազիւ կայ,
Կարելի է՝ թէ Տիրացւոյ՝ ապարանաց՝ նըման գայ։



Անօթի էր՝ փոքր ինչ փորն, կամենում էր, հաց ուտէ,
Այն դահլիճէն՝ մի այլ սենեակ՝ մըտաւ որ հաց՝ գըտանէ․
Տեսաւ առջևն՝ կայր պատրաստած՝ սեղան համեղ՝ կերակրօք,
Հաց և գինի՝ ախորժ ձկունք, հանդերձ մրգօք և խորտկօք։

Փառնակ նստաւ՝ սեղանի մօտ, կերաւ, խըմեց, կշտացաւ․
Սենեակները՝ շըջագայել՝ և զըօսնուլ՝ սկսաւ․
Երկրորդ, երրորդ դստիկոնքն, և զարդարված՝ վերնայարկք,
Ամենայն տեղ՝ խուզարկութեամբ՝ նայում զննում էր սենեակք․

Ո՛րքան անրաւ՝ հարստութիւնք՝ են ամեն տեղ՝ երեւում,
Ոսկի, արծաթ և մարգարիտ, գոհար ակունք՝ են փայլում․
Փառնակի սիրտ՝ չեն գրաւում, այս ճոխութեանց՝ յղփութիւնք,
Ա՛յլ խորհուրդներ՝ են ծընանում՝ հոգւոյ զաղտնի՝ մտածմունք։

Անհնար է՝ թէ այս դարպաս՝ արքայական՝ մեծաշէն,
Մէկ շնչաւոր՝ մարդ չունենայ՝ բաց յայս մեռած՝ մարդոցմէն,
Ինչ պատճառաւ՝ է սա այս տեղ, ո՞ր ստացուած՝ է այս տուն,
Կամ սորա մէջ՝ բնակեալ մարդիկ՝ ե՞ր են մտել՝ այս մեծ քուն։

Մի՞թէ ամենք՝ ի միասին՝ մէկ աւուր մէջ՝ են մեռել,
Ապա ընդէ՞ր՝ դեռ և ոչ մին՝ է կամ հոտել, կամ փտել․
Քընած մարդոյ՝ են նմանում, աւել քան թէ՝ մեռածի,
Բայց շունչ չունին՝ անգամ և մին, չեն երեւում՝ կենդանի։

Արդեօք այս տեղ՝ մնամ, թէ՝ ոչ․ և օրն է արդ՝ տարաժամ,
Եթէ գիշերն՝ ինձ հասանի՝ այս տեղ հանգիստ՝ կ՚ունենամ,
Առաւօտն՝ ձիս կու հեծնեմ, և կամ կ՚երթամ՝ իմ ճանփաս,
Կամ ընկերացս՝ կու գտանեմ, դարձեալ կու գամ՝ այս դարպաս։

Գնաց ի գաւիթ՝ որ նըժուգի՝ առաջևն խոտ՝ աւելցնու․
Այլ երիվարն՝ չէր երեւում՝ ոչ կապած տեղն, ոչ հեռու․
Ընկաւ մէկ այլ՝ մտածման մէջ, սկսեց ձին՝ որոնել,
Տեսաւ որ մէկ՝ ախոռի մէջ՝ գարիի մօտ են կապել։

Ասաց՝ ուրեմն՝ այս տեղ մարդ կայ, զի՞նչ ապա՝ չեմ տեսնում։
Միւս անգամ՝ դարձաւ դարպաս, ոչ ևս էր ինչ մըտածում․
Ցանձնեց զանձն՝ ճակատագրին, և նստեցաւ բարձի վրայ,
Եւ սկսաւ՝ մտիկ անել՝ թէ գիշերն՝ ե՞րբ կու գայ։

Արեգակն՝ ի մայր մտաւ, պարտիզի մէջ՝ բլբուլը,
Ջուաթ նստած՝ ի դէմ վարդի, սկսեց իւր՝ երգելը.
Զրմուղներն՝ ցօղում էին՝ ջուրն նման՝ արծաթի,
Միջին փայլում՝ էր ճառագայթ՝ հանդարտաքայլ՝ լուսինի։

Մէկ նոր կեանք էր՝ ամենայն տեղ՝ տակաւ նոր նոր՝ երեւում,
Այն ցերեկի՝ թմրութիւնը՝ հետզհետէ՝ փարատւում.
Դարպասի մէջ՝ ճըրագներու՝ երեւեցաւ ճաճանչը,
Բայց մերժեցաւ՝ երեկորին՝ աղջամուղջն՝ և մութը։

Սենեակների՝ մէջ լռվեցաւ՝ մարդկանց խօսից, ոտից ձայն,
Թէ այն ծառայք, թէ աղախնայք՝ մէկ մէկ ի քնոյ՝ ղարթեցան.
Կենդանացաւ՝ այն լուռ դարպաս։ Փառնակ միայն նստած էր,
Եւ իւր զարմանք՝ գամ քան զգամ՝ աւելնալով մեծնում էր։

Յանկարծ մէկ հատ՝ գաղտնածածուկ՝ դահլիճի դուռն բացվեցաւ.
Մէկ օրիորդ՝ գեղահրաշ՝ Փառնակի մօտ՝ ներս եկաւ.
Շնորհք և աշխոյժք՝ հրաշագեղ՝ այս կուսանի՝ շրջապատն,
Բոլորված էր՝ ինչպէս յերկինս՝ իւրով փայլմամբ՝ արեգակն։

Հագին ունէր՝ զառնաւուխտի՝ մարգարտազարդ՝ հալաւներ,
Գլխին կապած՝ էր ապարօշ, ոտից դիպակ՝ մուճակներ,
Մէջքին գօտի՝ ականակուռ, երկու ձեռաց՝ ապրջան,
Վըզին մանեակ՝ գոհարազարդ՝ յեռեալ ի թել՝ ոսկեման։

Գօտիէն կախ՝ էր մէկ դաշոյն, ոսկեպատեան՝ ակնազարդ,
Երախակալն էր գոճազմեայ, ի ծայրն յղկեալ անդամանդ,
Ահեակ յեցեալ՝ կայր ի դաշնակ, աչք՝ պատանւոյ՝ երեսին,
Հանդարտաձեմ եկաւ մօտիկ, ողջոյն տուեց՝ հերոսին։

Բարեաւ եկել՝ ես Փառնակ դու, ասաց աղջիկն՝ ժպտալով,
Որ քամին էր՝ որ քեզ բերեց՝ իմ ապարանք՝ փչելով,
Քանի՞ օր էր՝ որ ես քեզ աստ՝ սպասում էի՝ թէ կու գաս.
Դու ուշացար, ես կարծեցի՝ թէ Արմաւիր՝ կու դառնաս։

Փառնակ ասաց. Ճշմարիտ է՝ դշխոյ քո այդ՝ կարծիքը,
Այսօր պիտի՝ տուն դառնայինք՝ թէ գային իմ՝ ընկերքը.
Քանի օր էր՝ որ Սօսեաց մէջ՝ որսի էինք՝ զբօսած,
Շատ վազելով՝ ամենքեան՝ ենք վաստակած՝ և յոգնած։



Դշխոյն կրկնեց. ես ձեզ տեսայ՝ երբ դուք մտաք՝ այս սօսիք,
Տակն ի վերայ՝ բերիք անտառն, զարհուրեցան՝ ծեր մայրիք.
Ես կարծեցի՝ թէ աշակերտ՝ ես գնացել՝ Ներրոդի,
Խեղճ եղջերուք՝ չէին գտնում՝ ապաստանի՝ մէջ խարձի։

Ծիծաղեցաւ՝ դշխոյի այս՝ խօսքի վերայ՝ քաջ Փառնակ,
Ասաց. չէ ինձ վաստակարակ՝ Ներրոդ որսորդ, այլ մեր Հայկ.
Եւ այս կապարճ՝ ժառանգաբար՝ ինձ Հայկէն է՝ մնացել,
Նորանէն է՝ մինչ ինձ հասել՝ երեքթևեան՝ այս նետն էլ։

Ասաց Դշխոյն. ես կ՛ուզէի՝ իմանալ թէ՝ այն ձեր Հայկ,
Որ նետով էր՝ ծակել Բելայ՝ կրծոց ծածկոյթ՝ հաստ տախտակ,
Ես այն նետն՝ կը կոտրէի, որ մէքիչ ձեր Հայերը,
Գլխըներն՝ ցած բռնէին, և կոտրվէր՝ քըթերը։

— Եթէ դշխոյ՝ ցանկալի է՝ քեզ նետ Հայկայ՝ տեսանել,
Ես այն ահա՛ կու տամ ինքնին, կ՛զօրէ բազուկդ՝ բեկանել.
Ասաց Փառնակ, իսկոյն հանեց՝ կապարճէն նետ՝ տէգի չափ,
Եւ կանգնեցուց՝ օրիորդի՝ յանդիման՝ մեծ բերկրութեամբ։

Կուսանն առաւ՝ այն ահեղ նետ, բռնած ունէր՝ ի ձեռին,
Ասաց. Փառնակ՝ գիտե՞ս թէ այժմ՝ ի՞նչ շարժեցաւ՝ յիմ սրտին.
Այս նետն էր որ՝ մեզ ազատեց՝ Միջագետաց՝ ճանկերէն,
Հայաստանի՝ հիմք հաստատեց, մեզ մարդ չինեց՝ քարերէն։

Պիտի յարգեմ՝ այս նետ թէպէտ՝ Բելայ արեամբ՝ է ներկած,
Հայկայ եղբօր քաջ արիւնն է՝ ի մէջ իմոց՝ երակաց.
Զամիր դշխոյս՝ չեմ թշնամի՝ Արամազնեաց՝ սերնդոց,
Որպէս նախնիքս՝ միշտ հաշտ էին, ես ևս հաշտ եմ ընդ Հայոց։

— Դո՞ւ ես Զամիրն՝ իմ անձկալի, ապա ընդէ՞ր՝ չես ասում,
Ինչո՞ւ ուրիշ՝ զրոյցներով՝ ենք ժամանակ՝ անց կացնում.
Դու չըգիտե՞ս՝ որ ես սէր եմ՝ քեզ նուիրել՝ չըտեսած,
Քո այս չքնաղ՝ կերպարանացդ՝ միայն համբաւն՝ եմ լսած։

Իմ հայր Զաւան՝ առ քո ծնողս՝ խնամախօսէր՝ ուղարկել։
Իսկ քո հայր զիս՝ փեսայ կոչել, և զքեզ տալ ինձ՝ չէր հաճել։
Մնացել էի՝ գլխակորեալ, աշխարհ աչքիս՝ մթնացած,
Ի Մծխիթա՝ գալոյ հնար՝ էի խնդրում՝ այս տեղաց։

— Թէ դու չըկար՝ մեր հայրենի Վըրաստանեայց՝ ամուրը,
Չըկարայի՞ ես գըտանել՝ լայնածաւալ Մեծ Հայքը.
Փառնակ՝ կարեմ հաւատացնել՝ որ անդրադարձ՝ սիրում եմ,
Քեզմէն զըկեալ՝ գիշեր ցերեկ՝ անդորր կենաց՝ լոյս չունեմ։

Ընկեր այսպէս՝ ոտից վերայ՝ կանգուն կանք և՝ չենք նստում,
Այս գահոյքն՝ Զամիրինն է, մեզ արդ ո՞վ է՝ արգելում,
Որ այս փափուկ՝ բարձի վերայ՝ ազատ արձակ՝ նստոտինք,
Ուտենք՝ խըմենք՝ և յագենանք, և միմեանց հետ խօսինք։

Ասաց, բռնեց՝ նորա ձեռք՛ն, և իր կշտին՝ նստեցուց,
Հայկայ նետ որ՝ ձեռին ունէր, կրկին կապարճ՝ յետ դարձուց.
Փառնակ նստաւ՝ Զամիրի մօտ, և նայում էր երեսին,
Ինքն իրեն զարմանում էր, չէր հաւատում՝ դիպուածին։

Առաջ Զամիր՝ խօսքն բացեց, ասաց. Փառնակ՝ իմ հայրն,
Որ զիս քեզ տալ՝ չէր կամեցել, գիտե՞ս ի՞նչ էր պատճառն.
Երէկ եղբայրս՝ քոյ Զամիրոն՝ մէկ Հայ աղջիկ՝ էր սիրել,
Այն շաբաթիւ՝ թողել Կուր գետ, Երասխի մօտ էր գաղթել։

Զամիրոնին՝ այլ օրիորդ՝ կայր ի Մծխիթ՝ սիրահար,
Այս կոյս աղջիկ՝ իմ խեղճ եղբօր՝ բաղդին դաւ՝ գլխահար,
Կախարդութեամբ՝ Հայ աղջկան՝ խորին քընով՝ նիրհեցուց,
Ինքն ևս չէ արդ՝ եղբօրս տիկին, և ոչ հայուն՝ զարթեցուց։

Հայրս տեսաւ որ՝ երէց որդին՝ Հայ կուսանի՝ պատճառաւ,
Մեր հայրենեաց՝ երջանկութիւնն՝ բոլորովին մոռացաւ,
Չըկամեցաւ՝ այնուհետեւ՝ Հայոց ազգին՝ խնամանալ,
Եւ Փառնակ ջան՝ ի հարսնութիւն՝ ի Հայաստան՝ զիս քեզ տալ։

Բայց եթէ հայրս՝ ինձ հարցանէր, իմ պատասխան՝ այլ կ՚լինէր,
Ուզէր, չուզէր, զիս իր դստրիկ՝ քեզ Փառնակ ջան՝ հարս կ՚անէր.
Ես կ՚ասէի որ իմ եղբօր՝ դու չես պատճառ՝ տըտմութեան,
Նա՝ թէ կարես՝ Զամիրոնի՝ ցաւոց գտնել՝ դեղ, դարման։

Հաւատա ինձ՝ իմ Փառնակ ջան՝ ես շատ էի մըտածում,
Որ իմ սրտի՝ խորհուրդներէն՝ մէկ կերպ տամ քեզ՝ իմացում.
Բայց ի՞նչ անեմ, դու զիս չէիր՝ ըընաւ տեսել՝ քո աչքով,
Ասացի՝ թէ՝ զիս իմ Փառնակ՝ դեռ չէ սիրում՝ ջերմ հոգւով։



Բայց ես քեզ միշտ՝ տեսնում էի՝ ամենայն տեղ, ամեն օր,
Իմ աչքերէս չէիր հեռի, և կամ ծածկած՝ ոչ մէկ օր.
Գիտեմ՝ պիտի՝ զարմանք գայ քեզ՝ թէ ես ի՞նչպէս՝ Մծխիթէն,
Զննում էի՝ ամեն վայրկեան՝ քեզ Հայաստան՝ հեռուէն։

Տեսնո՞ւմ ես այս՝ ոսկի բաժակ՝ որ արդ լի է՝ գինիով,
Նորա մէջ քեզ՝ կարեմ ցոյց տալ՝ այս ծրագաց՝ վառ լուսով,
Թէ քո ծնողք՝ ի՞նչ են անում, Արմաւիրի՝ դարպասում,
Քո աղաղաւ՝ հո՞գս են անում, կամ թէ քեզ ե՞ն՝ որոնում։

Փառնակ ասաց. արմ՝ տեսնեմ, թէ ինչպէս կը յաջողես,
Որ ծնողացս՝ այսքան տեղէն՝ գործերն աչօք՝ տեսանես,
Այդ ամեն բան՝ յետոյ քեզմէն՝ ես ևս կ՚ուզեմ՝ ուսանել,
Բայց նախ կամիմ՝ մէկ քանի բան՝ հանդէպ աչաց՝ տեսանել։

Զամիր առաւ՝ ոսկի բաժակն, դըրեց իւրեան՝ առաջը,
Մէջն ձգեց՝ մէկ մատանի, մատով շարժեց՝ անօթը.
Ասաց. Փառնակ՝ մօտի՛կ արա, բաժակի մէջ ինչե՞ր կան.
Փառնակ նայեց՝ գինւոյ յատակն, աղաղակեց՝ բարձրաձայն.

Ինչե՞ր են ասա՝ ինձ երեւում, մեր դարպասում՝ այս ո՞յք են,
Իմ որսակից՝ բարեկամներս՝ տըտում տխուր՝ կանգնած են.
Մայրս աչքերն՝ է սրբոտում, հայրս նոցա հետ՝ է խօսում,
Պատասխանն չեմ հասկանում, այլ հայրս տակաւ՝ բարկանում։

Միւս անգամ Զամիր մատամբ՝ շարժեց բաժակն և ասաց.
Այժմ ևս նայէ՝ ի՞նչ կըտեսնես... ես տեսնում եմ՝ նա գոչեաց։
Այլ ապարանք՝ և այլ դահլիճ, մէջն վառվում են մոմեր,
Եւ մերձակայ՝ սրահներում՝ վեր վայր շրջին՝ ծառաներ։

Այս մեր տունն է՝ ասաց Զամիր, հօրս և մօրս՝ տեսնո՞ւմ ես.
Պատասխանեց՝ Փառնակ ասա թէ, ինչ տեսնում եմ՝ կ՚ասեմ քեզ.
Միջահասակ՝ այր կայ նստած՝ անշուք փայտեայ՝ աթոռին,
Եւ աւընթեր՝ փափրահասակ՝ բարձի վերայ՝ մէկ հատ կին։

Իմ ծընողքն են՝ ասաց Զամիր. նոքա ինձ են՝ սպասում.
Լաւ գուակ ենք՝ խելօք որդիք՝ մեր ծընողաց՝ խնդացնում.
Մենք այս տեղ ենք՝ մեր հեշտութեան՝ մեր կամքին հետ՝ զբաղած,
Իսկ մեր ծնողք՝ այն տեղ տըտում՝ արտասուաց մէջ՝ ընկըղմած։

Փառնակ կրկնեց. դու քո տանն ես, այլ ես ուստի՞ եմ եկել,
Դու քո կամօք՝ կաս յայս վայրի, զիս ապա ո՛վ է բերել.
Զամիր ասաց. զքեզ ես եմ՝ բերել այս տեղ՝ իմ փեսայ,
Եւ ուրախ եմ՝ որ զքեզ այսպէս ինձ մօտ նստած՝ ես տեսայ։

Մեր ծընողաց՝ տրտմութեան մէջ՝ կ'երթանք փոյթ կու փարատենք,
Եւ զիմ եղբայրն՝ իւր մեծ ցաւէն՝ յաջողութեամբ կ'ազատենք.
Դու կը լինիս՝ այն իմ եղբօր՝ ընդ բոլոր կեանս՝ բարերար,
Զքեզ ո՛չ փեսայ՝ այլ զէրթ որդի՝ կ'ընդունին իմ հայր և մայր։

— Շնորհակալ եմ՝ քեզմէն՝ Զամիր, որ դու այդպէս սէր ունիս,
Որ դու այդքան ջերմ եռանդեամբ՝ զքո սիրտ ինձ՝ ես տալիս.
Արդեօք կարո՞ղ եմ այդ սիրոյն՝ հատուցանել՝ փոխարէն։
Կտրեց նորա՝ խօսքի թելն, ասաց Զամիր՝ խնդալէն.

Միթէ քո սիրտն՝ պակա՞ս կըրակ՝ ունի դէպ ինձ՝ Փառնակ ջան,
Ես խելամուտ՝ եմ ամենին՝ թէ քո սրտում՝ ի՞նչ բոցք կան,
Մեր սէրն երբէք՝ չինուազիր, այլ օրէ ցօր՝ կ'աւելնայ.
Ես քո հարսն եմ՝ այսօրվանէն, դու սիրահար իմ փեսայ։

Ես աներկբայ՝ եմ այդ մասին, ասաց Փառնակ՝ Զամիրին,
Բայց թէ ի՞նչպէս՝ եկայ այս տեղ, դու պատմած չես՝ տակաւին.
Իմ տրտմութիւն փարատելոյ՝ որ բաժնեցին՝ զիս քեզմէն,
Ցո՛րս դուրս ելայ՝ ընկերներով. և հեռացայ նոցամէն . . .

Զամիր ասաց շարադնելով. Փառնակ քեզ արդ՝ կու պատմեմ,
Ամենայն անցք՝ ծայրէ ի ծայր, ըստ որում քեզ՝ սիրում եմ.
Երբ Հայազգի դեսպան աւագք՝ որ քո հայրն էր՝ յուղարկել,
Զիս վասն քո՝ ի հարսնութիւն՝ իմ ծընողէն՝ պահանջել.

Իւրեանց բարի՝ նպատակին՝ ափսոսալով՝ չըհասան,
Եւ ձեռնունայն՝ Մծխիթայէն՝ դէպ յԱրմաւիր՝ յետ դարձան.
Ես գնացի՝ յանդիման հօրս, ընկայ նորա՝ ոտները,
Եւ ասացի՝ ի՞նչ պատճառաւ՝ անբաղդ արիր՝ քո դուստրը։

Հայրս իսկոյն՝ սփոփելով՝ տուեց ինձ այս՝ պատասխան,
Քեզ համար շատ՝ փեսաներ կան, և քան զՓառնակ՝ պատուական,
Դու հազարէն՝ զմէկն ընտրէ, ընդ որ հոգւով՝ հաւանիս,
Քեզ ի՞նչ պէտք է՝ որ ի ծնողացդ՝ կենդան կենդան՝ բաժանվիս։



Ես ծընողիս՝ այս խօսքերուն՝ ականջ դնել՝ չուզացի,
Ասի. ես չեմ կարող ընտրել՝ ինձ փեսացու՝ Վըրացի.
Իմ աստղն զիս՝ Հայաստանի՝ լայն երկիրն է՝ հրաւիրում,
Ուր փեսայս է՝ փառաւորված՝ Արտաշեան՝ դաշտերում։

Բայց դու գիտե՞ս՝ հայրիկ՝ որ նա՝ պիտի եղբօրս՝ ողջացնէ,
Քարթլոս նախնւոյն՝ ժառանգորդաց՝ զբաղդ իւրեանց՝ դարձնէ։
Նորա ձեռին՝ կայ մէկ այնպէս՝ սքանչելի զօրութիւն,
Որ նա միայն կարէ եղբօրս՝ հասուցանել՝ օգնութիւն։

Հայրս տեղեակ էր՝ որ աստեղաց՝ դըրիւք գիտեմ՝ հըմայել,
Թէ անցեալք և՝ թէ ապառնին՝ յայտնի և պարզ գուշակել.
Տասնևօթն՝ ամեայ հասակս՝ ես չեմ ի զուր անցուցած,
Քաղդէական՝ գիտութիւններն՝ ինչպէս հա՛րկ է՝ եմ սովրած։

Յօժարեցաւ՝ որ իմ կամքով՝ ինձ մէկ փեսայ՝ գըտանեմ,
Թէ Հայ լինի, թէ Վըրացի, միայն եղբօրս՝ ես օգնեմ,
Քաղդէներն՝ ասում էին՝ թէ միայն մէկ հընար կայ,
Թէ կարենանք՝ ձեռք բերելու՝ օրհասական՝ նետ Հայկայ։

Ես վաղ էի՝ այս իմա՛ցում՝ որ այն նետն է՝ միայնակ,
Կարող լինիլ՝ անբաղդ եղբօրս՝ սփոփանաց՝ օժանդակ.
Մեծ զօրութիւն՝ կայ նորա մէջ, բայց միայն այն միջոցին,
Երբ այն մեծ նետ՝ կը գըտանի՝ քաջիկ Փառնակ՝ քո ձեռին։

Դու գիտես որ՝ զկնի Հայկայ՝ քանի պորտ որ՝ յաջորդեց,
Որդւոց յորդիս՝ էին տիրում՝ Հայկեան ծնունդ՝ զահերէց,
Անուշաւան՝ չունէր որդի, նա էր կանգնում տէր ազգին,
Ով որ տիրում՝ էր հընարիւք՝ հրաշալի այն նետին։

Կարէր բընաւ՝ Շամիրամին՝ զՀայաստան՝ նուաճել,
Թէ չէր առաջ՝ Հայկայ նետն՝ այդ կապարճէն՝ գողացել.
Անուշաւան՝ ևս գողացաւ՝ ՚ի Նինուէէ՝ այդ զէնըն,
Եւ ժառանգից՝ այն զօրութեամբ՝ իւր հայրենի՝ աթոռըն։

Ես գիտեմ որ՝ դու սիրական՝ Փառնակ, լաւ չես իմանում,
Որ այս նետ Հայկ՝ վերուստ յերկնից՝ ստացաւ այն՝ միջոցում,
Երբ Նեբրովթ Բէլ՝ քաջ վստահ էր՝ նորան յաղթել՝ բազմութեամբ,
Բայց շուտ ընկաւ՝ նետէն խոցված, և Հայկ յաղթեց՝ քաջութեամբ։

Աստուածան՝ բոլոր վրկայ՝ է լուսափայլ՝ այն մանկան,
Որ երկնքէն՝ այն նետ բերեց՝ նորա աչաց, յանդիման,
Իսկ այն նետն է՝ որ ինձ տուիր, Փառնակ՝ քո է՝ այն նետը;
Դու ես իմս ես, բոլորովին, քո բաժին է՝ իմ սիրտը։

Յառաջագոյն՝ կամում էի՝ որ միայն նետն՝ ձեռք բերեմ,
Յետոյ ասի՝ ես այն նետով՝ աղջիկ զոլով՝ ինչ կարեմ.
Մանաւանդ որ՝ իւր զօրութիւն՝ այն ժամանակ՝ ցոյց կու տայ;
Երբ որ լինի՝ նորա ձեռին՝ որ շառաւիղ՝ է Հայկայ։

Իմացայ որ՝ դու-դուրս եկար՝ որսի դէպ այս՝ կողմերը;
Ես ինձ համար՝ տեղ ընտրեցի՝ Արմենակայ՝ անտառը.
Իմ դիւթութեամբ՝ հրաշակերտ՝ շինուեցաւ այս ապարան,
Եւ նորա մէջ՝ անբաւ գանձեր և ճոխութիւնք՝ լցուեցան։

Ամենայն ինչ՝ կախարդած է՝ ջուրը, հուրը՝ և օդը,
Զքեզ պահպանեց՝ առողջ ազատ՝ հրաշապարգև՝ այդ նետը.
Ծառայք, սորուկք և աղախնայք՝ ցերեկն ամեն՝ թմրում են,
Երբ գիշերի՝ մութ հասնում է՝ քընած տեղէն զարթում են։

Եղջերուներ՝ էի ղրկել՝ որ ձեզ մէրում՝ ցըրիւ տան,
Ընկերակիցքդ՝ կարծեցին թէ՝ դու դարձել ես՝ հօրդ կայան.
Նոքա գնացին՝ դէպ Արմաւիր՝ համարելով զքեզ այն տեղ,
Այլ պատէր՝ զքեզ իմ թուխպ, և թրջում էր տարափ, տեղ;

Այն խառն ձայնք՝ որ լըսեցիր, իմ կամօք էր հընարած,
Զքեզ բերին՝ մինչև այս տեղ, և ձիդ յախոռն՝ է կապած.
Կերար, արբեր, անուշ լինի, ես ամեն ինչ՝ տեսել եմ.
Ինչ քո մտքէդ՝ խորհուրդք անցան՝ ծայրէ ի ծայր՝ կըպատմեմ։

Քո ծեր ծնողաց՝ խոր տրտմութիւն՝ բաժակի մէջ՝ արդ տեսար,
Միւս անգամ՝ նայէ բաժակն, տես նախկնոյն են՝ հաւասար.
Ուղարկել եմ՝ պատգամաւոր՝ որ ծընողացդ՝ իմաց տայ,
Եթէ Փառնակ՝ իւր սիրելւոյ՝ մօտ ապահով առողջ կայ։

Ասաց, մատամբ՝ շարժեց գինին. Փառնակ տեսաւ՝ բաժակում,
Որ մէկ մարդ կայ՝ իւր ծընողաց՝ առջև կանգնած՝ դարպասում.
Հայրն և մայրն՝ էին ուրախ, այլ որսակիցք՝ անդ չէին,
Աւագորեարք՝ զուարթացին՝ նոցա կենաց՝ կ՚ըմպէին։



Շատ էր անցել կէս գիշերէն. Զամիր ասաց, սիրելի,
Մեր ծնողք արդ՝ զմեզ են օրհնում՝ որ մեր օր, կեանք՝ լաւ անցնի,
Երթանք պառկինք մեր անկողին, վայելենք սէր՝ իրարաց,
Եգուց եղբօրս պիտի օգնենք, մըխիթար տանք՝ ծընողաց։

Մեր հարց և մարց՝ օրհնութիւնով մեր սէրն այսօր՝ պըսակենք,
Նըւագարան, թմբուկ, սըրինգ՝ մեզ հարկաւոր՝ չէ, չուզենք.
Ես տասներկու տարեկան չեմ, իմ հոգիս քեզ՝ էր խնդրում։
Մեր կեանք կ՚լնի՝ զուարճալի՝ շար ցնծութեան՝ և խնդում։

Ասաց՝ բազուկն՝ ձգեց ի վիզն, ընկաւ ի գիրկ՝ Փառնակի,
Փառնակ նորա՝ չքնաղ դիմաց՝ ետ նախկին ձօն՝ համբուրի.
Քաղցրիկ համբոյր՝ մարդոյ կենաց՝ կ՚լնի դըրօշմ ապառնեաց,
Արդեօք ո՞րքան՝ պիտի տևէ, ո՞րքան ոյժքս՝ պարգևաց։

Սօսեաց գաղտնի՝ քաջ զօրութիւնք՝ ժողովեցան՝ յայն սենեակ,
Ուր թմբիշեայ՝ անկողնի մէջ՝ հանգեան Զամիր և Փառնակ;
Աներևոյթ՝ մէի քնքոյշ ալ՝ քարշեց անօսր՝ վարագոյր,
Նոցա քաղցրիկ՝ գրկածութեանց՝ սկիզբն արար՝ մէկ համբոյր։

## Բ

### ԱԹԱԳԱՍՏ ՀԱՐՍՆԱՐԱՆԻ

Ազատ Մասեաց՝ Քաջք յարազուարճք՝ լծեցին լայն սայլերը,
Որոց լիսռունք՝ են ծիր կաթին, և անիւք են՝ աստղերը,
Եկան առաջ՝ Աղթամարայ՝ ծովակ մըտան ձիերով,
Որ սըրանում են ՚ի թռիչս՝ հողմոց թեթև թևերով։

Փրփըրածին՝ դուստր Նոյի՝ մշտագարուն Աստղիկըն,
Իւր քարայրէն նոր է ելել, և գնում էր դէպ՝ ծովակըն,
Որ երեսըն՝ լուանալով՝ քունն ի գլխէն՝ հեռացնէ,
Ամուսնութեան՝ Արամազդայ՝ արթուն զուարթ՝ սպասէ։

Երբ որ տեսաւ՝ Մասեաց Քաջաց՝ տեղն ի տեղը՝ կանգնեցաւ,
Ասաց. զարմանք է ձեր գալուստ, ի՞նչ առիթ ձեզ՝ աստ բերաւ.
Ես չեմ կարող՝ զձեզ ժողովել. Արանազիս՝ եմ մընում,
Գիտէք որ նա՝ ցայգ և ցերեկ՝ ինձ համար է՝ հառաչում։

Իսկ Քաջք Մասեաց՝ այս խօսքի դէմ տուին նորան՝ պատասխան.
Մեր մէկ այնպիսի՝ կարիք մնաց՝ կարօտիլ քում՝ օգնութեան.
Եկանք՝ գէթ՝ մեր հետ տանիլ՝ Արմենակայ՝ ի Սօսիս,
Ուր գէք խմբել՝ են Զամիրի և փառնակայ՝ հարսանիս։

Երբ դայս համբաւ՝ լսեց Աստղիկ, մոռցաւ զերես՝ լուանալ,
Ազատ Մասեաց՝ Քաջաց ի կարգ՝ անձապարեց՝ բազմիլ այլ.
Քշել տուեց՝ դէպ ի Սեան, զարթեցուց իւր՝ զատերաց,
Սէր և շընորհ՝ մըտան ի սայլ՝ և ձեպէին՝ սըրընթաց։

Արմենակայ Սօսեաց հասան, մըտան թովեալ ապարան,
Նաժիշտներուն՝ կանգնեցուցին՝ յուսամուտից՝ պահապան.
Ինքեանք ոտից՝ մատանց ծայրով՝ կամաց մըտան՝ յայն սենեակ,
Ուր պաղպաջունք՝ էին մանում՝ չքնաղ Զամիր և փառնակ։

Առաջ Աստղիկ՝ հիւրասիրեց, յետոյ երկու զատերքըն,
Հըրաշատես՝ Սէրն աչագեղ, և նազանի՝ Շընորհքըն.
Արշալոյս և պար նաժշտաց՝ դեռ ի հեռուստ՝ են գալիս,
Ծիրանափայլ՝ իւրեանց շըղաշէք՝ ի հեռուստ են՝ քարշ տալիս։

Աստղիկ եղլաւ՝ պաղպաջունքն, և վարագոյր պարզեցաւ,
Ուրախ զուարթ՝ մըտիկ տուեց՝ և մէկ ծածուկ ժպտեցաւ,
Սէր և Շընորհք թռչտում են՝ թիթեռնիկի՝ թեւերով,
Նստան հարսի՝ սենեանց միջին, ծածկըվեցան՝ դէսերով։

Աստղիկ իւր մատն՝ դրեց շրթանց՝ որ ոք շշուն՝ չըհանէ.
Կանչեց քաղցրիկ՝ թեթև հովին՝ որ վարդի մէջ՝ ննջում է,
Աչքով՝ ունքով՝ նշմարք արաւ՝ որ Զամիրի՝ ծածկոյթքըն,
Մատամբ մեղմիկ՝ հեռի մըրժէ՝ որ մերկանան՝ հաճոյքըն։

Հովն սողաց ի սրսկապան՝ և զովարար մազիլով,
Նուրբ ծածկոյթի՝ ծայրէն բռնեց և հեռացոյց փըչելով,
Ո՜վ թէ ինչեր՝ երևեցան՝ ի՜նչ թովչարար՝ պատրանքներ,
Ի՞նչ բերկրալի՝ ձիրք բընութեան, ի՞նչ քաղցրանոյշ՝ բարմանքներ։



Զամիր պառկած՝ երեսն ի վեր՝ շունչ էր քաշում՝ ժպտալով,
Կարմիր լարն՝ շրթանց միջին՝ միշտ խաղում էր՝ կայտառելով.
Երկու թուշին՝ կնքոյ նըման՝ կայր դըրոշմած՝ համբոյրըն.
Զոր հարսն առաւ՝ իւր փեսայէն՝ երբ պառկեցան գիշերըն։

Սակայն էին կիսած նըռունք՝ դեռ իւր ծաղկամբ անթառամ,
Լանջք սպիտակ արծաթափայլ՝ լի բերկրութեամբք անթարշամ.
Աջով գլուխն՝ էր կազդուրել, ահեակն ի կուրծս փառնակի,
Ընկողմնած տեղն՝ նըմանում էր՝ յասպի թառեալ՝ տատրակի։

Փառնակ պառկած՝ կըռան վերայ՝ որ Զամիրի՝ գլխօքն էր,
Միւս ձեռամբ՝ հարսին կուրծքըն և պատրանքն՝ շօշափէր,
Շատ անգամ չէր՝ Աստղիկ տեսել՝ այսպէս չըքեղ զուգակից.
Ցայն օրէն երբ՝ ինքն եղև՝ Ադոնայ՝ ըղձակից։

Պաղպաջունքի՝ մէկ անկիւնում՝ յաւերժահարսն էր նստած,
Որ պահապան՝ էր ծաղկածին՝ դաշտաց, հովտաց և մարգաց,
Զնա Աստղիկ՝ ծածուկ դըրկեց՝ փութալ ի լեառն Վարագայ,
Ծաղկունք բերել և զարդարել՝ զչքնաղ հարսն՝ փառնակայ։

Մէկ սապատ լիք՝ ծաղկունք բերեց՝ վարդ, մանուշակ և շուշան,
Քրքում, նարգոս՝ և շահպրակ, քաղցրաբուրեան՝ շահոգրամ.
Նարկիս, ռեհան և շահասպրամ, բըրաբիոն՝ քաղցրահոտ,
Մեխակ, թարինջ և նոնափար և համասփիւռ անծանօթ։

Առաւ ծաղկունքն՝ Աստղիկ ձեռամբ՝ շարեց հարսին՝ չորս կողմըն,
Ծածկեց կուրծքն՝ լանջք և ստինք, և կըռան տակք կամանթքըն.
Տեսաւ որ չէր բերել ծաղկունք՝ բազմագունեան՝ խաշխաշի,
Ճեպեց այն եւ՝ բերել տուեց՝ թափեց ի գլուխ՝ նոր հարսի։

Ցուշկապարիկ՝ մէկ համբարու՝ որ հովուն էր՝ աղախին,
Ցըղեց տաճար՝ Երազմոյն գեղջ՝ որ հրաւիրէ՝ Անուրջին,
Որ երբ եկաւ՝ Աստղկան մօտ՝ նստեցաւ մէջ՝ ամոլից,
Ծաղկունք մէկ մէկ՝ շարեց ի մէջ՝ ծնգաց ազդերց և բարձից։

Դըրեց բերանն՝ ականջներուն՝ մեղմ ըսկըսեց՝ շշնջել,
Նորամոլից՝ տեսլեանց միջին՝ զուարթ երազք՝ ձեւացնել.
Շրթանց վերայ՝ ժըպիտք քաղցրիկ, և դիտակաց՝ խնդութիւն,
Այտից փայլմամբ էր երևում՝ սրտից, հոգւոյ՝ բերկրութիւն։

Երբ որ Անուրջ՝ հարսն ու փեսին այսպէս իրմով թռվում էր,
Արշալոյսը՝ պատուհանէն՝ նորա դէրծոյ՝ նայում էր,
Զրգիմացաւ Անուրջ կուսի այն խեղկատակ բաներուն,
Յանկարծ ձայնով՝ ծիծաղոյաւ, ծիծաղեցրուց ամենուն։

Այս ծիծաղի՝ ձայնէն Փառնակ՝ աչքը բացեց. զարթեցաւ,
Իւր նոր-հարսին՝ այնպէս քընած՝ ու զարդարված՝ որ տեսաւ,
Աչը տարաւ՝ ծրծներու մօտ, Շնորհք Սէր ընկան՝ ձեռի տակ,
Քիչ մընաց որ՝ քնքշներուն՝ պիտի Ճմլէր՝ քաջ Փառնակ։

Շընորհք և սէր՝ դէպ վեր փախան, նստան հարսի՝ երեսին,
Փառնակ քարշեց ու մօտ բերեց՝ դէպ իւր լանջաց՝ իւր հարսին,
Ջամիր զարկեց՝ աչքը բացեց՝ ուր նստած կայր՝ լուսաբեր,
Գրկեց բազկօք՝ իւր փեսային՝ համբոյր ձօնեց անհամբեր։

Ծափեց Աստղիկ, պար բռնեցին՝ Սէր և Շընորհք՝ միասին,
Դափ էր զարնում՝ յաւերժահարսն, յուշկապարիկք՝ խաղացին,
Արշալոյսը՝ կաքաւում էր, ու Անուրջը՝ թռչտում,
Հովը թեւովք՝ օդապարիկ՝ պաղպաջունքի՝ մէջ պտտում։

Ազատ Մասեաց՝ Քաջք Դիւցազունք՝ վըկայ էին՝ խնդութեան,
Աչքալուսանք՝ ուղարկեցին՝ Սօսեաց միջի՝ զօրութեան.
Փոթանակի՝ Երևակին՝ համբաւ տարան՝ Արարատ,
Եւ ձիւնասպատ՝ ելան ի վեր՝ բարձրագլխան՝ ի գագաթ։

Երբ որ Աստղիկ՝ գտգրեց պարէն՝ հարս ու փեսին՝ համբուրեց,
Երկու դստրիկք՝ Շնորհք և Սէր՝ Ջամիր հարսի՝ մօտ թողեց,
Ինքն փութացաւ՝ որ գալստեան՝ իւր փեսայի՝ ըսպասէ,
Երբ Աքանադ՝ ծովի վերայ՝ դէպ ի կղզին՝ կու վազէ։

Արշալոյսն էլ՝ վազեց գընաց՝ ընդ առաջ իւր՝ Արքայի.
Որ ծովակէն՝ ջուր էր առնում, և ցօղում իւր երեսի.
Անուրջ դարձաւ՝ Երազմըյն գեղ՝ ուխտաւորաց՝ տալ պատգամ,
Հովը թաքեաւ՝ պարտիզի մէջ՝ որ զովացնէ՝ յարաժամ։

Երկնից Ջահը՝ վաղ էր զրկել՝ հարս Արուսեակ՝ Աստղիկին,
Որ իւր Ճանփան հաւասարէ լուրջ կապուտակ ի դաշտին,
Ցնդէ ցրուէ՝ սառնամանեակ՝ փայլուն սուր սուր՝ աստղերը,
Որ Արքայի՝ չըծակոտեն՝ քնքոյշ գողտրիկ՝ ոտները։



Արուսեակն՝ իմաց արաւ՝ թռչնոց, դաշտաց, բնութեան,
Թէ շուտ պիտի Ճանփայ դուրս գայ՝ լուսապարգևն՝ եթերեան,
Առաջ բլբուլն՝ պատասխանեց, թէ բարով գայ՝ մեր արքայ,
Ցետոյ կարգաւ՝ միւս թռչունք, աղբիւրք, ծաղկունք՝ Շիրակայ։

Արայ լըծեց՝ ոսկի սայլին՝ երկու դէր դէր՝ զուարակ,
Նստաւ ի սայլ՝ ի ձեռս առաւ՝ գանգանաւանդ՝ և մտրակ,
Զոյգ զուարակք՝ գնում էին՝ հարթ հաւասար՝ Ճանփայով,
Եւ աշխարքին՝ զարթեցնում են՝ ջերմութիւնով և լուսով։

Ամենայն մարդ՝ ըշտապում էր՝ որ իւր գործերն՝ ըսկըսէ,
Երկրագործն՝ դաշտն էր գընում՝ որ կամ ցանէ՝ կամ հընձէ.
Վաճառականք՝ փողոցները՝ են տներէն՝ դուրս գալիս,
Առնում ծախում՝ փոխանակաւ՝ կամ ժամագիր՝ փոխ տալիս։

Քուրմերն բացին՝ դըռունք տաճարաց, մարդիկ կ՚երթան՝ զոհերով,
Կը ժողովվին՝ թէ ուխտաւորք՝ թէ աղօթկեարք՝ երամով,
Դահամունքըն՝ են խունկ և մոմ, ալիւր, կարագ, կամ գինի,
Եւ պաշտօնեայք՝ ուրախ զուարթ՝ դընում մըթերք՝ տաճարի։

Իսկ Դաբիրայք՝ շշնչելով՝ մօտիկ գընում՝ են բագնաց,
Խնդրել պատգամ՝ ի դրօշելոյ, արձաններից և անդրեաց,
Սուտ կամ անսուտ՝ պատասխանն էր՝ մարդկան բերումէն հարցմանց,
Նոցա ինչ փոյթ՝ բարին կամ չարն, միշտ են գընում՝ սսկ արգեանց։

Գազանք իւրեանց՝ որջքն են փախչում՝ գիշերախառն որսերէն,
Մարդիկ պիտի՝ ամենայն տեղ՝ իւրեանց գործերն՝ կատարեն,
Մարդոց նըման՝ մեղուներն էլ՝ բըզըզալով՝ թռչելով,
Ծաղկանց մէջէն՝ մեղր են քաղում, և կրում են՝ թևներով։

Թռչունք արդէն ըսկըսել են՝ օդի մէջերն՝ թռչելու,
Ձագուց համար՝ ուտեստ պաշար՝ կըտուցներով կըրելու.
Խաշինք և հօտք՝ անմեղ գառանց, և ոչխարաց՝ ջոկերը,
Տարածվում են՝ արածելու՝ կանանչազարդ՝ դաշտերը։

Հովիւները՝ և հովուուհիք՝ բազմըրամբ լեառն՝ են հանում,
Դալարայգեղ՝ մարգագետին՝ և ջըրարբիք՝ որոնում,
Այծերն առաջ՝ են վազվազում, յետոյ գառակք ոչխարաց,
Կենդանացան՝ Նիրհած լերինք, զուարթացան՝ ծոյք հովտաց։

Փառնակ Ջամիր՝ պաղպաջունքէն՝ վերկացան շատ խնդացին,
Ծառայք նաժիշտք՝ սպասաւոր՝ են նոր հարսին՝ և փեսին.
Արծաթ լական, ոսկի ջրկիճ, մէջը լցած՝ վարդեջուր,
Երեսսրբիչքն՝ են սպիտակ, օծանելիք՝ բազմաբոյր։

Ասաց Փառնակ. չքնաղ Ջամիր՝ նաժիշտք ծառայք՝ զուրթուն են,
Երէկվան պէս՝ քրնաթաթախ՝ թմրած, մնած, պառկած չեն.
Վաղ է ծագել՝ առաւօտը, թէև կանուխ զարթեցանք,
Այլ անկողինք՝ շուտ չըթողենք, երկայն բարակ՝ պառկեցանք։

Ջամիր նստած յոսկի բարձին՝ նաժիշտ շորն էր՝ հագցընում,
Մէկը մուճակ՝ ոտից տալիս, միւսը մազերն՝ էր սանտրում,
Երբ շապիկը՝ վըրէն ձգեց, Ջամիր տուեց՝ պատասխան,
Իրաւի է՝ քո նըկատումն՝ իմ սիրական՝ Փառնակ ջան։

Այսուհետև՝ ծառայք նաժիշտք՝ առաջվան պէս՝ չեն լինիր,
Ցերեկները՝ էլ չեն նիրհեր, չեն թմրիր ու չեն քընիր,
Այս քո նետի՝ զօրութիւնն է, որ դու անգամ իմացար,
Թովչութիւնս՝ քանդըլվեցաւ, և պատճառը՝ հասկացար։

Նաժիշտ բերեց՝ մարգարտայեա՝ պարեգօտն որ՝ հագցընէ։
Փառնակ հարցուց. քո եղբայրը՝ Ջամիր՝ այսօր՝ ո՞ր տեղն է.
Ջամիր հագել՝ էր թևի մէկն, ասաց՝ Երասխ գետի ափ,
Նախջուանայ ի մերձակայս, և թևի միւսն՝ էլ հագաւ,

Փառնակ հարցուց. այսօր կ՚երթանք՝ քո եղբօրն՝ օգնելու.
Ջամիր գլխին՝ կամենում էր՝ ապարօշն՝ դընելու.
Պատասխանեց, այդ քո կամքն է, ո՛ր էլ երթամ՝ հետըդ եմ,
Գլխին դրեց՝ ապարօշը, և կանգնեցաւ՝ փեսին դէմ։

Փառնակ հարսին՝ դեռ տեսել էր՝ սոսկ ճրագաց՝ լուսերով,
Սքանչացաւ՝ երբ որ տեսաւ՝ այսօր կանուխ արևով,
Այսքան չքնաղ՝ գեղեցկութիւն՝ մէկ անձըն մէջ՝ չէր տեսուած,
Որ հասակը, և իրանը՝ յարմարին ընդ՝ գեղ դիմաց։

Փառնակ գնաց՝ մօտ Ջամիրին, և ասաց. իմ՝ սիրական.
Ես քեզ չէի՝ տեսել ցերեկ, այս ի՞նչ գեղ է՝ հրաշալան.
Ես քեզ քանի՛ որ նայում եմ, դո՛ղ է բռնում՝ մարմինս,
Չեմ իմանում՝ թէ ի՞նչ խօսիմ՝ լեզուս սառչում՝ բերնումս։



Ջամիր ասաց. ապա ինչի՞ չես ինձ ստէպ՝ համբուրում,
Որ սրտիցըդ՝ դողն երթայ, և խօսք բացվի՝ քո լեզուում.
Այդ ցաւերու՝ դեղն այս է, ես այդ ցաւէն՝ ազատեմ,
Երբ որ սրտիս՝ դողը բռնէ՝ քեզ կու գրկեմ, կու պագնեմ։

Ասաց. գրկեց՝ սիրականին, և երկուսն էլ՝ նստեցան,
Նաժիշտք բերին՝ օշարակը, բաժակները՝ լցուեցան,
Խըմեց Փառնակ՝ ախորժանօք։ Ջամիր հարցուց, ի՞նչպէս է;
Փառնակ տուեց՝ պատասխանը, թէ շա՛տ քաղր ու անո՛յշ է։

—Ապա ո՞րքան՝ անոյշ կ՚ըլնի, թէ համբուրենք խըմելով,
Օշարակըն՝ կը քաղցրանայ՝ մեր շըրթունքի՝ համբուրով,
Փառնակ ասաց. թէ այդպէս դեղ՝ գիտես՝ ինչի՞ չես անիր.
Ջամիր ասաց. չըգիտէի՝ թէ դու ինձ կու՝ սպասէիր։

Երբ օշարակն՝ վայելեցին, Փառնակ ասաց. դու ընդէ՛ր,
Այսօր մանեակդ՝ գոհարազարդ՝ պարանոցիդ՝ չես կախէր։
Ջամիր ասաց. ուզում էի, որ այն մէկն էլ՝ դու անես,
Մանեակ ի վիզս, գինդք յականջս, գօտիս ի մէջքս՝ հագցընես։

Փառնակ ասաց. կու տա՞ս դու ինձ՝ այդքան արձակ՝ հըրաման,
Որ զարդերըդ՝ ես հագցընեմ, ականջներուդ՝ մերձենամ.
Թէ կամենաս՝ բոլորովին՝ մերկացնեմ քո՝ շորերըդ,
Եւ միւսանգամ՝ իմ ձեռքովըս՝ քեզ հագցընեմ՝ զարդերըդ։

Վախենում եմ՝ ասաց Ջամիր, որ երբ հանես՝ հանդերձըս,
Մինչդ չըգայ շուտով կրկին՝ ինձ հագցընել՝ ձորձերըս.
Այլ գըօսանք կը գըտանես, այլ հաճութիւնք՝ կ՚ունենաս.
Ես տեսնում եմ՝ թէ ի՛նչ աչօք՝ ես դու նայում՝ իմ վըրաս։

Ասաց. մանեակն և գինդերը՝ տուեց ձեռամբ՝ Փառնակին.
Մի՛ վախենար՝ ասաց Ջամիր, չի փշրիր իմ ապակին.
Թէ որ ձեռօք՝ հըպիս առ իս, մէջքիս կապես՝ իմ գօտիս,
Ես չեմ կանչիր՝ տրտասուելով թէ ինչի՞ ես՝ հուպ տալիս.

Փառնակ ասաց՝ իւր սիրելոյն, միթէ քեզմէն՝ վախում եմ
Որ ամեն ժամ՝ գըրահներով՝ բազկացըս մէջ՝ գրկում չեմ,
Չեմ կամենում՝ որ երկաթը՝ քնքոյշ մարմինդ՝ նեղացնէ,
Փափուկ, գողտրիկ՝ ոսկորներուդ՝ ցաւ տայ և քեզ վշտացնէ։

Ապա փորձէ՛ ասաց Ջամիր, ա՛ռ գիս ի մէջ՝ քո գրկաց,
Տեսնեմ իրաւ՝ ցաւ կու տայ այդ՝ քո գըրաշ իմ՝ ոսկերաց.
Լանջքս կրծոյդ՝ թող մըրձենան, շըրթունքըս քո՛ երեսին,
Այն ժամանակ՝ ես կ՛իմանամ՝ խոստումին քո՛ գըրաշին։

Փառնակ բռնեց՝ Հարսի ձեռնէն, և նստեցուց՝ ծնգներուն,
Մանեակն առաւ՝ վիզը կախեց, և գինդերը՝ ունկներուն.
Ականազարդ՝ գօտին կապեց՝ գեղեցկիրան՝ այն մէջքին,
Որում յաւէժ՝ Քաջքըն Մասեայ՝ սիրահար կու կաթոգնին։

Ապա գրկեց՝ բազկաց մէջը, և մըրձեցոյց՝ իւր լանջաց,
Մէկ հոտոտեց ի կոկորդէն, համբոյր տուեց՝ երեսաց,
Ասաց. Ջամիր՝ դու քան գիս լաւ՝ գիտես սիրել՝ և սիրվիլ,
Կամենում եմ՝ քեզ աշկերտ գալ, և սիրելը՝ սովորիլ։

Ջամիր հարցուց. ո՛վ էր այն քաջ՝ որ մէկ կընոջ՝ սիրելով,
Կանանց տարաշ՝ հազած վըրէն՝ բուրդ էր մնում՝ մատմանով.
Կարծեմ քաջի՝ անուն Պարէտ, և գշխոյին Շաչմար էր,
Շատ ժամանակ՝ ցուցերու մէջ՝ Վըրաստանում՝ երգվում էր։

Փառնակ ասաց՝ համբուրելով, այդ ես գիտես սիրական,
Պարէտ իմ պապն՝ էր այն գիւցազն, նորա մահու վէպքում կան,
Ես քեզ համար՝ մէկ օր այն երգ՝ ծայրէ ի ծայր՝ կու երգեմ,
Ինչ որ Ճշգրիտ՝ դեռ չես լըսել՝ ես քեզ ուղիղն՝ կը պատմեմ։

Ջամիր կրկնեց. ձեր երգոց մէջ՝ այն Շամբիկի բանն էլ կա՛յ,
Որ ամուսնոյն՝ սխալել էր՝ պատճառաւ մէկ աղջըկայ,
Բայց երբ լըսեց՝ թէ դաւաճան՝ է գիւցազնին՝ զըրպարտել,
Ի՞նչ վըրէժ էր՝ իւրեան անձնէն՝ յուսահատել՝ պահանջել։

Փառնակ ասաց. ահա դոյա՝ քաջիկ ծընունդ՝ Ջաւանը,
Է իմ ծընող, և Աստարբէ՝ այդ քաջի է՝ տիկինը.
Որ ըղձնի՝ իմ հօրն եկաւ՝ Փիւնիկեցոց՝ աշխարհէն,
Եւ հանեց մեր՝ ազգատոհմը՝ չարաբաստիկ վիճակէն։

Ջամիր ասաց. մեր գուսանք էլ՝ այդ վէպերը՝ երգում են,
Մեր տաղից մէջ՝ փառաւորված՝ է քո ծընող Աստարբէն.
Բայց ես նըման՝ չեմ Շամբիկի՝ որ քեզ համար՝ մահ խնդրեմ,
Աստարբէի հանդոյն քեզ միշտ՝ ի մէջ գըրկացս՝ կը պահեմ։



Ես քո հարսն եմ՝ անձկատոչոր, ցանկամ զքեզ՝ քա՛ջ տեսնել,
Միշտ զըրահըդ՝ վըրէդ հագած նախնեացդ պարտիս՝ նըմանել.
Եթէ դու ինձ՝ զըրաշ հագիդ՝ կասկածում ես՝ գրկելու,
Կարող եմ քեզ՝ ինքնին գրկել և բազկաց մէջ՝ պահելու։

Ինձ վայելում են այս իմ զարդք, և քեզ քո այդ զըրահը,
Ես միշտ պիտի քնքոյշ լինիմ՝ պահած սիրոյ՝ քո ահը,
Այն երկիւղ չէ՝ իմ սիրական, համակրութիւն՝ հոգեկան,
Դու ինձ պիտի՝ պաշտպան լինիս, և ես էլ քեզ՝ յաւիտեան։

Գիտեմ՝ որ ես գեղեցիկ եմ, սակայն Շամբիկ՝ չեմ դառնար,
Եւ քան զքեզ լաւ՝ փեսայ գտնել՝ երբէք՝ յոյս չեմ՝ յըղանար.
Ես Վրացի եմ՝ Քաղդէա չեմ, ինձ արև չէ՝ տաքցընում,
Դեռ տեսած չեմ՝ Մեղքոմի հուր, որ Ասորիք են վառում։

Փառնակ ասաց. Հայ աղջըկունք՝ էլ լաւ գիտեն՝ սիրելը,
Հաւատարիմ՝ կ՛լնին մարդոց, չեն կորցընիր՝ խելքերը,
Տես քո եղբօր՝ սիրականին, որքան ջերմ է՝ իւր սէրը,
Որ զըրաւել՝ կարողացել՝ է Ջամրոնին՝ իւր ձեռը։

Ջամիր ասաց՝ ծիծաղելով. այն աղջըկան՝ չըկարծես,
Թէ ինձ նըման՝ պիտի լինի, կ՛իմանաս երբ՝ որ տեսցես,
Ի՛նչպէս երկինք՝ այս մեր գնտէն՝ անթիւ անհուն՝ ի վեր է,
Նոյնպէս ինձմէն՝ այն Հայ աղջիկ՝ հազար անգամ՝ ըստոր է.

Ցիրաւ, ունի՝ գեղեցկութիւն՝ որ եղբօրս՝ զըրաւեց,
Բայց աւելի՝ քան զայս իւր տեսք՝ բան մի՛ մնար՝ նորանէց.
Բաց ի գառանց՝ և ի հօվուաց՝ էլ ուրիշ ինչ՝ չէ տեսել,
Եւ բաց յերգոց՝ պատանեկաց՝ էլ ուրիշ բան՝ չէ լըսել.

Եղբայրըս լոկ՝ գեղեցկութեամբ՝ նորա պիտի կշտանայ,
Երբ անցանէ՝ գեղեցկութիւնն՝ նա էլ պիտի մոռանայ.
Ես այնպէս եմ, լո՛ւ Ճանաչիր, հասըս էլ կա՛յ՝ բանդաւոր,
Թող երեսէս՝ գեղըս երթայ, մաքով կ՛ըլնիմ՝ լուսաւոր։

Գիտութիւնը՝ այնպէս բան չէ, ոչ մէկ իրի՝ չի՛նմանիր,
Գեղեցկութիւն, փարթամութիւն՝ երբէք նորան՝ չեն հասնիր.
Քանի՛ տարի՝ կարէ մնալ՝ կընոջ վերայ՝ մանկութիւն,
Գեղեցկութիւնն՝ օրով կ՛երթայ, այլ կ՛աւելնայ՝ գիտութիւն։

Փառնակ՝ ես քեզ անգին գանձ եմ. ես սիրեցի՝ քեզ հոգւով.
Դու չէիր զիս՝ երբէք տեսել, և իմ չէիր՝ դեռ սրտով.
Ես էի զքեզ՝ միշտ որոնող, գտայ զքեզ՝ արդ իմ ես.
Գիտեմ որ շատ՝ ջերմիկ սիրով՝ պիտի յաւէժ՝ զիս սիրես։

Պատասխան ետ՝ քաջիկ Փառնակ, զքեզ չըսիրեմ՝ զո՞ սիրեմ.
Զքնաղ Զամիր՝ ես քո այդ սէր՝ գիտես՝ կոյր չեմ՝ տեսնում եմ.
Այժմեան մեր սէր՝ դեռ ոչինչ է, մենք դեռ սիրով հարբած ենք,
Այն ժամանակն էլ կու հասնի՝ որ ճշմարիտ՝ կը սիրենք։

Կ'անցանեն այս՝ տղայական՝ կրակները՝ և սէրը,
Բարեկամի սէր կը մնի նոցա դատարկ տեղերը.
Ես սիրում եմ՝ զիս սիրելով, դու սիրում ես՝ քեզ համար,
Ես կը սիրեմ՝ զքեզ սիրելով, դու կը սիրես՝ մայրաբար։

Զամիր՝ օրեր՝ կան մեր առաջն՝ բարեբաստիկ, երջանիկ,
Ես ուրախ եմ՝ որ գտել եմ՝ քեզ նըման կին գեղեցիկ.
Դու իմ կենաց՝ զարդ կըդառնաս, և գիտեմ որ՝ իսկ զարդ ես,
Զիս երջանիկ՝ իմ կենաց մէջ՝ գիտեմ միայն՝ դու կ'անես։

Փառնակ, ասաց՝ Զամիր ժպտաց, իմ ցանկութիւնն՝ ի՞նչ է որ,
Մեր մէջ լինի՝ յամենայն ժամ՝ սէր ինչպէս որ՝ կայ այսօր.
Ես մէկ երկու՝ յանագ արի, ո՞րքան տուի՝ քեզ յոյսեր,
Մեր տան մէջն ենք, ես կամեցայ՝ որ պինդ կապուի՝ մեր մէջ սէր։

Ապա թէ ո՛չ՝ միթէ չգիտե՞մ՝ թէ ի՞նչ էր մեր՝ պայմանը,
Ես պիտի զիս՝ ծանրացնէի, պահէի իմ կըշիռը,
Տեսնո՞ւմ ես այն՝ կճեայ արձանք, ո՛չ խօսում են՝ ո՛չ լըսում,
Ինչի՞ նոցա՝ էլ չես փարվում, և նոցա էլ՝ չես գրկում։

Փառնակ՝ չասես քո մտաց մէջ՝ հարսիդ համար՝ թէ լիրբ է,
Շուտ կ'իմանամ ամենայն բան, չասես էլ թէ՝ անմիտ է,
Ես մի միայն՝ սիրոյդ համար՝ այսօր այսպէս՝ վարվեցայ,
Ինչ որ պէտք չէր՝ այն գործեցի, և ինչ հարկ չէր՝ խօսեցայ։

Նշմարեցի՝ որ սրտիդ մէջ՝ կրակ շատ կայր՝ բոց չունէր,
Այն քո հրոյն՝ յանաղներով հով փըչեցի և հողմեր,
Այս մեր բաղդի՝ հիմունքն էին, ո՛չ լըկտի եմ, ո՛չ անկիրթ,
Թող այդ մընայ՝ նոցա բաժին, որք անտաշ են՝ սապու ու բիրտ։



Սիրտս ու հոգիս՝ բաց արի քեզ, տեսար՝ որչափ՝ կրակ կայ,
Այն հուր ինքնին՝ կը բորբոքի, և ինքն իրեն՝ բոց կու տայ,
Բայց չեմ թողնիր՝ որ քո սիրտը՝ մընայ սառած և թմրած,
Կըրակ կու տամ՝ քո սրտին էլ՝ որ միշտ լինիս բորբոքված։

Ինձ այսպիսի՝ սիրա է պիտոյ, ես այսպէս եմ՝ քեզ սիրում,
Հայաստանի՝ ձիւնազգաց՝ լեռներէն չեմ՝ կասկածում.
Վաղվաղակի՝ կու հալեցնեմ՝ այն սառնապատ բարձունքը,
Գետոց հանդոյն կը խոխոջան սիրոյ ուղեք և հոսանքը։

Կանեմ փոքրիկ՝ նախաճաշիկ, երթանք պարտէզ՝ ու ման գանք,
Երբ պատրաստվի ճաշու սեղան՝ կու գանք, կ'ուտենք, յագենանք.
Հըրուշակներ, քաղցրաւենիք, միրգ և պտուղք՝ և խորտիկ,
Լեցրվեցան՝ սեղանումը, կերան ամոլք՝ երջանիկ։

Փառնակ ասաց, զուր ենք օրը՝ դատարկութեամբ՝ անցկացնում,
Մինչև ի ճաշ՝ կարենք հասնիլ՝ Երասխին յիւր՝ ափերում,
Հարկ է փութալ՝ յամենայն ժամ՝ կարօտելոց՝ օգնելու,
Կամիմ այսօր՝ իմ ծընողաց՝ իւրեանց հարսն՝ ցուցնելու։

Զամիր կանչեց, ես պատրաստ եմ, երկուսիս ձին՝ էլ թամքած,
Նախաճաշիկ՝ արինք, երթանք, եղբայրս անդ կայ՝ տխրամած.
Այս ապարանք՝ աստ թող մընան, սորան տեղէն չեմ շարժեր,
Երբ որ ուզենք՝ կու գանք երբեմն՝ լինիլ աւուրս մըտաքեր։

Զայս յԱրմաւիր՝ չուզեմ տանիլ, չար օրինակ՝ քաղաքին,
Նահապետաց՝ բընակարան՝ կայ արդէն անդ՝ դարպաս հին,
Անդ կը ցանկամ՝ ես ժառանգել, և ո՛չ գիւթեալ՝ ապարան.
Թող աստ մընայ՝ ինչպէս և կայ, անդ մեզ չէլնիր՝ պիտան։

## Գ.

### ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԶՐՈՅՑՔ

Ո՞յք են սոքա՝ երկու հեծեալք՝ որ գընում են՝ ի դաշտի,
Գլխէն մինչ ոտք՝ զըրահաւորք, նըժոյգք իւրեանց՝ ամեհի,
Ոչ սար, ոչ ձոր՝ են հարցանում, անց են կենում՝ վազելով,
Օդապարիկ չեն երիվարք, այլ ընթացքն է թռչելով։

Ճանապարհին՝ խօսում էին, խօսքերն էին՝ սիրով լի,
Եւ իրերաց՝ քաղցրիկ ժպտում, ժըպիտքն էին՝ շնորհալի.
Մէկն ասում էր՝ իմ սիրական, երբոր եղբօրս՝ ազատենք,
Երթանք ուղիղ՝ մայրաքաղաք՝ և ծընողացդ՝ այց առնենք։

Յետոյ կ'երթանք՝ իմ ծընողաց՝ Մծխիթայում՝ տեսնելու,
Այս մէկ անգամ՝ է որ կ'երթամ, էլ չեմ կարող՝ երթալու.
Պիտի մոռնամ՝ իմ հայրենիք, նոր հայրենիք՝ ճանաչեմ,
Նահապետաց՝ դարպասի մէջ՝ քեզ հետ կենցաղս՝ անցընեմ։

— Ինձ հետ քո կեանք՝ չքնա՛ղ Զամիր, քեզ ձանձրութիւն չլինիր,
Հայաստանի՝ վայելչութիւնք՝ քեզ վատաբաղդ՝ չեն անիր.
Ամենքին՝ քեզ կու պաշտեն, կ'ըլնիս բամբիշ՝ Արամեանց,
Քո զաւակդ էլ՝ մէկ ժամանակ՝ կ'ըլնի տիրող՝ հայրենեաց։

Բունեց Զամիր՝ խօսքի թելը, ասաց. միթէ կ'ունենամ,
Ես էլ զաւակ, որ յիշատակս՝ անմահ մընայ՝ յարաժամ,
Արդեօք իրաւ՝ քա՛ջ իմ Փառնակ, նա էլ կ'առնու՝ նետ Հայկայ,
Կ'ըլնի պաշտպան՝ Հայաստանի՝ և պարծանք տան Արամայ։

Փառնակ ասաց. ինչ պատճառաւ՝ զաւակ պիտի չունենանք,
Որի՞ս նախնիք՝ են անպտուղ, որ մենք ամուլ ծերանանք.
Շա՜տ են եղբարք՝ մեր և քոյրերն, մեք ևս փոյթ կու լեցվինք,
Որդւովք դստերօք՝ շուրջ կու պատենք, ծնողք զաւակաց կու լինինք։



Վա՜շ վա՜շ ինձ ես՝ կրկնեց Զամիր, պիտի մայրիկ՝ անուանեն,
Դեռ ես այսօր՝ եմ հարսնացած, ընդ փոյթ պիտի ծերացնեն.
Ես ուզում եմ՝ այսպէս մնալ, որ քո սէրն՝ վայելեմ,
Դու ինձ որդի, ես քեզ դուստր, աւելի ինչ՝ ոչ խնդրեմ։

Միթէ երբ որ՝ ասաց Փառնակ՝ դու ունենաս՝ երեխայ,
Մեր սէր մեզմէն՝ կը պակասի՞, կամ սըրտերէս դուրս կ'երթայ,
Մի վախենար՝ սիրուն Զամիր, զաւակունք սէր՝ կ'աւելցնուն,
Եւ նոցամով՝ կ'իմանանք թէ՝ ինչ է կենաց՝ քաղցրութիւն։

Էլ չես կանչեր՝ դու զիս Փառնակ, հայր կ'անուանես՝ զաւակաց,
Ես էլ քեզ կին՝ չեմ անուանիր, մայր կը դառնաս՝ որդեկաց.
Քանի հատ որ՝ զաւակ բերենք, այնքան մեր սէր կ'աւելնայ,
Ծառի ո՛րը՝ շատ կը սիրվի, ո՛րն անխընամ՝ կը մընայ։

Ճաշ կամ ընթրիք՝ որ նստատենք՝ միայն երկուս՝ ինչպէս է.
Կամ որդւոց հետ՝ սեղան բանանք, սոյա որը՝ միշտ քաղցր է.
Երբ զաւակիդ՝ ձայնը լըսես՝ բլբուլի պէս՝ խօսելիս,
Ինչ ցնծութիւն՝ կու գայ սըրտիդ՝ ամեն անգամ՝ տեսնելիս։

Յանկարծ Զամիր՝ խօսքը փոխեց, հարցուց՝ Փառնակ՝ սիրելի,
Լաւ տեղեա՞կ ես՝ ամեն ծագաց՝ գաւառաց քո՝ աշխարհի,
Գիտե՞ս սորա՝ հին հին անցքերն, գիտե՞ս՝ թէ ո՞յք՝ են նախնիքդ,
Գիտե՞ս՝ թէ ո՞ր դիւցազունք են՝ հիմնարկել քո՝ հայրենիքդ։

Այս նոր խնդրոյն՝ շատ զարմացած՝ Փառնակ տուեց՝ պատասխան,
Միթէ Հայ չէ՞ Փառնակ փեսայդ, չգիտէ՞ նախնեաց՝ երգոց բան,
Ի՞նչ կայ ծածուկ՝ մեր աշխարհում՝ որ ես պիտի՝ չիմանամ,
Միթէ դիւթեալ՝ դարպասներ միշտ՝ պիտի հանդէս ունենամ։

Երէկ գիշեր՝ Հայկայ նետի՝ պատմութեան մէջ՝ հաւկացայ,
Որ քո աչքին՝ անկիրթ ռամիկ՝ էր երեւել՝ քո փեսայ,
Բայց ի նանիր՝ է այդ կարծիք, ես լաւ գիտեմ՝ հին անցքերն,
Մանուկ էի՝ մինչ սովրեցայ՝ Հայկ-Արամայ՝ մեծ երգերն։

Այնպէս կին է՝ քո ըսկեսուր՝ իմ մայր բամբիշ՝ Աստարբէ,
Որ սենեկում՝ նստած գիտէ՝ ինչ աշխարհ անցք՝ կ'անցանէ.
Ազգաւ փինիկ՝ է այն չքնաղ, շատ երկիր է՝ ման եկել,
Երբ Զաւան հայրս՝ հարսնութեան օրն՝ նորան այրի է թողել։

Զամիր ասաց․ ես այդ գիտեմ, և որ ես քեզ՝ սէր տուի,
Մէկ առիթն էլ՝ այն էր, որ մայրդ՝ ինձ ըսկեսուր՝ անուանուի․
Համբաւած է՝ թէ նա խծբիծ՝ տախտակի վրայ՝ տեսնելով․
Անցեալ անցքերն՝ ամեն օր՝ ձեզ՝ կը կերպացնէ՝ պատմելով։

Պատասխանի՝ տուեց Փառնակ, իմ հայր Զաւան՝ էլ գիտէ,
Այդ տախտակաց՝ հընարներն, նա և մօրէս՝ սովրել է․
Բայց ես դորան՝ չըկարացի՝ սէր տալ, կամ գէթ՝ ուսանիլ,
Դժուարութեամբ՝ կարես գըծերն՝ ի մէջ մըտաց՝ պահպանիլ։

Հարցուց Զամիր, դու տեսե՞լ ես՝ տախտակաց մէջ՝ այն գըծեր․
Նոցա տարազ՝ կը ցուցանէ՝ կամ բևեռներ, կամ սեպեր,
Ինչպէս որ իմ՝ եղբօր աներն՝ իւր փեսին է՝ սովրեցրել,
Զամիրոն էլ՝ տախտակաց հետ՝ գիտէ երկար՝ խօսակցել․

Փառնակ տուեց՝ պատասխանի․ կ՚ասէ իմ մայր՝ Աստարբէ,
Թէ ոչ տախտակն՝ է խօսողըն, այլ խծբրծած՝ այն գիծն է,
Իւրաքանչիւրն՝ անուն ունի, և տասնուվեց ձևով են։
Մէկն միւսի՝ հետ զուգվելով՝ զանազան խօսք կը կազմեն․

Զամիր փոքր ինչ՝ մըտածման յետ՝ այսպէս տուեց՝ պատասխան,
Զիս լաւ աշկերտ՝ պիտի գտնէ՝ իմ ըսկեսուր՝ սիրական․
Ես այն գըծած՝ նորա տախտակք՝ բոլորովին կը սովրիմ․
Եւ ինչ որ մէջ՝ գըծերու կան՝ ընաւից հասու՝ կը լինիմ։

Ծիծաղեցաւ՝ քաջիկ Փառնակ, ասաց․ այսպէս՝ կը կարծես,
Որ տախտակաց՝ հետ խաղալու՝ շատ ժամանակ՝ կը գտնես․
Նահապետաց՝ դուռն բաց է՝ դէմ ամենայն՝ պանդըխտից,
Եկողք երթողք՝ անպակաս են՝ ամեն հեռի՝ տեղերից։

Մեր տան ամօթ՝ կըհամարուի՝ եթէ մէկ հիւր՝ պանդուխտ գայ,
Դարպասի մէջ՝ չըտեսանէ՝ իւրեան առջևն՝ բաց սուփրայ․
Տանուտէրերն՝ պիտի յարգեն՝ իւրեանց օտար՝ հիւրերուն,
Ճաշ և ընթրիք՝ ականջ դընեն՝ նոցա պատմած՝ բաներուն։

Երբ մայրս մէկ՝ Փիւնիկ տեսնէ, հետը երկար կը խօսի,
Ցետոյ նոցա՝ պատմած բաներն՝ անդուլ գըծել՝ կ՚ըսկըսի․
Փիւնիկ լեզուաւ՝ է գծածներն, ես ոչինչ եմ՝ հասկանում,
Այն պատճառաւ՝ գըծած բաներն՝ մօրիս պահել՝ չեմ զըրում։

Ես քո սիրոյն՝ գիրի գոլով՝ Վրաց լեզուն սովրեցայ,
Եւ երբ երբ՝ հանդիպեցանք՝ արձակ ազատ խօսեցայ,
Բայց դու միայն՝ Վըրաց լեզուաւ՝ չես կարող գործ՝ կատարել,
Մեր դարպասում՝ անշուշտ պիտի՝ Հայոց լեզուաւ՝ խօսակցել։

Քըսանամեայ՝ էր Աստարբէ՝ որ ծընողիս՝ հարսնացաւ,
Երբ Արմաւիր՝ հանդիպեցան, Փիւնիկ լեզուաւ՝ խօսեցաւ․
Մինչև այսօր՝ էլ Աստարբէ՝ Հայերէն պարզ չէ խօսում․
Այն պատճառաւ՝ տախտակաց գիծք՝ ինձ կասեցնել՝ չէ կարում։

Թէպէտ առաջ՝ Հայոց լեզուն՝ փոքր ի շատէ՝ սովրել է,
Բայց երբ ծնողիս՝ կորցըրել է, Հայ բարբառն էլ՝ մոռցել է,
Հայոց Տիկնայք՝ ամաչում են՝ երբ նա խօսիլ՝ է կամում,
Հայաստանի՝ տիկին գոլով՝ մէկ խօսք ասել՝ չէ կարում։

Ասում են թէ՝ Դերկ՚թ դշխոյն ևս Հայերէն՝ չէ գիտցել,
Երբ Նինուէ է՝ Անուշաւան՝ նահապետին՝ հարսնացել․
Բայց նա շուտ է՝ փոխել լեզուն, և սովրել է՝ Հայերէն,
Զանք է դըրել՝ Ասորերէնն՝ մոռնել Հայոց դարպասէն։

Զամիր քարշեց՝ սանձ նըժուգին, ասաց՝ դու ես՝ Փառնակ ջան,
Քո բարբառով՝ չես յաջողէր՝ զարմացնել մեր՝ Վըրաստան,
Որչափ դու մեր՝ Վըրաց լեզուն՝ կը կարծես թէ՝ ես սովրել,
Այնքան Հայոց՝ լեզուն և ես՝ կարեմ ազատ գործ ածել։

Դու կարծեցիր՝ թէ միայն դու՝ էիր հարսիդ՝ սէր տալով,
Պատրաստուել որ՝ քո սէր յայտնես՝ նորա լեզուաւ՝ խօսելով,
Ոչ է այդպէս, հարսնացուդ ևս՝ գիտեր կը սիրէր՝ կանխաղոյն,
Եւ քո բարբառ՝ իւր սեպհական՝ էր համարում՝ քեզ հանդոյն։

Ցետոյ ասաց՝ պարզ Հայերէն, մի վախենար՝ Փառնակ ջան,
Իմ հարսնութեամբ՝ քո վեհ նախնեաց՝ չիշառայնիր՝ Հայաստան,
Երևի թէ՝ քո հայր Զաւան՝ Փիւնիկերէն՝ է խօսել,
Որ Աստարբէ՝ Հայերէն քաջ՝ կարողացած՝ չէ սովրել։

Ես մէկ քանի՝ ամիս միայն՝ Հայոց լեզուաւ՝ կը խօսիմ,
Տես թէ ինչպէս՝ պարզ կը խօսի և ըսկեսուր՝ Տիկինն իմ,
Բայց առանձին՝ Փիւնիկ լեզուն՝ էլ կ՚ուսանիմ՝ պարտաւոր,
Թող դարպասի՝ երթևեկքըն՝ գիտ խանդաւին անշառար։

Փառնակ ասաց. շատ լաւ բան է՝ օտար լեզուք իմանալ,
Շատ նոր համբաւք՝ են մեզ հասնում, որ հարկ է մեզ՝ գիտենալ,
Այնպէս համբաւք՝ որոց ծայրերն՝ Արամ-Երգի՝ մէջ ես կան,
Բայց աղաւաղ՝ բերնէ բերան՝ են հասանում՝ Հայաստան։

Միտքդ է այն ծեր՝ Արամ-Երգի, որ սիրող էր՝ Արարչին . . .
Մամբրէ ուղին՝ երբ ցոյց տուեց՝ Արամ գտաւ՝ զծերունին.
Զամիր ասաց. մէկ խորան կայր՝ կաղնւոյ ներքոյ՝ կառուցած.
Տաղաւարի՝ գըլխան առաջն՝ մէկ ծերունի՝ կայր նստած։

Փառնակ՝ կրկնեց, այն ծերունւոյ՝ անուն լեալ է՝ Աբրահամ,
Որոյ շնորհաց՝ երախտապարտ՝ է մնացել՝ մեր Արամ։
Զամիր ասաց. Արայի մահ՝ չէ՞ գուշակել՝ ծերունին,
Որ պիտի զոհ՝ երթար ի սէր՝ իւր հայրենեաց՝ և հարսին։

Այո՛ ասաց՝ քաջին Փառնակն, այն ծերունւոյ՝ մէկ որդեակ,
Որոյ անուն՝ փոխփոխելով՝ վերջն դառել է՝ Իսահակ.
Իւր հօր ձեռամբ՝ պատրաստուած է եղել ի զոհ՝ Արարչի.
Այլ Արարիչ՝ ողորմելով՝ փրկել ի ձեռն՝ հրեշտակի։

Զամիր ունեց՝ խօսքի թելէն, ասաց՝ մութ է ինձ այդ բան,
Խնդրեմ որ ինձ՝ պարզ բացատրես՝ ամեն մասամբ՝ Փառնակ ջան,
Ես ունիմ սէր՝ բան սովրելու՝ թէպէտ շատ բան՝ ես գիտեմ,
Բայց որքան ես՝ աւել լըսեմ՝ դարձեալ լըսել՝ յօժար եմ։

Զօր օրինակ՝ թէ Արարիչ՝ ինչ է, ինձ լաւ՝ հասկացուր,
Հայկ-Երգի մէջ՝ շատ է յիշուած, չեմ հասկացել, սովրեցուր.
Հրեշտակ ինչ է, չեմ իմանում, Աբէլ երգում՝ կայ յիշուած,
Այս ես՝ Քաջքոյ՝ նման բան է, որ սոսկ անունն՝ է լսուած։

Փառնակ կրկնեց. Զամիր՝ իրաւ՝ զգօն աղջիկ՝ ես եղել,
Որ Արարիչ կամ Հրեշտակ ինչ՝ լինելն միտքդ՝ ես բերել.
Ես Հայկ-Երգըն՝ ծայրէ ի ծայր՝ կարեմ երգել՝ անսխալ,
Բայց թէ ով ինչ՝ հարցնող լինի՝ չեմ յաջողէր՝ լուծում տալ։

Արարիչն է՝ այն մեծ էակն, որ Նոյ էր միշտ՝ քարոզում.
Որ՝ երբ աշխարհ՝ ջըրով կորաւ, Նոյին պահեց՝ տապանում,
Նոյն էակի՝ փառաց համար՝ Բաբելոնէն՝ Հայկ ելաւ,
Մասեաց երկրում՝ մեր իւր որդւոց՝ ազատութեան հիմն՝ դըրաւ։



Երեք ուստերք՝ Սեմ, Քամ, Յաբէթ, ըստ Հայկ-Երգին՝ ունէր Նոյ.
Որոց հետ կայր՝ ի միասին՝ մէկ տարւոյ չափ՝ մէջ ջըրոյ.
Նոքա դըրին՝ նոր աշխարհի՝ կրկին անգամ՝ այս հիմունք,
Երբ զհին աշխարհ՝ անհետ տարան՝ ջրհեղեղի՝ կործանմունք։

Յաբեթէն էր՝ յառաջացած՝ մեր Հայկ արի՝ նախահայր,
Նորա օրով՝ Քամայ ցեղէն՝ Բաբելոնում՝ Նեբրոդ կայր.
Սեմայ տանէն՝ տասներորդ պորտ՝ երևել է՝ Աբրահամ,
Յաւուրս որոյ՝ Հայաստանում՝ հանդիսացած՝ էր Արամ։

Աշխարհ յոյժ լայն՝ է և երկայն, բազումազգք կան՝ մեզ անյայտ,
Բայց մօրս համար՝ տախտակներով՝ ամեն ինչ էր՝ բացայայտ,
Հայրս էլ շատ տեղ՝ է ման եկել, շատ երկիրներ՝ է տեսել,
Եւ ինձ համար՝ ամեն անգամ՝ նոր և հին անցք՝ շատ պատմել։

Երբ ես ծընայ՝ չըքնաղ մօրէս՝ քաղցրիկ ծնողաց՝ անդրանիկ,
Մեր դարպասում՝ կայր քաջափորձ՝ ծեր Լոյ զարև՝ վեհ դըրանիկ.
Փրկիչ էր սա՝ Զաւան ծնողիս, և գանձապահ Ասսորբեայ,
Խընամակալ՝ դաստիարակ՝ ինձ կարգեցաւ՝ դարձեալ նա։

Ոչ թէ միայն՝ ձիավարել՝ յորս հեծանել, զէն շարժել,
Այլ և ամեն՝ բոյս, ծառ և տունկ՝ նա ուսոյց ինձ՝ ճանաչել,
Լեզուաց տեղեակ՝ ազգի ազգի, իմ կրթութեան՝ ջանք դըրեց,
Ամեն թռչնոց և գազանաց՝ անուն և բարք՝ սովորցրեց։

Դու հարցուցիր՝ թէ Հայաստան՝ երկրի մասանց՝ տեղեակ եմ,
Հարցուր՝ ո՞ր սար, ո՞ր ձոր, ո՞ր գետ, ո՞ր գիւղաչօք՝ տեսած չեմ,
Ահա հասել՝ եմ երեսուն՝ ամաց տիոց՝ զարգացման,
Քըսան անգամ՝ շըջագայել՝ եմ բովանդակ՝ Հայաստան։

Երբոր տարաւ՝ դաստիարակս՝ զիս առաջին՝ Նուագին,
Պոնտոսի ծով՝ ինձ ցուցանել, յԱմասիոյ՝ ծովափին,
Ուստի հայրս էր՝ ընկել գերի, և ուր դարձեալ՝ ազատուել,
Երբ հէներէն՝ խըլած նաւով՝ և ճոխութեամբ՝ էր դարձել։

Ի՞նչ երևեց՝ ծովն իմ աչացս, և զիս ինչպէս՝ զարհուրեցոյց.
Ի՞նչ մեծամեծ՝ յաղթանակաց՝ լայն ասպարէզ՝ ինձ եցոյց.
Յեռեւըս կայր՝ աշխարհ Գամրաց՝ աջակողմն էր՝ հին Կողքիս,
Ուր որ Դերկէթ՝ հաւիս կանգնել՝ Հրատ Արամայ՝ էր զանդըրիս։

Ցայնկոյս ծովուն՝ Սկիւթք, Սարմատք, և Ամազոնք՝ միասնիք,
Ինձմէն դէպ ձախ՝ կային աշխարհք՝ Փոքր Ասիոյ երջանիկք,
Անդ Փռիւգիա, և Միւսիա, և Լիւկիա՝ ծովափնեայ,
Ուր յԱրամեան՝ արշաւանէն՝ սփռեցան զօրք Հայկազնեայ։

Յետոյ գնացինք՝ դէպ ծոցն Այաս, Միջերկրական ծովի ափ.
Փոքր մնաց որ՝ զարմացմանէս՝ պիտ՝ ընկնէի ուշաթափ.
Դարձեալ Գամիրք՝ յետեւ էին՝ երես իմ էր՝ դէպ հարաւ,
Փիւնիկեցւոց նաւերն անդ են, և կըրում են՝ բեռն անրաւ։

Երբ տեսաւ իմ՝ դաստիարակն՝ սրտիս հոգւոյս՝ այս հրճուանք,
Վախեցաւ որ՝ այն կ'ունենայ՝ վընասաբեր՝ հետեւանք,
Օտար աշխարհ՝ գեղեցկոյ՝ սրտիս մէջ սէր՝ կը ընկնի,
Իմ հօր նըման՝ պանդուխտ տեղում՝ կենացս լաւ կէսն՝ կըանցնի։

Շուտ դարձոյց զիս՝ ի ծոց ծնողացս, ինքն ևս արդէն՝ հիւանդ էր,
Բայց նորա սէրն՝ հըրահանգայ՝ սրտիս ի խորս՝ փակել էր,
Հօրէս կրկին՝ հրաման առի, շրջագայել՝ բովլայ,
Երկու ծովուց՝ միւս երեսին՝ ազգք և երկիր՝ շատ տեսայ։

Արամ–Նորդն էր՝ իմ առաջնորդ. և ուր Արամ՝ հասել էր,
Ամեն տեղերն՝ այօք տեսայ, բայց հանգամանքն՝ փոխուել էր,
Ուր առաջ մեծ՝ քաղաքք կային, այժմ անապատ էր դառել,
Եւ ուր մեկ դաշտ էր ամայի, անդ մեծ քաղաք՝ էր կանգնել։

Արմաւիրէն՝ որ դուրս եկայ՝ առաջ Նինուէ՝ գընացի,
Թագաւորն էր՝ դեռ Բելեքոս, նորա տան հիւր՝ մընացի.
Ունէր երեք՝ չքնաղ դստեր, կամէր առնել՝ զիս փեսայ,
Բայց ես առի, թէ ի քըսան՝ ամեայ ի տիս՝ նոր հասայ։

Այն տեղ օտար աշխարհներէն՝ գալիս էին՝ ուղևորք,
Բաբելացիք և Ասորիք՝ Մարք և Հնդիկք՝ բիւրաւորք.
Վաճառաշահ քաղաք է այն, Արմաւիրէն՝ շատ մեծ է,
Տիգրիս գետոյ՝ աջակողմը՝ հսկայի պէս՝ պառկած է։

Այս մեծ քաղաք՝ Ասուր հիմնեց՝ երբ Հայկ խեթաց՝ Նեբրովթէն,
Բաբելոնէն՝ գահ փոխադրեց՝ Նինոս բերեց՝ ի Նինուէն,
Շամիրամ իւր՝ աթոռ տարաւ՝ դարձեալ յափունս Եփրատայ,
Նինուէ կրկին՝ աթոռանիստ՝ եղև որդւոյն՝ Նինուասայ։



Նինուասէն յետ՝ Նինուէի մէջ՝ նստան յաթոռ՝ թագաւորք,
Արիոս և Արալիոս, և Քսերքսէս՝ զօրաւորք.
Յետոյ նստաւ՝ Արմամիթրաս, հուսկ Բելեքոս՝ քաջարին,
Որում եղէ՝ հիւր քանի օր՝ անդրանիկս իմ՝ ծընողին։

Արիոսն էր՝ այն թագաւոր, որոյ Դերկէթ՝ հանին մեր,
ԶԱնուշաւան՝ իւր սիրելին՝ ներքուստ լըծոյն՝ հանել էր.
Երբ զօրք Հայոց՝ հասան Նինուէ, և Ասորիք՝ վախեցան,
Եւ քաջ Հայերն՝ ձոխ աւարօք՝ ծանրաբեռնած՝ յետ դարձան։

Կըցորդ կենաց՝ Աբրահամու՝ էին Արամ և Նինոս;
Արամայ օրն՝ թագաւորեց՝ Արգիւացւոց՝ Ինաքոս,
Նա մեծ ծովի՝ միւս եզեր՝ ցամաք կղզւոյ՝ մէկ յանկեան,
Ըսկիզբ արեց՝ նոր հիմնադրել՝ վայրենամիտ Ելլադան։

Դեռ Նինոսի՝ Քայաղ Պապու՝ ժամանակ կայր՝ Աբրահամ,
Խառան քաղաք՝ էր բընակված՝ իբր իննսուն՝ և հինգ ամ,
Նա յերազում՝ տեսաւ մէկ օր՝ Նոյի պաշտած՝ Արարչին,
Որ պատուէր ետ՝ տեղէն գաղթել, թողուլ զազգ և հայրենին։

Աբրահամ էր՝ ամուսնացած, բայց դեռ զաւակ՝ չէր ծընած,
Սառայ տիկինն՝ գեղեցկութեամբ՝ էր մեծապէս՝ հռչակուած.
Առաւ իւր կինն՝ և գաղթեցաւ՝ դէպ Պաղեստին՝ Խառանէն,
Իւր հետ և Ղովտ՝ եղբօրորդին՝ ծընած չքնաղ՝ Առանէն։

Առան եղբայր՝ Աբրահամու՝ երկաստարդ՝ հրաշագեղ,
Օրիորդաց՝ սրտացուցիչ՝ կերպարանօք իւր շըքեղ,
Վաղաթառամ՝ վախճանելով՝ թախիծ դըրաւ՝ Թարային,
Հայր կսկիծէն՝ արձան դրօշեց՝ պաշտել դըրեց՝ զիւր որդին։

Թարահատ էր՝ կոչուած ի Հայս՝ Արամայ օրն՝ այն դրօշեալ,
Արայի հետ՝ խառնըվելով՝ Թամուզ եղև՝ յորջորջեալ,
Ամենայն տեղ՝ կը պաշտէին՝ Թարայի այս՝ որդեակին,
Որոյ դուստր էր՝ չքնաղ Սառա՝ Աբրահամու՝ տան տիկին։

Այս էր պատճառ՝ որ Արարիչ՝ Աբրահամին՝ դուրս կոչեց,
Այն տանէն՝ ուր իւր փառք պատիւ՝ նուաղանալ՝ ըսկըսեց.
Եւ Աբրահամ՝ երբ որ հասաւ՝ յերկիր Քամայ՝ Պաղեստին,
Իւր խորան եդ՝ մերձ Մամբրէի՝ հսկայ հովուի՝ ի կաղնին։

Հիւրասէր անձն՝ էր Աբրահամ, ճոխ և հարուստ, մեծատուն,
Լայն դաշտաց մէջ՝ վրան տարած՝ միշտ պատրաստ կայր՝ նորա տուն.
Ինչպէս Արամ՝ գըտաւ նըրան՝ նստած առ դրան՝ խորանին,
Այնպէս ամենք՝ կը գտնէին՝ տեսեալ հեռուստ՝ այն կաղնին։

Հարստացաւ՝ Ղովտն էլ խաշամբք՝ հովիւներ շատ՝ բազմացաւ,
Այնքան աճեց՝ նորա փարախ, մինչ դաշտ անձուկ՝ երևցաւ,
Երկու կողմանց՝ համհաճութեամբ՝ բաժանվեցան՝ մէկ մէկէն.
Աբրահամ իւր՝ կաղնին պահեց, Ղովտ հեռացաւ՝ այն դաշտէն։

Մէկ լեռան ներք՝ կայր սոցա մէջ, ընդ արևելս՝ այն լերին,
Հինգ քաղաքեան՝ Սոդոմ-Գոմոր՝ էր տէրութիւն՝ առանձին.
Սոդոմայ մէջ՝ բընակվեցաւ՝ Ղովտ և տրա՝ հարսանիք,
Ամուսնացաւ՝ երբ իւր սրտով՝ գըտաւ սիրուն՝ մի աղջիկ։

Աբրահամին՝ մէկ օր հասաւ՝ դառն համբաւ՝ տրտմութեան,
Թէ ասպատակ՝ եկաւ Սոդոմ, Ղովտ մատնեցաւ՝ գերութեան.
Ընտրեց իսկոյն՝ հովիւներէն՝ երեք հարիւր՝ տասնևութ,
Ասպատակի՝ յետնէն վազեց՝ մինչ չէր հասել՝ գիշեր մութ։

Ո՛չ թէ միայն՝ ջարդեց, փշրեց, եղբօրորդւոյն՝ ազատեց,
Այլ և աւար՝ հինգ քաղաքի՝ ասպատակէն՝ յետ խըլեց.
Երբ յետ դարձաւ՝ հասաւ Յեբուս, Նորան առաջ դուրս եկաւ,
Մելքիսեդէկ՝ ի Սաղեմայ՝ օրհնեց հացիւ և գինեաւ։

Սա ինքն էր նոյ՝ ինչպէս պատմել՝ էր ծերունին՝ Աբրահամ,
Երբ այս կողմերն՝ Համասփիւռի՝ համար հասել՝ էր Արամ.
Բայց Արամ շատ՝ յետոյ հասաւ, և այն երկար՝ միջոցին,
Ականջ դիր թէ՝ ինչ դիպուածներ՝ է ունեցել՝ ծերունին։

Հարիւրամեայ՝ էր Աբրահամ, և Սառա էր՝ իննսուն,
Մէկ օր տեսաւ՝ երեք ուղորդք՝ անցնում էին՝ հեռացոյն,
Վազեց գընաց՝ նոցա առաջ՝ բերեց պատուով իւր խորան,
Ճաշու ժամ էր, ուղևորաց՝ հանդէպ բացեց՝ լի սեղան։

Ուտում էին՝ խորված հորթն՝ և իրերաց՝ հետ խօսում.
Սառա ծածուկ՝ կայր յայն սենեակ, իսկ Աբրահամ՝ ի սպասում,
Յանկարծ ասաց՝ նոցանէն մին, երբ լըրանայ՝ մէկ տարին,
Սառա տիկին՝ արու զաւակ՝ պիտի կըրէ՝ յիւր գըրկին։



Վարագուրի՝ յետն էր Սառա՝ ծիծաղեցաւ՝ երբ լըսեց,
Իւր մտքի մէջ՝ ասաց, ի՞նչ էր՝ որ այս պանդուխտ՝ հիւր խօսեց,
Ամուսինս է՝ հարիւրամեայ, ես իննսուն՝ տարու եմ,
Ծաղկեալ հասակս՝ անդարձ անցաւ, զաւակ պիտի՝ ա՞րդ բերեմ։

Հիւրերն ասին՝ Աբրահամին, ինչի՞ Սառա՝ ծիծաղեց . . . .
Աբրահամու՝ աչք բացվեցաւ. Արարիչն էր՝ ճանաչեց.
Զկնի ճաշին՝ մինչ կամեցան՝ շարունակել՝ ճանապարհ,
Աբրահամ ևս՝ ուղեկցեցաւ՝ թողնելով իւր՝ տաղաւար։

Ճանապարհին՝ ասացին հիւրք՝ թէ մենք Սոդոմ՝ ենք գընում,
Այն հինգ քաղաք՝ չարեաց համար՝ կործանել ենք՝ կամենում.
Աբրահամ շատ՝ աներորդւոյն՝ միտքը բերեց և ասաց.
Մի՞թէ անմե՞ղն՝ էլ միասին՝ կ՚առնու պատիժ՝ ընդ չարաց։

Հիւրք ասացին. թէ հինգ անմեղք՝ լինին այն տեղ՝ չենք պատժէր,
Այլ երբ հասան՝ ի գլուխ լերին՝ Աբրահամ հիւրք՝ չէր տեսնէր,
Միայն երկու՝ ուղորդք տեսաւ՝ որ ի Սոդոմ՝ մերձեցան.
Ղովտ ընդ առաջ՝ եկաւ սոցա, և տարաւ յիւր՝ օթևան։

Սոդոմացիք՝ այն ուղորդաց՝ եկան բռնել՝ և տանջել,
Բայց Ղովտ չոգեց՝ իւր տան հիւրից՝ չարագործաց՝ ձեռք մատնել.
Ուղորդք հարին՝ զՍոդոմացիս՝ անօրինակ՝ կուրութեամբ,
Որ մինչ ի լոյս՝ չըկարացին՝ գտնել տան դուռն՝ խարխափմամբ։

Երկու ուղորդք՝ հրեշտակք էին՝ այն Արարչէն՝ յուղարկած,
Որք և Ղովտին՝ իմացուցին՝ թէ ի՞նչ դիտմամբ՝ են եկած.
Ասացին շուտ՝ փախիր տունէդ՝ գընա հեռու, ազատվիր,
Դեռ արև չի՝ լինիր ծագած՝ որ մենք կ՚այրենք՝ այս երկիր։

Ղովտ առաւ իւր՝ երկու դուստրն՝ կընոջ ձեռքէն՝ պ՚ինդ բռնեց,
Կես գիշեր դեռ՝ չէր հասել որ՝ իւր գերդաստանն՝ ազատեց.
Իսկ Աբրահամ՝ երբ առաւօտ՝ արևու լոյս՝ ցոլացաւ,
Տեսաւ վերէն՝ ծըծումբ և հուր՝ որ ի Սոդոմ՝ վառվեցաւ։

Այն հինգ քաղաք՝ ոչ թէ միայն՝ հըրատաշար՝ այրեցան,
Այլ և բերրի՝ դաշտերն անգամ՝ անդնդասոյզ՝ ըլքացան.
Հինգ քաղաքի տեղում մէկ մեծ խորյատակ ափ բացաւ,
Յորդանանի՝ ջուրը դարձաւ, այն փոսի մէջ՝ լըճացաւ։

Այնուհետև՝ այն լիճ աղի անուանեցաւ՝ Ծով մեռեալ,
Մինչև այսօր՝ չէ ապրած ձուկն՝ Յորդանանէն անդ անկեալ.
Մինչ միւս լիճ՝ ուստի իւր ջուր՝ միշտ կ'ընդունի՝ Յորդանան։
Առատաձեռն կը յագեցնէ՝ մեծ մեծ ձկամբք՝ զանազան։

Եւ Աբրահամ՝ դարձաւ ուրախ՝ ընդ արդար դատ՝ Արարչի ;
Որ անմեղներն՝ կը փրկէին. և միայն չարն՝ կը կորչի.
Տարին պտտեց, Սառա յղի՝ էր և զաւակ՝ ունեցաւ,
Անուն մանկան՝ ծիծաղ գրքին, որ Իսահակ՝ կոչեցաւ։

Դ.

## ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՆՑԻՑ ԱՐԿԱԾԻՑ ՓԱՌՈՆԱԿԷՑ

Երբ Արարիչ՝ Աբրահամին՝ հրաւիրեց՝ Պաղեստին,
Խոստացաւ որ՝ նորա որդւոց՝ տայ այն երկիրն՝ ի բաժին։
Հինգ տարէն յետ՝ որդի տուեց, և որդին էր՝ Իսահակ,
Որ ժառանգ էր՝ Աբրահամու՝ հարստութեան՝ բովանդակ։

Բայց Աբրահամ՝ տասչորս տարի՝ քան զայն առաջ՝ Իսմայէլ ;
Արու զաւակ՝ էր Սառայի՝ աղախինէն՝ բստացել.
Երբոր ծնաւ՝ Իսահակն էլ՝ Սառա չուզեց՝ որ որդին,
Ի միասին՝ զարգանայ հետ՝ աղախնածին՝ անդրանկին։

Աբրահամն էլ՝ Ագար մօր հետ՝ Իսմայէլին՝ դուրս հանեց։
Եւ Իսմայէլ՝ Արաբիոյ՝ անապատում՝ բռնակուեց.
Այլ Իսահակ՝ միակ ժառանգ՝ տան մընալով՝ զարգացաւ,
Երբ քըսանհինգ՝ ամեայ եղև, իւր ծընողաց՝ փառք դարձաւ։

Մէկ օր ասաց՝ Աբրահամին՝ այն Արարիչ՝ իւր սպաշտած,
Իսահակին՝ զոհել այն տեղ՝ ուր նոյ հանեց՝ գինեաւ հաց.
Հնազանդ գըտաւ՝ ծերն Աբրահամ՝ Արարչական՝ հրամանին ;
Տարաւ այն տեղ՝ ուրախ սրտով՝ պատարագել՝ զիւր որդին։



Բայց երբ փայտէն՝ խարոյկ կանգնեց, կապեց որդւոյ՝ ձեռք ու ոտք ;
Վերուստ լըսեց՝ ձայն Արարչի՝ իբրև ամպոց՝ ինչ որոտք.
Ծանեայ ասաց՝ որ հընազանդ՝ ես Արարչիս՝ հրամանին,
Որովհետև՝ չըխնայեցեր՝ զոհել ինձ զքո՝ միածին։

Իսահակն էլ՝ իւր ծընողին՝ էր անտրտունջ՝ հընազանդ,
Լուռ և ուրախ՝ իւր հօր կամօք՝ էլ ի մահուն՝ դաշաւանդ.
Վասն այն երկուսն՝ էլ Արարչէն՝ լիաբերան՝ օրհնեցան,
Որ նոցա ցեղ՝ Պաղեստինի՝ ժառանգ լինի՝ յաւիտեան։

Երբ որ Սառա՝ վախճանեցաւ՝ ամուսնացաւ Իսահակ,
Եւ Աբրահամ՝ իւր ձոխութիւնն՝ նորան թողեց՝ բովանդակ.
Իսահակայ՝ ամուսինն էլ՝ Սառայի պէս՝ ամուլ էր,
Քըսան ամեն՝ յետ իմացաւ՝ Ռեբեկա որ՝ յղի էր։

Ծընաւ երկու արու զաւակ՝ մին էր Եսաւ, մին՝ Յակոբ,
Այս երկորեակ՝ թոռունք տեսաւ՝ Աբրահամ սիրտ ի տրրոփ.
Տասնևհինգ ամ՝ էլ ապրեցաւ՝ ծերունին այս՝ թոռանց հետ,
Երկուսին ես՝ նոյն և իւր՝ պաշտած կրօնին՝ ծանօթս ետ,

Այլ երբ հասաւ՝ Աբրահամու՝ վախճանելոյ՝ ժամանակ,
Շատ սըգացին՝ գերդաստանօք՝ Իսմայէլ և Իսահակ,
Սառայի մօտ՝ տարան Քեբրոն, և թաղեցին՝ կրկին այր ;
Եւ Իսահակ՝ ի Բերսաբէ՝ իւր խորանի՝ ընտրեց վայր.

Եսաւ, Յակոբ՝ զարգանալով՝ ցեօթանասուն՝ ամ հասան,
Եսաւ բիրտ էր՝ բարուք, վարուք, բայց հօրն էր յոյժ՝ սիրական ;
Մայրն զՅակոբ՝ էր շատ սիրում, որովհետև՝ միշտ տանն էր.
Եւ պառաւ մօրն՝ անտեսութեան՝ մէջ ամեն կերպ՝ օգնում էր։

Մէկ օր Եսաւ՝ դաշտէն դարձաւ՝ տուն շատ յոգնած, և քաղցած ;
Այս միջոցին՝ Յակոբ մէկ լաւ՝ ոսպնաթան էր՝ պատրաստած,
Եսաւ ասաց. տուր ինձ՝ Յակոբ՝ ձեռիդ թանով ամանը,
Յակոբ ասաց. անդրանկութիւնդ՝ վաճառէ ինձ, կեր թանը։

Եսաւ առաւ՝ սառը թանը, ասաց՝ ինչ՞ու՝ է պիտոյ,
Անդրանկութիւն՝ երբ մեռնում եմ՝ քաղցած ծարաւ՝ ի տապոյ.
Քեզ թող մնայ՝ անդրանկութիւն, և խըպշտեց՝ սառը թան,
Դարձեալ գընաց՝ ի սար ի ձոր՝ նստիլ սիրում՝ չէր ի տան։

Իսահակ էր՝ ծերացել յոյժ, չէին աչքերն՝ էլ տեսնում,
Կարծեց՝ թէ իւր՝ կատարածի՝ օրերն արդէն՝ են հասնում.
Ծածուկ ասաց՝ Եսաւ որդւոյն՝ գընա, մէկ լաւ՝ որս արա,
Ինձ մէկ խորտիկ՝ ուտեցուր որ՝ օրհնենք թափեմ՝ քո վերա։

Այս երբ լըսեց՝ ծերոյ բերնէն՝ տիկին մայրն Ռեբեկայ,
Իսկոյն ծանոյց՝ իւր սիրական՝ կրտսեր որդւոյն՝ Յակոբայ.
Յանդս ուղարկեց՝ մէկ ուլ բերել, արաւ համով՝ կերակուր,
Ասաց որդւոյն՝ տար հօրդ առջև՝ և հանդարտիկ՝ ուտեցուր։

Յակոբ ասաց, վախեմ ձայնէս՝ կ'իմանայ և՝ կը ճանչնայ,
Մանաւանդ ես՝ լերկ եմ մարմնով, գիտես՝ ինչպէս՝ թաւ է նա.
Մայրը առաւ՝ ուլու մորթով՝ Յակոբայ կուրծք պատատեց,
Աղխերաց մորթք՝ հագոյց բազկաց, և առ հայր իւր՝ առաքեց։

Յակոբ գընաց՝ առ Իսահակ, ասաց՝ հայրիկ՝ բերել եմ,
Քո կամեցած՝ խորովածը՝ որ իմ որսէն՝ եփել եմ։
Զարմացաւ հայր։ Հարցուց՝ ով ես։ Յակոբ ասաց՝ եմ Եսաւ։
Հայր հրամայեց՝ որ մօտ երթայ. Յակոբ առ հայր՝ մերձեցաւ։

Ծերն իւր ձեռօք՝ լաւ շօշափեց, Յակոբայ լանջք և ձեռներ,
Տեսաւ որ թաւ՝ էր ամեն տեղ, ամենն ունէր՝ մազ և հեր,
Ասաց. զարմանք, ձայնդ Յակոբայ, ձեռքդ Եսաւայ՝ է նըման.
Կերաւ խորտիկն և պարգևեց՝ որդւոյն շընորհ՝ օրհնութեան։

Փոքր ինչ յետոյ՝ եկն և Եսաւ՝ դաշտէն քրտնած՝ և խոնջած,
Ձայնեց ծերոյն՝ Հայր՝ վեր կաց՝ կեր, տես ինչ լաւ որս՝ եմ բերած.
Դարձեալ ընկաւ՝ զարմացման մէջ՝ քաղցրահոգի՝ ծերունին,
Ո՞չ ապաքէն՝ ասաց՝ ժամ մի՝ առաջ բերեց՝ իմ որդին։

Եսաւ զգաց՝ խարդախութիւնն, լալով ասաց՝ իմ եղբայրս,
Առաջ խըլեց՝ անդրանկութիւնս՝ և արդ խաբեց՝ զօրհնող հայրս.
Միայն հնար մի՝ այսուհետև՝ կայ Յակոբէն՝ փրկութեան,
Որ հօրս վերջին՝ հիւանդ օրերն՝ էլ չըմընայ՝ նա կենդան։

Լըսեց մայրն այս՝ ըսպառնալիքն՝ և Յակոբին՝ մեղկըցաւ,
Վըշտացած էր՝ և հարսներէն՝ զորս առել էր՝ կին Եսաւ,
Ասաց ծերոյն՝ որ Յակոբին՝ ուղարկէ դէպ ի Խառան,
Որ նա իւր հօր՝ գերդաստանէն՝ ընտրէ աղջիկ՝ հարսնութեան.



Բերսաբէէն՝ չունէր Յակոբ՝ այն ժամանակ՝ երբ Արայ,
Տասնևհինգ ամ՝ ընդ Նուարդայ՝ ժառանգէր գահ՝ Արամայ.
Եւ Շամիրամ՝ խարդաւանօք՝ խողխողել էր՝ Նինոսին,
Երեքտասան՝ երորդ ամն էր՝ որ կայր բազմեալ՝ ի գահին։

Այս միջոցին՝ Նըլադայի՝ մէջ Մեկկոն՝ զաւառում,
Ինաքոսի՝ պէս Եգիղէս՝ թագաւորակ՝ էր պծնում.
Որով փոքր ինչ՝ անտառաբնակ՝ վայրագասուն՝ Յոյները,
Օր ըստ օրէ՝ մարդկան էին՝ նըմանեցնում՝ բարքերը։

Յակոբ հասաւ՝ ի Միջագետս, գընաց ի տուն Լաբանայ,
Որ հարազատ՝ մի էր յեղբարց՝ իւր մօրն՝ տիկնոջ՝ Ռեբեկայ,
Այս տեղ մընաց՝ քըսանմէկ ամ, առաւ նորա՝ զոյգ դստերք,
Որոց և զոյգ՝ հարճից ծընան՝ երկոտասան քաջ ուստերք։

Այս միջոցին՝ ինչ անցք արդեօք՝ կ'անցանէին՝ Հայաստան,
Շամիրամ՝ որ՝ ճանաչում էր՝ զԱրայ յաւուրց՝ մանկութեան,*
Չըկարելով՝ բունադատել՝ յամուսնութիւն՝ գըղձալին,
Կենաց թելը՝ ընդ մէջ կտրեց՝ յաշխարհական՝ ի մարտի։†

Գահն Արայի՝ Կարդոս բազմեց, Հայք ողբեցին՝ արտասուք,
Բայց չըյամեց՝ Հայաստանի՝ վերայ հասնել՝ ողբ և սուգ.
Նինուաս մօրէն՝ խըլեց աթոռն, ի Հայս փախաւ՝ Շամիրամ,
Կարդոսի հետ՝ ի գոռ մարտի՝ հարան զօրօք՝ համբրամ։

Յակոբ դարձաւ՝ Միջագետքէն՝ իննսուն և՝ հինգ ամաց,
Ճոխ և հարուստ՝ խաշամբք, հօտօք և բազմութեամբ զաւակաց,
Դեռ կենդանի էր Իսահակ։ Անուշավան էլ դարձաւ,
Դերկէթ զգաստ՝ դշխոյն նորա՝ ապատարար՝ երևցաւ։

Երկոտասան՝ որդւոց մէջէն՝ Յակոբ սիրեց՝ աւելի.
Յովսէփ որդւոյն՝ որ անդրանիկ էր հրաշագեղ՝ Ռաքէլի.
Յակոբի այս՝ երկրորդ տիկնոջ՝ երկրորդ որդւոյ՝ երկունքէն,
Վըտանգելով՝ ի ծընընդեան՝ զըրկըվել էր՝ իւր կեանքէն։

* Արամ–Երէ։

† Անուշավան։

Յովսէփ նման էր չքնաղ մօրն, հօրն ևս եղև՝ սիրելի,
Նորա գլխակ՝ զովացնում էր՝ պյասք անձկոյն՝ սրպալի,
Տասն եղբարք՝ նախանձելով՝ վաճառեցին Յովսէփին,
Իսմայէլեան՝ տանէն սերեալ՝ գերեվաճառ՝ ամբոխին։

Ձեռքէ ձեռք շատ՝ անցանելով՝ Յովսէփ ընկաւ՝ վերջապէս,
Մայրաքաղաք՝ Եգիպտոսի՝ առ դահճապետն՝ Փենտափրէս,
Քրմանամեայ՝ արծաթագինն՝ հաճոյ եղև՝ իւր տիկնոջ,
Սա Արայի՝ պէս անգոսնեց՝ սէր տիրուհւոյն՝ յիւր յոգւոյ։

Զարախօսեց՝ կինն անխոհեմ, և անպարտին՝ բանտ դրին,
Յովսէփ եղև՝ բանտապետին՝ պիտոյ հանգոյն՝ ընկերին.
Զլոյս հանճարոյն՝ չըմարթացաւ՝ ծածկել բանտի՝ թանձր որմ,
Անմեղութիւնն՝ շարժեց բազմաց՝ ի սրտի գութ և ողորմ։

Մէկ օր արքայն՝ երազ տեսաւ, և չափազանց՝ վախեցաւ,
Հաւաքեց իւր՝ գիտնոց կաճառն, բայց լուծումն ինչ՝ չստացաւ,
Տախառապետն՝ յիշեց յանկարծ՝ որ ինքն ևս երբ՝ ի բանտ կայր,
Յովսէփ նորա՝ երազներուն՝ շատ աջողակ՝ լուծմունք տայր։

Արքայն լսեց՝ այս քաղցրիկ լուր, բերել տուեց՝ Յովսէփին.
Բանտէն ելած՝ երիտասարդն՝ հաճոյ եղև՝ արքային.
Արքայն պատմեց՝ անուրջք քընոյն՝ որ կրկնակի՝ էր տեսել,
Յովսէփ մեկնեց՝ իմաստութեամբ՝ ինչպէս իւր միտքն՝ էր հասել.

Ասաց. Եօթն ամք՝ առատութեան՝ կ'ըլնին ի քում՝ տէրութեան,
Այս եօթն ամաց՝ մէջ ամբարէ՝ ի մըթերս քո՝ շատ ցորեան,
Որ երբ առատ տարիքն անցնին, և գան սովու՝ չար օրեր,
Քո երկրի մէջ՝ լինին ցորեան, և երկրաբոյս՝ այլ բերքեր։

Արքայն ասաց՝ Յովսեփին թէ, քան զքեզ լաւ՝ մարդ չունիմ,
Քեզ եմ յանձնում՝ որ ցորենով՝ լցուցանես՝ մըթերքն իմ.
Այսպէս Յովսէփ՝ բանտէն ելած՝ Եգիպտոսի՝ տէր դարձաւ,
Որով Յակոբ՝ դէպ յԵգիպտոս՝ գաղթելոյ դէպք՝ ստացաւ։

Սահակի՝ վախճան հասաւ, Եսաւ՝ Յակոբ՝ թաղեցին,
Եսաւ վաղ էր՝ սրտէն հանել՝ խարդախութիւն՝ Յակոբին.
Յակոբ գընաց՝ վաթսուններինն՝ որդւովք թոռամբք՝ պանդխտել,
Մինչ Յովսէփ անդ՝ յԵգիպտոս հայր՝ երկուց որդւոց՝ էր դառել։



Այն տեղ շատ ամ՝ ապրեց Յակոբ. և ծերութեամբ՝ վախճանեց,
Նոյնպէս Յովսէփ՝ այն փառաց մէջ՝ կրկէս կենաց՝ կատարեց.
Շատ բազմացաւ՝ տուն Յակոբայ, Եբրայեցիք՝ կոչուեցան,
Եւ Իսրայէլ՝ անուն պատուոյ՝ Արարիչէն՝ ըստացան։

Շատ թագաւորք՝ եկան գնացին, հարիւր յիսուն՝ ամք անցին,
Եբրայեցիք՝ օր ըստ օրէ՝ գեղ պատուաց՝ տիրեցին.
Բայց այս միջոց՝ տեսնենք ինչե՞ր՝ այլ աշխարհաց՝ մէջ դիպան,
Ի՞նչ պատահեց՝ Ասորեստան, ի՞նչ տեղ հասաւ՝ Հայաստան։

Անուշաւան՝ տիրէր Հայոց, և Նինուաս էլ՝ էր Նինուէ,
Երբոր Յովսէփ՝ վաճառուեցաւ, հեռացաւ իւր՝ հօր տանէ.
Դեռ այն ինչ էր՝ Անուշաւան՝ Առիոսին՝ նչկահել,
Յորժամ Յակոբ՝ ստիպուեցաւ՝ Եգիպտոսի՝ կողմ չուել։

Կենդանի էր՝ Անուշաւան՝ մինչ Յակոբին՝ մահ հասաւ,
Առիոսի երրորդ ամն էր՝ որ ծերունին՝ թաղուեցաւ,
Նորա ոսկերք՝ էլ դրուեցան՝ Աբրահամու՝ գերեզման,
Ուր կային արդ՝ Սառայի մօտ, Սահակ, Ռեբէկ և Լիան։

Բայց երբ Յովսէփ՝ վախճանեցաւ՝ Պարէտ նստած՝ կայր ի գահ,
Համբիկ դշխոյն՝ Առադիոս՝ թագաւորին՝ տուել էր ահ,
Եւ Քսերքսէս՝ եօթն ամ էին՝ որ տիրել էր՝ Նինուէին,
Եգիպտացիք՝ մոռանալով՝ չէին յիշում՝ Յովսէփին։

Հովիւք էին՝ Եբրայեցիք, զզուում էին՝ նոցանէն.
Եգիպտացիք. զարթեցնելով՝ սրտերու հին՝ նախանձ, քէն,
Որ Յովսէփ իւր՝ գերդաստանին՝ Եգիպտոսի՝ գանձերով,
Տեղի տուեց՝ զօրանալոյ՝ թէ ճոխութեամբ՝ թէ ուժով։

Իսկ երբ Արբակ՝ բռնակալեց՝ Հայաստանի՝ աթոռը,
Եւ Պարետի՝ սերնդեան մէջ՝ շողացոյց իւր՝ սուսերը,
Քսերքսի գահ՝ Նինուէի մէջ՝ Արմամիթր՝ ըստացաւ,
Իմ հայր Զաւան՝ գերի գնալով՝ պանդխտութեան՝ մէջ ընկաւ։

Եգիպտացիք՝ ըսկըսեցին՝ Եբրայեցոց՝ չարչարել,
Եւ թագաւորք՝ հետզհետէ՝ նոր հալածանք՝ հընարել,
Աղիւս էին՝ շինել տալիս, քաղաք էին՝ հիմնարկում,
Եգիպտոսի՝ երկրի խորշերն՝ ամբարտակօք՝ լեցընում.

Տեսան որ այս՝ տանջանքներով՝ չեն յաջողում՝ ըսպառել,
Եբրայեցիք՝ որ ըստ օրէ՝ յառաջանում՝ են յաճել.
Հրամայեց՝ Թագաւորը՝ որ երեխանց՝ կոտորեն,
Եւ ծընուցչաց՝ ձեռօք մանկանց՝ կենաց թելերն՝ կըտրտեն։

Այլ ծընուցիչք՝ զանցխնելին՝ կատարել այս՝ հրաման.
Եբրայեցիք՝ այնուհետեւ՝ ևս առաւել՝ բազմացան,
Մէկ ծընուցիչ՝ որոյ անուն՝ էր յորջորջում՝ Սեպփորայ,
Հարստացաւ՝ ամուսնացաւ՝ եղաւ տիկին՝ Բէովրայ։

Այս Բէովր էր՝ ի Ռուբէնէ՝ յերեց որդւոյ՝ Յակոբի,
Ո՛չ հարազատ՝ ծընունդ նորա, այլ ապօրէն՝ հարճորդի.
Որ այրի էր՝ ի կընոջէն, ունի որբուկ՝ զԲաղաամ,
Ի Սեպփովրայ՝ երկրորդ որդին՝ Բաղակ մըտաւ՝ յայս երամ։

Յորժամ տեսան՝ Եգիպտացիք՝ Եբրայեցոց՝ շատնալը,
Նոր կարգ դըրին՝ որ նորածին՝ մանկունք ձըգվին՝ գետերը.
Այս միջոցին՝ Եբրայեցի մէկ կին զիւրեան՝ նորածին,
Երեք ամիս՝ պահելոյն յետ՝ ձըգեց ի ջուրս՝ Նեղոսին։

Այս երեխայն՝ սըտուէ հիւսած՝ տապանակի՝ մէջ դըրած,
Թագաւորի՝ դուստրն տեսաւ՝ որ ջըրի մէջ՝ կայր ընկած.
Առաւ տըղին՝ որդի առաւ, և զարգացոյց՝ իւր տանը,
Ջուրէն հանած՝ պըլով մանուկն՝ Մովսէս դըրեց՝ անունը։

Մովսէս ծընել՝ էր յերկրորդ ամ՝ իմ հօրս ի գահ՝ բազմելոյն,
Պատմում էին՝ թէ շատ աջող՝ պատանի է՝ և գիտուն.
Լաւ է՝ թէ նա՝ որպէս Բեսսայ՝ մեծ դշխոյի՝ որդեգիր,
Զըրունանայ, չըրնուաճէ՝ ազգ Եգիպտեան՝ և երկիր։

Այլ Արրակի՝ արժանահաս՝ մահէն հինգ վեց՝ ամ յառաջ,
Եւլադայի՝ մէջ երեցան՝ Թեսսաղացի՝ ազգըն քաջ.
Որոց վերայ՝ Թագաւորել՝ էր Պրոմեթեւս՝ հանճարեղ,
Եւ այն երկիր՝ ունի արդէն՝ երեք արքայս՝ քաջ, զօրեղ,

Իմ ծննդեան՝ չորրորդ տարին, և ծնողացս՝ հինգերորդ,
Երբ որ նոքա՝ ժառանգեցին՝ գահ՝ Արրակին՝ լեալ յաջորդ,
Արմամիթրէս՝ վախճանել էր, և Բեղեքսոն՝ էր նստել,
Ես նորա տանն՝ մէջ հիւր էի՝ որ այս համբաւք՝ եմ լսել։



Նինուէի մէջ՝ շատ չըկեցայ, և Բաբիլոն՝ գընացի,
Բեղեքսոսի՝ դստերաց մէջ՝ ինձ համար հարս՝ չընտրեցի,
Չըկայր մտքումս՝ ամուսնանալ, կ՚ուզէի բան՝ սովորել,
Բաբիլոնում՝ ասացին մարդ՝ կարէ զանձն՝ տալ կրթել։

Քաղդէական՝ գիտութեանց մէջ՝ ես մըտանել՝ չուզեցի,
Որովհետեւ ինձ առաջնորդ՝ Արամ-Նըրգն՝ վճռեցի.
Սակաւ անձինք՝ կան որ իրաւ՝ սըտի կոչուին՝ իմաստուն,
Մեծաւ մասամբ՝ խարդախութիւն՝ է նոցա սուտ՝ գիտութիւն։

Քեզ կիրթ մարդիկ՝ են հանդիպել, որ գիտութիւն՝ ես սովրել,
Սոյգն ասեմ՝ այդ գիտութեան՝ չեմ ի սրտէ՝ մեծարել.
Դու ուսեալ ես՝ և քան զիս ևս՝ շատ աւելի՝ բան գիտես,
Կը փափաքիմ՝ որ քո այդ ձիրք՝ յօգուտ ազգիս՝ գործ ածես։

Քո ազգ միթէ՝ իմ ևս ազգ չէ, տուեց Զամիր՝ պատասխան,
Յայմհետէ՝ իմ հայրենիք՝ քո երկիր չէ՞ Հայաստան,
Մենք քո մօր հետ՝ միշտ կ՚աշխատինք՝ որ մեր ազգ ևս՝ ծաղկեցնենք,
Ինչպէս որ են՝ Նինուէացիք, Հայերուն ևս՝ պերճացնենք։

Փառնակ ասաց. ո՛չ Նինուէի՝ բարք ու վարք են՝ ցանկալի,
Ո՛չ Բաբիլոն՝ մէկ բան տեսայ՝ ազգիս համար՝ բաղձալի.
Թէ ազգ լինի՝ ճոխ և հարուստ, շըռայլութիւն կ՚ըստանայ,
Միթէ միայն՝ շատ ուտելով՝ մարդ լուսաւոր՝ կը դառնայ։

Արմաւիր էլ՝ կայ առևտուր, բայց չըգիտենք՝ նորա գին,
Բըդուղներով՝ շատ մարդ ունի՝ թագած արծաթ՝ և ոսկին.
Շամիրամի՝ պէս մէկ կու գայ, և այն գանձերն՝ կը տանի,
Սոսկ հըրապոյր՝ է թշնամեաց՝ ձայն զօղունջմանց՝ արծաթի։

Դերկէթ դշխոյն՝ ճոխ էր անչափ, և շատ շինուածք՝ աւելցոյց,
Շամրիկ՝ Պարէտ՝ նոյն էին՝ ընտրել անձանց՝ յարացոյց,
Շատ ջանք դըրին, բայց Արամի՝ փափագանաց՝ չըհասան,
Իւր վաղնջուց՝ բըռութեան մէջ՝ ցարդ նիրհեալ կայ՝ Հայաստան։

Իմ մայր դոյզն ինչ՝ գանձուց տէր է, յօգուտ ազգի չէ ծախում,
Այլ ազգ՝ ընդէր՝ անկրթութեան՝ մէջ է անշարժ՝ ցարդ մընում.
Պարէտ՝ Շամրիկ՝ ինչ հիմնեցին, Արբակ ամենն՝ էլ քանդեց,
Վասն էր և ազգ՝ իւր վնասոյ՝ անձին դէմ ձայն՝ չըհանեց։

Ծընողքս որ օր՝ աճու նստան, տիւ և գիշեր՝ Ճգնեցան,
Որ դէպ 'ի լաւն՝ մէկ ոտնփոխ՝ գոնէ առնէ՝ Հայաստան.
Երկու անձն են՝ միայն շինողք, իսկ կործանողք՝ բիւրաւոր,
Քըսան տարի՝ կայ որ ազգէն՝ է Աստարբէ՝ վիրաւոր։

Ես՝ Փառնակ ջան՝ Աստարբէի՝ նըման չեմ Ճոխ՝ գանձերով,
Տուեց Ջամիր՝ իւր փեսային՝ պատասխանի՝ նազելով,
Եւ չըգիտեմ՝ թէ ի՞նչ է պէտք՝ ազգին որ փոքր՝ խըլըրտի,
Քո այդ խօսքերն՝ ուղիղն ասեմ՝ մեծ ցաւ դառան՝ իմ սըրտի։

Փառնակ կրկնեց. ի՞նչպէս չես Ճոխ, դեռ երէկ էր՝ գանձդ անբաւ։
Ծիծաղեցաւ Ջամիր դըշխոյն, ասաց. Փառնակ՝ դու իրաւ՝
Հաւատացի՞ր՝ թէ գանձ տեսար, այն ամենն էր՝ երևոյթ,
Միայն այն էր՝ Ճշմարիտ, որ՝ հարսնութիւնն իմ՝ է անքոյթ։

Կան այնպէս նիւթք՝ դեղօրէից՝ որ աչաց բան՝ ցոյց կու տան,
Կը կարծեցնեն՝ Ճշմարտութիւն՝ ներքոյ քօղոյ՝ սըտութեան,
Հընարք են այդ՝ կանանց յարմար, որբեալ մարդոց՝ են ցընորք,
Չէր երևոյթ՝ Կուգլիանոս, և կամ կանայք՝ պոչաւորք։

Չեր Գողթնացի՝ բանդեռնահարք՝ չըգիտեն բան՝ մըտածել,
Ռամկաց վայել՝ զըօսալիթ՝ վէպեր, երգեր՝ բառեղծել,
Արամ տիովք՝ քըսանամեայ՝ տիրեց Նըժոյգ՝ սև ձիոյն,
Մընացեալ բանք՝ կարելի չէ՞ թէ տեսել է՝ մէջ քընոյն։

Չե՞ս տեսնում որ՝ այն հին անցքերն՝ միայն Մեհնոն է պատմել.
Ո՞վ գիտէ թէ՝ նա ևս որո՞ւ՝ բերաններէն՝ է քաղել.
Կամ երբ Արամ՝ այն լըսում էր, մտքումն ինչե՞ր՝ էր ասում,
Եւ իւր ազգի՝ շըլակնութեան՝ զի՞արդ ցաւօք՝ ափսոսում։

Խօսքի թելն՝ Փառնակ բռնեց, ասաց. սոյդ՝ Ջամիր ջան,
Քո այդ հասակ՝ տըղայութեան՝ զքեզ առնէ՝ պատուական.
Իմ հայրս ևս՝ չէ հաւատում՝ Արամ-Երգի՝ շատ անցից,
Բայց միշտ երգել՝ է պատուիրում, ականջ դընում՝ բերկրալից։

Մայրս Հայեվար՝ չէ իմանում, բայց Արամ-Երգ՝ քաջ գիտէ,
Նախ առաջ նա՝ իմ աչք բացեց, յայտնի ասաց՝ թէ սուտ է,
Արամ քաջ էր՝ անօգնական, ժամանակն էր՝ անյաջող,
Ինքն պիտի՝ անձին համար՝ դառնայր ուղղոյ՝ յարդարող.



Դժուարութիւնք՝ բազում կային՝ կանգնած նորա՝ յանդիման.
Գտհանէր ոխ՝ Օխսակ ծերոյն՝ ազգի առիթք՝ գժտութեան,
Ցըցասացից՝ հարկաւոր էր՝ հանգոյց պատշաճ՝ քերթուածոց,
Կուգլիանոս՝ որ ի Կովկաս՝ եհաս նըպաստ՝ դիպուածոյ։

Տե՞ս թէ մեր խօսք՝ ո՞ր հեռացաւ, ասաց Ջամիր՝ ժպտալով,
Բաբելոնէն՝ ո՞ւր գընացիր, երկրէ յերկիր՝ ման գալով,
Չըգիտէի՝ թէ դու այնքան՝ հեռու տեղեր՝ ես գնացել.
Ես որ օր քեզ՝ սէր ձօնեցի՝ քո տանէն չես՝ հեռացել։

Ճշմարիտ է՝ քո ասացած, մէկ տարի է՝ որ տանն եմ,
Ասաց Փառնակ՝ զուարթագին, և քեզ հոգւով սիրում եմ.
Հայրս ու մայրս՝ գովում էին՝ Տիւրոս՝ Սիդոն՝ քաղաքներ,
Դէպ յայն կողմերն՝ ինձ առաջնորդ՝ հանդիսացան՝ դիպուածներ։

Բաբելոն ևս՝ սակաւ կեցայ, գոգցես թէ ինչ՝ չըտեսայ,
Իղձք և Քաղդեայք՝ զզուեցուցին՝ իւրեանց բարուք՝ անօպայ,
Ամօթալի՝ գործոց ծառայք, գործիք կանանց՝ անառակ,
Ի խօսս շըթանց՝ են ցափարանք, և վարք իւրեանց՝ խայտառակ.

Հասայ յաշխարհ Փիւնիկեցւոց, տեսի Տիւրոս և Սիդոն,
Բազմամարդով՝ քան Դամասկոս կամ Նինուէ և Բաբելոն.
Առևտուրն է՝ համատարած՝ շըռայլութիւնն՝ անպայման,
Եւ խանդարմունք՝ վարուց բարուց՝ անճառելի, անսահման։

Արք և կանայք՝ միօրինակ՝ անսանձ ձիոց՝ կը նմանին,
Աստարբէի՝ տօներ ունին, մէկ օր դիպայ՝ հանդիսին.
Չեմ կարող՝ քեզ՝ լեզուաւ պատմել՝ այն անպատկառ՝ տեսարան,
Ինչ իմ աչօք՝ տեսայ այն տեղ՝ ի նախատինս մարդկութեան։

Այս մեր Աստղիկ՝ Արուսեակն է, որոյ մենք ևս՝ տօն կ'անենք,
Մերկ աղջըկունք՝ այն տօնի մէջ՝ տեսե՞լ ենք կամ լըսե՞լ ենք.
Մեր Անահիտ՝ զարդարուած է, հազիւ երեսն՝ ենք տեսնում,
Նոցա Աստարտ՝ մերկ է պառկած, միայն զզուանք՝ պատճառում։

Երբ տեսայ այս՝ ի միտս ածի՝ Աստղկան իսկ՝ ասած բան,*
Ինչ գեղեցիկ՝ կին որ տեսնեն, կը մոցնեն՝ Աստղկան . . .
Ողորմելի ձեր Արուսեակ՝ պիտի դառնայ կուռք ազգին . . .
Ինչ կանացի թուլութիւնք կան՝ սոսկ իմ անուամբ տի ծածկին։

Ազովտոս էլ՝ գնացի տեսնել՝ մորս հայրենի՝ ապարան,
Մեծ շինուածք էր՝ բազմայարկեան՝ նախարարաց՝ բնակարան.
Իրաւ մեծ զոհ՝ է Աստարբէ՝ բերել՝ զոլով Արմաւիր,
Եւ թողել է՝ Ճոխ և առատ՝ և բազմամարդ՝ այն երկիր։

Զարմանում եմ՝ որ մէկ օր մայրս՝ չէ յիշում իւր՝ հայրենիք.
Այնպէս սէր է՝ տուել Հայոց, որ արդ ընաւ՝ չէ Փիւնիկ.
Սքանչելի՝ կերտուածք կան անդ, հասարակաց՝ սեպհական,
Ուր ամեն օր՝ հաւաքվում են՝ զննել նոր նոր՝ տեսարան։

Գընացի դէթ՝ Փիւնիկեցոյ՝ տեսի տաճարն՝ Դագոնի,
Երկու սիւնի՝ վերայ կանգնած՝ էր հրաշակերտ տունն Բագնի.
Չէր յայտնում՝ աչք նայելով՝ այնպէս շքեղ՝ մեհեան էր,
Կարծեմ այն տեղ՝ ես են բերում՝ անմեղ մանկանց զարշզոհեր։

Ցերուս անտի՝ շատ հեռի չէր, այն լեռան ես գընացի.
Տեսայ այն ծեր՝ Աբրահամի՝ սիրած կաղնին՝ Մամբրէի,
Չէ մընացել՝ լըսած անցեալն և ոչ դոյզն ինչ՝ յիշատակ.
Ահա այս է՝ անցաւորիս՝ անժխտելի՝ օրինակ։

Տեսայ այն սար՝ ուր Աբրահամ՝ պիտի զորդին զոհ բերէր,
Փոքր ինչ հեռի՝ խիտ ծառեր կան, տեղն անդ Սաբէկ կը կոչուէր.
Մէկ խոյ կախուած՝ եղջիւրներէն՝ մատուցվել է՝ պատարագ.
Երբ Արարչի ակնարկութեամբ՝ ազատուել է՝ Իսահակ։

*Հայկեբէ 1,644-1,650 ։



## Ե

### ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Անհընար է՝ ասաց Ջամիր՝ որ այն ծերոց՝ անցքերը.
Այն կողմերի՝ բնակիչքըն, չըպահէին՝ մտքերը.
Միթէ այդպէս՝ երևելի՝ գերդաստանի՝ յիշատակ,
Պիտի այդքան՝ փոյթ սուզանէր՝ մոռացութեան՝ ի յատակ։

Չէ, պատասխան՝ տուեց Փառնակ, այն կողմերը՝ դեռ կային,
Թարմ յիշատակք՝ Եբրայեցոց, և մանաւանդ՝ այր երկին.
Երբ գընացի՝ Քեբրոն քաղաք՝ ցոյց տուին ինձ՝ այն այրը,
Ուր առաջին՝ անգամ թաղուեց՝ տիկին Սառա՝ մեծ մայրը։

Այն այրի մէջ՝ տի թաղուէին՝ երեք զոյգք և՝ մի կճառ,
Քեզ բացատրեմ՝ թէ ո՞յք են այն՝ երեք ամոլք՝ և մի հատ.
Աբրահամ և Սառա տիկին, Իսահակ և Ռեբեկայ,
Յակոբ և իւր՝ տիկնանց մէկն, որոյ անուն էր Լիայ։

Իսկ Յակոբայ՝ սիրական կին՝ որ Ռաքէլ էր՝ անուանած,
Բեթլեհեմի՝ ճանապարհին՝ Եփրոդրոնում՝ կայ թաղուած,
Նորան երկունք՝ անդ բռնեցին, երբ ծընում էր՝ Բենիամին,
Չըհանդուրժեց՝ ուժգին ցաւոց, և անդ մեռաւ՝ սիրելին։

Սորա երէց՝ որդին Յովսէփ՝ որ յԵգիպտոս՝ մեծացաւ,
Ի վախճանին՝ այս տեղ բերուիլ՝ յազգատոհմէն՝ ուխտեցաւ.
Վեց դիականց՝ համար կ՚ասեն՝ թէ կ՚սպասեն՝ յետնորդաց,
Որ գան տիրեն՝ ժառանգաբար՝ ուխտեալ երկրին՝ Աւետեաց։

Այն հովիւք որ՝ պանդուխտ եկան՝ Խառանէն դէպ՝ Պաղեստին,
Այս տեղ ունին՝ քաղաք ստացած՝ իրաւամբք սրոյ՝ և մարտին,
Աւանդութեամբ՝ մընացել է՝ բերնէ բերան՝ վէպ այսպէս,
Զոր երգաբանք՝ գուցէ արդէն՝ յաւելցրել են՝ զարդք պէս պէս.

Յակոբ ունէր՝ երկոտասան՝ ուստերք և մի՝ դուստր Դինայ,
Այս աղջիկ էր՝ ծնեալ նորա՝ երէց կնոջմէն ի Լիայ.
Օրիորդ էր՝ սքանչելի՝ գեղեցկութեամբ՝ զարդարած,
Յոր Ռաքելի՝ ամեն չքնաղ՝ ձիրքն կային՝ հաւաքուած։

Յակոբ յորժամ՝ վերադարձաւ՝ Միջագետքէն՝ Պաղեստին,
Շուտ չըհասաւ՝ յայց իւր ծնողաց՝ ի հայրաշէն խորանին,
Այս այն տարին՝ էր երբ դարձաւ՝ Անուշավան՝ Հայաստան,
Դերկէթ հանիս՝ հանդիսացաւ՝ գթութեամբ մայր՝ հայրենեան։

Ճանապարհին՝ Յակոբ նստաւ՝ Սիկիմացոց՝ ի դաշտի,
Հարիւր ոչխար՝ տալով ի գին՝ վարձեց մարգեր՝ արօտի,
Այս տեղ փոքր ինչ՝ ցանկայր հանգչիլ՝ Ճանապարհի խոնջմանէն,
Որովհետև՝ արդէն ծեր էր՝ երբ գաղթեցաւ՝ Խառանէն։

Ասում են թէ՝ ամեն անգամ՝ Աբրահամ և Իսահակ,
Ինչ անէին, ուր երթային՝ կ'ունենային՝ նշանակ,
Նոքա չոքած՝ Արարչի դէմ՝ սրտանց աղօթք՝ կ'անէին,
Եւ Արարիչ՝ կ'ուղղէր նոցա՝ ամենայն գործն՝ ի բարին։

Ինքն Յակոբ ևս՝ այս էր տեսել՝ իւր ծնողէն՝ և պապէն,
Վասն այն երբ նախ՝ պանդխտութեամբ՝ դուրս եկաւ իւր՝ հօր տանէն,
Ձեռին մէկ ցուպ՝ մախաղ ի յուս՝ նախկին գիշերն՝ ուր ապաւ,
Զանձն յանձնեց՝ իւր Արարչին, և անդ դաշտում՝ քընեցաւ։

Տեսաւ յանուրջս՝ որ մէկ սանդուխտ՝ յերկրէ յերկինս՝ երկայնած,
Ընդ որ վերէն՝ հրեշտակք գային, վայր ՚ն մարդիկ՝ վերնագնաց.
Երբ զարթեցաւ՝ ասաց այս տուն՝ է Արարչի. երբ դառնամ,
Ուխտեմ՝ որ աստ՝ իմ Արարչի՝ անուան սեղան՝ ունենամ։

Բայց երբ դարձաւ՝ մեծ ճոխութեամբ՝ իւր այս մեծ ուխտ՝ մոռացաւ,
Թէպէտ այս նոր՝ ճանապարհին՝ Իսրայէլ ևս՝ կոչեցաւ.
Զըգնաց փութով՝ սանդուղք տեսած՝ տան Արարչի կողմերը
Բընակվեցաւ՝ ինքնագլուխ՝ Սիկիմայ մօտ՝ դաշտերը։

Վասն այն ընտրած՝ դաշտերի մէջ՝ հասան նըրան՝ չար օրեր,
Հետզհետէ՝ իւր Արարչէն՝ եկան պէս պէս՝ հարուածներ,
Զոր Աբրահամ՝ և Իսահակ՝ չէին երբէք մըտածել,
Եւ ինքն Յակոբ՝ ևս չէր կարող՝ ինչ յայնցանէ՝ յերազել։



Սիկիմացւոց՝ նահապետն էր՝ արին Եմմոր՝ Քռաեցի.
Ունէր որդի՝ Սիւքէմ անուն՝ երիտասարդ՝ փառացի.
Որ էր ժառանգ՝ հօր կալուածոց՝ տէր արգաւանդ՝ այն դաշտաց,
Ուր արդ Յակոբ՝ իւր ճոխութեամբ՝ դեռ այն ինչ էր՝ բանակած։

Դինայ չքնաղ՝ հետաքրքիր՝ գընաց Սիկիմ՝ քաղաքը,
Որ զննէ թէ՝ ինչպէս են այն՝ քաղաքացեաց՝ դստերքը,
Տեսաւ սըրան՝ Սիւքէմ որդի՝ նահապետին՝ Եմմորայ,
Զերիտասարդն՝ գերի առաւ՝ հըրաշատիպ գեղ նորա։

Հըրաւիրեց՝ օրիորդաց՝ հետ և չքնաղ՝ Դինային,
Եւ հասկացուց՝ որ իբրև հուր՝ կ'այր՝ զոգին՝ սէր նորին,
Ամեն հընար՝ ի գործ դըրեց՝ մինչ Դինային՝ հաճեցոյց,
Իբրև տիկին՝ հարս Սիկիմայ՝ զաղջիկն ընդ իւր՝ ննջեցոյց։

Մինչդեռ Դինայ՝ զուարճանայր՝ յառաջաստի՝ հարսնութեան,
Եմմոր խնդրեաց՝ ի Յակոբայ՝ զԴինայ որդւոյն՝ կընութեան,
Զըչարեցաւ՝ պարկեշտ ծերն այն՝ որ իւր դստրիկ՝ մի՛ օր,
Այն արատ էր՝ բերել անուան՝ թէ եղբարց իւր՝ և թէ հօր։

Երբ իմացաւ՝ թէ և Դինայ՝ Սիւքէմէն չէ անջատում,
Եւ իրերայ՝ անկեղծ սիրով՝ մտերմաբար՝ են սիրում,
Ասաց. թող որ՝ Սիկիմացիք՝ Եբրայեցոց՝ նըմանեն,
Եթէ կամին՝ առնուլ զԴինայ՝ հանգոյն նոցա՝ թլփատեն։

Այս օրէնք էր՝ ծերն Աբրահամ՝ ստացել տեսլեամբ՝ յԱրարչէն,
Երբ նորա տուն կամեցել էր՝ զանազանել՝ յամենէն,
Ասել էր. այդ՝ լինի նշան՝ որ միշտ հաշուիք՝ իմ բաժին,
Անթլփատից՝ հետ չունենաք՝ հաղորդութիւն՝ բընաւին։

Եմմոր, Սիւքէմ, Սիկիմացիք, և շրջակայ ազգ բոլոր,
Յանձին կալան՝ այս նոր պայման, թլփատեցան՝ ի մի օր.
Այլ երրորդ օրն՝ երբ աւելի՝ զայրացան այն՝ նոցին վէրք.
Մըտան Սիւքէմ՝ Ղևի, Շիմոն՝ այն ծերունւոյ՝ չար ուստերք։

Եմմորին էլ, Սիւքէմին էլ՝ խողխողեցին՝ սուրերով,
Սիկիմ քաղաք՝ ծայրէ ի ծայր՝ լըցին արեամբ, դիերով.
Տիրեցին այն՝ մեծ քաղաքին, և դարձուցին՝ Դինային,
Եւ շրջակայ՝ ազգ և երկիր՝ անձանց ոտից՝ կանգնեցին։

Այս առաջին՝ պատիժն էանց, աՀա երկրորդն՝ երեւցաւ,
Դինայ իւր Հօր՝ տանը այրի՝ բընակել ոչ՝ կամեցաւ.
Փախաւ ի դաշտ՝ թողեց ծընողք՝ եղբարք, ամեն՝ ճոխութիւն,
Սըգալ անդ մաՀ՝ իւր փեսայի՝ եւ իւր դժբաղդ՝ Հարսնութիւն:

Երրորդ Հարուածն էլ՝ չըյամեց՝ այնուՀետեւ՝ Հասանել,
Ողորմելի՝ Ռաքէլ տիկնոջ՝ եՀաս յերկուոն՝ վախճանել,
Այս կսկիծ չէր՝ նուազ ինչ քան՝ ցաւ Դինայի՝ կորստեան,
Յակոբ ունէր՝ այնուՀետեւ՝ մի Հաստ ցաւ իւր՝ ծերութեան:

Այս ցաւ որդին՝ էր սիրական՝ որոյ ծընողն՝ էր Ռաքէլ,
Տասն եղբարք՝ յօժարեցան՝ զՅովսէփ մանուկ՝ վաճառել.
Արտասուքէն՝ չէր դադարում՝ տառապակիր՝ ծերունին,
Որ տեղի եւ՝ քըսան մի ամ՝ սրտմըտութեան՝ անդրանկին.

Այս չորս Հարուածք՝ ՀետզՀետէ՝ ընկըճեց ն՝ ծերունւոյն,
Հինգերորդն էլ՝ պիտի կանխէր՝ երբ ժամանէր՝ ի Հօր տուն.
Այս էր վախճան՝ ԻսաՀակայ, զոր թաղեցին՝ զոյգ եղբարք,
Անջատուեցան՝ որ Հաստատուին՝ երկուց ազգաց՝ նախաՀարք:

Դեռ Յակոբ նոր՝ էր իւր Հօր տուն՝ խաղաղութեամբ՝ ժառանգել,
Որ ի նորոյ՝ Հասաւ նորան՝ վեցերորդ չար՝ Հարուածն էլ.
Ռուբէն որդին՝ ապաշընորՀ՝ պղծեց նորա՝ անկողին,
Եւ Հայր զառաւ՝ պարականոն՝ անՀարազատ՝ Բէօրին:

Մինչ գընայի՝ դէպ յԵգիպտոս՝ ճանապարՀին՝ տեսայ տուն,
Ուր բընակուած՝ էր այս Բէօվր՝ ճոխ, Հարուստ եւ մեծատուն.
Սեպփորայ էր՝ սորա տիկին, ձեռին ունէր՝ զ՚աղակ,
Իսկ Բաղաամ՝ նորա ուրջուն՝ էր տասնամեայ՝ պատանեակ:

Սեպփոր պատմեց՝ շատ Հին անցքեր՝ ինչ Յոսէփին՝ էր դիպել,
Երգարանաց՝ գեղեցիկ նիւթ՝ կարեն սորա՝ սատարել.
Դինայ գըտել՝ է այն դաշտում՝ ուղեւորաց կարաւան,
Ուղեկցելով երթեւեկաց՝ Հասել է դաշտ՝ Մեմփիսեան:

Անդ դաՀճապետն՝ Պենտափրէս է՝ առել զնա յիւր՝ կընութիւն,
Դինայ յերկրին՝ Եգիպտացւոց՝ ըստացել է՝ ա կնութիւն.
Դիպուած այնպէս՝ է անօր նել՝ որ յետ քանի՝ մի ամաց,
Եւ Յովսէփ եւ՝ ընկել է անդ՝ իբրեւ մի ի՝ շատ գերեաց:



Ճանաչել է՝ Յովսէփ իսկոյն՝ իւր սիրական՝ Դինային,
Այլ քոյր նորան՝ չէ ճանաչել, եւ սիրել է՝ ի սրտին.
Յովսէփ երկիւղ՝ ունենալով՝ չէ յայտնըվել՝ իւր քրոջ,
Քոյրն էլ յանդէտս՝ սատար դառել՝ մատնել եղբօր՝ դիպաՀոջ:

Յետ աւուրց ինչ՝ այս Պենտափրէս՝ որ յառաջ էր՝ դաՀճապետ,
Հեղիուպօլ՝ քաղաքի մէջ՝ Հաստատուել է՝ Քրմապետ,
Ըստացել է՝ Դինայի պէս՝ Ասենէթ դուստր՝ Հրաշագեղ,
Որ Եգիպտեան՝ ծաղկաց մէջ էր՝ միակ չքնաղ եւ շքեղ:

Յորժամ Նեղոսն՝ փառաւորեց՝ բանտէն Հանած՝ Յովսէփին,
Շատ շնորՀաց Հետ՝ այս եւս յաւել՝ որ զԱսենէթ տուեց կին,
Այնպէս զգօն՝ պատանեկին՝ ինչպէս Յովսէփն՝ էր արդէն,
Արքայն չէգիտ՝ արժան պարգեւ՝ քան զօրիորդ՝ Ասենէթէն:

Ո՞րքան զարմանք՝ կալաւ զամենն՝ երբ այս անցքերն՝ լսեցան,
Ամենեցուն՝ սիրտք եւ Հոգիք՝ զուարճութեամբ՝ լցուեցան.
Բայց այս եղեւ՝ այն ժամանակ՝ յորժամ եղբարք՝ Յովսեփայ,
Ճանաչեցան, եւ յԵգիպտոս՝ գաղթեցաւ տուն՝ Յակոբայ:

Բայց այն արտօսր՝ ինչ որ Յակոբ՝ իւր աչքերէն՝ ճնշել էր,
Նորա աչաց՝ լոյս տեսութեան՝ ցեցի նըման՝ մաշել էր.
Կորած որդին, կորած դուստրն, զաւակներով՝ զարդարուած,
Գրկեց սիրով, եւ յաջողեց՝ տեսնել ընդ ձեռն՝ իւր աչաց:

Ես մինչ Հասի՝ անդ յԵգիպտոս՝ տեսայ զորդի՝ դշխոյի,
Որոյ անուն՝ լըսել էի՝ դեռ ես ի մէջ՝ Նինուէի.
Հասակակից՝ էր ինձ Մովսէս, քաջ եւ Հզօր՝ պատանեակ,
Զգօն, ուշիմ եւ ՀանճարեՂ, այլ ծանրախօս՝ այլանդակ:

Սորա լեզուի՝ կակազութեան՝ Համար այսպէս՝ է լսուած.
Թէ երբ նորան՝ Բեստայ դշխոյն՝ գըտաւ անտէր՝ ջուրն ընկած,
Ուրախութեամբ՝ տարաւ իւր տուն, եւ ցոյց տուեց՝ իւր Հօրն էլ,
Հայրն իմացաւ՝ որ այն մանկանց՝ մին է, որ ջուրն են ձըգել:

Ուզեց առնուլ՝ բազկաց վերայ՝ եւ խաղացնել՝ սուտ թոռին,
Այլ այն թոռնիկ՝ իւր մանրիկ ճանկ՝ թաթի խուեց՝ միրուքին.
Նեղոս կարծեց՝ թէ նենգութեամբ՝ Եբրայեցի՝ այն մանուկ,
Փոքրիկ ճանկով՝ բուռն եՀար՝ եւ քաշքշեց՝ իւր մօրուք:

Դաշնի՛ն կանչեց։ Հաւաքվեցան՝ խորհրդականք՝ ամբոխ,
Միջնորդ ընկան՝ վասն կենաց՝ անհայր անմայր որդւոյն.
Ասեն՝ փորձենք և իմանանք, թէ ննդութեամբ՝ է արեւ,
Ցայնժամ կարես՝ արքայական պատուիրանքդ՝ կատարել։

Բերին երկու բոլոտեղօք՝ փայլուն ոսկի, հուր վառ վառ,
Տղայն զուարթ՝ ձըգեց թաթիկն, առաւ կայծակն՝ բոցավառ.
Եւ շուտ դըրեց՝ մէջ բերանոյ, որով թաթիկ և լեզուն,
Խանձոտեցան, և լեզուի մէջ՝ մնաց սաստիկ ծանրութիւն։

Հասարակեալ՝ առած է թէ՝ նըման սիրէ՝ զնըման,
Ծանօթացայ՝ Մովսէսի հետ, զարմանք բան էր՝ Զամիր Ջան,
Այսպէս տղայ՝ չէի տեսել, և կարծեմ էլ՝ չեմ տեսնիր,
Սորա նըման՝ ոչ Եգիպտոս, չունի գուցէս՝ մէկ երկիր։

Թագաւորի՝ ապարանից՝ մէջ շուրջ պատած՝ ճոխութեամբ,
Մէկ օր երեսն՝ չըտեսայ ես՝ պայծառացած՝ խնդութեամբ,
Այն գեղեցիկ՝ չքնաղ կորիճն՝ որ ժառանգորդ է՝ գահին,
Ամենայն ժամ արտասուում էր՝ ցաւակցութեամբ իւր ազգին։

Ո՛չ էր ծածուկ՝ Եբրայեցւոց՝ անտանելի՝ նեղութիւն,
Ինչ որ նոցա՝ պատճառում էր՝ Եգիպտական բռնութիւն.
Բայց իմ աչօք՝ աւել տեսայ, Մովսէս ինձ լաւ հասկացուց,
Ինչ գիտէի՝ լոկ ի լըրոյ. ամենն յայտնի երեւցուց։

Զարմանք չէ որ՝ երբ ազգի մէջ՝ այսպէս անձինք՝ յառաջ գան,
Դրդեն ազգին՝ և դուրս հանեն՝ ներքուստ հոգւոյ թմրութեան.
Լսել էինք՝ թէ մեր Արամ՝ եղել է այր՝ ազգասէր,
Երբ Մովսէսի՝ հետ պատահէր՝ արդեօք մտքում՝ ինչ կ՚ասէր։

Միթէ Զաւան՝ և Աստարբէ՝ փոքր են սիրում՝ մեր ազգին,
Մինչև այսօր՝ ինչ մարթացան՝ անյայտնել՝ աշխարհին.
Քարբէ լերին՝ վերայ իմ մայր՝ շինեց մեհեան՝ Անահտայ,
Միայն դառաւ՝ զբօսանաց՝ զուարճ կենաց՝ առարկայ։

Հայրս և մայրս՝ կամեցել են՝ ի միասին՝ աշխատել,
Այն տախտակի՝ խծբըծանքը՝ մեր համազգեաց՝ հաղորդել,
Ինչպէս Արամ և Համասփիւռ՝ հաւաքել են՝ պատանիք,
Որ այն գաղտնիք՝ բացայայտեն՝ լուսաւորեն՝ հայրենիք։



Քուրմերու պարք՝ որ ամենայն՝ մեհենաց տէր՝ կարգած կան,
Մանաւանդ որ՝ Արտիմէդի և Քարբեայ մէջ՝ ուռճանան,
Ծերոց սրտերն՝ են պղտորել՝ թէ Աստարբէ՝ կին փինիկ;
Ազգի հոգւոյ՝ մէջ տնկում է՝ փուշ մոլախոտ և գժնիկ։

Թէ ազգասէրք՝ և թէ ատողք՝ իւրեանց զաւակք՝ հեռացրին,
Ամայացաւ՝ նահապետաց՝ ճոխ և պայծառ՝ դարպաս հին.
Երբ Աստարբէ՝ խաժամուժէն՝ ուզեց մանկունք՝ ժողովել,
Փոքր միւս եմ՝ և Աստարբէ՝ պիտէր գահէն՝ վըտարվել։

Ինձ էլ նոքա՝ խոչ խութ դառան՝ որ այն սովրիլ՝ չըկարցայ.
Միայն պիտի՝ գաղտ սովրէի, դէպ ժամանակ չունեցայ,
Ասի զոնէ՝ ինձ ուսուցէք՝ ձեր գիտեցած՝ սեպագիր,
Այն ես ասեն՝ ոչ գոյ հընար, քրմաց յանձնել է երկիր։

Երբ աշխարհի՝ մէջ ման եկայ, և իմացայ՝ նոցա գին,
Արդէն հասել՝ էի յօրբունս՝ երիտասարդ՝ հասակին.
Վախեցայ թէ՝ հօրս նըման՝ զիս ևս կըռոց կը զոհեն.
Երբ մեծ և փոքր՝ ամեն մասամբք՝ այսպէս բանի՝ ներհակ են։

Զամիր ասաց. ես կը գտնեմ՝ ուսանելոյ՝ շատ հընար,
Ինձ չեն կարող՝ խոչ խութ յառնել՝ աներասան՝ քրմաց պար.
Ընդէր պիտի՝ նոքա գիտնան՝ թէ առանձին՝ սենեկում.
Հայաստանի՝ բամբիշ տիկին՝ ինչ գործով է՝ պարապում։

Փառնակ տուեց՝ պատասխանի, ես քան զքեզ՝ Զամիր Ջան,
Կը գըտանեմ՝ քրմաց տալոյ՝ բանից յարմար՝ պատասխան.
Նոքա յայտնի՝ ճիկ չեն հանում, որոգայթքն՝ լարած են,
Ազգի մըտաց՝ զոյգ բանալիք՝ ի մէջ նոցա՝ ձեռաց են։

Այնքան Արբակ՝ չէր յանցաւոր, որքան քրմաց՝ ջոլիրը.
Նոցա վըհմակն էր միշտ ունում՝ մահահրաւէր՝ երգերը.
Շամիրամին էլ՝ նոքա էին՝ դէմ Պարետի՝ գրգռում,
Արբակ նոցա՝ արտօնութիւնք՝ էր անկօսլար՝ խոստանում։

Եւ յիրաւի՝ որ օր Պարէտ՝ Շամիրմի հետ՝ մահացան,
Քրմաց ջոկոյ՝ յանդգնութիւնք՝ ամենայնիւր՝ յայտնեցան,
Դահճապետի՝ պաշտօն վարեց՝ քրմաց պարոյ՝ գլխաւոր,
Դահիճք, մատնիչք, ամբաստանողք՝ եղեն բազմաց՝ սպասաւոր։

Ի՜նչ այլ մընայ՝ որ չարարին՝ Արքակայ այս՝ մըրիկայք,
Ամենայն տեղ՝ անձայն վըկայք՝ են մեր անցեալք՝ և ներկայք.
Որքան խիզախ՝ ըսպառնալիք՝ կու տան ազգին և երկրին,
Եթէ մէկ անձն՝ համարձակի՝ պաշտպանել գիւր՝ Հայրենին։

Որքան Թշուառ՝ վիճակ հասաւ՝ Մահ պարետի՝ երգողաց,
Քանի՜ գըլուխք՝ ոսկերք հատան՝ Շամիրկի գործ՝ գովողաց,
Քառասուն չորս ամ՝ ի՜նչ քաշեցին՝ մեր խղճալի ազգասէրք.
Մինչ բըլթացեալ՝ ժանգոտեցան՝ դահճաց տապարք և վաղերք։

Ո՞յք էին այս չորեաց պատճառք, թէ ոչ քրմաց երախան,
Նոցա ձիգն է՝ կարկամ պահել՝ ի խաւարի գեհայաստան,
Ինչ հարիւր ամ՝ հիմնել էին՝ Անուշավան և Պարէտ,
Ամենայն ինչ՝ քուրմք արարին՝ և բընաջինջ և անհետ։

Ո՜ր խորշ ազատ՝ է ի քրմաց՝ լըռեսական զըպարտչաց,
Կամ ո՞ր սենեակ է ապահով՝ ի նոցին զուր բարուրաց.
Ի պալպաջուն՝ նահապետաց՝ կան աչք նոցին և ականջք,
Եւ յանկողինս՝ լըսեն նոցին՝ սպառնալիք՝ և պահանջք։

Այսքան աշխարհ՝ որ ման եկայ՝ տեսայ նոցա՝ քուրմերուն,
Մէկ ազգի մէջ՝ չէին այնքան վատ ինչպէս մեր՝ Հայերուն.
Այլոց ազգաց՝ քրմութեան մէջ՝ կայ մէկ շաղկապ՝ պաշտամանց,
Որ այն զօգև՝ մէկ շահարեր՝ որդիք կ՚ըլնին՝ հայրենեաց։

Մեր քուրմք միայն՝ են մեքենայք՝ խըռովութեանց՝ շըփոթից,
Որոց լեզուէն՝ ամեն տան մէջ՝ կան վառեալ բոցք՝ հըրեհից.
Ի՜նչ նենգութիւն՝ խաբէութիւն՝ որ պատահի՝ Հայաստան,
Մակարդ ամեն խարդախութեանց՝ է մեր քրմաց մեծ հօրան։

Ի՜նչ հընարիւք՝ ապաւալել՝ են Հայկ-Երգի նիւթերը,
Քանի՜ կերպիւ՝ փոփոխել են՝ Արամ-Երգի միտքերը.
Անուշավան, Մահ Պարետի՝ որքան տող են յապաւել,
Եւ Զաւանի՝ արկածից մէջ ինչ խանգարմունք են մուծել։

Եգիպտական՝ քրմաց տեսի, ի՜նչ յարգելի անձինք են,
Որքան խորին՝ տեղեկութիւնք՝ ունին հին հին՝ գարերէն.
Խորհրդական՝ նըշանագիծք՝ գոցցես գխոեն՝ ամենքն էլ,
Գատաստանի՝ մէջ կարող են՝ իմաստութիւն ցուցանել։



Անհամեմ է՝ միայն քրմաց՝ առանձնացարմ՝ սիգութիւն,
Որ խանգարեն՝ ժողովրդեան՝ գեղեցկակազմ՝ միութիւն.
Ապա թէ ոչ՝ արժանի են՝ մեծարանաց՝ և պատուոյ,
Եւ իրաւամբք՝ ըստանձնեալ են՝ հասարակաց ձիր սիրոյ։

Եգիպտոս շատ՝ գործ չունէի, զի Մոսէս էր՝ արգելում,
Իւրեան քաղցրիկ՝ խօսակցութեամբ՝ հոգիս, սիրտս էր՝ գըրաւում.
Նորա բանից՝ առարկայն էր՝ միայն ազգին նըպաստել,
Այն վիճակէն՝ Թշուառութեան՝ մէկ հընարիւք ազատել։

Մէկ քոյր ունէր՝ արդէն հասած, ութ տարով մեծ՝ Մոսէսէն,
Եւ մէկ եղբայր՝ որ հինգ ամօք՝ կըցեր էր իւր՝ քըրջմէն.
Անուն քըւերն՝ էր Մարիամ, իսկ եղբօրն՝ Ահարոն,
Երեքն էլ շատ՝ համեստ էին, ճարտար, աշխուն և զգօն։

Այս երեքի՝ խելք ու միտքն էլ՝ միայն ազգի բարին էր,
Բոլոր ազգի՝ վիշտքն և ցաւք՝ նոցա տան մէջ՝ յայտնի էր,
Թէպէտ ազատ՝ էին նոքա՝ ի բռնութեանց և հարկաց,
Սակայն կամաւ՝ հաղորդակից՝ էին ամեն մի կարեաց։

Առաւօտէն մինչ երեկոյ՝ չէին Թողնում՝ խեղճերին,
Օգնում էին՝ յըղի կանանց, և մանաւանդ՝ ծերերին.
Մոսէս աչքերն՝ լի արտասուօք՝ շըջագայում՝ մէջերը,
Յորդորում էր՝ որ Արարչին՝ դընեն իրանց յոյսերը։

Այս տեղ ճշգրիտ՝ իմացայ ես՝ մարդոյ կենաց՝ մեծ գաղտնիք.
Որ թէ օտար՝ ծիծ ուտէ մարդ, չի սիրէր իւր՝ հայրենիք.
Մոսէս կերել՝ էր իւր մօր ծիծ, արքայի տան լինելով,
Իւր ազգէն չէր՝ օտարացել՝ Մարիամու՝ հընարով։

Երբ ծընել է՝ Մոսէս մօրէն՝ երեք ամիս՝ պահել են,
Բայց մինչ ի վերջ՝ Թագուցանել՝ հընար նիւթել կարցած չեն.
Անճարացած՝ պըտուէն կազմել՝ մէկ լաւ ձիւթած՝ տապանակ,
Երեխին մէջն՝ պառկեցրել են, ձըգել գետոյն մի վըտակ։

Մայր թողել է՝ իւր ձագուկին, բայց Մարիամ չէ թողել.
Այն ութամեայ՝ զգաստ աղջիկ՝ մայրական գութ է ցուցել.
Եւ երբ դշխոյ՝ հանդիպելով՝ տապանակն առել է,
Մարիամ շուտ՝ դայեակ կամի՞ք՝ աղաղակաւ՝ վազել է։

Յորժամ դշխոյն՝ պատասխանել է թէ կամիմ՝ գնամ, բեր ։
Քոյր փութացել՝ զհետ իւր մօր՝ որ կ՚ըսպասէր՝ անհամբեր,
Այսպէս այն մայր՝ որ չըկարաց՝ զաւակն իւր տան՝ մէջ պահել,
Թագաւորի՝ ապարանքում՝ յաջողեց իւր կաթ ջամբել ։

Այս կաթին հետ՝ ծծեց տղայն՝ սէր հայրենեաց՝ սէր ազգին,
Իւր սպարտիք լաւ էր Ճանաչում սիրով իւր քեռ և ծնողին,
Պիտի յաւէժ մնայր նոցա՝ սիրոյն, գըթոյն՝ պարտական,
Թէ չըսիրէր՝ իւրեան ազգին, ի ժամ նոյին՝ անձկութեան ։

Ափսոս՝ Զամիր՝ որ չենք կարող՝ նահապետաց՝ մեր տըներ,
Այնպէս կազմել՝ ազգի համար՝ ինչպէս նոցա խըրճիթն էր,
Մեծ և փոքր՝ անդ կու գային՝ գըտանել մէկ ըսփոփանք,
Մարիամ էր՝ գերդաստանի՝ և կազդուրիչ և պարծանք ։

Եգիպտոսէն՝ դարձայ մեծ ծով, Սիկիլիա՝ գընացի.
Իմ հօր պանդուխտ՝ ձկնորսութեան տեղերն աչօք՝ զննեցի.
Յետոյ գնացի դէպ Յունաստան՝ ուր արդէն կայր մարդութիւն,
Որ ըստ օրէ՝ զհայրենութիւնն՝ բայց էր մերժում՝ կրթութիւն ։

Ինաքոսի՝ Լարիս քաղաքն, և գահ նորին՝ տէրութեան,
Արդէն ունէր՝ պայծառութիւն, և կ՚անուանուէր՝ Արգոսեան,
Հայրս և մայրս՝ որ այն կողմերն՝ եօթն ամ էին՝ մոլորուել,
Դժբաղդութեան՝ մէջ լինելով՝ կարողացած՝ չեն զննել ։

Զամիր նորա՝ խօսքն ընդմիջեց, ասաց. երեկ՝ ոչ դժբաղդ,
Այլ երջանիկ՝ էինք իսպառ, զոհ մեր կեանքէն՝ բարեբաղդ,
Արմենակայ՝ Սօսեաց անտառն՝ կայր մեր հանդէպ՝ տարածուած,
Միտք չըբերինք՝ տեսնել թէ ո՞ր՝ էր Մար Անոյշ՝ տարագրուած ։

Ես զննել եմ՝ այն վայրերն, տուեց Փառնակ՝ պատասխան.
Անուշավան՝ անդ փայտակերտ՝ տուն է շինել՝ պատուական,
Ուր Դերկեթի՝ հետ շատ անգամ՝ ժամանակ են՝ անցուցել.
Երբ ազգային՝ զբաղանքէն՝ ազատ ժամք են՝ ըստացել ։

Պարէտ, Շամիրիկ՝ ես շատ անգամ՝ ենյայց գնացել՝ այն Սօսեաց,
Ուր զարգացել՝ էր շառաւիղ՝ հիմնադրաց մեր հայրենեաց,
Սօսանուէրն՝ մէկ պարծանք էր՝ բամբիշ տիկնոջ՝ Շամիրիկի,
Մեր ազգային՝ ցըյասպքն են՝ ամենն յանձնել՝ հուշակի ։



Դու այս խնդիր՝ գըլորեցիր՝ դարձեալ նախկին՝ այն մըտօք,
Որով կանուխ՝ հարցմունք արիր՝ Հայոց երկրի՝ վըրայօք,
Իմ հայր և մայր՝ քանի անգամ՝ զիս տարեր են՝ այն Սօսիք,
Զըգլխեծս որ՝ սրտեւանդ է՝ կըրօնին մեր՝ հայրենիք ։

Արմենակայ՝ Սօսեաց միջին՝ ասում են թէ՝ քաջեր կան.
Այլ թէ ինչ են՝ այն Քաջք Սօսեաց, դեռ չըգիտէ՝ Հայաստան,
Փանդռանահարք՝ նոցա ծառման՝ զանազան կերպ՝ են տալիս,
Բայց և ոչ մէկն՝ խելքի մօքի՝ երբէք մօտիկ՝ են գալիս ։

## Զ

### ՍՕՍԵԱՑ ՔԱՋԵՐՆ

Քերդողք կ՚ասեն՝ թէ նախնին Հայկ՝ բացյիւր երից՝ որդւոցն,
Որ Արմենակ և Մանաւազ և Խոռ անուանք կը կրեն,
Լուսընթագէն՝ ունեցել է՝ երկոտասան՝ քաջ որդիք,
Քըսանեչորք՝ չքնաղ դստերք՝ պարկեշտ, գգաստ, գեղեցիկ ։

Նոյնպէս Աստղիկ՝ Ասքանազէն՝ ունեցել է՝ զաւակունք,
Քըսանեչորս՝ երետասարդք, երկոտասան աղջըկունք,
Որովհետև՝ չէր կամենում՝ Ասքանազ որ՝ իւր որդիք,
Նոր ազգ կազմեն՝ Հայաստանում՝ և պատուեն՝ հայրենիք ։

Վասն այն նոցա՝ զուգակցել են՝ ամուսնական կապերով,
Եւ նոցանէ՝ է ճոխացել՝ Ազատ Մասիս՝ քաջերով,
Իսկ մինչ Մասիս՝ տեղ չէ մնացել՝ նոցա համար՝ բաւական,
Արմենակայ՝ Սօսեաց մէջ էլ՝ արել ինքեանց՝ բնակարան ։

Լերինք Կորդուաց և Տորոսի, Ախուրեանի գետափունք,
Ուր կան Մովկան, Բարդ և Հերար՝ Թորգոմածին՝ քաջազունք,
Նըպատ, Սուկաւ, ծաղկեցըլեան՝ տարածուեցան՝ բազմութեամբ,
Եւ օր քան զօր՝ կ՚աւելանան՝ գիւցազնական զօրութեամբ ։

Սոքա առաջ՝ մահկանացու՝ են միշտ ծընած՝ յաշխարհի,
Անմահութեան՝ արժան եղեն՝ սիրով ազգի և երկրի.
Ոմանք արօր՝ հընարեցին՝ կորդացած հող՝ մըշակել,
Եւ անպտուղ՝ անապատըն՝ յառատաբեր փոխարկել։

Այլք աղօրիք՝ հնարեցին՝ ալիւր լեսուլ՝ ցորեանէն,
Երբ ցորեանն՝ յաջողեցին՝ առատ առնուլ ի հողէն.
Շատք տնկեցին՝ այգիք և որթք, ծաղկեցուցին՝ պարտէզներ,
Խոտաբուտ մարդ՝ տեսաւ գինի, և քաղցրահամ՝ պտուղներ։

Կէսք ոչխարաց՝ հօտք կազմեցին, զարդարեցին՝ դաշտերը,
Կեանք տարածուեց՝ ամայի ձորք, և զարթեցան՝ լեռները.
Թէ խաշնարածք, թէ անդէորդք, թէ հողագործ, թէ մըշակ,
Սկիզբ արին՝ մարդավայել՝ անուշ կենաց՝ ըղձաշակ։

Երկանաքարն՝ շրջում էին՝ առաջ մարդիկ՝ ձեռներով,
Հողմաղացներ՝ հնարեցին, որ քար շարժի՝ թեւերով,
Յետոյ գտան՝ ջրաղացներ, ջուրն ըսկըսաւ՝ ծառայել,
Ինչ որ էշք և ցուլք կ՚անէին՝ այն ջուր առաւ՝ կատարել։

Լերանց, վիմաց, ապառաժից՝ մէջ ճանապարհ՝ հորդեցին,
Ձորի վերայ՝ լաստք կազմեցին՝ յերկրէ յերկիր՝ գաղթեցին.
Գետոց վերայ՝ կամուրջ անշարժ՝ գօտւոյ նման՝ ամրացեալ,
Յորձանք, հոսանք՝ ուղխից երկիւղ՝ ընդ ոտիւք անկան՝ մոռացեալ։

Ցրուեալ մարդիկ՝ ժողովեցին, գեղ և գաւառ՝ շինեցին,
Պարսպապատ՝ որմք պատուաստեալ՝ քաղաք և բերդ՝ կերտեցին,
Երկրէ յերկիր՝ հաղորդութեան՝ ճանապարհներ՝ հորդելով,
Լերանց քարինք՝ անհետ արին՝ հեղեղատներ՝ լցնելով։

Անջրդի վայրք՝ ոռոգեցին՝ խըրամք, առուք՝ յաճախեալ,
Ընդ սար, ընդ ձոր՝ ջուր անցուցին՝ վարերն և ցանքն՝ ոռոգեալ.
Հողի տակէն՝ ջրբեր գըտան, ընթացք տուին՝ նորանոր,
Աղբիւրք՝ ջրմուղք՝ յօրինեցին, պեղեալ ջրշիղջ և ջրհոր։

Արհեստք, գործիք՝ ստեղծեցին, և առուտուր՝ բացուեցաւ,
Գեղէ ի գեղ՝ յարակցութեանց՝ տարաղ, միջոց՝ դիւրացաւ,
Հայաստանի՝ մէջէն գընաց՝ վայրենամիտ սովորութիւն,
Համափիւռի՝ ձեռամբ փռուեց՝ մարդավայել՝ կրթութիւն։



Այս ամենայն՝ բարիք արին՝ մեր բազմերախտ՝ Քաջք ազատ,
Որ Հայկայ և՝ Արքանայի՝ սերունդք էին՝ հարազատ.
Օրհաս նոցա՝ սիրալի գործք՝ այս հատուցմամբ՝ վարձատրեց,
Որ պարգևեց՝ անմահութիւն, աշխարհի տէր՝ կարգադրեց.

Սակայն այս եւ՝ պայման դրեց, որ այն Ազատ՝ տոհմ Քաջաց,
Մահկանացուաց՝ մէջէն չընարեն՝ կենաց շաւղին՝ զուգընթաց.
Իսկ թէ դիպուածն՝ անկարեկիր՝ երբէք նոցա՝ լըծորդէ,
Միշտ ապաշաւ՝ զհետ նոցա քաղցր՝ կենաց պլաքի՝ յաջորդէ։

Քաջաց սերունդ՝ ծննդեամբ ազատ՝ պետի տիրէ՝ բացարձակ,
Չունի նորա՝ կամաց կանոնի՝ ոք և ուրեք՝ խոչընդակ.
Ապա թէ ոչ՝ անմահութեան՝ այն կ՚ըլնի յոյժ՝ անվայել,
Թէ կամենայ՝ մահկանացուն՝ անմահ էից՝ նշկահել։

Գեղեցկութիւն և քաջութիւն կը միանան՝ յանձն մի.
Երիտասարդք՝ և օրիորդք՝ կ՚փայլին յայս ձիր՝ պանծալի.
Լաւ է թէ լեր՝ ընկեր կենաց՝ ճանչնայ զգին՝ ուղեկցին,
Անմահ՝ պսակ՝ կ՚լնի փառաց՝ և զարդ աւուրց՝ կենակցին։

Այլ թէ կորից՝ անսանձ ալեաց՝ մին սահեսցի ի յորձան,
Եւ միւսն՝ անզօր գըտանիցի՝ կարկառել ձեռն՝ օգնութեան.
Գարանակալք՝ լարեն նոցա՝ վարմ որոգայթ վըտանգաց,
Երկոցուն ևս կը վաղվաղեն՝ զըրաւք աւուրց և կենաց։

Քաջք անմահ են՝ մինչ կըպահեն՝ իւրեանց անմահ ընութիւն.
Մահկանացուաց՝ հետ զուգակցեալ՝ կորուստ կ՚երթայ էութիւն.
Մահ չիդիմէր՝ նոցա ՚նդառաջ՝ թէ կողմնակի չըլարուին,
Մահն իսկ ծառայ՝ է ընութեան, պատրաստ թակարդ՝ դարանին։

Ազգք արծուեաց՝ բարձրաթըռիչք՝ ապահով են՝ յօդս ի վեր,
Եւ ի նետից՝ դիպաղեղանց՝ չեն խոցոտուիր՝ կարեվէր,
Այն ժամանակ՝ կարեն լինել՝ հաւորսորդաց՝ նըշաւակ,
Երբ կամենան՝ զերկրաւ բերել՝ սըկար հաւոց՝ նըմանակ։

Եւ առիւծ իսկ՝ վեհ միապետ՝ ճիրանաւէն՝ գազանաց,
Աներկեան՝ թագաւորէ՝ ի մէջ անշէն՝ լայն դաշտաց,
Այլ մինչ հըպի ի շէնս մարդկան, մահ՝ և նըմին՝ դարանի,
Եւ որ անմահն՝ էր յամայիս՝ աստ ի ծուղակ՝ պարանի։

Ծընունդ Քաջաց՝ էր ծեր Վասամ՝ մահկանացու՝ էր իւր կին,
Կորուսեալ էր զանմահութիւն, վասն այն անկաւ՝ ի մարտին.
Սերունդ Քաջաց՝ էր Համասփիւռ, մահկանացու՝ նորին մայր,
Թէ ոչ Հայկայ՝ նպաստէր նմա՝ ցօրս այս ի քուն՝ կը մընայր։

Արայ սերեալ էր ի քաջաց, մահկանացու էր Նուարդ,
Առանց իւրոյ՝ գիտակցութեան՝ որսաց զԱրայ՝ ի թակարդ.
Անհընար էր՝ այլազգ լինել, անշուշտ տի գայր՝ ապաշաւ,
Եթէ անմահ՝ մահկանացուի՝ ամուսնութեամբ՝ գիտեցաւ։

Քաջազնեայ էր՝ Անուշաւան՝ ժառանգ նորա՝ էր Շամիրի.
Պարէտ յազգէ՝ մահկանացուաց՝ եղև բաղդին՝ խաղալիկ.
Երկուքին ևս՝ առաքինիք՝ վախճան առին՝ չարաբաստ,
Մինչ նոցա վարք՝ խոստանում էր՝ զըրաւ աւուրց՝ բարեբաստ։

Զամիր կալաւ՝ խօսքի թելէն, ասաց. իրաւ՝ Փառնակ ջան.
Ի՞նչպէս կարէր՝ ժառանգ լինել՝ Պարետին՝ հայր՝ քո Զաւան,
Եթէ Պարէտ՝ իւրով մահուամբ՝ ի հանգստեան՝ վախճանէր,
Ո՞չ ապաքէն՝ զանդրանիկն՝ յաջորդ իւր հօր՝ ազգ կը գնէր։

Փառնակ տուեց, պատասխանի. երանի՜ չէր՝ թէ այդպէս,
Ժառանգութիւնն՝ առ հօրեղբայրն՝ իմ անցանէր՝ ուղղապէս.
Նա իւր նախնեաց՝ ամենայն ինչ՝ կ՚յարգանէր՝ շարունակ,
Նոցա գործք արդ՝ առ մեզ հասած՝ կը լինէին բովանդակ։

Գիտե՞ս՝ Գերկէթ, Անուշաւան՝ ինչե՞ր էին՝ կատարել.
Եւ ի՞նչ գործոց՝ հեռանկատ՝ իմաստութեամբ՝ հիմք դրել.
Արդեօք ոչ թէ՝ միայն կարող՝ այն հրաշակերտք՝ յատակել.
Այլ և քրմաց՝ նենգ պաւանօք՝ յերգոց նըշանքն՝ ջնջոտել։

Նորա իղձն էր՝ որ Պարետի՝ և Շամիրի՝ յիշատակ,
Հայոց մտքէն, երգոց մէջէն՝ բնաջինջ կորչէր՝ բովանդակ.
Քուրմք պատրաստ են՝ այդ պաշտօնին՝ բռնակալաց՝ ծառայել,
Նոցա փափագն՝ է համայլեաց՝ միշտ ի լուսոյ՝ զուրկ պահել։

Զամիր կրկնեց՝ երևի թէ՝ Պարէտ, Շամիրի՝ քուրմերուն,
Չէին աւել՝ պատիւ տալիս. չէին ցուցնում՝ հըլութիւն.
Ո՞չ ապաքէն՝ քուրմք պաշտօնեայ՝ են կրօնական՝ աւանդից,
Ի՞նչ վընաս կայ՝ եթէ նոքա՝ լինին այլոց՝ պատուակից։



Ծիծաղեցաւ՝ քաջիկ Փառնակ, ասաց. լըսէ՝ Զամիր ջան,
Թէ մեր աշխարհ՝ ի՞նչպէս մըտան՝ այդ պաշտամունք քրմական.
Մեր նախնին Հայկ՝ երկրպագու՝ էր Արարչին՝ Նոյի պէս,
Նորա ժառանգք՝ նոյն Արարչին՝ էին պաշտում՝ Հայկի պէս։

Բէլայ դիակն՝ Հայկ թաղել էր՝ տեղին կոչեալ՝ Գերեզման.
Բաբելացիք՝ արել էին՝ այն իւրեանց վայր՝ պաշտաման.
Հայք նոցանէ՝ սովորեցան՝ պաշտել գլխին՝ նախ Բէլայ,
Յետոյ սկսան՝ օր ըստ օրէ՝ պաշտօնք Հայկայ, Արամայ։

Շամիրամայ՝ արշաւանքին՝ Հայք արդէն շատ ունէին,
Իւրեանց նախնեաց՝ դիւցազնէից՝ մէջէն ընտրած՝ պաշտելին.
Հայկ՝ Երևակ, և Լուսնթագ՝ տիկին Հայկայ՝ Նախամայր,
Արամ՝ Հրատ, և Փայլածու՝ և Համասփիւռ՝ դիցամայր։

Աստղիկ հարսն՝ Աքանազայ՝ ոչ սակ ի Հայս էր պաշտած,
Այլ և Նինուէ՝ և Բաբելոն՝ Աստուածուհի՝ հռչակուած.
Շամիրամ ինքն՝ Աստուածացոյց՝ իւր սիրական՝ Արային,
Եւ Հայք իսկոյն՝ Նուարդ տիկնոջ՝ անուն Լուսին՝ կոչեցին։

Այլ տակաւին՝ չունէին Հայք՝ ոչ տաճար ինչ, ոչ մեհեան,
Զի կապուտակ՝ երկնակամարն՝ էր վայր խնկոց՝ և խորան.
Ուր թեւ ծառոց՝ ստուերի տակ՝ և սիզաւէտ մարգերում,
Էին իւրեանց զոհք, դաշնամունք՝ և պատարագք՝ ձօն բերում։

Բայց երբ դարձան՝ Անուշաւան և Գերկէթ իւր՝ ձախ տիկին,
Նախ յԱրմաւիր՝ եդան հիմունք՝ մեծակառոյց մեհենին,
Ուր ամենայն՝ դից և Քաջաց՝ դըրօշեցան վէմ անդրիք,
Անուամբ Անդրէ՝ քարահատի՝ այսպէս կոչեալ կոփեալ դիք։

Հարկ էր մեհեանն՝ յանձնել ումեք։ Գերկէթ գիտէր՝ քուրմերուն,
Թէ ի՞նչ գայլեր՝ էին հօտի՝ մէջ գիշատիչ՝ գառներուն.
Գիտէր նոցա՝ ամեն արարք, ի՞նչ կ՚անէին՝ ի Նինուէ,
Եւ Շամիրամ՝ ի՞նչպէս իւր սանձ՝ կը պահպանէր՝ նոցանէ։

Ասաց չըլնի՝ թէ Հայոց մէջ՝ առանձնացում՝ քրմութիւն,
Իւրեան մէջէն՝ թող միշտ ընտրէ՝ համայն ազգի՝ կրօնութիւն.
Ով արժան է՝ նա հաստատուի՝ այս ազգային՝ պաշտօնին,
Եւ առաջին՝ ընտրութեան ձայն՝ տուաւ ազգի՝ ծերերին։

Պարէտ Շամրին էլ նոյն չաւղօք՝ յամս բազումս ընթացան,
Բայց հնաւոր դաւառաց մէջ՝ այս կարգերէն՝ շեղեցան,
Քրմաց որդիք՝ ժառանգաբար՝ ստացան հարց պաշտօնը,
Ցեղաց կռուք՝ և բռնութիւնք՝ կատարեցին՝ վախճանը։

Անդ սկսաւ՝ ատրուանին քրմութենէն՝ տեղի տալ,
Յանդգնութիւն դէպ ժամ՝ գրաւ՝ մեհենաց մէջ զօրանալ,
Եւ աշալուրջ՝ Շամրին անգամ՝ այլ գործերով՝ զբաղած,
Չիմացաւ որ՝ քուրմք Արքային՝ ձեռին գործիք՝ են դառած։

Ով՛ շատ վնաս՝ եկաւ նորա՝ մեր խղճալի հայրենեաց.
Մանաւանդ մեր՝ գերդաստանին, և համօրէն՝ տան Սիւնեաց.
Հայաստանում՝ Պապն իմ Պարէտ՝ էր զոհ չարեաց՝ քրմութեան,
Զոհ ի Փիւնիկ՝ հայրն իմ Զաւան՝ յոգնիս լեալ էր՝ ապաստան։

Զամիր ասաց. քո պատմութեամբ՝ Անուշաւան՝ է արել,
Որ այս ցաւերն՝ չարախառնամ՝ մեր հայրենիքն՝ է բերել.
Մինչ մանաւանդ՝ գիտէր Գերիկէթ՝ այդ խմբակի յոռութիւն,
Պարէտ պիտի՝ զգուշութեամբ՝ մերժէր ամէն խեռութիւն։

Դու անծրկրայ՝ պիտի մնաս՝ որ ես երբէք՝ Փառնակ ջան,
Քրմաց դասուն՝ չեմ թոյլատրէր՝ բանալ դըրօշ՝ լրբութեան.
Ամեն փոքրիկ՝ վրէժխնդրակաց՝ դէմ պատուհաս՝ կը կարգեմ,
Որ անցնիր՝ քրմի չարիք՝ ասոս կանոնեն՝ իրեան դէմ։

Թողնունք քրմաց, դու՝ Փառնակ ջան՝ Խնդրաքն՝ բան պատմէ.
Լսրիս քաղաք՝ ասիր՝ ունէր, որ գուցէ իւր՝ հիմնածն է.
Ինչ ընձրայ՝ բաներ կային, որ հայր ու մայրդ՝ թողել են,
Որովհետև՝ անձամբք թշուառ՝ վիճակի մէջ եղել են։

Պատասխանի տուեց Փառնակ, ես քեզ պատմեմ՝ Զամիր ջան,
Որ շատ աշխարհք՝ չըկան այնպէս՝ ինչպէս որ է Ելլադան.
Հողն արդաւանդ, և բարեբեր՝ մարդկի առողջ և խոշոր,
Կը կարծես թէ՝ շրջում հսկայք՝ և դիւցազունք՝ են բոլոր։

Յաղթահասակ՝ գեղապատշաճ՝ մարդածաղիկ՝ կերպարան,
Աչք երկնագոյն՝ կենդանածին՝ բաջադանդուր՝ հերք դեղձան,
Գագաթք փթթեալ՝ գիտակք չքնաղ՝ յաղթութեան՝ դաշտին,
Ճարտուկ, ուժեղ՝ են մրկանուք, որպէս էր մեր Արային։



Երանի չէր՝ թէ մեր ազգն էլ՝ այդ յատկութիւնն՝ ունենայր,
Ինչ որ լսէր՝ այնպէս արագ՝ և անվրէպ՝ հասկանայր.
Ստացած լինէր՝ միտք քաջառու, ջերմոտուութիւն՝ հաստատուն,
Որ իւր մտքէն՝ կարող լինէր՝ տալ աշխարհի՝ օգնութիւն։

Միջահասեց՝ Զամիր նորա՝ թել պատմութեան՝ անելով,
Այնպէս գովեստ՝ տուիր նոցա՝ քո վառվռուն՝ խօսքերով,
Որ կարծես թէ՝ դժբաղդ ոմն եմ՝ որ Ելլադա՝ չեմ ծընել,
Կամ Հայկ, Արամ՝ են քո նախնիք, Խնարօսներ՝ չեն եղել։

Անդ հրաշալեղ օրիորդք են՝ կ'ըլնէին քեզ՝ հանդիպած,
Զարմանալի՝ է որ մինչն՝ քեզ հարսնութիւն՝ չես ընտրած.
Այնքան աշխարհ՝ շրջագայել, դժուար ինչ էր՝ գտանել.
Մէկ ձուխ Փիւնիկ՝ Հայ տիկնութեան՝ արժանացնել և բերել։

Տուեց Փառնակ՝ պատասխանի, ես հայրս չէի որոնէր,
Զուել էի՝ աշխարհ տեսնել, աղջիկ գտնել՝ դժուար չէր.
Միթէ ամենք Գերիկէթ կ'ըլնին, կամ Հայասէր՝ Ասաարքէ,
Ես գիտէի՝ որ դու իմ ազգ՝ պիտի սիրես՝ ի սրտէ։

Կրկնեց Զամիր. ես քո ազգն՝ իմ համազգի՝ եմ ճանչել,
Եւ զիս ոչ նու՝ տան Արամայ, այլ Հայկայ թոռն եմ հաշուել.
Ինչ հնարիւք՝ մայր Լուսընթագ՝ Հայկայ անուն՝ բարձրացոյց։
Ինձ այն պատմէ՝ որ ունենամ՝ նորա շաւիղք՝ ուղեցոյց։

Իւ Համասփիւռ՝ անզոյգ տիկին՝ Հայաստանի մայր դառաւ,
Ինձ հասկացուր՝ որ յոյն պայքար՝ և ես լինիմ՝ դիմացրաւ.
Մեր մէջ էլ կան՝ լաւ յարացոյցք՝ թէ մարթանանք՝ հետևիլ,
Գործով և ոչ՝ բանիւ միայն՝ հայրենասէր՝ երևիլ։

Կարմիր ձիով՝ ձեր պատանեակ՝ պիտի ձիէն չիջանէր,
Երբ Շամիրամ՝ խնդիր նորա՝ տան տիկնութեան՝ կ'ելանէր
Ասորեստան՝ հանգոյն Մարայ՝ Բաբելացւոյ՝ կը դառնայր,
Ի Պայ-Արևս՝ Բարշամ՝ Նիւքար՝ չորրորդ զոհ ես կ'աւելնայր։

Փառնակ տուեց՝ պատասխանի, ինչպէս խօսինք՝ Զամիր ջան,
Որ դու ինձմէն՝ հարցանում ես՝ համանգամայն՝ երկու բան.
Մի՝ Ելլադան՝ ես առարկում, միւս Լուսընթագ, Համասփիւռ,
Որն ես կամում՝ որ քեզ պատմեմ, որն կը լսես՝ մրտադիւր։

— Հայոց տիկնայ՝ գործքն՝ պատմէ, Աստարբէլի՝ հարս 'տիկնեմ.
Օտար երկրաց՝ անցք ամենայն՝ նորանէն էլ՝ կ'ուսանիմ.
Երբ տախտակաց՝ խնդրանքի՝ գաղտնեաց կարնամ հասանել,
Նելլապան էլ՝ փիւնիկէն էլ՝ կ'երթամ մըտօք՝ տեսանել:

Փառնակ ասաց. Սօսեաց մէջէն՝ գլուխս թէ մենք՝ մըր ելանք,
Գիտես՝ որքան՝ մեր հարանեաց՝ առաջաստէն՝ հեռացանք.
Ճանապարհին՝ ինչեր տեսանք, ամեն դաշտերն՝ են վարած,
Ամենայն տեղ՝ յորեան, գարին, և վուշ ի հունձս՝ են հասած:

Որքան այգիք՝ տեսանք յուռթի, ծառք պտղալից ուռճացեալ,
Լերինք և ձորք՝ հօտիւք խաշանց և անդէովք ճոխացեալ.
Այս ամենայն՝ Լուսնթագի՝ Համասփիւռի՝ գործերն են,
Ինչ մենք այսօր վայելում ենք, բոլոր նորա՝ արգիւնքն են:

Երբ Հայկ դարձաւ՝ յայս իւր աշխարհ՝ ուր Ասքանազ՝ էր տիրում,
Տեսաւ որ սուղ՝ թափառական՝ ազգք են այս տեղ՝ դեգերում.
Միջագետքէն էր նա դարձել՝ Բաբելոն էր՝ զարգացել,
Իւր վիճակին՝ չըհանդուրժեց՝ մէկ այլ կերպ տալ՝ չըխորհել:

Ասքանազ եւ՝ շատ հաւանեցաւ՝ որ Հայկ երկրին՝ չըհաւնեց,
Վասն այն նորան՝ երկիր կալուած՝ տալ և մըրժել՝ յօժարեց,
Բայց Ասքանազ՝ չըկամեցաւ, ասաց. ես զօրք՝ կը պահեմ.
Դու ծաղկեցուր՝ քո այդ վիճակն՝ որպէս տանտէր՝ և խոհեմ:

Այլ Լուսնթագ՝ միայն գիտէր՝ որդւոց կըրից՝ սանձ դընել,
Մինում ասաց՝ հացն առելցուր, նա ընկրաւ՝ հող վարել.
Միւսին ասաց՝ մրգ եմ ուզում, պարտէզք, այգիք՝ բազմացան,
Կաթն ու մածուն՝ չըպակսեցան, պտուղք, արմըտիք՝ ճոխացան,

Դարերն անցան, Հայաստանի՝ կերպարանն՝ փոխուեցաւ,
Նըսեմ մըթին՝ անապատն՝ զուարթութիւն՝ զգեցաւ.
Գիւղականի՝ սեղանումը՝ պանիր, կարագ՝ սերի հետ,
Սեխ, ձմերուկ, խնձոր և նուռ՝ իւր քաղցրութեան՝ ճաշակ ետ:

Լուսնթագի՝ շուքը կալան՝ իւր տան տիկին՝ հարսունքն էլ,
Իւրաքանչիւր՝ տիկնանց կալուածք՝ ըսկըսեցին՝ զարդարուել.
Երբ Համասփիւռ՝ բազմեց ի գահ, էլ կարօտ չէր՝ Հայաստան,
Ամեն տեսակ՝ բերքերն ունէր՝ ինչ հարկաւոր՝ էր ինքեան:



Այլ Համասփիւռ՝ չըշատացաւ՝ միայն ուտել՝ խմելով,
Զգաց որ ինքն՝ իւր հայրենեաց՝ լոյս կարէ տալ՝ օգնելով,
Աւագանւոյ՝ զաւակներին՝ համախմբեց՝ իւր դարպաս.
Փոխեց նոցա՝ բիրտ բարք ու վարք՝ տալով բնաւից՝ նոր տարազ:

Բացեց մեծ մեծ՝ գործարաններ, զէնք և զըրահք՝ հանդերձել,
Ճարտարարհեստ՝ մարդիկ դըրաւ՝ արհեստագէտք՝ բազմացնել.
Դեռ նոր Արամ՝ դէմ Բարշամայ՝ էր խիզախել՝ յարշաւան,
Մինչ յԱրմաւիր՝ Մըշակ դարբին՝ զօլի եհար՝ գիր կըռան:

Մէկ զինուորի՝ սպառազէն՝ ի պատերազմ՝ հանելու,
Որքան կերպ կերպ՝ զէնք ու հալաւ՝ լինին պէտք՝ հագնելու.
Ամենայն ինչ՝ ունէր ինքեան՝ ուրոյն ուրոյն՝ գործարան,
Ամեն մասանց՝ արհեստաւորք՝ էին անշուշտ՝ պիտեան:

Զօրաց պաշար՝ էր հարկաւոր, և պաշարոց՝ բեռնակիր,
Զօրավարաց՝ առջև դրօշք, և առանձին՝ զինակիր,
Նետքն կապարճ՝ կ'ունենան միշտ, կապարճք պիտի՝ լի լինին,
Որ զինուորի՝ ձեռին աղեղն՝ ընկերանայ՝ վահանին:

Զինուորին տէգ՝ է հարկաւոր: Զամիր խօսքն՝ ընդմիջեց.
Ասաց. Փառնակ՝ քո միտաց թէ՝ կարծեմ փառք ինչ՝ լոյս փայլեց,
Մինթէ Հայոց՝ զօրք Արամայ՝ այդպէս էին՝ հանդերձեալ,
Այլ քո խօսած՝ կազմութիւն չէ՝ և սրդ անդամ՝ տարածեալ:

Բանակի մէջ՝ բիւրաւոր զօրք՝ քանի՞ ունին՝ զօրավար.
Հազիւ նոքա՝ կ'ըլնին այդպէս՝ սպառազէն՝ կազմ և վառ.
Սոսկական զօրք՝ երանի թէ՝ ունենան մէկ՝ բիր ձեռին.
Մինթէ չէ՞ յայտ՝ թէ ինչ զինուք՝ է միշտ վառված՝ սարեցին:

Դու ինձ այն ես՝ կրկին պատմում՝ ինչ Արամ-Երգ՝ է պատմել,
Թէ՞ ասացինք՝ որ այն երգերն՝ փանդեռնահարք՝ են կազմել.
Կը հաւատամ՝ որ ինքն Արամ՝ ունեցել է՝ զըրահներ,
Հայաստանում՝ կարելի էր՝ գտնել գոմշի՝ կաշիներ:

Ճշմարիտ է՝ քո ասածն էլ, առեց Փառնակ՝ պատասխան,
Որ այդ զինուց՝ գործածութիւն՝ ուշ է մըտել՝ Հայաստան,
Բայց մոռացա՞ր՝ որ նախ Ներրոդ՝ յառից ցցերի՝ էր վառեալ,
Մինչ Հայկ միայն՝ մերթ աւիծու՝ ունէր զմըկամիք՝ իւր արկեալ:

Թէ հարկաւոր՝ էր օրինակ, այն օրինակն՝ արդէն կայր,
Օրինակի՝ հանդոյն շինել՝ աշխատութեան՝ լոկ մնայր.
Համասփիւռի՝ հայրն Վասամ՝ յԱսքանազէ՝ էր սերեալ,
Հայաստանի՝ զօրք, զօրութիւնք, նոցա էին՝ յանձն եղեալ:

Չեմ ասում թէ՝ մինչ Նիւքարոյ՝ դէմ արշաւեց՝ դէպ ի Մարս,
Ունէր զունդս՝ սպառազէն, սակայն ունէր՝ զօրավարս.
Համասփիւռ եդ՝ ի միտս իւր, որ ամեն մի՝ զինաւոր,
Լինի հանդոյն՝ զօրավարաց՝ վառեալ զինուք՝ ահաւոր:

Նիւքար–Մարի՝ դէմ Արամայ՝ բաղդըն կանգնեց՝ յաղթանակ.
Ասքանազեան՝ ծընունդ Վասամ՝ մատուցաւ զոհ՝ զուարակ.
Ամենայն ինչ՝ թերի էին, թէ զէնք, թէ մարդք, թէ զինուորք,
Նիւքար՝ Անյշ՝ Հայոց աչքին՝ էին հսկայք՝ հրէշաւորք:

Այնպէս էին՝ զօրք Արամայ՝ Բաբիլոնի՝ յանդիման.
Ինքն Նինոս՝ ունէր յայնժամ՝ բանակ որպէս Հայաստան.
Ծանեաւ Բարշամ՝ որ Արամայ՝ դէմ չէ կարող՝ ի մարտի.
Ի վէգ մտնիլ՝ ոչ քաջութեամբ, ոչ կազմուածով՝ բանակի.

Խաբէութեան՝ և դաւանաց՝ հարկիւ եղև՝ ապաստան,
Որոգայթից՝ մէջ ձերբակալ՝ արաւ զՍիսակ՝ Վասամեան.
Մեքենայից՝ դէմ մեքենայք՝ պատրաստուեցան՝ մեր կողմն,
Խղճուկ Մարին՝ իւր կանացի՝ հնարից ի գործ՝ էարկ զէն:

Կարմիր ձիով՝ պատանեկին՝ ինքնդ՝ Զամիր՝ յիշեցիր.
Այլ նա ոչ էր՝ Ճախարակուել՝ ընդէր միտքդ՝ չբերիր,
Համասփիւռի՝ սանու դուստր էր, այն զարպասում՝ կրթուած,
Ուր համախումբ՝ ամեն Հայոց՝ բարիք կային՝ գումարուած:

Համասփիւռն՝ մեր երկինքն էր, որ կան Արև և Լուսին,
Նա էր արժան՝ մայր կոչուելոյ՝ Արայի և՝ իւր հարսին.
Նորա է լոյս՝ արփիափայլ, նորին անձրև՝ պտղաբեր,
Նորա քաղցրիկ՝ մայրութիւնն է՝ շնորհում մեզ յոյզ՝ շահաբեր:

Նուարդի պէս՝ խիզախ սիրով՝ չառաւ փեսայ՝ մրցանակ,
Անուշայ պէս՝ առիւծու դէմ՝ կանգնեց իւր հեզ՝ յաղթանակ,
Վատ որդիտուր՝ ստացաւ նա, որպէս և իւր ամուսին,
Թէպէտ և ազգ (այլ յետ մահուան) պաշտօն կարգեց՝ երկուսին:



Զամիր՝ սրտի՝ հին վէրք և խոցք՝ նորոգեցին՝ այս մեր խօսք,
Մեր ազգի մէջ՝ յաջողակ են՝ սակ ազգաւերք, մեծախօսք.
Իսկ որք ազգի՝ և հայրենեաց՝ ի սէր ի զոհ՝ կը մատչին,
Նոցա համար՝ դեռ չունի ազգ՝ վայրիկ պատրաստ՝ յիւր սրտին:

Ինչպէս շատով՝ մոռացւեցան՝ Համասփիւռի՝ երախտիք,
Որքան սուտ ընդունեցին՝ վիշտք Արամայ՝ իւր մարդիկ.
Զիարդ վաղվաղ՝ Պարէտ Շամիրի՝ արտաքս ընկան՝ ի սրտից,
Արբակ նոցա՝ դիակն արաւ՝ սանդուղք ներքոյ՝ իւր ոտից:

Ինչ բռնացաւ՝ Աստարբէ մայրս՝ դէմ իւր անհուն՝ Ճոխութեան,
Որ նաւերով՝ և բեռներով՝ բերեց լըցեց՝ Հայաստան,
Զրմարթացան՝ արատ գտնել՝ ի մէջ բարուց՝ և վարուց,
Տախտակները՝ նիւթ արարին՝ զրպարտութեանց՝ և ծաղուց:

Եւ այս ամեն՝ մեք են անողք: Վոհմակք՝ յանդուգն՝ քրմութեան:
Ծըմակացեալք՝ մրոտք, հոգւով, ի խաւարի՝ խակութեան.
Կոյրք՝ առաջնորդք՝ շլացելոց, և զաչացուոց՝ և կուրաց,
Որք համանման՝ զազիր տզրկից՝ սնանին արեամբ՝ աւարաց,

## Է.

### ՏԵՍԱՐԱՆ ԽԱՐԴԱՒԱՆԱՑ

—Չէ՝ Փառնակ ջան, ես չեմ կարող՝ ասել թէ մերքն՝ այդպէս չեն,
Երևի թէ՝ ամենայն տեղ՝ ջոլիրք քրմաց՝ մեր գիրքն են.
Պէտք չէր նոցա՝ յանձնել պաշտօն՝ կրօնական կազմութեան,
Ըստ իմ կարծեաց՝ նոքա յարմար՝ են երևում՝ դահճութեան:

Ասքանազի՝ գործոց մէջ չէն՝ գող մոգպետի՝ դաւերը,
Երամ–Երգի՝ մէջ չէն գոված՝ Բաբիլացոց՝ իշխերը.
Մեր քըրմերն էլ՝ նոյնն են այսօր: Չուզեն որ ազգ՝ աչք բանայ,
Եւ նոցա գործք՝ խարդաւանաց՝ աչօք տեսնէ, հասկանայ:

Ստած է թէ՝ միականին կարէ կարին տալ նպաստ,
Տես թէ զիարդ՝ ազգ Հայկածին՝ յարդ եղել է՝ չարաբաստ,
Որ առաջնորդ՝ է ընտրել ոչ՝ միականի, այլ՝ խել կոյր.
Յայտ է թէ այդ՝ անել խորշէն՝ դարձի հընար ինչ ոչ գոյր։

Կրկնեց Փառնակ՝ ի պատասխան, հընար միայն՝ այս կ'ըլնի.
Որ ընտրութիւնն՝ ըստ հին ծիսից՝ յազատ ցեղից՝ չըլլանի.
Ազգայնին՝ իր սարկին՝ չըպարգևէ՝ քրմութիւն,
Խեղկատակին՝ Հայկատակին՝ չընծրվին մուտք՝ Քաջաց տուն։

Մեր Երկրի մէջ՝ բազում ուրեք՝ բարդյակեանն է ծիլել,
Տանուտէր իր՝ գերդաստանի՝ մէջ խաչալիկ է դառել.
Ծառայք նամիչոք՝ թեւախոսում՝ են տան տիկնոջ՝ դաշերին;
Այնուհետև՝ դատարկապորտք՝ չեն բռներ դրունք՝ մեհենին։

Վա՛յ այն ազգին՝ որոյ մէջ դեռ՝ չէ ծագել լոյս՝ կրթութեան,
Մեր ազգի պէս՝ պիտի յերկար՝ խորվի ի տիղմ՝ բռնութեան.
Մեր քուրմք չունին՝ Եգիպտացոց՝ քրմաց ոչ վարք՝ և ոչ բարք.
Սոքա որիկայք՝ ընդաւորաց, նոքա ազգի՝ Հարք, եղբարք։

Ինձ թուեց թէ՝ և Ահարոն՝ երէց եղբայր՝ Մովսէսի.
Ժամանակաւ՝ իր ազգի մէջ՝ կ'ըլնի քրմաց՝ ի դասի.
Արժանի է՝ այդ պաշտօնին, չըյօժարիմ՝ ուրանալ,
Ընդ հակառակն՝ ցանկամ այնպէս՝ քուրմ լիմ տան ես՝ ունենալ։

Որքան պէտք է՝ ասաց Ջամիր՝ լաւ քուրմ ունիլ՝ ի մեր տան,
Այնքան աւել՝ հարկաւոր են՝ ազգի անթիւ բազմութեան,
Դու՝ Փառնակ ջան, թէ ինձ օգնես՝ ես քուրմերուն՝ կը սանձեմ,
Առաք ցերեանն՝ կը պահպանեմ, որոմներն՝ կը հնձեմ։

Երբ յաջողակ՝ դառնանք մեր տուն, և բռնընք՝ մեր պաշտօն,
Ահա մօտ է և Վարդավառ, մենք ես կ'երթանք՝ Քարբեայ տօն.
Ես կ'իմանամ՝ բազում գաղտնիք՝ իմաց կ'անեմ՝ մեծահեաց,
Ի տիկնանց մեծ՝ գունդ կըկազմեմ՝ և կը կանգնեմ՝ դէմ քրմաց։

Հաւատս եմ՝ որ Աստարրէ՝ նաև Զաւան՝ ինձ կ'օգնեն,
Զգուշութեամբ՝ առաջ կ'երթամ՝ որ տիկնայք զիս՝ չըմատնեն.
Եթէ մէկ կին՝ շաղէս թիւրի, դարպասէն կը՝ հեռացնեմ,
Կին եմ, կանանց՝ թուլութիւնք, երակք՝ անմիջապ որսալ կ'աշխեմ։



Այս խօսելով՝ հասան մէկ սար՝ Նախջուանայ կողմերը.
Ասաց Ջամիր. ահա այս տեղ՝ է՝ Փառնակ՝ իմ՝ եղբայրը,
Զգուշութեամբ՝ պիտի մտնենք, որ դու տեսնես՝ անբաղդին,
Թէ ինչ ցաւոյ՝ մէջ ընկղմած՝ է խորասոյզ՝ վշտալին։

Երբ որ հասան՝ սարի գլխուն՝ մէկ ամրոցի՝ գլխեցան,
Հանդէպ դըրան՝ գլխով առին, յերիվարաց՝ վայր իջան.
Ցուշիկ մըտան՝ մէջ ամրոցին, մեծ մեծ տըներ՝ շատ կային,
Անցան գնացին՝ ուղիղ ճանփով, մինչև հասան՝ դարպասին։

Առաջ Ջամիր՝ մտաւ դռնէն, յետոյ Փառնակ՝ ետևէն.
Մեծ դահլիճ կայր՝ ընդարձակագոյն, և պատշգամբ՝ դահլիճէն.
Պատշգամբի՝ մերձ պատուհանք, կրկին սենեակք՝ մէջէ մէջ,
Պատուհանէն՝ երևում էր՝ թէ ինչեր կան նոյս մէջ։

Մէկ սենեկում՝ մէկ հաստ երինջ՝ կապած կանգնած՝ անկիւնում,
Թէպէտ առջևն՝ կայր խոտ դըրած, բայց նա խոտէն՝ չէր ուտում,
Փառնակ ընկաւ՝ մտածման մէջ, ինչ պատճառաւ՝ է բերած,
Այս երինջը՝ ներքս այս սենեակ, և ընդէր է՝ աստ կապած։

Միթէ այս տեղ՝ կով են պաշտում, Եգիպտացւոց՝ ազգի պէս.
Հայաստանի՝ մարդն անհուն է. սակայն կրօնք՝ չեն պէս պէս.
Հնդիկք չըկան՝ այս կողմերը, որ ասեմ թէ՝ նոյն է,
Մանաւանդ որ՝ այս սենեակ է՝ դարպասի մէջ, մեհեան չէ։

Միւս սենեակըն՝ որ նայեցաւ՝ տեսաւ պառկած՝ ի գետին,
Մէկ գեղեցիկ՝ չքնաղ աղջիկ՝ ընկղմեալ ի՝ քուն խորին.
Ջամիր ասաց, ահա Փառնակ՝ սա է եղբօրս կէս հոգոյն.
Սորա պիտի՝ կեանք դարձընես, և գեղ դընես՝ մեր յաւուն։

Փառնակ իսկոյն միտքը բերեց՝ որ Համասփիւռ՝ բամբիշն էր,
Այսպէս մէկ ցաւ՝ անբուժելի՝ կախարդութեամբ՝ էր առայել.
Նորա թաղիչն՝ յայտնի եղև՝ Արամ դըրաւ՝ և եղծ,
Ասաց. Ջամիր՝ նոյն խօթութիւն՝ է որ կըրէ՝ այս խեղճը։

Ա՜խ Փառնակ ջան, կրկնեց Զամիր. այդ երկուսի ցաւ մէկ չէ,
Համասփիւռի նիրհն ուրիշ էր, սորա քունն ևս ուրիշ է.
Նա այն տեղն էր անշնչանում, ուր Արամին տեսնում էր,
Բայց երբ Արամ հեռանում էր, նա մեզ նմանկենում էր։*

Սորա քունն զարմանալի, տխուր և գիշեր՝ քնած է,
Ոչ ուտում է, ոչ խմում է, գետնի վերայ փռված է,
Համասփիւռը ուտում, խմում, զարթնում էր ու ման գալի.
Սա հաց և ջուր չէ իմանում, և տեղից չէ շարժ գալի։

Կամէր Փառնակ տալ պատասխան. այլ յանկարծ դուռ բացվեցաւ,
Եւ այն սենեակ ուր երինջ կայր՝ մէկ պատանի ներս մտաւ,
Զամիր ասաց. տես Փառնակ ջան, ահա այս է իմ եղբայր,
Որի համար չէր կամում տալ քեզ հարսնութիւն զիս իմ հայր։

Գեղեցիկ էր այն պատանին և Զամիրին էր նման,
Բարձրահասակ յարմարաշէր և պայծառ իւր կերպարան.
Բայց տրտմութեան մութ վարագոյր ծածկել խեղճի պատկերը,
Հիւանդի պէս էր ման գալիս, հազիւ փոխում ոտները։

Ձեռին ունէր մէկ հատ մորակ, երինջի մօտ կանգնեցաւ.
Ասաց. քուրիկ, ինձ խնայէ, երեք տարին խօ անցաւ,
Տուր ինձ այժմիկ իմ Շուշանին, դուն էլ ինձմէն կ՚ազատուիս,
Հերիք ինչ որ զիս տանջեցիր, դու ևս ինձ հետ կըտանջուիս։

Երինջն չէր պատասխանում, այլ երեսին էր նայում,
Մէկ անողոք յամառութիւն դիմաց մէջն էր երևում,
Աչքի մէջէն սէր էր կաթում, այլ կերպարանք զայրացած,
Շնչառութիւնն էր դառնալին, և հայեացքն մոլեգնած։

Զամիրոնը կրկնեց իւր խօսք, լըսե՛մ ես ինչ եմ ասում,
Ողորմութեան նըման քեզմէն իմ Շուշանին եմ ուզում.
Նա մեղք չունի որ ես նորան իմ անկեղծ սէրն եմ տուել,
Հաւատա ինձ թէ նա մեռնի, էլ չեմ կարող քեզ սիրել։

* Համբաւն այսպէս էր տարածուել, և Արամ–Նէրի այսպէս էին հասկացել։



Լաւ է որ դու նորան ինձ տաս, ուրիշ փեսայ քեզ ընտրես,
Վըրաստանում ում որ սէր տաս, յայտնէ կամքդ կու տամ քեզ։
Ինձ նըման շատ երիտասարդք, պատանիք կան Մծխիթայ,
Որուն ընտրես, որուն սիրես, նորան կ՚անեմ քեզ փեսայ։

Ինձ հետ վասն էր չես արդ խօսում, չես տալիս ինձ պատասխան,
Այսքան տանջանք քեզ եմ տալիս, դիմանում ես շան նըման.
Լաւ չէ որ դու զիս բաց թողնես, քեզ ամուսին այլ ընտրեն,
Ես էլ կեանքէս չըզրկուիմ, դու էլ քո կեանքն վայելես։

Երինջն ասաց. միթէ իմ կեանք կեանք կու լինի առանց քո.
Թէ որ Շուշան քընէն զարթի, ես կը հասնիմ քո սիրոյ.
Այժմիկ թէպէտ վատաբաղդ եմ այս սենեկի մէջ կապած,
Եւ կերակուրս լոկ այս խոտն է, տակըս չըկայ ինչ փռած։

Ցայգ ու ցերեկ տանջանաց մէջ ոչ գոյ հանգիստ իմ անձին,
Ոչ քո եկած ժամանակը, և ոչ մենակ առանձին.
Քանի անգամ օրը գալիս, ես և միշտ զիս ծեծում ես,
Ցիս մէկ մըտիկ տալ չես ուզում, Հայ աղջկան սիրում ես։

Բայց թէ այսպէս էլ որ լինի, ես բաղեբաղդ եմ կարծում,
Զիս որ օրը քանի անգամ քո երեսն եմ տեսնում.
Հաւատա ինձ Զամիրոն ջան, ինձ այդ մորակ մեծ ցաւ չէ,
Ցաւալի ինձ միայն այն է, որ քո սիրտ զիս սիրում չէ։

Ոչ թէ օրը երեք անգամ, այլ թէ կամիս տասն անգամ,
Արի ծեծէ որքան կամիս, ես ուրախ կու ցնծամ,
Բայց մի ասեր թէ չեմ սիրում, այդ մորակէդ աւել է.
Ձեռքըդ վեր կալ այն Շուշանէն, քեզ կին լինիլ կարող չէ։

Երբ գալիս ես ի ծեծել զիս ես քո մորակ չեմ տեսնում,
Միայն երեսդ է երևում, և իմ կարօտն եմ առնում,
Մորակն ինչ է որ վախենամ, սրով թըրով կտրատէ,
Միշտ ասածս այն կու լինի թէ Զամիրոն զիս սիրէ։

Այ անզգամ ասաց Զամիրոն, մարդ կու սիրէ ակամայ,
Քեզ ինչ սիրեմ երբ տանջում ես անձամբ զանձնդ անխնայ.
Սէր ի սրտէ պիտի լինի, ես քեզ հոգւով եմ ատում,
Բոլոր կենացս թունաւորիչ և խանգարիչ ճանաչում։

Կրկնեց երկինքն, Զամիրոն ջան, Հայն գրեց այսքան՝ սիրել էր.
Կամ ի սէր քո՝ այսքան տանջանք՝ և անձկութիւնք՝ կրել էր.
Ես ինչպէ՞ս եմ՝ սուր քան գէայն, Շուշանն ինչո՞վ է աւել,
Որ դու նորան՝ սէր ես տուել, և ինձ հոգւով ես ատել:

Ես չեմ ատել՝ ասաց Զամրոն, թէ գՇուշան՝ դու ինձ տաս,
Զիս ամէն օր՝ տեսանելոյ՝ հնարներ շատ՝ կ՚ունենաս.
Իմ կին միայն՝ չես լինիր դու, այլ ամուսնոյ՝ կին կ՚ըլնիս,
Միշտ կարօղ ես՝ զիս տեսանել՝ քաղաքի մէջ՝ ման գալիս:

Շնորհակալ եմ՝ Զամիրոն, ասաց երկինքն դառնացին,
Որ դու ինձ այդ՝ ես խոստանում, որ ես քեզ տամ՝ Շուշանին,
Այնուհետև՝ մէկ մէկ վրդէս՝ պիտի կախած՝ Քուռն ընկնեմ,
Որ Շուշանին՝ քո ծոցումը՝ իմ բաց աչօք՝ տեսանեմ:

Մանուկ էի՝ դեռ հասակաւ՝ որ քեզ իմ սէր՝ ձօնեցի,
Այն սէր ինձ հետ՝ զարգացել էր՝ երբ որ եղէ՝ պատանի,
Շատ դժուար է՝ Զամիրոն ջան, որ այն սէր ես՝ ուրանամ,
Քան Շուշանին՝ քեզ մօտ տեսնեմ, լաւ որ աչօք կուրանամ:

Դեռ ես կայ յոյս՝ սրտիս յանկեան՝ որ ես մէկ օր՝ կը հասնիմ,
Փափագանացս՝ քո սիրտ ինձ հետ՝ հաշտուելով՝ քո՛ կ՚ըլնիմ,
Ապա եթէ՝ իմ յոյս խաբուի, յայնժամ հետէ՝ իմանաս,
Որ էլ պիտի՝ յոյս Շուշանի՝ կենդանութեան՝ չունենաս:

Ա՛յ անողորմ՝ անգութ դաշան, աղաղակեց՝ Զամիրոն,
Այդ ծրրան խոր՝ է սրտիդ մէջ՝ արմատացել՝ չարութիւն,
Ասաց, և փոյթ՝ խեղճ երկինքին՝ սկսեց լաւ՝ խոշտանգել,
Այն մորակաւ՝ որ ձեռին էր՝ կողին կուշտին՝ հարկանել:

Ա. Թէ դու ինձ չես՝ կամում լսել, ես քեզ ինչո՞ւ կ՚ողորմիմ:
Բ. Կարծեցիր թէ՝ այս հարուածոց՝ համար պիտի կողկողիմ:
Ա. Դու կենաց ես՝ արժանի չես, դ.քեզ մորթելն ես՝ դեռ քիչ է.
Բ. Քո ձեռամբ ինձ՝ մորթելն անգամ՝ պարգև է և՝ պատիժ չէ.

Ա. Զրկաց ինչ քեզ՝ ազատութիւն, և ոչ հանգիստ՝ քո կենաց.
Բ. Իմ հանգիստն՝ դու ես՝ Զամիրոն, և տխրութիւն՝ քո գիմաց:
Ա. Բայց ես երբոր՝ քեզ տեսնում եմ, արիւնս է չփոթվում.
Բ. Ես որ երեսդ՝ մէկ տեսնումեմ, ամենացաւքս եմ՝ մոռանում:



Ա. Դու իմ կենաց՝ փորձութիւնն ես, մահու նման՝ տաելի.
Բ. Դու իմ կենաց՝ քաղցրութիւնն ես՝ հոգւոյս նման՝ սիրելի:
Ա. Քո հոգին ես՝ չար է քեզ պէս, մէջը լի է՝ չարութիւն,
Բ. Քո հոգին է՝ հոգւոյս պահող, և իմ կենաց՝ բերկրութիւն:

Ա. Այսքան խրխում եմ՝ այ դաշան, չարութիւնքդ՝ թող ձեռքէդ:
Բ. Համբերութեամբ՝ պիտի հանեմ՝ ատելութիւն քո սրտէդ:
Ա. Ես քեզ սիրել՝ չեմ կամենում, քեզ տեսնելս՝ ինձ մահ է.
Բ. Ես քեզ կարող չեմ մոռանալ, քո սէր կեանքես էլ՝ թանկ է:

Ա. Տա՛ր Շուշանիս՝ ես չեմ տալիր, տա՛ր՝ եթէ զիս՝ կը սիրես:
Բ. Պատրաստեմ կեանքս՝ տալ քեզ Զամիրոն, բայց Շուշանին չեմ տար
Ա. Նա մեղք չունի՝ անգութ դաշան, ես եմ նորան՝ սէր տուել. [քեզ:
Բ. Նա է իմ և քո մէջ տեղը՝ աշտարակի պէս կանգնել:

Ա. Նա ի՞նչ անէ՝ որ ես գքեզ՝ հոգւով ներքուստ եմ ատում:
Բ. Ես ինչ անեմ՝ որ գքեզ միայն՝ հոգւով սրտով եմ սիրում:
Ա. Վա՛հ, անիծվի՝ այդ ձախորդ սէր, որ կեանքս է սուկ մթացնում:
Բ. Չէ. օրհնուի՝ այն իմ սէրը, որ գքեզ չէ՝ մոռացնում:

Ա. Դու իմ մահն ես, ա՛յ անօրէն, հոգիս հանէ՝ ազատիմ:
Բ. Ես քո սուսերն՝ եմ անբաժան, ուր ես երթաս՝ մօտ կ՚ըլնիմ:
Ա. Իմ տեղս վերջն՝ խորխորատն է, այն տեղ կ՚երթամ՝ լալագին:
Բ. Ես էլ այն տեղ՝ կու գամ յետնէդ, որ միայն քեզ՝ լինիմ կին:

Երբ Զամիրոն՝ այն երկինքն՝ թողեց, ելաւ՝ սենեկէն.
Գնաց մտաւ՝ միւս սենեակ, ուր կայր Շուշան՝ գետնի վրէն.
Ընկաւ լալով՝ երեսնիվայր, և սրտալով՝ էր ասում.
Այսօր էլ է՝ գնում անցնում, դու սիրական՝ չես զարթում:

Ա՛խ ես քեզ ինչ՝ դեղ գտանեմ, որ կարենայ՝ քեզ օգնել,
Իմ խոցոտած՝ սրտի մէջէն՝ այս փուշերը՝ դուրս հանել.
Եթէ ասեմ՝ թէ մեռած ես, տեսնում եմ որ՝ կենդան ես,
Շունչ ես առնում՝ կենդանույ պէս, բայց աչքերդ՝ բացումչես:

Ինձ խրնայէ՝ իմ Շուշան ջան, այդ լուսափայլ՝ աչքերդ,
Անգամ մի բաց, նայէ յերեսս, որ ես առնում՝ քո սէրդ.
Ինչ պատճառաւ՝ ես խեթացել, քեզ ինչ վրնաս եմ տուել,
Որ չես կամում՝ աչօք անգամ՝ յերեսս իմ՝ ակնարկել:

Դու մեղք չունիս՝ իմ սիրական, ես քեզ արի՝ ապաբաղդ,
Քեզ սիրեցի, այլ չաջողեց՝ որ լինեիր բարեբաղդ.
Ես էլ ընկայ փորձանաց մէջ, քեզ ևս դառայ՝ չար պատճառ,
Զրկըվեցար քաղցրիկ կեանքէդ, ու մահացար՝ անպատճառ:

Ես գիտեմ որ՝ զիս սիրում ես, բայց քո սէրն է՝ հանդարտիկ,
Քո սուրբ սիրով՝ մինչև իմ մահ՝ ես կ'ըլնէի երջանիկ.
Բայց քեզ ձեռքէս՝ յափշտակեց՝ այս անողորմ չար գաղան,
Այնպիսի ցաւ՝ առթեց քեզ, որ՝ ոչ մեռած ես, ոչ կենդան:

Ձեռօք մարմինդ՝ երբ շօշափեմ, դու կենդան ես, դու ջերմ ես,
Հոգիդ մարմնէդ՝ չէ հեռացած, իմ ասածն էլ՝ լըսում ես.
Այդ ինչ սև քուն՝ որ քեզ հասաւ, որ ըրնուին՝ չես զարթում.
Երեք տարի՝ մարդ կը ննջէ, գիարդ ես դու՝ հանդուրժում:

Քո թշնամին՝ ուտում խըմում, Երինջ է՝ բայց՝ խօսում է,
Սրտի միջի իւր պիղծ սէրն՝ ինձ ամեն օր յայտնում է,
Քո լեզուն է միայն կապուել, քո շրթունքն են կողպըվել,
Որ չես կարում՝ քո ցաւերը՝ դէթ առանգամ՝ մի յայտնել:

Ե՛կ Շուշան ջան՝ մի անէր ինձ՝ այդ անողորմ՝ վատութիւն,
Կամ աչքդ բաց, կամ մէկ խօսիր, ինչ պէտք է այդ՝ լռութիւն.
Ինքնդ ամբողջ՝ կաս իմ հանդէպ, ձեռքդ, ոտքդ, երեսըդ,
Իմ արտասուօք՝ եմ թաց անում, մէկ բաց արա՝ աչերըդ:

Բայց և դու ես՝ չես կամենում՝ ձայնս լըսել՝ Շուշան ջան,
Չես կամենում՝ ձայն իսկ հանել՝ շարժել լեզուդ՝ քաղցրաբան,
Համբոյրներ եմ՝ տալիս շրթանցդ, բայց քեզ շունչս՝ չէ հասնում,
Ձեռնես խըտիղ չէ քեզ անցնում՝ մինչ ոտինքդ եմ՝ շօշափում:

Եթէ այդպէս՝ քո պառկիլը՝ քեզ համար մէկ լաւ ինչ է,
Թո՛ղ որ ես ևս՝ սատ ընկողմնիմ, զիս ևս առ քեզ՝ մերձ քաշէ.
Ես յօժար եմ՝ դեռանախշտի՝ քեզ մօտ պառկիլ՝ միասին.
Քեզ հետ ապրիլ, քեզ հետ մեռնիլ . . . միայն լինինք՝ երկոքին:

Իմ հայրենի՝ անմահներուն՝ շատ գոհամունք՝ խոստացայ.
Այլ ոչ ուստէք՝ օգնութիւն ինչ, կամ սփոփանք՝ ըստացայ.
Հայաստանի՝ Դիք, Ազատ Քաջք, այժմ էլ ձեզ եմ՝ աղաչում,
Իմ Շուշանին՝ դուք ինձ տուէք, ձեզնէ այլ շնորհ՝ չեմ խնդրում:



Արմենակայ՝ Սօսեաց միջի՝ աներևոյթ զօրութիւն,
Արարատեան՝ գագաթներէն՝ դու հասցուր ինձ՝ օգնութիւն.
Ես օտար եմ՝ այս քո երկրում, դու դառիր ինձ՝ հիւրընկալ,
Կենդանութիւն՝ տուր իմ հարսին, քո երախտիք՝ չեմ մոռնար:

Ապա թէ այդ՝ շնորհ չանես, գոնէ այս թող՝ կատարուի,
Որ իմ կենաց և դառն աւուրց՝ ցամաքեալ ոստ՝ կտըրուի.
Չեմ հանդուրժէր՝ այս ցաւերուն, հոգիս առ որ՝ զրնջանամ,
Իր անձնասպան՝ յայս հասակիս՝ պիտի լինել՝ ցանկանամ:

Դարձեալ քեզ եմ՝ ասում Շուշան, սրբէ աչացս՝ արտասուք,
Կտրէ ինձմէն՝ այս տրտմութիւն, և վերացուր՝ լաց և սուգ.
Ինքնըդ անձնըդ՝ մէկ հընարիւք՝ այդ խոր քընէն՝ զարթեցուր,
Զարթի՛ր՝ Շուշան, Զամիրոնիդ՝ քո շարժելով խնդացուր:

Ա՛խ՝ ինչ անեմ, որ չես լըսում, դու իմ կակղան՝ սիրական,
Ես քեզ գիարդ՝ կորողանամ՝ ապաքինել՝ Շուշան ջան,
Եթէ իմ կեանք՝ քեզ դեղ լինէր՝ յօժարութեամբ կու տայի,
Զարթի՛ր՝ հերիք, քեզ է մընում՝ Վըրաց աշխարհ՝ ընդ գահի:

Այս ողբերով՝ խեղճ Զամիրոն՝ յոտին կանգնեց՝ այն տեղէն,
Ուր գետնամած՝ թաւալգլոր՝ խարուխլում էր՝ սրտալէն.
Հեկեկալով հըռնտալով՝ եկաւ մըտաւ՝ յայն սենեակ,
Ուր պատշգամբէն՝ իջել էին՝ Զամիր հարսն և Փառնակ:

Երբ Զամիրոն տեսաւ սոցա՝ այն տեղ կանգնած՝ միասին,
Զարմանալով՝ ընկաւ ի գիրկ՝ և փաթթուեց՝ նոր հարսին.
Ասաց. քո՛րիկ՝ անբաղդ եղբօրդ՝ ես եկել արդ՝ տեսութիւն.
Արդեօք կ'ըլնի՝ իմ այս ցաւոյ՝ ուստէք մէկ դեղ, օգնութիւն:

Զամիր ասաց. իմ սիրական, այս պատանին՝ իմ այրն է,
Հայաստանի՝ տէր, քաջ Փառնակ, որոյ Զաւան՝ իսկ հայրն է,
Հայկայ տանէն՝ շառաւիղեալ, նորա գահի՝ ժառանգը,
Սորա ձեռին՝ է գիւցազնի երկնատուր այն՝ նետ, զէնքը,

Որով Նեբրոդ՝ կործանեցաւ, և որով քեզ՝ ևս կ'օգնէ,
Որ Շուշանին՝ իւր խոր քընէն՝ ահա՛ պիտի զարթեցնէ.
Մեր հայր՝ որ չէր ուզում տալ զիս՝ ի հարսնութիւն՝ Փառնակին,
Յօժարեց տալ՝ երբ իմացաւ՝ որ սա կ'օգնէ՝ Շուշանին:

Զամիրոնը՝ դարձաւ ուրախ, և Փառնակին՝ ողջունեց,
Ասաց, բարեաւ եկիր՝ փեսայ, քաջի ձեռնէն՝ պինդ բռնեց,
Երթանք և տես՝ իմ Շուշանին, թէ ինչպէս խեղճ՝ ընկած է,
Գետնի վերայ՝ մեռելի պէս՝ անշարժ, անշունչ պառկած է։

Փառնակ ասաց. մենք՝ Զամիրոն՝ տեսանք արդէն՝ Շուշանին,
Տեսանք և այն՝ չարեաց աւիթ՝ Թշուառական՝ Երընջին.
Այն ինչ խղճալի է նորա կեանք, որպիսի զոհ է սիրոյ.
Որպիսի սէր՝ է սէր նորա. ոչ սէր, այլ կայծ՝ է հրոյ։

Ունկնդրի՝ ձեր զրուցաց՝ ափսոս այնպէս՝ սիրելոյն,
Որ ի նանիր է բորբոքուած, և չէ ազդում՝ քո հոգւոյն.
Դիւցազնական՝ սէր սոսկ այն է, ես զարմացայ՝ գլխովին,
Որքան ուրախ՝ զուարթ սրտով՝ դիմանում է այն ցաւին։

Քեզ հարցանեմ՝ իմ Զամիր ջան, դու յանձնառու՝ կը լինես,
Երբ ես զքեզ՝ այնպէս ծեծեմ, էլ ինձ անկեղծ՝ կը սիրես,
Կամ թէ տեսնես՝ որ ես էլ քեզ՝ չեմ սիրում, այլ ատում եմ,
Դու երեսիս՝ մըտիկ կու տաս, տուր պատասխան՝ խնդրում եմ։

Զամիր ասաց. չես կարող զիս՝ առել, Փառնակ՝ գիտեմ լաւ,
Իմ ժպիտք քեզ՝ խնդութիւն են, իմ ճախիծք քեզ՝ անբոյժ ցաւ.
Իսկ ես զքեզ՝ սիրեմ անչափ, ընդէր պիտի՝ զիս ծեծես,
Ես բաց ի քէն՝ չունիմ զայլ ոք, զայս ինքնդ ես՝ քաջ գիտես։

Ապա եթէ՝ պատահի որ՝ մէկ օր աչքէդ՝ զիս ձըգես,
Կամ ատելով, կամ բարկութեամբ՝ կամ հարկանես, կամ ծեծես,
Երկու ձեռքով՝ ականջներէդ՝ պինդ կու բռնեմ, կու կանգնեմ,
Եւ երեսէդ՝ քանի անգամ՝ որ կամենամ՝ կու պագնեմ։

Ապա եթէ՝ քեզ այսքանը՝ խըրատ չըլնի, չիմանաս,
Այս իմ մանրիկ՝ մատիկներով՝ հուպ կու տամ թէ՝ դիմանաս.
Բարակ բարակ՝ վէհաղնական՝ այս մատունքս՝ հերիք են,
Որ քո խելքը՝ գլխիդ բերեն, թիւր շաւիղէդ՝ զքեզ ուղղեն։

Թէ դու Հայկայ՝ սերունդէն ես, ես էլ Քարթլի՝ ազգէն եմ,
Դիւցազանց մէջ՝ նա էլ մի կին էր, և ես նորա ուժն ունեմ,
Շամիրամայ շառաւիղ չեմ. Նուրազի պէս եմ սիրում.
Դու իմ Արայն՝ ես Փառնակ ջան, քեզ ճանչնել եմ ուզում։



Այս խօսելով՝ ոտքի ելաւ, Զամիր առաւ՝ Փառնակին,
Կանչեց, Փառնակ՝ ժողովէ ուժդ, որ չըմընաս՝ իմ տակին,
Յետոյ բռնեց՝ երկու ձեռքէն, դաշլիճի մէջ՝ պըտըտեց,
Ճախարակի՝ պէս մեն եկաւ՝ Փառնակ և շատ՝ ամաչեց։

Բարկութիւնը՝ շարժեց քաջի, ուզեց հարսին՝ նուաճել,
Բայց չաջողեց՝ նորա ուժեղ՝ բազուկներուն՝ հանդուրժել.
Զամիր գլորեց՝ նորան յերկիր, սրտի վերայ՝ նստեցաւ,
Երկու ձեռքը՝ բռնեց ձեռօք՝ ինքն երեսին՝ մօտեցաւ։

Ասաց. Փառնակ՝ կարծեմ լաւ էր՝ երեկ՝ որ կէս գիշերին,
Քնքուշ գողտրիկ՝ նազ անելով՝ մտանք փափուկ՝ անկողին.
Կարծեմ դու քաջ՝ էիր աչքումդ, երբ որ ինձ էլ՝ յաղթեցիր,
Բայց միտքս չէ՝ ես գլորեցայ, թէ դու սիրով՝ պառկեցրիր։

Այս որ ասաց, համբոյր տուեց՝ չքնաղ փեսի՝ երեսին։
Փառնակ ասաց. գէհ թող այժմիկ, շունչս առնում եմ՝ ծանրագին.
Զամիր կրկնեց. միթէ քաջ չես, քեզ չեմ խեղդիր, մի վախեր,
Ասա՛ մեղա՛՝ որ քեզ թողնեմ, ապա թէ ոչ՝ չեմ թողներ։

Նեղ տեղ մնաց՝ խղճուկ Փառնակ, ասաց՝ մեղա՛ Զամիր ջան,
Այնուհետև՝ Զամիր թողեց, և Փառնակին՝ վեր կալան.
Փառնակ ասաց. առիւծու ուժ՝ կայ յանձին-քում՝ սիրելի.
Զամիր ասաց. չէ, ես առիւծ՝ շատ եմ թողել անմորթի։

Էլ չասես ինձ՝ թէ կը ծեծեմ, ես քո ծեծէն՝ չեմ վախում,
Ես քո կինն եմ, դու իմ այրն ես, ես կամօք եմ՝ քեզ սիրում,
Թուր և սուսեր՝ ինձ ոչ ինչ են, գեղարդ, նիզակ և աղեղ,
Իմաւ մարմնոյ՝ չեն ներգործէր, անխոց են իմ՝ ոսկերքը։

Ես քեզ երբէք՝ ատելու չեմ, քեզ նուէր է՝ իմ հոգին,
Փառնակ՝ ուրախ եմ ես հոգւով՝ որ արդ՝ անունս է քո կին.
Երջանիկ եմ՝ աշխարհի մէջ. քո սիրտն է իմ՝ բախտանք.
Չուզեմ ես այլ՝ ուրախութիւն, քո սէրն է իմ՝ դրօշանք։

Այժմ հաշտուինք՝ քեզ հետ՝ Փառնակ, ու Զամիրոն թող պատմէ.
Իր արկածքն՝ ծայրէ ի ծայր, հանգամանօք լաւ լըսէ,
Շուշանի բանն՝ է հարկաւոր, Երինջի խօսք՝ թող մնայ,
Նա իմ եղբօրն՝ շատ է սիրում, այն սէր իւրեան՝ թող կենայ։

## Ը

### ՓԱՐՍՏՈՒՄՆ ԹՈՎՁՈՒԹԵԱՆՑ

Փառնակ՝ ասաց խեղճ Զամիրոն, իմ մանկութեան օրերը,
Վայելչութեամբ՝ եմ անցուցել՝ Վրաստանեայց՝ երկիրը.
Փոքրիկ աւան՝ չէ Մծխիթայ, ուրախութիւնք՝ շատ ունի,
Միշտ կը լինի այնպէս ուրախ, ինչպէս ժառանգն՝ աթոռի։

Դաստիարակք՝ շատ ունէի, կրթութիւնս էր՝ անպակաս,
Չի նստելոյն՝ նետ քարշելոյն՝ տեղեկացայ՝ դէրադաս,
Զինուորական՝ մէն մի մարզերն՝ սովորեցայ՝ խաղալով,
Գիտես՝ հարթ չէ մեր երկիրը, լեռներ կ՚ելլեմ՝ վազելով։

Սէր չունէի՝ ուսողութեանց, այն Զամիրն էր՝ շատ սիրում,
Մօրս և քրոջս՝ ամիսը մէկ՝ հազիւ էի պատահում.
Ցանկութիւնս էր՝ առընթեր հօրս՝ նստիլ, խօսիլ՝ ծերոց պէս,
Ունէի իղձ՝ ուսանելոյ՝ միշտ լըսելոյ՝ լուր պէս պէս։

Երբ լըցաւ՝ քըսան տարիս, ինձ մէկ մեծ ցաւ՝ հանդիպեց,
Գըլուխըս միշտ պըտոյտ գալու, և ցաւելու՝ ըսկըսեց.
Շատ դեղ արին՝ բժիշկները, շատ ջանացին՝ Քաղդէայք,
Ցաւիս դեղը՝ չըկարացին՝ գտնել ո՛չ իղձք, ո՛չ հըմայք։

Լուր եհաս հօրս՝ որ Հայաստան՝ մէկ բժիշկ կայ՝ շատ գիտուն,
Ուղարկեց զիս՝ յապաքինել, եթէ իրաւ՝ է ներհուն.
Բնակած էր նա՝ այս դարպասում, ինձ ևս տուեց՝ զայն սենեակ,
Ուր արդ կապած՝ կայ այն երինջ՝ իմ Շուշանիս՝ հակառակ։

Չգիտեմ թէ ի՛նչ արաւ բժիշկն, ես վեց ամսէն՝ ողջացայ,
Դադրեց գլխոյս պտոյտ գալն, և ցաւ գլխոյ՝ չունեցայ.
Բժիշկն ասաց՝ ինձ Զամիրոն, դու կա՛ց այս տեղ՝ մէկ տարի,
Որ այդ քո ախտ՝ բոլորովին՝ անձնէդ ելնէ, վերտարի։



Ես յանձն առի՝ մնալ այլ ևս, որդւոյ նման՝ զիս սիրեց,
Եւ ըսկըսաւ՝ տալ ինձ ուսումն, շատ գիտութիւն՝ աւանդեց.
Աստեղաբաշխ՝ էր քաջավարժ, աշխարհատես՝ էր խելօք,
Ծով և ցամաք՝ շրջագայեալ՝ շատ բան տեսել էր աչօք։

Ի՜նչ հին անցքեր, հին պատմութիւնք՝ էր ինձ համար՝ նա պատմում,
Ի՜նչ բընութեան՝ անյայտ գաղտնիք՝ էր ինձ ծածուկ՝ սովրեցնում.
Ես այն մարդէն՝ շնորհակալ եմ, յընթացս համայն իմ կենաց,
Նա ինձ հայր էր՝ երախտաւոր, և լոյս տուեց՝ իմ աչաց։

Մէկ օր յանկարծ՝ հիւանդացաւ, պառկեցաւ մեծ դահլիճում,
Զիս ձայն տուեց՝ մօտ յանկողին, և նստեցաւ՝ մահիճում.
Ասաց. որդեակ, ես մեռնում եմ, գանձ, ճոխութիւն՝ շատ ունիմ,
Բայց մէկ ծածուկ՝ վիշտ հոգեկան՝ միշտ կը ճմլէ՝ զսիրտ իմ։

Լաւ կը լինէր՝ որ այս օրերս, դու գընացած՝ լինէիր,
Եւ իմ մահուան՝ վերտանգի ժամ՝ այս տան մէջ չըմընայիր.
Բայց ի՛նչ անեմ, շատ կարճ է կեանքս, և կէս ժամէն՝ կըմեռնեմ,
Մէկ դուստր ունիմ՝ ճար ու ճըրագ՝ զնա պիտի՝ որբ թողնեմ։

Աղաչում եմ՝ քեզ իմ որդեակ, վերնաս չըտաս՝ Շուշանիս,
Երանի թէ՝ չըտեսնէիր, բայց կը տեսնես՝ սըրգալիս.
Դու որդի ես՝ նահապետի, եղբայր դառի՛ր՝ իմ դստեր,
Նորա անրաւ՝ հարստութեան՝ և սրբութեան՝ դըտի՛ր տէր։

Ինքդ հեռի՛ կա՛ց նորանէ, և վախեցի՛ր՝ քո հօրէն,
Զըլինի թէ՝ նորա համար՝ դու զըկըլիս՝ աթոռէն.
Քեզ համար կին՝ չիլինիր պակաս, թագաւորաց՝ դստերք կան,
Չէ կարող քեզ՝ հաւասարվիլ, կամ հարս լինիլ՝ իմ Շուշան։

Այս որ ասաց՝ մէկ թել քաշեց, մէկ հատ դուռը՝ բացուեցաւ,
Սևաւորուած՝ սևասրտած՝ Շուշան դուստրը՝ ներս մտաւ,
Վազեց, ընկաւ՝ հօր երեսին, ասաց՝ դու զիս՝ թողնում ես,
Ինձ մէկ խըրատ՝ թո՛ղ տւէիր, քեզմէն յետ ի՛նչ անեմ ես։

Հիւանդն ջանաց՝ տալ պատասխան, լեզուն բերնում՝ պապանձվեց.
Տեղն ի տեղը՝ մահն էլ հասաւ, ծերն իւր հոգին՝ աւանդեց.
Ի՜նչ ասեմ թէ՝ ի՛նչպէս լացինք, երեք օրէն՝ թաղեցինք,
Դարպասի մէջ՝ Շուշանի հետ՝ մենք երկուքին՝ մընացինք։

Զըգիտեմ թէ՝ ինչ դիպուածով՝ օրիորդին՝ սէր տըւի,
Արդեօք նորա՝ սըրբութիւնն էր՝ ինձ երեւում՝ խըղճալի.
Ծառայք նամիշտք՝ շատ ունէինք՝ չէինք մընացել՝ միայնակ,
Շուշան էլ ինձ՝ հետ չէր խօսում, բայց կըրակ էր՝ բովանդակ։

Սրտիս, հոգւոյս՝ մէջ հուր ընկաւ, ցայգ և ցերեկ՝ այրում էր,
Այնուհետեւ՝ սոսկ հասկացայ՝ թէ ի մեր կեանս՝ զինչ է սէր.
Մէկ սուրհանդակ՝ հասուցի հօրս՝ որ շընորհէ՝ ինձ հրաման,
Հայաստանումն՝ ամուսնանալ, և հարս լինի՝ ինձ Շուշան։

Կողքիս երկրի՝ մեծ ազգապետ՝ ունէր մէկ դուստր՝ գեղեցիկ,
Որ իւր սրտում՝ սիրել էր զիս, բայց պահել էր՝ յոյժ լըռիկ.
Ես այն սիրոյն՝ տեղեակ չէի, և ոչ ըընաւ՝ իմանում,
Աղջիկն մեր բընակիչ էր, աչացս հանդէպ՝ զարգանում։

Ես մինչ ծնողիս՝ հըրամանին՝ էի այս տեղ՝ ըսպասում,
Յանկարծ տեսայ՝ որ սիրահար՝ օրիորդն կայ՝ դարպասում.
Սա ինձ ասաց. Ջամիրոն ջան, դու զիս պիտի՝ հարս անես,
Այս Հայ աղջիկ՝ ինչ է որ դու՝ այդ ջերմ սիրով՝ սիրել ես։

Ես ասացի. լըսէ՝ Պարէխ, սէր ինչ է՝ ոչ գիտէի։
Շուշանով իմ՝ աչքըս բացուեց, սորան առաջ՝ սիրեցի.
Դու իմ հարսն՝ լինելոյ չես, մեր նամիշտն ես՝ աղախին,
Ստրուկ ծընունդ՝ ե՞ր կը հասնի՝ Վըրաստանեայց՝ մեծ գահին։

Պարէխ կըկնեց. աղախին եմ, բայց լաւ գիտեմ՝ ես իմ բան,
Չիյաջողէր՝ քեզ հարսնանալ՝ քո սիրական այս Շուշան.
Ես նըրան մէկ՝ հընար նիւթեմ՝ որ չըմնանի, այլ քընի,
Դու ակամայ՝ ինձ հարս կ'առնուս՝ երբ քո Շուշան՝ չըզարթնի։

Տեսայ՝ Պարէխ՝ փախում էր։ Մէկ վայ լսուեց սենեկէն,
Շտապ՝ տագնապ՝ վազեցայ անդ, զարհուրելով՝ այն ձայնէն.
Տեսայ Շուշան՝ գետնի վերայ՝ անշնչացած՝ պառկել էր,
Անզարթելի՝ քընոյ մէջ էր, ինչպէս Պարէխ՝ ասել էր։

Տեսանելով՝ թէ Շուշանն իմ՝ թմրութենէն՝ չէ զարթնում,
Գընացի որ՝ օրիորդին՝ աղերսելով՝ կակղեցնում.
Բայց նա միայն՝ ծիծաղում էր, և ասում էր՝ զիս սիրէ.
Հայազգ Շուշան՝ տիկին անել ես չեմ ներեր, քեզ պէտք չէ։



Երբ որ այսպէս՝ շատ ժամանակ՝ Պարեխի հետ՝ մաշուեցայ,
Ատելութիւն՝ բունեց ի սիրտս, և սաստիկ յոյժ՝ բարկացայ,
Եթէ սուսեր՝ լինէր ձեռիս՝ կ'ըսպանէի՝ անկասկած,
Բայց չըգըտայ՝ սուսեր, դաշոյն, և մընացի՝ շուարուած։

Յանկարծ տեսայ՝ պատէն կախած՝ մէկ լաւ մորակ, և առի,
Այն մորակով՝ օրիորդի՝ ուսագլխին՝ հասցըրի.
Զըգիտէի՝ թէ ինչ գաղտնիք՝ կան մորակիս՝ միջումը,
Պարէխ իսկոյն՝ Երինջ դառաւ՝ իւրեան կանգնած՝ տեղումը։

Յայնմհետէ՝ ոչ աղաչանք՝ ոչ ծեծ, ոչ փետ՝ ազդեցին.
Այն անզգամ՝ սիրահարի՝ գութ ինչ շարժել՝ ի սրտին.
Երեքամեայ՝ թիւ լըրացաւ, որ օրը չորս՝ հինգ անգամ,
Գընում խնդրում կամ ծեծում եմ, չէ զգում այն՝ անզգամ։

Ջամիր ասաց. Փառնակ հոգեակ, դորա հընար՝ է այսպէս,
Որ դու նետով՝ երեք անգամ՝ այն երինջին՝ շօշափես,
Նա կ'ըստանայ՝ մարդոյ պատկեր, որնոր մորակն առել է,
Ընդդէմ կենալ՝ այս դեղթափին՝ ամենեւին կարող չէ։

Նա ակամայ՝ կու արձակէ՝ չար կապանքէն՝ Շուշանին,
Եւ չէ կարող՝ միւսանգամ՝ վընաս ինչ տալ՝ մեր ազգին,
Նորա գաղտնի՝ յուռութների՝ թովչութիւնքն՝ կը ցընդին,
Յամենայնի՝ անզօր կ'ըլնի, հընազանդեալ՝ այս նետին։

Փառնակ հարցուց. դու՝ Ջամիր իմ, ուստի՞ այդքանն՝ իմացար.
Հայկայ նետի՝ զօրութիւնը, և գաղտնի ոյժն՝ սովրեցար։
Ջամիր ժպտաց, պատասխանեց, ես արդ յայտնեմ՝ Ջաւանեան,
Թէ ես ուստի՞ հասու եղէ՝ այս հընարից՝ գաղտնութեան։

Ասաց բերել՝ խնկանոցը. կըրակ գըրեց՝ ընդ խընկին.
Եւ իւր անթէն մէկ մազ հանեց, ձըգեց ի մէջ՝ կըրակին.
Մազ խանձեցաւ, և հոտ փըչեց, մէկ էլ տեսնես՝ տանյերդէն,
Երկու հոգիք՝ երեւեցան՝ որպէս կայծակ՝ պարզ օդէն։

Յորժամ Ջամիր՝ տեսաւ զանոնք՝ աղաղակեց՝ մեծաձայն,
Ձեզ եմ տեսնում՝ հայր մեր Քարթլոս, և չքնաղ մայր,
Ուսուցէք մեզ՝ զիա՞րդ պիտի՝ զնետ Հայկայ՝ գործ ածէ,
Որ կըկին մարդ՝ դառնայ Պարէխ, և զՇուշան՝ արձակէ։

Քարթլոս լըռեց՝ որոտման պէս՝ ձայն լսուեց,
Ասաց. նետով՝ երեք անգամ՝ եթէ Պարէխ՝ շօշափուեց,
Կ'երթայ նորա՝ անձնէն իսպառ՝ մոռակի և իւր չարիք,
Չէք ունենար՝ այնուհետև՝ ուստէք երկիւղ և կարիք։

Դիւի անուամբ՝ է ձեր Շուշան՝ յաւէժ քընով՝ նիրհեցրած,
Որպէս Պարէխ՝ երինջ դառած՝ սենեկի մէջ՝ կաշկանդած.
Այլ նետ շնորհած՝ է երկնքէն, քան ղամեն դև՝ հզօր է,
Նըմա գիւթք, իղձք՝ չեն ժուժկալէր, զթովչութիւնս՝ կ'աւերէ։

Քեզ առաջ ես՝ պատմել էի, այլ ոչ Քաղդեայ՝ ըղձերոյն.
Նոյն և այժմիկ՝ քեզ եմ կրկնում՝ միայն ի շնորհ՝ քո սիրոյն.
Որ այդ վեհ նետ՝ քո անդրանկին՝ պիտի մէկ օր՝ հասանի,
Երբ նա Հայկայ՝ ժառանգ դառնայ՝ և տէր նորա՝ վեհ գահի։

Օդերևոյթքն՝ անհետացան։ Փառնակ ասաց՝ Զամիրին,
Այժմ իմացայ՝ քո զօրութիւն, գլխոյս պըսակ՝ իմ տիկին.
Երթանք ընդ փոյթ՝ որ Պարեխին՝ ձօնենք մարդոյ՝ կերպարան,
Որ սա նա՝ գործիք դառնայ՝ յարուցանել՝ զհարս Շուշան։

Գնացին իսկոյն՝ դէպ յայն սենեակ՝ ուր կայր միայն՝ Երինջը,
Հետըհետէ՝ ի ներքս մտան՝ միայն Փառնակ՝ Զամիրը.
Զամիրոնին՝ ուղարկեցին՝ որ ըսպասէ՝ այն տեղում,
Ուր կայր Շուշան՝ գետնին պառկած՝ դիակնացեալ՝ խոր քընում։

Փառնակ հանեց՝ իւր կապարճէն՝ սքանչելարուեստ՝ այն նետը,
Ձեռքին բռնեց՝ և կանգնեցաւ, ինչպէս ասաց՝ Զամիրը.
Կամաց կամաց՝ մօտիկ գընաց, և երինջին՝ մերձեցաւ,
Ձեռի նետն՝ դէպ առ երինջ՝ կարկառելու՝ ըսկըսաւ։

Բարձրաբարբառ՝ աղաղակեց՝ յերինջ փոխուած՝ Պարէխը,
Մի՛ մօտ բերեր՝ ես էրվում եմ, դարձուր կապարճ՝ այդ նետը։
Զամիր ասաց. մի՛ ուշացներ՝ նետիւ հըպի՛ր՝ Երինջին.
Մարմնոյն, փորին, ոտից, մէջքին, կոտոշներուն և գլխին։

Փառնակ արաւ՝ ինչպէս Զամիր՝ էր այն տեղում՝ պատուիրում.
Ձեռին նետով՝ այն երինջի՝ մերկ մարմինն էր՝ շօշափում.
Բառաչում էր՝ երինջ սաստիկ, կողկողում էր, էրվում եմ,
Դուք թողէք զիս, ես զՇուշան՝ ընդէր պիտի՝ արձակեմ։



Երեք անգամ երբ երերկնեց՝ Փառնակ նետի՝ շօշափումն.
Երինջն ընկաւ՝ ծնդաց վերայ, և ըսկըսեց՝ փոփոխումն.
Առաջ գլխէն՝ եղջիւրները՝ աներևոյթ՝ հեռացան,
Գագաթն մարդոյ նըմանեցաւ, և գեղձամ հերք՝ երևցան։

Յետոյ ճակատ, արտևանունք, յօնք և աչք՝ աստղափայլ,
Յետոյ քիթը, և բերանը, շրթունք ծընօտ՝ ձիւնափայլ.
Յետոյ քնքոյշ՝ վիզ, պարանոց, կուրծք և սինք և ձեռներ,
Յետոյ իրանն՝ սքանչելի, բարձք և ազդերք և ոտներ։

Զարմացել էր՝ դիւցազն Փառնակ՝ ընդ գեղ անձին՝ Պարեխի,
Զամիրոնին՝ մեղադրում էր՝ մէջ իւր սրտի՝ և մտքի.
Որ նա այնպէս՝ վառված սէրն՝ անարգել էր՝ ի զուր տեղ.
Եւ Շուշանին՝ տալով զսիրան՝ փորձանք մտնել էր անմեղ։

Զամիր զգաց՝ թէ ինչ խորհուրդ՝ անցոյց Փառնակ իւր մտքում,
Վաղեց եկաւ՝ իւր փեսի մօտ, ասաց նորա՝ ականջում.
Մենք Պարեխին՝ տանենք մեր տուն, որ նա դարձեալ՝ Շուշանին,
Փորձ չըփորձէ՝ մէկ վնաս տալ՝ թէև կարող չէ ընաւին.

Փառնակ ասաց՝ նորա համար՝ փեսայ ունիմ՝ պատրաստած,
սեպուհ՝ բարետոհմիկ, որոյ Սիւնիք՝ է կալուած.
Իմ մանկութեան՝ էր խաչակից, և ինձ ես սերտ բարեկամ.
Պարէխ կ'ըլնի՝ բարեբաստիկ՝ և երջանիկ՝ յարաժամ։

Յորժամ Պարէխ՝ հագաւ զգեստն՝ ամենեքեան՝ գընացին,
Այն սենեակը՝ ուր Զամիրոն՝ կայր առընթեր՝ Շուշանին.
Զամիրոնը՝ երբ որ տեսաւ՝ օրիորդին, փախեցաւ,
Սակայն Պարէխ՝ թարթել աչան՝ Զամիրոնի՝ ոտքն ընկաւ։

Ասաց. մեղայ՝ քեզ Զամիրոն, քո առջև եմ՝ յանցաւոր,
Սէրն էր պատճառ՝ որ հասուցի՝ ես քեզ չարիք՝ բիւրաւոր.
Եւ ես ընդ քեզ՝ տանջըվեցայ, տանջանք տալով՝ Շուշանին,
Արդէն և նա՝ պիտի զարթի, թող լինի քեզ՝ ամուսին։

Յետոյ Պարէխ՝ գընաց մօտիկ՝ ու սկսաւ՝ փափսալ.
Յայտնի տեսաւ՝ որ Շուշան իւր՝ քընէն չունի՝ արթնանալ.
Ասաց. կորաւ՝ իմ զօրութիւն, նետ խանգարեց՝ թովչութիւնք,
Այսուհետև՝ ոչ ես զօրեմ՝ ազդել ինչ իմ՝ գիւթութիւնք։

Զամիր ասաց. վա՜ղ գիտէի՛ որ այն քեզ չէր՝ հարկաւոր.
Ինձ մօտ կ'ըլնիս՝ դու միշտ՝ Պարսիս՝ և չես մընար՝ մենաւոր.
Սիւնեաց գաւառ՝ քո՛ է կալուած, տիկին կ'ըլնիս՝ Հայկազանց,
Պատուեալ որպէս՝ իմ ազգական, և մայր տոհմին։

Ուրեմն Փառնակ՝ առաջ գընա, և դարձուր շունչ՝ Շուշանին,
Նետդ միայն գի՛ր՝ կրծոց վերայ, և մերձեցո՛ւր իւր սրտին.
Մօտենում է՝ մեզ երեկոյ, պիտի հասնինք՝ Արմաւիր,
Զամիրոնին՝ կ'ըլնի Շուշան՝ այս գիշեր, մի՛ երկրայիր։

Փառնակ գընաց՝ մերձ առ Շուշան՝ նետն՝ դրեց մէջ՝ ծըծերուն,
Երեք թեւքն՝ հասան գլխոյն, իսկ սըլաքը՝ ոտներուն.
Շուշան յանկարծ՝ աչքը բացեց, և նայեցաւ՝ չորս կողմունք.
Զամիրոնին՝ էր որոնում, տեսաւ՝ ժպտաց՝ իւր շրթունք։

Ցետոյ յուշիկ՝ ձեռը շարժեց, յետոյ ոտքը, և խօսեց,
Զամիրոնը՝ անկաւ ի գիրկն՝ երբ նորա քաղցր՝ ձայն լըսեց.
Ասաց. Շո՛ւշան՝ վերջը դարձի՛ր, խընայեցի՛ր՝ խղճալւոյս,
Իմ արտասուք՝ տեսա՛ր աչօք, և լըսեցի՛ր՝ ձայն լալոյս։

Շուշան հարցուց. ես ե՞րբ էի՝ քեզմէն հեռի՝ գընացել.
Ո՛չ արտասուք՝ եմ քո տեսել, և ո՛չ լացի՝ ձայն լըսել.
Այս սենեկէն՝ դուրս ելած չեմ, քունըս փոքր ինչ՝ է տարել,
Երևի թէ՝ շատ եմ քընել. այս նետը ո՞վ է դրել։

Ինչի՞ համար՝ գիս ճաշու ժամ՝ չըզարթեցրիք՝ ուտելու,
Փորըս սաստիկ՝ քաղցածել է, մէկ բան տուէք՝ խըմելու.
Այս ծանր նետ՝ չէ թողնում որ՝ պառկած տեղէս՝ վեր կենամ.
Առէք նետը, որ ես ոտից՝ վերայ կանգնիլ՝ կարենամ։

Փառնակ իսկոյն՝ նետը առաւ, Զամիր բռնեց՝ աջ ձեռքէն,
Զամիրոն էլ՝ ահեակ բազկէն, վեր կանգնեցին՝ ի գետնէն.
Զարմացել էր Շուշանը որ՝ գետնի վերայ՝ էր պառկած,
Ասաց. այս ի՞նչ քուն էր եկել, որ արել է՝ կետնամած։

Ցետոյ տեսաւ՝ որ մարդիկ են՝ այն սենեկում՝ ժողովել,
Զամիրոնին՝ հարցանում էր՝ թէ ո՞վք՝ ուստի՞ են եկել.
Զամիրոնը՝ պատասխանեց, այս մէկը քո՛յրս՝ Զամիրն է,
Որ քո կենաց՝ պատճառ դառաւ, և քո բաղդի՝ առիթն է։



Իսկ այս Փառնակ՝ ձեր նահապետ՝ Զամիր տալըջդ՝ ամուսին,
Սա քեզ այսօր՝ կեանք պարգևեց, մերժեց քեզնէ՝ քուն խորին.
Երեք տարի՝ քընեցար դու, գետնի ընկած՝ և մեռած,
Չըկարայինք՝ տեղէդ շարժել՝ այնպէս էիր՝ ծանրացած։

Չէր հաւատում՝ Շուշան հարսնիկ՝ թէ նիրհել է՝ երեք ամ,
Թէ եղել է գետնախշտի, և սըղացուել՝ յարաժամ.
Ասում էր թէ՝ Զամիրոն ջան, գիտեմ այսօր՝ որ ճաշին,
Չեմ կերած ինչ, և քաղցած եմ, ննջել էի՝ քուն խորին։

Բայց երբ լըսեց՝ թէ Փառնակն է, գնաց և աջն՝ համբուրեց.
Եւ Զամիրին՝ իբրև իւր քոյր՝ քնքուշ գրկեց, փաթաթուեց,
Ասաց. եղբօրդ՝ ես գողացայ, իւր հայրենիք՝ մուցուցի.
Վասն այն ես ես՝ Մծխիթ կ'երթամ, այն կ'անեմ ինձ՝ հայրենի։

Զամիր կրկնեց. մենք փոխում ենք՝ մեր բնակարանք՝ քո հետը.
Ես Հայաստան՝ եմ հարս գալիս, քեզ եմ թողնում՝ Մծխէթը.
Զամիրոնն իմ՝ երջանիկ է, որ իւր սըրտով է իւր կին,
Գիտեմ եղբօրս՝ պիտի լինիս՝ կենաց կըցորդ՝ ամուսին։

Զաւան ասաց. ծընողիս տեղ՝ նա էր եղել՝ իմ պաշտպան,
Ինքն ինձ ասաց՝ քեզ հարս կ'ընտրեմ, պաշտեցի այն՝ հրաման.
Գիտեմ որ նա՝ նահապետ է, և Վըրաստան՝ նորանն է,
Դառնալ տիկին՝ Վըրաստանեայց՝ ինձ պէս որբին՝ մեծ բան է։

Փառնակ ասաց. Շուշան քո գեղ՝ զքեզ արել է՝ արժանի,
Դու լաւ պահէ՝ Զամիրոնին, միշտ քո բաղդն՝ կու բանի.
Երբեմն եկէք՝ մեզ տեսութիւն, մենք էլ կու գանք՝ ձեր երկիր,
Զամիր քոյր է Զամիրոնի, զքեզ ևս օտար՝ չենք համրիր։

Իմ դշխոյ է՝ չքնաղ տալս, ասաց Շուշան, համբուրեց,
Զամիրոնիս՝ պատկերակից, դուք ասիք թէ՝ սա օգնեց.
Զամիր՝ չունիմ ո՛չ մայր, ո՛չ հայր, դուք եղէք ինձ հայր և մայր,
Զամիրոն ինձ՝ ամուսին է, և բարեբար իմ և այր։

Զամիր ասաց. դէհ Զամիրոն՝ թող զմեզ արդ՝ որ երթանք,
Շուշանի հետ՝ դուք մընացէք, մենք յԱրմաւիր՝ տի դառնանք.
Ցէգուց կ'ըլնի՝ կամ մէկ էլ օր, դուք ևս կ'երթաք՝ ձեր տեղը,
Որ զձեզ տեսնէ՝ ուրախանայ՝ մեզ տրտմասիրտ՝ ծընողը։

Մենք Պարեխին՝ պիտի տանինք՝ մեզ հետ դէպ ի՝ Հայաստան,
Այն տեղ կու տանք՝ քաջալերմին՝ նահապետի՝ հարսնութեան,
Օտար տեղն անդ՝ քոյր կը լինի, չեմ մոռանար՝ իմ լեզուն,
Պարեխը ինձ՝ ընկեր կ'ըլնի, պատուած ի մէջ՝ ամենուն։

Շուշան՝ ուրեմն՝ բարեաւ մընաս՝ զՋամիրոն՝ քեզ տալինք.
Մէկ քանի օր՝ աստ կու կենաք, մենք ևս մեր տեղն՝ կու հասնինք։
Բայց երբ երթաս՝ Մծխէթ քաղաք, և իմ ծնողաց՝ տեսանես,
Իմ կողմանէ՝ ողջոյն տանիս, և ձեռքերը՝ համբուրես.

Ասես Ջամիր՝ երջանիկ է՝ իւր Փառնակի՝ գրկումը,
Բաց ի սիրոյ և երախտեաց՝ այլ ինչ ոչ կայ՝ սրտումը,
Մենք ևս կու գանք՝ քանի՛ օրէն, ձեզ կու տեսնենք՝ Մծխիթայ,
Պարեխին ևս՝ պիտի բերենք, և իւր հետն էլ՝ իւր փեսայ։

Ջամիրոն ջան, աչքդ էլ ի լոյս, բարեաւ մընաս՝ խնդալին.
Վայելես սէր՝ քո բղձալի՝ հրաշալեղ՝ Շուշանին.
Մի մոռանար՝ որ քո քոյր եմ, օտար աշխարհ եմ գընում,
Իմ Փառնակի՝ սէրն է գերել, և իմ բաղդն է՝ անդ տանում։

Փառնակ գրկեց՝ Ջամիրոնին՝ ասաց կացէք՝ դուք բարով,
Մենք դարձեալ շուտ կըտեսակցինք՝ երբ Մծխէթ գանք՝ երամով,
Ջամիր ինձ հետ, Պարէխն էլ իւր՝ փեսայի հետ՝ միասին,
Ձեզ հիւր կ'ըլնինք՝ մէկ քանի օր՝ մէջ ձեր նախնեաց՝ դարպասին։

Քեզ եմ յանձնում՝ զՇուշանն իմ, գիտես նա զիս՝ հայր արաւ,
Մի ասեր թէ՝ քո քոյրն առի, աչս դուստրս՝ տեղն եկաւ.
Սիրէ սրտով, մխիթարէ, օտար երկիր է գալիս,
Իւր կեանքն քեզ՝ իբրև աւանդ՝ սրտի մօրք՝ պահ տալիս։

— Դու ևս՝ Փառնակ՝ Ջամիր քըրոջս՝ պիտի սիրես, լաւ պահես։
— Իմ Փառնակն միշտ՝ կըսիրէ զիս, խնդրեմ վասն այն չըմտածես,
— Եթէ նա զիս՝ մէկ օր ատէ, ականջներն՝ կը ցաւին,
— Ջամիր՝ պանդուխտ՝ չէ Հայաստան՝ Փառնակն է իմ՝ հօվանին։

Ծառայք եկան՝ իմացուցին՝ որ երիվարք՝ պատրաստ են,
Կրկին միմեանց՝ գիրկերն ընկան, և ցօղեցին՝ աչքերէն,
Միւս անգամ՝ բարեաւ երթայք, բարեաւ մընայք՝ լըռուեցան,
Փառնակ Ջամիր՝ նոցա գրկէն, համբոյրներէն՝ պոկուեցան։

Երբ դուրս ելան՝ երեք ձի կայր, մէկն էր նժոյգ՝ Փառնակի,
Եւ երկրորդն՝ Ջամիրինն էր, որովք հասին՝ զայն ուղի,
Իսկ երրորդն՝ էր Պարեխին, որ երեք ամ՝ վաղ քան զայն,
Եկաւ դարպաս՝ որ անջատէ՝ Ջամիրոնէն՝ զիւր Շուշան։



Առաջ Ջամիր՝ ոտնեաւ յիւր նժոյգ, յետոյ Պարէխ յիւր ի ձին,
Ապա Փառնակ՝ աշտանակեց՝ երբ լաւ հեծան՝ երկու կին,
Շուշան կանչեց, բարեաւ երթաս՝ իմ բարերար՝ Ջամիր ջան,
Ջամիր ձայնեց. բարեաւ մընաս՝ չըքնաղագեղ՝ իմ Շուշան։

Այս վայրկենին՝ դուռն բացուեց. երևեցաւ՝ բժիշկը,
Ջուարթ՝ ուրախ՝ կերպարանօք, և ձեռքն կայր՝ մորակը,
Որով Պարէխ՝ Երինջ դառաւ, կանչեց ձայնով՝ Փառնակին,
Ես յետ դարձայ՝ Ախուրեանէն, քեզ յայտնել կամք՝ վիճակին։

Զաւակ կ'ըլնի՝ քեզ Ջամիրէն, Հայաստանի՝ մեծ պարծանք,
Աստարբէի խօրք և զըրոյցք՝ կ'ըլնին նորա՝ զըօսանք.
Զգօն կ'ըլնի՝ և հանճարեղ, չքնաղ, շքեղ, փառացի,
Քաջութիւն իւր՝ անօրինակ՝ Հայկ Արամայ՝ արժանի։

Անունն Սուր՝ պիտի դընես, Հայկայ նետի՝ սըլաքն է,
Ամպրոպածին՝ կայծակներէն՝ նա Հըրատի՝ շանթիկն է,
Մանկութենէն՝ պիտի լինի՝ ահ և երկիւղ՝ բիւր ազգաց,
Սուսեր հատու՝ դէմ թշնամեաց, և զօրավիգ՝ իւր զօրաց.

Եւ դու Շուշան՝ քաղցրիկ որդուկ, զՋամիրոն՝ սիրեցիր,
Քո հայրենիք՝ անտես արիր, օտար աշխարհ՝ գընացիր,
Այն մանուկն է՝ ձեր փրկութիւն, երբ լեաներէն՝ նեղանաք,
Քո հայրենի՝ Մասեաց Քաջաց՝ նըպաստ պիտի՝ ցանկանաք։

Աներևոյթ եղև տեսիլ. անհետ կորաւ՝ և մորակ.
Երրորդ անգամ՝ բարեաւ մընա՛ արին Ջամիր և Փառնակ.
Շուշան, Պարէխ և Ջամիրոն՝ էլ գիրկ արկին՝ իրերաց,
Էլ ջերմ համբոյր՝ նուիրեցին՝ լուսատեսիլ՝ երեսաց։

Երբ մէկ մէկէ՝ բաժանվեցան, պիտի մղէին՝ ձիերը,
Մտրակները բարձրացուցին, և քարշեցին՝ սանձերը.
Փառնակ ասաց. համբերեցէք, արեգակ նոր մայր մտաւ,
Տօթ տանջեան՝ արդ անցել է, զովարար հով՝ ըսկըսաւ։

Այս ժամանակ՝ Ճանփայ երթալն՝ երջանկութեան՝ նըշան է,
Լուսին կապոյտ՝ երկնքումը՝ նորահարսի՝ նըման է,
Ճըրագները՝ դեռ նոր վառած, մենք կը հասնինք՝ Արմաւիր,
Դու Ջամիրոն՝ բարեաւ մընա, Շուշանին լաւ պահպանիր։

Բայց կամում եմ՝ մէկ բան նիւթել, և գիտեմ որ՝ կը հաւնիք,
Իմ այս ամրոց՝ գալն ու երթալն՝ ազգ կ'իմանայ՝ անկարծիք.
Շուշան դշխոյ՝ Վըրաստանի՝ այս բերդն է քո՝ յիշատակ,
Այսուհետև սորա անունն՝ պիտի լինի՝ Երինջակ։

# ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑ

---

## ԶԱՒԱՆ

Ա. Զաւան գայ պանդուխտ յԱրմաւիր . . . . 5
Բ. Զաւան ընտրեալ նահապետ . . . . . 9
Գ. Զաւան գերի ի մանկութեան . . . . . 14
Դ. Զաւան՝ Ազովսոս քաղաքի մէջ պիտի զոհ լինի 18
Ե. Զաւան ուսանի զդպրութիւն փիւնիկեցւոց . 22
Զ. Զաւան և իւր Տիրուհի ընտելանան . . . 27
Է. Տիւրոս և Աստարբէ . . . . . . . . 31
Ը. Մենամարտ և յաղթանակ Զաւանայ . . . 35
Թ. Զաւանայ վտարանդութիւն. . . . . . . 40
Ժ. Գիշեր տառապանաց . . . . . . . . 44
ԺԱ. Թախծալին առաւօտ, բաղձրախտ մրրիկ. . 48
ԺԲ. Հրդեհ ի ծովու . . . . . . . . . 52
ԺԳ. Սիկիլիա կղզի . . . . . . . . . 56
ԺԴ. Ձկնորսութիւն Զաւանայ . . . . . . 60
ԺԵ. Զաւան ի Սարդենիա . . . . . . . 64
ԺԶ. Զաւան ի Մաղերայ և Պատմոս կղզիս . . 69
ԺԷ. Դարձ Զաւանայ յԱրմաւիր. . . . . . 73

## ՓԱԹՆԱԿ Ա.

Ա. Փառնակ և Զամիր . . . . . . . . . 81
Բ. Առագաստ հարսնարանի . . . . . . . 91
Գ. Ճանապարհորդութիւն և գրոյցք . . . . 102
Դ. Շարունակութիւն անցից արկածից փառնակայ 112
Ե. Հնախօսութիւնք . . . . . . . . . 123
Զ. Սօսեաց Քաջերն . . . . . . . . . 133
Է. Տեսարան խարդաւանաց . . . . . . . 143
Ը. Փարատումն Թովչութեանց . . . . . . 154

ՀՀ Ազգային գրադարան
NL0333652